ՅՈՒՆԻԲԱՆԿ | ԲԱՆԿ ԵՎ **ԱՎԵԼԻՆ**

ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

0025, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53, 1-5,
Հեռ՝ (+374 10) 59 22 59,
Էլ. Փոստ՝ unibank@unibank.am
Կայք՝ www.unibank.am

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

0025, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53, 1-5,
Հեռ՝ (+374 10) 59 22 59,
Էլ. փոստ՝ unibank@unibank.am
Կայք՝ www.unibank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի դասը՝	**Անվանական, արժեկտրոնային, անժամկետ, պարտատոմս**
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	1,000,000 հատ ԱՄՆ դոլարով 5,000,000 հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ԱՄՆ դոլար 10,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը՝	100,000,000 ԱՄՆ դոլար, 50,000,000,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար

Արժեթղթերի ձեռքբերման սահմանափակումները	ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը սահմանվում է 10 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,000 ԱՄՆ դոլար: ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը սահմանվում է 100 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,000,000 ՀՀ դրամ:
Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը հաշվարկվելու է հիբրիդային եղանակով: Շրջանառության առաջին 36 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Խորհրդի կողմից յուրաքանչյուր թողարկման համար: Շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո Պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք: Հաշվարված տոկոսադրույքը կհրապարակվի Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում (www.unibank.am)՝ էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ավարտը:
Արժեթղթերի տեղաբաշխման սկիզբը և ավարտը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար
Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	Անժամկետ
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար:
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 5

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6

1.1 Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 6

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 10

1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 19

1.4. Դատական հայցեր, սպասվող փոփոխություններ 20

1.5. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ 20

1.6. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը 20

1.7. Թողարկողի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ տվյալներ. 22

1.8. Առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները 22

1.9. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը 25

1.10. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները 25

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 28

2.1 Ռիսկային Գործոններ 28

2.2 Հիմնական Տեղեկատվություն 36

2.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն. 37

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները. 54

2.5 Տեղաբաշխման պլանը 57

2.6 Առաջարկի գինը 58

2.7 Տեղաբաշխումը 59

2.8 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 59

2.9 Լրացուցիչ տեղեկատվություն 60

Խորհրդատուներ 60

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 62

3.1. Անկախ աուդիտորներ 62

3.2. Ռիսկային գործոններ 62

3.3. Տեղեկատվություն թողարկողի մասին 67

3.3. Բիզնեսի նկարագիրը 73

3.5. Բանկի կառուցվածքը 76

3.6. Բանկի Խմբի կառուցվածքը 77

3.7. Բանկի հիմնական միջոցները 77

3.8. Բանկի կապիտալ ռեսուրսները (պասիվները) 77

3.9. Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները 80

3.10. Արտոնագրերը և Լիցենզիաները 80

3.11. Զարգացման վերջին միտումները 80
3.12. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 81
3.13. Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք 95
3.14. Փոխկապակցված անձանց հետ գործարքները 95
3.15. Պատմական ֆինանսական տեղեկատվություն 95
3.16. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ 96
3.17. Էական պայմանագրերը 96
3.18. Մասնագիտական կարծիքներ 96
3.19. Լրացուցիչ տեղեկատվություն 96
3.20. Այլ տեղեկատվություն 96
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ֆիզիկական անձ և Իրավաբանական անձ ներդրողների համար անժամկետ պարտատոմսի ձեռքբերման հայտի ձև 97
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Բանկի կազմակերպչական կառուցվածքը 100
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Բանկի խմբի կառուցվածքը 101
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Բանկի ֆինանսական հաշվետվությունները 102

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ **ջանքերը**, որպեսզի պարզենք Ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել Ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք

Գագիկ Ձաքարյան	Խորհրդի նախագահ	Ձ. Ձաքարյան	13.05.26թ
Գեորգի Պիսկով	Խորհրդի անդամ		13.05.26թ
Կարինե Մինասյան	Խորհրդի անկախ անդամ		13.05.26թ.
Ֆիլիպ Դելմոտ	Խորհրդի անկախ անդամ		13.05.26թ.
Վարդան Աթայան	Խորհրդի անդամ		
Ռուբեն Ինջիկյան	Խորհրդի անկախ անդամ		
Մեսրոպ Հակոբյան	Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն		13.05.26թ
Արարատ Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ		13.05.26թ
Օվսաննա Առաքելյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն		13.05.26թ
Գոհար Գրիգորյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ		13.05.26թ
Վաղինակ Ստեփանյան	Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ նախագծերի և ստանդարտների ներդրման գծով		13.05.26թ
Գուրգեն Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրածախ բիզնեսի և վաճառքների գծով տնօրեն		13.05.26թ
Դավիթ Պետրոսյան	Վարչության անդամ, Վարչության նախագահի առաջին տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն		13.05.26թ.
Արթուր Ապերյան	Վարչության անդամ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն		13.05.26թ
Սերգեյ Քոչարյան	Վարչության անդամ,Ռիսկերի կառավարման գծով տնօրեն		13.05.26թ.

Հավաստիացնում եմ, որ Հայտը ստորագրված է վերոհիշյալ անձանց կողմից

Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն՝ Մեսրոպ Հակոբյան

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի համառոտ ներածություն: Առաջարկվող արժեթղթերում ներդրում կատարելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Սույն Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք քաղաքացիական պատասխանատվություն են կրում Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար միայն այն դեպքում, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային պատճենը՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

1.1 Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱԺ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Ռուսերեն՝ ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО "ЮНИБАНК"
Անգլերեն՝ “UNIBANK” OPEN JOINT STOCK COMPANY

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
Ռուսերեն՝ ОАО "ЮНИБАНК"
Անգլերեն՝ “UNIBANK” OJSC

Բանկի պետական գրանցման վայրն է՝

0025 ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, 1-5 հասցեում:

Բանկի փոստային հասցեն է՝

0025, ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, 53, թիվ 1-5:

Կապի միջոցները՝

Հեռախոս՝ + 37410 59 22 59
Ֆաքս՝ + 37410 55 51 40
Էլ. փոստ՝ unibank@unibank.am
Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են դիմել Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների վարչության պետ Մ. Համբարձումյանին հետևյալ հեռախոսահամարով՝ +374 10 592236 (ներքին հեռ. 301):

1.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Յունիբանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ», «Յունիբանկ» կամ «Թողարկող») հիմնադրվել է 2001թ.-ի հոկտեմբերին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն:

Յունիբանկը, որպես բանկ գրանցվել է 2001թ.-ի հոկտեմբերի 9-ին (Գրանցման վկայական թիվ 0373 և գրանցման համար թիվ 81՝ հաստատված ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի

09.10.2001թ. 260 որոշմամբ: Բանկը ունի Բանկային գործունեության թիվ 81 լիցենզիա՝ տրված 2001թ.-ի հոկտեմբերի 10-ին):

Բանկի բաժնետերերի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայումս Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

Յունիբանկը հանդիսանում է «ՅՈՒԲԻՓԵՅ» (UBPAY) դրամական փոխանցումների հայաստանյան միասնական առաջին վճարահաշվարկային համակարգի օպերատոր: Դրամական փոխանցումների «ՅՈՒԲԻՓԵՅ» հայաստանյան համակարգը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար: UBPAY փոխանցումները կարելի է ստանալ կանխիկ, բանկային հաշվին կամ քարտին փոխանցելու միջոցով:

2025 թվականին Moody's-ը բարձրացրել է Յունիբանկի ազգային և արտարժույթով ավանդների երկարաժամկետ վարկանիշները B2-ից մինչև B1 և հեռանկարը սահմանել կայուն: Վարկունակության բազային գնահատականը և ճշգրտված BCA-ն b3-ից բարձրացվել են մինչև b2 մակարդակի, բանկի կոնտրագենտի ռիսկի ազգային և արտարժույթով երկարաժամկետ վարկանիշները (CRRs)՝ B2-ից մինչև B1, իսկ կոնտրագենտի ռիսկի (CR Assessment) երկարաժամկետ գնահատականy՝ B2(cr)-ից բարձրացվել է մինչև B1(cr):Վարկանիշների բարձրացումը պայմանավորված է վերջին երկու տարիների ընթացքում բանկի վարկային պորտֆելի որակի և շահութաբերության զգալի բարելավմամբ:

2026 թվականի մարտին Յունիբանկը միջազգային հեղինակավոր MFR գործակալության կողմից արժանացել է «Հաճախորդների պաշտպանության հավաստագրման» (Customer Protection Certification) արծաթե մակարդակի: Այս հավաստագրումը վկայում է, որ բանկը լիովին համապատասխանում է հաճախորդների պաշտպանության ոլորտում սահմանված հիմնական միջազգային չափանիշներին և ցուցաբերում է կայուն առաջընթաց՝ առավել առաջադեմ պրակտիկաների ներդրման ուղղությամբ:

2026 թվականի ապրիլին Յունիբանկը միացել է Ածխածնի արտանետումների հաշվառման ֆինանսական համագործակցությանը (Partnership for Carbon Accounting Financials, PCAF)՝ շրջակա միջավայրի վրա իր ֆինանսական գործունեության ազդեցությունը գնահատելու և այն ավելի թափանցիկ դարձնելու համար: PCAF-ը ֆինանսական հաստատությունների համաշխարհային համագործակցություն է, որը նպաստում է վարկերի և ներդրումների արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման միասնական մոտեցումների ներդրմանը: Միանալով համագործակցությանը՝ Յունիբանկը մտադիր է կիրառել միջազգային ճանաչում ունեցող մեթոդաբանություն՝ իր գործունեության հետ կապված արտանետումների չափման և բացահայտման համար:

Այսօր Յունիբանկն ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: 31.03.2026թ. դրությամբ Յունիբանկն ունի ավելի քան 330,000 ակտիվ հաճախորդ:

1.1.3. Թողարկողի կանոնադրական կապիտալը, ռազմավարությունը և զարգացման հիմնական ուղղությունները

Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 24,925,447,290 (քսանչորս միլիարդ ինը հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 191,254,472 (մեկ հարյուր իննսունմեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր յոթանասուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 32,010,000 (երեսուներկու միլիոն տասը հազար) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 4,778,261 (չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 230 (երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով, 3,846,154 (երեք միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր հիսունչորս) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 390 (երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Թողարկողի ռազմավարությունը

Բանկը ներկայումս բնութագրվում է որպես պահպանողական գործելաոճով կառավարվող, բայց և նորամուծություններ կիրառող, նախաձեռնողական ու թափանցիկության սկզբունքներով գործող ֆինանսական հաստատություն: Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են՝ մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը: Ի հավելումն վերոնշյալի, հարկ է նշել նաև, որ Բանկը՝ հավատարիմ մնալով իր սկզբունքներին, չի ֆինանսավորում շրջակա միջավայրի պահպանությանը վնասող գործունեությունը, զենքի/քինամթերքի արտադրությամբ և առևտրով, ինչպես նաև խաղատնային և վիճակախաղային գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին: Ավելին, ֆինանսավորում իրականացնելիս հնարավորինս ուսումնասիրում է տվյալ գործունեության ազդեցությունը սոցիալական և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև խթանում է էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործումը:

Զարգացման հիմնական ուղղությունները

- Թվային լուծումների ստեղծումն ու զարգացումն իրավաբանական և ֆիզիկական անձանց ներգրավման և սպասարկման համար,
- Մանրածախ և ՓՄՁ-ների ոլորտում շուկայական մասնաբաժնի ավելացում,
- Գործընկերային հարաբերությունների ամրապնդումն ու զարգացումը վաճառքների, արդյունավետության աճի և նորարարությունների ներդրման համար,
- Բանկի առկա բիզնես գործընթացների հետագա ավտոմատացում,
- Բրոքերային ծառայությունների հետագա զարգացում,
- Հավատարմություն ESG սկզբունքներին,
- Կորպորատիվ կառավարման կատարելագործում:

1.1.4. Թողարկողի Բիզնեսի համառոտ նկարագիրը

Բանկը ՀՀ բանկային համակարգում դիրքավորվել ու իր գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ կարևորելով թե՛ մանրածախ, թե՛ կորպորատիվ և թե՛ ներդրումային բիզնեսի

զարգացումը՝ բանկային ծառայությունների ստեղծման ու մշակման հիմքում դնելով յուրաքանչյուր հաճախորդի և աշխատկցի հարմարավետությունը, ծառայությունների պարզությունն ու հասանելիությունը: Բանկը ֆիզիկական անձանց, բիզնեսներին և կազմակերպություններին առաջարկում է բանկային և ֆինանսական ծառայությունների համալիր փաթեթ՝ իր ընդարձակ մասնաճյուղային ցանցի, ինչպես նաև մոբայլ և օնլայն բանկային հարթակների միջոցով:

Բանկն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հետևյալ գործառույթները՝ Միջոցների ներգրավում, Վարկերի և այլ միջոցների տեղաբաշխումներ, Բանկային փոխանցումների իրականացում, Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, Արտարժույթով և արժեթղթերով գործարքներ և բրոքերային ծառայություններ, Կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների ընդունում, Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում:

Բանկի մասնաճյուղերը և Բանկի խմբի կառուցվածքը

Յունիբանկը կառուցել է լայն սպասարկման ցանց: Ազդագրի լրացման գրանցման ներկայացման պահին Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 48 մասնաճյուղ, որից 30-ը՝ Երևանում, 18-ը՝ Հայաստանի այլ շրջաններում, մեկը՝ Ղազախստանի Հանրապետությունում:

Բանկը դուստր ընկերություններ չունի: ՀՀ ԿԲ-ի 28.04.17թ.-ի թիվ 24 ԾՕՀ Ա որոշման համաձայն Յունիբանկը և «ՌԵԳՈ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը որակվել են /ճանաչվել են/ որպես հայկական բազմապրոֆիլ ցածր ռիսկային ֆինանսական խումբ՝ բանկային ենթախմբով՝ «ՅՈՒՆԻԳՐՈՒՊ» անվանմամբ, որի կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի Հավելված 3-ում:

1.1.5. Ակտիվների որակը

Ստորև ամփոփվում են Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

Հազ. ՀՀ դրամ

	31.03.2026	31.12.2025	31.12.2024	31.12.2023
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	394,685,110	393,782,348	313,040,486	304,828,380
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	322,617,387	301,357,109	227,473,592	203,773,614
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռ	81.7%	76.5%	72.7%	67.5%

1.1.6. Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի Հավելված 2-ում:

1.1.7. Ակտիվների որակը

Ակտիվների համարժեքությունը

31.03.2026 թվականի արդյունքներով Բանկի զուտ շահույթը առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 1.79 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերակցությունը կապիտալի միջին մեծությանը)՝ 3.29%:

Ակտիվների որակը

2026թ.-ի մարտի 31-ի դրությամբ Բանկի կողմից հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ծավալը կազմել է 274.1 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Բանկի վարկային պորտֆելում չաշխատող ակտիվների մասնաբաժինը կազմել է 1.87%:

Ակտիվների իրացվելիությունը

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Ստորև ներկայացվում են բանկի իրացվելիության հիմնական նորմատիվները՝

ՀՀ ԿԲ կողմից սահմանած հիմնական նորմատիվներ	ՀՀ ԿԲ կողմից սահմանած թույլատրելի մեծությունը	Փաստացի մեծությունը 2026թ I եռ..	Փաստացի մեծությունը 2025թ IV եռ..	Փաստացի մեծությունը 2024թ IV եռ.	Փաստացի մեծությունը 2023թ IV եռ.
Ն21*	15%	20.83%	19.63%	26.05%	31.2%
Ն22**	60%	73.41%	67.53%	79.86%	71.1%

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են սույն Ազդագրի միջոցով առաջարկվող պարտատոմսերում ներդրումներին: Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից: Որոշում կայացնելուց առաջ ցանկացած ներդրող պետք է նախապես ծանոթանա տվյալ պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերին:

Ստորև ներկայացնում ենք բանկերին, և մասնավորապես Յունիբանկին ներհատուկ ռիսկերը, բանկում առկա ռիսկերի չափման և նվազեցման մեխանիզմները:

Բանկն իր գործունեության ընթացքում առնչվում է բանկային գործունեությանը ներհատուկ ռիսկերի հետ, որոնց կառավարման համար առկա են բավարար ռեսուրսներ և մեխանիզմներ:

1.2.1. Թողարկողին վերաբերող ռիսկերի համառոտ նկարագիր

Թողարկողին վերաբերող ռիսկերի մանրամասն նկարագրությունը ներկայացված է սույն Ազդագրի 3.2 կետում:

Բարձր մրցակցության ռիսկ. Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա:

Վարկային ռիսկը. Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը, ինչը կարող է էապես ազդել բանկի գործունեության վրա և առաջացնել լրացուցիչ ծախսեր, որոնք բացասական կանդրադառնան բանկի շահույթի վրա:

Արտարժութային ռիսկը կարող է առաջանալ բաց դիրքերի առկայության դեպքում փոխարժեքի տատանումների արդյունքում: Բանկում արտարժութային ռիսկը կառավարելի (բավականին ցածր) մակարդակի վրա, է քանի որ բանկում սահմանված են արտարժութային բաց դիրքերի առավելագույն սահմանաչափեր:

Գործառնական ռիկս. Գործառնական ռիսկն արտաքին գործոնների, ներքին գործընթացների, համակարգերի և մարդկային գործոնի արդյունքում առաջացող կորուստների հավանականությունն է, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ Բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:

Շուկայական ռիսկը տոկոսադրույքների, արժեթղթերի գների և/կամ արժութային փոխարժեքների տատանումների արդյունքում վնաս կրելու հավանականությունն է:

Տոկոսադրույքի ռիսկը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության:

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ կամ սթրեսային իրավիճակներում:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Տարածաշրջանային ռիսկ. որը կարող է առաջանալ տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի փոփոխությունների հետևանքով՝ իր հերթին բացասական ազդեցություն ունենալով երկրի մակրոտնտեսական վիճակի վրա, որն էլ իր հերթին բացասական ազդեցություն կարող է ունենալ Բանկի շահութաբերության և ընթացիկ գործունեության վրա:

1.2.2. Պարտատոմսերին վերաբերող ռիսկերի համառոտ նկարագիր

Պարտատոմսերին վերաբերող ռիսկերի մանրամասն նկարագրությունը ներկայացված է սույն Ազդագրի 2.1 կետում:

Բանկի կողմից առավել էական պարտատոմսերին առնչվող ռիսկեր են դիտարկվում.

Շուկայական ռիսկ. Շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների

ապագա դրամանակ հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության արդյունքում:

Իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը, և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան շուկայական գինը:

Արտարժութային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա, ինչպես նաև հասարակության մոտ արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ռիսկի ոչ պատշաճ կառավարումը, արտարժույթով արտահայտված պարտատոմսերում ներդրողների մոտ իրենց առաջարկված գործիքի վերաբերյալ ոչ բավարար տեղեկացվածությունը:

Գնաճի ռիսկ. Այն կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման, ապա նաև գնաճի կտրուկ աճի արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկը տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տրանշի համար անժամկետ պարտատոմսերի թողարկման ժամանակ կգործի արժեկտրոնային եկամտաբերության հաշվարկման հիբրիդային եղանակ, այն է՝ թողարկման առաջին 36 ամիսների համար կկիրառվի հաստատագրված տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք, իսկ շրջանառության 36 ամիսների ավարտից հետո արժեկտրոնային տոկոսադրույքը կհաշվարկվի լողացող տոկոսադրույքով:

Անժամկետ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը հաշվարկվելու է հետևյալ կարգով՝

ա. Շրջանառության առաջին 36 ամիսների ընթացքում անժամկետ պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Խորհրդի կողմից յուրաքանչյուր թողարկման համար:

բ. Շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո անժամկետ պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես

Պարտատոմսերի եռամսյակային վճարման պարբերականության դեպքում

- ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 3 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to

maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread),

- ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 90-օրյա բազիսային տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread):

Պարտատոմսերի կիսամյակային վճարման պարբերականության դեպքում

- ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread),

- ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 180-օրյա բազիսային տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread):

Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո երկրորդ նիշի ճշտությամբ՝ հիմք ընդունելով երրորդ նիշի արժեքը (0–4 դեպքում երկրորդ նիշը մնում է անփոփոխ, 5–9 դեպքում՝ ավելանում է մեկ միավորով), և կիրառվում է հաջորդող ժամակահատվածի (եռամսյակի/կիսամյակի) ընթացքում պարտատոմսերի գնի հաշվարկման և տվյալ ժամանակահատվածի արժեկտրոնի վճարման համար:

ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի ՊՊ եկամտաբերության կորը հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի ''ՊՊ եկամտաբերության կորեր'' բաժնի ''Եկամտաբերության կոր և պարտատոմսերի գների վերաբերյալ տեղեկատվություն (Օրական)'' ենթաբաժնում (ՊՊ եկամտաբերության կորեր | CBA):

SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված տոկոսադրույքը պաշտոնապես հրապարակվում է ԱՄՆ Դաշնային պահուստային բանկի պաշտոնական կայքում (SOFR Averages and Index Data - FEDERAL RESERVE BANK of NEW YORK):

Այսինքն՝ Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը սահմանում է նոր արժեկտրոնային տոկոսադրույք՝ ելնելով տարեկան արժեկտրոնային եկամտաբերության վերոնշյալ հաշվարկից: Եթե ընթացիկ ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման հիմք է ընդունվում այդ օրվան նախորդող առաջին աշխատանքային օրը:

Հաշվարկված արժեկտրոնային տոկոսադրույքը էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի

հաշվարկման օրվա ժամը 17:00 կներկայացվի Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ և մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում (www.unibank.am): Բորսան ստացված տվյալները մուտքագրում է առևտրային համակարգ նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով դրանց հասանելիությունը հաջորդ առևտրային նստաշրջանի մեկնարկից: Ընդ որում, եթե Թողարկողը նշված ժամկետներում Հայաստանի ֆոնդային բորսա չի ներկայացնում հաշվարկված լողացող արժեկտրոնային տոկոսադրույքը, ապա ընթացիկ ժամանակահատվածի համար Բորսան շարունակում է կիրառել նախորդ ժամանակահատվածում գործող արժեկտրոնային տոկոսադրույքը:

Եթե հղումային տոկոսադրույքը տվյալ հաշվարկի օրը հասանելի չէ պաշտոնական աղբյուրներում կամ շուկայի տվյալների մատակարարների հրապարակումներում՝ ներառյալ թողարկողից անկախ տեխնիկական կամ այլ խափանումների, ինչպես նաև ֆորսմաժորային իրավիճակների պատճառով, ապա կիրառվում է տվյալ տոկոսադրույքի վերջին հասանելի օրվա ֆիքսված մակարդակը՝ առանց միջինացման հաշվարկի: Եթե սույն պարբերությունում նշված անհասանելիությունը շարունակվում է մինչև հաջորդ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկի ամսաթիվը, ապա կիրառվում է նախորդ արժեկտրոնային ժամանակաշրջանի համար կիրառված տոկոսադրույքը: Երկարաժամկետ կամ կառուցվածքային անհասանելիության դեպքում կսահմանվի փոխարինող հղումային ցուցանիշ՝ ձևավորված կենտրոնական բանկի, պետական մարմինների կամ միջազգային ճանաչված շուկայի տվյալների մատակարարների համադրելի տվյալների հիման վրա: Նման փոխարինող ցուցանիշի կիրառման մեթոդաբանությունը կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկ՝ համաձայնություն ստանալու նպատակով, և կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սույն կետի իմաստով եռամսյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 3 (երեք) ամիսները, իսկ կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6 (վեց) ամիսները:

Անժամկետ պարտատոմսերի տոկոսագումարները վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի խորհրդի կողմից:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ արժեկտրոնային տոկոսադրույքը փոփոխական հիմքով հաշվարկվելու դեպքում պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նվազել, ինչի արդյունքում ներդրողները կարող են ստանալ ավելի ցածր արժեկտրոնային եկամուտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նաև աճել, ինչը ներդրողներին հնարավորություն կտա ստանալ ավելի բարձր եկամուտ:

Անժամկետ պարտատոմսերի մայր գումարը, արժեկտրոնները և այդ պահի դրությամբ կուտակված արժեկտրոնները չստանալու ռիսկը. Անժամկետ պարտատոմսերի գծով վճարումները ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չեն վճարման, եթե դա կհանգեցնի բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման

կարգի» համաձայն սահմանված համախմբված շեմի խախտմանը կամ բանկի կապիտալի կազմում չներառված պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը, ընդ որում՝

- Արժեկտրոնային վճարումները լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,
- Պարտատոմսերի գծով վճարումների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում Բանկի կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում,
- Բանկի և պարտատոմսի սեփականատիրոջ միջև որևէ իրավական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում բանկի համար արժեկտրոնային վճարումների ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում գործիքի սեփականատիրոջը:

Անժամկետ պարտատոմսերի մասով պարտավորությունների դուրսգրման կամ մարման ռիսկեր.

Պարտատոմսերը կարող են մարվել միայն՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, կամ
2. եթե մարման դեպքում ամբողջ գումարն ուղղվում է բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը՝ Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով,

Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում, անկախ պարտատիրոջ կողմից ներդրված գումարի չափի և առանց վերջիններիս լրացուցիչ համաձայնության, Բանկի կողմից թողարկված տրանշի շրջանակներում պարտավորության ամբողջ ծավալը դուրս է գրվում կամ մարվում ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար, սակայն ոչ ավելի, քան անժամկետ պարտատոմսի անվանական արժեքը կամ մայր գումարն է: Իրենց հերթին անժամկետ պարտատոմսերի սեփականատերերը պարտավորվում են մարված գումարն անհապաղ ուղղել Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Ֆինանսական վիճակի վատթարացում է համարվում հետևյալ իրավիճակներից որևէ մեկի ի հայտ գալը.

1) Բանկի առաջին մակարդակի հիմնական կապիտալի համարժեքությունը չի գերազանցում 7.061% սահմանաչափը,

2) Կենտրոնական բանկը գրավոր կերպով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված գնահատականը վատթարացել է կամ կարող է վատթարանալ սահմանված չափից՝

3) Կենտրոնական բանկը գրավոր եղանակով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ առանց Կենտրոնական բանկի կամ պետական այլ օժանդակության բանկի մոտ կառաջանան

(հնարավոր է, որ առաջանան) «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքով սահմանված հիմքերից որևէ մեկը:

Բանկի կողմից թողարկման ենթակա անժամկետ պարտատոմսերը սույն Գլխում նշված դեպքերում ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով:

Անժամկետ պարտատոմսերը փոխարկվում են սովորական բաժնետոմսերի փոխարկման գործակցով, որը ցույց է տալիս յուրաքանչյուր մեկ հատ անժամկետ պարտատոմսի դիմաց ստացման ենթակա սովորական բաժնետոմսերի քանակը: Փոխարկման գործակիցը հավասար է պարտատոմսերի անվանական արժեքի և նշված փոխարկման օրվան նախորդող եռամսյակի ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում Բանկի սովորական բաժնետոմսերով երկկողմանի անընդհատ աճուրդի ժամանակ կնքված գործարքների միջին կշռված գնի հարաբերակցությանը: Եթե անժամկետ պարտատոմսերի փոխարկման օրվան նախորդող եռամսյակի ընթացքում Բանկի սովորական բաժնետոմսերով Բորսայի կողմից կազմակերպված երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով իրականացվող առևտրի շրջանակում որևէ գործարք չի կնքվել, ապա որպես փոխարկման հիմք ընդունվում է փոխարկման օրվան նախորդող վերջին այն եռամսյակը, որի ընթացքում նշված եղանակով իրականացված առևտրի արդյունքում ձևավորվել է գործարքների վրա հիմնված եռամսյակային միջին գին:

Այսպիսով թողարկվող 1 անժամկետ պարտատոմսի համար փոխարկման գործակիցը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Փոխարկման գործակից = Պարտատոմսի անվանակ արժեք / սովորական բաժնետոմսի միջին կշռված գին

Վերոնշյալ եղանակներով Բաժնետոմսերի շուկայական գնի որոշման անհնարինության դեպքում սովորական բաժնետոմսերի արժեքը գնահատելու համար Բանկը կներգրավի առնվազն մեկ անկախ գնահատող: Այդ դեպքում թողարկվող 1 անժամկետ պարտատոմսի համար փոխարկման գործակիցը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Փոխարկման գործակից = Պարտատոմսի անվանակ արժեք / Անկախ գնահատողի կողմից գնահատված բանկի սովորական բաժնետոմսերի արժեք

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսի անվանական արժեքը փոխարկվում է ՀՀ դրամի Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Փոխարկման գործակցով հաշվարկված բաժնետոմսերի քանակը ոչ ամբողջական թիվ ստացվելու դեպքում կատարվում է բաժնետոմսերի քանակի կլորացում մինչև ամբողջական թիվ հետևյալ եղանակով՝ ստորակետից հետո 5, 6, 7, 8 կամ 9 թվերից մեկը լինելու դեպքում՝ կլորացում հավելուրդով, մեկ միավորով դեպի վերև, իսկ 1, 2, 3 կամ 4 թվերից մեկը լինելու դեպքում՝ կլորացում պակասորդով, դեպի ներքև, նախորդող ամբողջական թիվը թողնելով անփոփոխ:

Անկախ սույն կետում նկարագրված փոխարկման կարգի նախքան պարտատոմսերի գումարը (կամ դրա մի մասը) Բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկելը, միջոցներ տրամադրող անձը (փոխկապակցված անձինք) պետք է ստանա (ստանան) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ի համաձայն Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, եթե ներգրավման արդյունքում հետևյալ ցուցանիշը (Ց) գերազանցում է 10, 20, 50 կամ 75 տոկոսը՝

$$Ց = \frac{ՖԳ + ԲԱ_{գործիք}}{ԲԱ+ՖԳ} * 100\%$$

որտեղ՝

ՖԳ- պարտատոմսերով միջոցներ տրամադրող անձից (փոխկապակցված անձանցից) տվյալ պարտատոմսերով ներգրավված միջոցների անվանական արժեքը կամ մայր գումարն է,

$ԲԱ_{գործիք}$– պարտատոմսի սեփականատիրոջ (փոխկապակցված անձանց)՝ բանկի կանոնադրական կապիտալում ունեցած ձայնի իրավունք տվող մասնակցության (առկայության դեպքում) անվանական արժեքն է,

Եթե պարտատոմսը ներգրավված է արտարժութային միջոցներով, ապա սույն կետի հաշվարկում պարտատոմսի անվանական արժեքը կամ մայր գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից ներգրավվման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը չի պահանջվում այն դեպքում, երբ պարտատոմսի միջոցով ներգրավման արդյունքում սույն կետով հաշվարկվող ցուցանիշը գերազանցում է տվյալ կետով սահմանված որոշակի սահմանաչափը, սակայն պայմանագրով սահմանվել է, որ

1) պարտատոմսի սեփականատերը ձեռք չի բերելու տվյալ սահմանաչափը գերազանցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր,

2) պարտատոմսի սեփականատերը գիտակցում է, որ պարտատոմսի փոխարկման դեպքում, սահմանված սահմանաչափը գերազանցող մասն ուղղվում է Բանկի էմիսիոն եկամտի կամ շահույթի հաշվին՝ ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար անհրաժեշտ գումարը լրացնելու նպատակով:

Ստորև ներկայացվում են բանկի կապիտալի համարժեքության հիմնական նորմատիվները՝

ՀՀ ԿԲ կողմից սահմանած հիմնական նորմատիվներ	**ՀՀ ԿԲ կողմից սահմանած թույլատրելի մեծությունը**	**Փաստացի մեծությունը 2026թ I եռ..**	**Փաստացի մեծությունը 2025թ IV եռ.**	**Փաստացի մեծությունը 2024թ IV եռ.**	**Փաստացի մեծությունը 2023թ IV եռ.**

Ն1.1*	6.2%	11.86%	12.36%	11.96%	13.06%
Ն1.2**	8.3%	17.33%	15.20%	13.52%	14.95%

* Բանկի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը

** Բանկի ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը

Հաշվի առնելով Բանկի Ն1.1 նորմատիվի փաստացի ցուցանիշի և սույն Ազդագրով սահմանված 7.061% կրիտիկական շեմի դրական տարբերությունը, ինչպես նաև բանկային համակարգի ներկա զարգացումները, Բանկի վարկավորման ցածր ռիսկային և զգուշավոր քաղաքականությունը, բանկում ռիսկերի կառավարման մակարդակը, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող խիստ վերահսկողությունը, նաև այն փասը, որ Բանկն իր գործունեության ողջ ընթացքում երբևէ չի առնչվել բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, վերոնշյալ ռիսկի ի հայտ գալու հավանականությունը գնահատվում է բավականին ցածր:

3. Անժամկետ պարտատոմսերը կարող են մարվել նաև, եթե պարտատոմսերը մարվում կամ հետ է գնվում բանկի նախաձեռնությամբ, և պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

- պարտատոմսերը մարելու նպատակով Բանկը ստացել է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը,
- պարտատոմսերի մարման ամսաթվի և միջոցների ներգրավման պայմանագրի ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի, բացառությամբ, երբ տեղի են ունեցել հարկային օրենսդրության կամ կարգավորման այնպիսի փոփոխություններ, որոնց առկայության դեպքում միջոցները կարող էին չներգրավվել կամ չբավարարել առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվելու պայմաններին և ԿԲ հիմնավոր կարծիքով բանկը միջոցների ներգրավման պահին չէր կարող կանխատեսել փոփոխությունը,
- Բանկը վաղաժամկետ մարումներ իրականացնելու սպասումներ չի ձևավորել:

Սույն կետում նշված նախնական համաձայնությունը ստանալու նպատակով Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում պարտատոմսերը վաղաժամկետ մարելու նպատակահարմարությունը և դրա հետևանքով անցանկալի հետևանքներ չառաջանալը հիմնավորող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը: Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական համաձայնության տրամադրման կամ մերժման վերաբերյալ, որի մասին ծանուցում է Բանկին 30-օրյա ժամկետի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու կամ Բանկի կողմից ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ, ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել Կենտրոնական բանկի որոշմամբ: Կենտրոնական բանկը սույն կետում նշված նախնական համաձայնությունը տրամադրում է, եթե՝

- Բանկը փոխարինում է պարտատոմսերը առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող մեկ այլ ֆինանսական գործիքով, և այդ փոխարինումը բացասաբար չի անդրադառնա Բանկի ֆինանսական վիճակի վրա, կամ

- Բանկը հիմնավորում է, որ իր կապիտալի համարժեքության նորմատիվները բավարար չափով բարձր են ՀՀ ԿԲ կանոնակարգով սահմանված նվազագույն սահմանաչափերից՝ առանց անժամկետ պարտատոմսերի, և նոր կապիտալի գործիքով փոխարինելու անհրաժեշտությունը բացակայում է:

Բանկի նախաձեռնությամբ իրականացվող անժամկետ պարտատոմսերի հետգնումը և մարման գործընթացը կիրականացվեն սույն Ծրագրային Ազդագրի շրջանակներում կատարված թողարկումների հերթականության համաձայն: Ընդ որում, միևնույն տրանշի շրջանակներում թողարկված և տեղաբաշխված անժամկետ պարտատոմսերի հետգնումն ու մարումն իրականացվում է ամբողջ ծավալով՝ առանց մասնակի մարումների կիրառման:

Ընդ որում, Բանկը չպետք է ձևավորի ակնկալիքներ, որ Կենտրոնական բանկը կտրամադրի համաձայնությունը:

Սույն բաժնում ներկայացված Անժամկետ պարտատոմսերի մայր գումարի, արժեկտրոնների և այդ պահի դրությամբ կուտակված արժեկտրոնների վճարման չկատարման, ինչպես նաև պարտատոմսերի դուրսգրման, փոխարկման, հետգնման կամ մարման դեպքերի առաջացման պարագայում Թողարկողը պարտավորվում է նման դեպքի մասին տեղեկանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվություն՝ ներդրողներին տեղեկացնելու նպատակով: Նույն հաշվետվությունը նույն ժամկետում ներկայացվում է նաև Հայաստանի ֆոնդային բորսա և ՀՀ կենտրոնական բանկ:

Հրապարակվող հաշվետվությունը, կախված համապատասխան դեպքի բնույթից, առնվազն պետք է ներառի՝ համապատասխան դեպքի նկարագրությունը և դրա առաջացման ամսաթիվը, ազդեցության ենթակա Անժամկետ պարտատոմսերի ծավալը և արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը (ISIN), չվճարված, փոխարկվող, հետգնվող կամ մարվող գումարի չափը, փոխարկման դեպքում՝ փոխարկման գործակիցը, որը հաշվարկվում է սույն ազդագրով սահմանված կարգով, համապատասխան գործողության իրավական և/կամ պայմանագրային հիմքերը, Թողարկողի կողմից նախատեսվող հետագա գործողությունները և դրանց իրականացման ակնկալվող ժամկետները, այլ տեղեկություններ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ ներդրողների կողմից ներդրումային որոշումների կայացման համար

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի և իրացվելիության անկմանը:

Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք թողարկողին այս պահին հայտնի չեն կամ որոնք թողարկողն էական չի համարել սույն Ազդագրում ներառելու համար:

1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի Խորհրդի կողմից հաստատված հեռանկարային զարգացման ծրագրի: Բանկի գործունեությունը վերահսկվում է

Բանկի Խորհրդի և Վարչության կողմից, որոնք օպերատիվ կերպով արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ մշտապես հաշվի առնելով Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների և սակագների համապատասխանեցումը շուկայի պահանջներին:

Բանկի ընդհանուր զարգացման մեջ ամենաէականը մանրածախ բիզնեսի, փոքր և միջին բիզնեսի զարգացումն է, ինչպես նաև Բանկն ուշադրություն է դարձնում սպասարկման որակի բարձրացմանը, դրա շրջանակների ընդլայնմանը և ռեսուրսների ներգրավմանը: 31.03.2026թ-ի դրությամբ բանկի կապիտալը կազմել է 54,450,111 հազ. ՀՀ դրամ:

Բանկի ռազմավարական խնդիրներն են՝

- Եկամտաբեր ակտիվների աճի ապահովում՝ վարկային պորտֆելի և արժեթղթերում ներդրումների ընդլայնման միջոցով
- Տեխնոլոգիական կատարելագործումը և թվային հարթակում վաճառքի զարգացումը
- Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը
- Բրոքերային բիզնեսի և թղթակցային ցանցի ընդլայնումը
- Անձնակազմի և ղեկավարների որակավորման համակարգի կատարելագործումը

1.4. Դատական հայցեր, սպասվող փոփոխություններ

Բանկը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա: Չեն սպասվում նաև կազմակերպական փոփոխություններ:

1.5. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ

Թողարկողի բաժնետերերի 2024թ տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում որոշում է ընդունվել որպես Թողարկողի 2025-2026թթ ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ ընտրել «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, 8-րդ հարկ
Հեռ.՝ +374 (10) 59 59 99,
Էլ. հասցե՝ info@kpmg.am, general@kpmg.co.am,
Կազմակերպության տնօրենն է Իրինա Գևորգյանը:


1.6. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը

Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի ընդհանուր Ժողովը (այսուհետ՝ «Ժողով»),
- Խորհուրդը,
- Գործադիր մարմինը, այդ թվում՝ կոլեգիալ գործադիր մարմին՝ Վարչությունը (այսուհետ՝ «Վարչություն») և միանձնյա գործադիր մարմին՝ Վարչության նախագահ

- Գործադիր տնօրեն (այսուհետ՝ «Վարչության նախագահ – Գործադիր տնօրեն»):

Բանկի կառավարման մարմինների կառուցվածքը



Բանկի Խորհուրդը կազմված է 7 անդամներից

Անուն Ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառությունը
Գագիկ Զաքարյան	Խորհրդի նախագահ	34 տարի
Գեորգի Պիսկով	Խորհրդի անդամ	34 տարի
Վարդան Աթայան	Խորհրդի անդամ	33 տարի
Ֆիլիպ Դելմոտ	Խորհրդի անկախ անդամ	29 տարի
Ռուբեն Ինջիկյան	Խորհրդի անկախ անդամ	34 տարի
Կարինե Մինասյան	Խորհրդի անկախ անդամ	36 տարի

Բանկի Վարչությունը կազմված է 9 անդամներից

Անուն Ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառությունը
Մեսրոպ Հակոբյան	Վարչության նախագահ	26 տարի
Արարատ Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ	34 տարի
Վաղինակ Ստեփանյան	Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ նախագծերի և ստանդարտների ներդրման գծով	27 տարի
Գոհար Գրիգորյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն	34 տարի
Օվսաննա Առաքելյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն	29 տարի
Դավիթ Պետրոսյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	25 տարի
Գուրգեն Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների գծով տնօրեն	23 տարի
Արթուր Ապերյան	Վարչության անդամ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն	20 տարի

Սերգեյ Քոչարյան	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն	22 տարի

Բանկի աշխատակիցների թիվը 31.03.2026 թվականի դրությամբ կազմել է 989:

Յունիբանկի ուղղակի հսկող անձ հանդիսանում է Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությունը (հասցեն՝ Կիպրոս, Նիկոսիա, Պատմու 5Բ, Ագլաթզիա, ՓԱ 2103), որը տիրապետում է սովորական անվանական բաժնետոմսերի 81.32%-ին (155,532,640 հատ) և հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի 100%-ին 32,010,000 հատ): Բանկի բաժնետոմսերի մնացած ամբողջ ծավալը պատկանում է մինորիտար բաժնետերերին:

1.7. Թողարկողի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ տվյալներ.

2015-2025 թվականների ընթացքում Բանկը թողարկել և տեղաբաշխել է թվով 29 կորպորատիվ պարտատոմս, այդ թվում 14 դրամային պարտատոմս՝ ընդհանուր 16,750,000,000 ՀՀ դրամ ծավալով և 15 դոլարային պարտատոմս՝ ընդհանուր 63,440,200 ԱՄՆ դոլար ծավալով: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերից երեքն անժամկետ են: Ներկայումս Հայաստանի ֆոնդային բորսայի կորպորատիվ պարտատոմսերի շուկայում շրջանառվում են Բանկի կողմից թողարկված 11 դասի կորպորատիվ պարտատոմսեր:

1.8. Առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները

Արժեթղթերի դասը՝	Անվանական, արժեկտրոնային, անժամկետ, պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	1,000,000 հատ ԱՄՆ դոլարով 5,000,000 հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ԱՄՆ դոլար, 10,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	100,000,000 ԱՄՆ դոլար, 50,000,000,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ձեռքբերման սահմանափակումները	ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը սահմանվում է 10 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,000 ԱՄՆ դոլար: ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի նվազագույն ձեռքբերման քանակը սահմանվում է 100 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,000,000 ՀՀ դրամ:
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը

Արժեթղթերի տեղաբաշխման սկիզբը և ավարտը	Ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար
Արժեթղթերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը	Տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը հաշվարկվելու է հիբրիդային եղանակով: - Շրջանառության առաջին 36 ամիսների ընթացքում պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Խորհրդի կողմից յուրաքանչյուր թողարկման համար: - Շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո Պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես՝ *Պարտատոմսերի եռամսյակային վճարման պարբերականության դեպքում* - ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 3 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread), - ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 90-օրյա բազիսային տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread): *Պարտատոմսերի կիսամյակային վճարման պարբերականության դեպքում* - ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread), - ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 180-օրյա

	բազիսային տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread): Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո երկրորդ նիշի ճշտությամբ՝ հիմք ընդունելով երրորդ նիշի արժեքը (0–4 դեպքում երկրորդ նիշը մնում է անփոփոխ, 5–9 դեպքում՝ ավելանում է մեկ միավորով), և կիրառվում է հաջորդող ժամակահատվածի (եռամսյակի/կիսամյակի) ընթացքում պարտատոմսերի գնի հաշվարկման և տվյալ ժամանակահատվածի արժեկտրոնի վճարման համար: Հաշվարկված արժեկտրոնային տոկոսադրույքը էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ժամը 17:00 կներկայացվի Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ և մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում (www.unibank.am): Բորսան ստացված տվյալները մուտքագրում է առևտրային համակարգ նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով դրանց հասանելիությունը հաջորդ առևտրային նստաշրջանի մեկնարկից: Ընդ որում, եթե Թողարկողը նշված ժամկետներում Հայաստանի ֆոնդային բորսա չի ներկայացնում հաշվարկված լողացող արժեկտրոնային տոկոսադրույքը, ապա ընթացիկ ժամանակահատվածի համար Բորսան շարունակում է կիրառել նախորդ ժամանակահատվածում գործող արժեկտրոնային տոկոսադրույքը: Եթե հղումային տոկոսադրույքը տվյալ հաշվարկի օրը հասանելի չէ պաշտոնական աղբյուրներում կամ շուկայի տվյալների մատակարարների հրապարակումներում՝ ներառյալ թողարկողից անկախ տեխնիկական կամ այլ խափանումների, ինչպես նաև ֆորսմաժորային իրավիճակների պատճառով, ապա կիրառվում է տվյալ տոկոսադրույքի վերջին հասանելի օրվա ֆիքսված մակարդակը՝ առանց միջինացման հաշվարկի: Եթե սույն պարբերությունում նշված անհասանելիությունը շարունակվում է մինչև հաջորդ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկի ամսաթիվը, ապա կիրառվում է նախորդ արժեկտրոնային ժամանակաշրջանի համար կիրառված տոկոսադրույքը: Երկարաժամկետ կամ կառուցվածքային անհասանելիության դեպքում կսահմանվի փոխարինող հղումային ցուցանիշ՝ ձևավորված կենտրոնական բանկի, պետական մարմինների կամ միջազգային ճանաչված շուկայի տվյալների մատակարարների համադրելի տվյալների հիման վրա: Նման փոխարինող ցուցանիշի կիրառման մեթոդաբանությունը կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկ՝ համաձայնություն ստանալու նպատակով, և կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում, սույն կետի իմաստով եռամսյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող

	յուրաքանչյուր 3 (երեք) ամիսները, իսկ կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6 (վեց) ամիսները:
Շրջանառության ժամկետը՝	Անժամկետ Պարտատոմսերը կարող են մարվել միայն սույն Ազդագրի 2.3.9 կետում նշված դեպքերում և կարգով:
Շրջանառության ձևը՝	Ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը՝	Չապահովված
Պարտատոմսերի տեղաբաշխող	Յունիբանկ ԲԲԸ
Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը	չերաշխավորված տեղաբաշխում

Պարտատոմսերի հետ կապված ցանկացած պահանջներ կամ պայմաններ փոփոխելու դեպքում անհրաժեշտ է ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, առանց որի փոփոխությունները պարտադիր իրավական ուժ չունեն և կողմերի համար չեն առաջացնում իրավական հետևանքներ:

Բանկի Խորհրդի որոշմամբ սահմանվել է, որ Բանկը կարող է իրականացնել անժամկետ պարտատոմսերի թողարկում, որը նախատեսված է նպատակային խմբերի համար, որոնց նկատմամբ կիրառվող սահմանափակումները կամրագրվեն Բանկի Խորհրդի լրացուցիչ որոշմամբ և տեղաբաշխման վերջնական պայմաններում: Միաժամանակ, նման պարտատոմսերի հետագա շրջանառության, փոխանցման, ինչպես նաև դրանցից բխող իրավունքների իրականացման նկատմամբ կիրառվում են Ծրագրային ազդագրով սահմանված բոլոր պայմանները՝ նույն ծավալով և իրավական ուժով, ինչ կիրառվում է Բանկի կողմից սույն ազդագրի շրջանակներում թողարկվող այլ անժամկետ պարտատոմսերի նկատմամբ:

1.9. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 օր առաջ՝ Բանկի ինտերնետային կայքում (www.unibank.am):

1.10. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

Բացարձակ արժեքով ներկայացված ցուցանիշներն արտահայտված են հազ. ՀՀ դրամով:

Ցուցանիշի անվանումը	31.03.2026թ	2025թ	2024թ	2023թ.
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,789,749	9,816,551	8,227,910	4,454,198
Սեփական կապիտալի միջին մեծություն	54,450,111	51,694,264	43,760,553	38,699,338

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	**3.29%**	**18.99%**	**18.8%**	**11.51%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,789,749	9,816,551	8,227,910	4,454,198
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	394,685,110	393,782,348	313,040,486	304,828,380
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	**0.45%**	**2.49%**	**2.6%**	**1.46%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,789,749	9,816,551	8,227,910	4,454,198
Գործառնական եկամուտ	7,159,231	31,367,160	28,394,682	28,256,358
Զուտ շահույթի մարժա (NPM), %	**25.00%**	**31.30%**	**29.0%**	**15.8%**
Գործառնական եկամուտ	7,159,231	31,367,160	28,394,682	28,256,358
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	394,685,110	393,782,348	313,040,486	304,828,380
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	**1.81%**	**7.97%**	**9.1%**	**9.3%**
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	394,685,110	393,782,348	313,040,486	304,828,380
Սեփական կապիտալի միջին մեծություն	54,450,111	51,694,264	43,760,553	38,699,338
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	**7.25**	**7.62**	**7.15**	**7.88**
Զուտ տոկոսային եկամուտ	4,995,657	24,031,541	18,293,874	15,943,054
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	322,617,387	301,357,109	227,473,592	203,773,614
Զուտ տոկոսային մարժա (NIM)	**1.55%**	**7.97%**	**8.0%**	**7.8%**
Տոկոսային եկամուտ	9,387,896	35,183,315	30,045,102	25,245,475
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	322,617,387	301,357,109	227,473,592	203,773,614
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	**2.91%**	**11.67%**	**13.2%**	**12.4%**
Տոկոսային ծախսեր	4,392,239	11,151,774	11,751,228	9,302,421
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	330,528,420	328,357,046	259,444,789	255,300,750
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	**1.33%**	**3.4%**	**4.5%**	**3.6%**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,789,749	9,816,551	8,227,910	4,454,198
Բաժնետոմսերի միջին թիվը	231,888,887	231,888,887	218,042,733	213,021,965
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	**7.72**	**42.33**	**37.74**	**20.9**

Սպրեդ	**1.6%**	**8.3%**	**8.7%**	**8.7%**

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային Գործոններ

Արժեթղթերում, ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի և իրացվելիության անկմանը:

Ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ երբևէ կարող են ի հայտ գալ: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք Ազդագրի կազմման ընթացքում հայտնի են եղել իրեն և նա համարել է էական:

Բանկի կողմից առավել էական են դիտարկվում հետևյալ ռիսկերը.

Իրացվելիության ռիսկը պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերը ավելի ցածր գնով քան ձեռք բերման գինը:

Շուկայական ռիսկը շուկայական փոփոխականների (Արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է:

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Թողարկողի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա:

Տոկոսադրույքի ռիսկը տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տրանշի համար անժամկետ պարտատոմսերի թողարկման ժամանակ կգործի արժեկտրոնային եկամտաբերության հաշվարկման հիբրիդային եղանակ, այն է՝ թողարկման առաջին 36 ամիսների համար կկիրառվի հաստատագրված տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք, իսկ շրջանառության 36 ամիսների ավարտից հետո արժեկտրոնային տոկոսադրույքը կհաշվարկվի լողացող տոկոսադրույքով:

Անժամկետ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը հաշվարկվելու է հետևյալ կարգով՝

ա. Շրջանառության առաջին 36 ամիսների ընթացքում անժամկետ պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Խորհրդի կողմից յուրաքանչյուր թողարկման համար:

բ. Շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո անժամկետ պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես

Պարտատոմսերի եռամսյակային վճարման պարբերականության դեպքում

- ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 3 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread),

- ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 90-օրյա բազիսային տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread):

Պարտատոմսերի կիսամյակային վճարման պարբերականության դեպքում

- ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread),

- ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 180-օրյա բազիսային

տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread):

Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո երկրորդ նիշի ճշտությամբ՝ հիմք ընդունելով երրորդ նիշի արժեքը (0–4 դեպքում երկրորդ նիշը մնում է անփոփոխ, 5–9 դեպքում՝ ավելանում է մեկ միավորով), և կիրառվում է հաջորդող ժամկետավճարի (եռամսյակի/կիսամյակի) ընթացքում պարտատոմսերի գնի հաշվարկման և տվյալ ժամանակահատվածի արժեկտրոնի վճարման համար:

ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի ՊՊ եկամտաբերության կորը հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի ''ՊՊ եկամտաբերության կորեր'' բաժնի ''Եկամտաբերության կոր և պարտատոմսերի գների վերաբերյալ տեղեկատվություն (Օրական)'' ենթաբաժնում (ՊՊ եկամտաբերության կորեր | CBA):

SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված տոկոսադրույքը պաշտոնապես հրապարակվում է ԱՄՆ Դաշնային պահուստային բանկի պաշտոնական կայքում (SOFR Averages and Index Data - FEDERAL RESERVE BANK of NEW YORK):

Այսինքն՝ Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը սահմանում է նոր արժեկտրոնային տոկոսադրույք՝ ելնելով տարեկան արժեկտրոնային եկամտաբերության վերոնշյալ հաշվարկից: Եթե ընթացիկ ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման հիմք է ընդունվում այդ օրվան նախորդող առաջին աշխատանքային օրը:

Հաշվարկված արժեկտրոնային տոկոսադրույքը էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման օրվա ժամը 17:00 կներկայացվի Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ և մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում (www.unibank.am): Բորսան ստացված տվյալները մուտքագրում է առևտրային համակարգ նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով դրանց հասանելիությունը հաջորդ առևտրային նստաշրջանի մեկնարկից: Ընդ որում, եթե Թողարկողը նշված ժամկետներում Հայաստանի ֆոնդային բորսա չի ներկայացնում հաշվարկված լողացող արժեկտրոնային տոկոսադրույքը, ապա ընթացիկ ժամանակահատվածի համար Բորսան շարունակում է կիրառել նախորդ ժամանակահատվածում գործող արժեկտրոնային տոկոսադրույքը:

Եթե հղումային տոկոսադրույքը տվյալ հաշվարկի օրը հասանելի չէ պաշտոնական աղբյուրներում կամ շուկայի տվյալների մատակարարների հրապարակումներում՝ ներառյալ թողարկողից անկախ տեխնիկական կամ այլ խափանումների, ինչպես նաև ֆորսմաժորային իրավիճակների պատճառով, ապա կիրառվում է տվյալ տոկոսադրույքի վերջին հասանելի օրվա ֆիքսված մակարդակը՝ առանց միջինացման հաշվարկի: Եթե սույն պարբերությունում նշված անհասանելիությունը շարունակվում է մինչև հաջորդ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկի ամսաթիվը, ապա կիրառվում է նախորդ արժեկտրոնային ժամանակաշրջանի համար կիրառված տոկոսադրույքը: Երկարաժամկետ կամ կառուցվածքային անհասանելիության դեպքում կսահմանվի փոխարինող հղումային ցուցանիշ՝ ձևավորված կենտրոնական բանկի, պետական մարմինների կամ միջազգային ճանաչված շուկայի

տվյալների մատակարարների համադրելի տվյալների հիման վրա: Նման փոխարինող ցուցանիշի կիրառման մեթոդաբանությունը կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկ՝ համաձայնություն ստանալու նպատակով, և կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սույն կետի իմաստով եռամսյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 3 (երեք) ամիսները, իսկ կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6 (վեց) ամիսները:

Անժամկետ պարտատոմսերի տոկոսագումարները վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի խորհրդի կողմից:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ արժեկտրոնային տոկոսադրույքը փոփոխական հիմքով հաշվարկվելու դեպքում պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նվազել, ինչի արդյունքում ներդրողները կարող են ստանալ ավելի ցածր արժեկտրոնային եկամուտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նաև աճել, ինչը ներդրողներին հնարավորություն կտա ստանալ ավելի բարձր եկամուտ:

Անժամկետ պարտատոմսերի մայր գումարը, արժեկտրոնները և այդ պահի դրությամբ կուտակված արժեկտրոնները չստանալու ռիսկը. Անժամկետ պարտատոմսերի գծով վճարումները ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չեն վճարման, եթե դա կհանգեցնի բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգի» համաձայն սահմանված համախմբված շեմի խախտմանը կամ բանկի կապիտալի կազմում չներառված պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը, ընդ որում՝

- Արժեկտրոնային վճարումները լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,
- պարտատոմսերի գծով վճարումների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում Բանկի կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում,
- Բանկի և պարտատոմսի սեփականատիրոջ միջև որևէ իրավական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում բանկի համար արժեկտրոնային վճարումների ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում գործիքի սեփականատիրոջը, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է բանկի կողմից թողարկված բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը կամ բանկի առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող այլ գործիքների գծով վճարումների իրականացմանը: Ընդ որում, բաժնետոմսերի գծով շահութաբաժինների կամ առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող գործիքների գծով վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել տվյալ գործիքի գծով հասանելիք շահութաբաժինը կամ այլ վճարումները:

Անժամկետ պարտատոմսերի մասով պարտավորությունների դուրսգրման կամ մարման ռիսկեր.

Պարտատոմսերը կարող են մարվել միայն՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, կամ
2. եթե մարման դեպքում ամբողջ գումարն ուղղվում է բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը՝ Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով:

Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում պարտավորությունը դուրս է գրվում կամ մարվում է համապատասխան գումարի չափով բանկի կողմից, իսկ պարտատոմսի սեփականատերը պարտավորվում է մարված գումարն անհապաղ ուղղել բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը՝ Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով: Ընդ որում, համապատասխան գումար է համարվում այն գումարը, որը, Կենտրոնական բանկի կարծիքով, անհրաժեշտ է բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար, սակայն ոչ ավելի, քան պարտատոմսի անվանական արժեքը կամ մայր գումարն է:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Ֆինանսական վիճակի վատթարացում է համարվում հետևյալ իրավիճակներից որևէ մեկի ի հայտ գալը.

1) Բանկի առաջին մակարդակի հիմնական կապիտալի համարժեքությունը չի գերազանցում 7.061% սահմանաչափը,

2) Կենտրոնական բանկը գրավոր կերպով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված գնահատականը վատթարացել է կամ կարող է վատթարանալ սահմանված չափից՝

3) Կենտրոնական բանկը գրավոր եղանակով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ առանց Կենտրոնական բանկի կամ պետական այլ օժանդակության բանկի մոտ կառաջանան (հնարավոր է, որ առաջանան) «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանցն երդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքով սահմանված հիմքերից որևէ մեկը:

Բանկի կողմից թողարկման ենթակա անժամկետ պարտատոմսերը սույն Գլխում նշված դեպքերում ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով:

Անժամկետ պարտատոմսերը փոխարկվում են սովորական բաժնետոմսերի փոխարկման գործակցով, որը ցույց է տալիս յուրաքանչյուր մեկ հատ անժամկետ պարտատոմսի դիմաց ստացման ենթակա սովորական բաժնետոմսերի քանակը: Փոխարկման գործակիցը հավասար է պարտատոմսերի անվանական արժեքի և նշված փոխարկման օրվան նախորդող եռամսյակի

ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում Բանկի սովորական բաժնետոմսերով երկկողմանի անընդհատ աճուրդի ժամանակ կնքված գործարքների միջին կշռված գնի հարաբերակցությանը: Եթե անժամկետ պարտատոմսերի փոխարկման օրվան նախորդող եռամսյակի ընթացքում Բանկի սովորական բաժնետոմսերով Բորսայի կողմից կազմակերպված երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով իրականացվող առևտրի շրջանակում որևէ գործարք չի կնքվել, ապա որպես փոխարկման հիմք ընդունվում է փոխարկման օրվան նախորդող վերջին այն եռամսյակը, որի ընթացքում նշված եղանակով իրականացված առևտրի արդյունքում ձևավորվել է գործարքների վրա հիմնված եռամսյակային միջին գին:

Այսպիսով թողարկվող 1 անժամկետ պարտատոմսի համար փոխարկման գործակիցը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Փոխարկման գործակից = Պարտատոմսի անվանական արժեք / սովորական բաժնետոմսի միջին կշռված գին

Վերոնշյալ եղանակներով Բաժնետոմսերի շուկայական գնի որոշման անհնարինության դեպքում սովորական բաժնետոմսերի արժեքը գնահատելու համար Բանկը կներգրավի առնվազն մեկ անկախ գնահատող: Այդ դեպքում թողարկվող 1 անժամկետ պարտատոմսի համար փոխարկման գործակիցը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Փոխարկման գործակից = Պարտատոմսի անվանական արժեք / Անկախ գնահատողի կողմից գնահատված բանկի սովորական բաժնետոմսերի արժեք

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսի անվանական արժեքը փոխարկվում է ՀՀ դրամի Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Փոխարկման գործակցով հաշվարկված բաժնետոմսերի քանակը ոչ ամբողջական թիվ ստացվելու դեպքում կատարվում է բաժնետոմսերի քանակի կլորացում մինչև ամբողջական թիվ հետևյալ եղանակով՝ ստորակետից հետո 5, 6, 7, 8 կամ 9 թվերից մեկը լինելու դեպքում՝ կլորացում հավելուրդով, մեկ միավորով դեպի վերև, իսկ 1, 2, 3 կամ 4 թվերից մեկը լինելու դեպքում՝ կլորացում պակասորդով, դեպի ներքև, նախորդող ամբողջական թիվը թողնելով անփոփոխ:

Անկախ սույն կետում նկարագրված փոխարկման կարգի նախքան պարտատոմսերի գումարը (կամ դրա մի մասը) Բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկելը, միջոցներ տրամադրող անձը (փոխկապակցված անձինք) պետք է ստանա (ստանան) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ի համաձայն Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, եթե ներգրավման արդյունքում հետևյալ ցուցանիշը (Ց) գերազանցում է 10, 20, 50 կամ 75 տոկոսը՝

$$Ց = \frac{ՖԳ + ԲԱգործիք}{ԲԱ+ՖԳ} * 100\%$$

որտեղ՝

ՖԳ- պարտատոմսերով միջոցներ տրամադրող անձից (փոխկապակցված անձանցից) տվյալ պարտատոմսերով ներգրավված միջոցների անվանական արժեքը կամ մայր գումարն է,

$ԲԱ_{գործիք}$– պարտատոմսի սեփականատիրոջ (փոխկապակցված անձանց)՝ բանկի կանոնադրական կապիտալում ունեցած ձայնի իրավունք տվող մասնակցության (առկայության դեպքում) անվանական արժեքն է,

Եթե պարտատոմսը ներգրավված է արտարժութային միջոցներով, ապա սույն կետի հաշվարկում պարտատոմսի անվանական արժեքը կամ մայր գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից ներգրավվման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը չի պահանջվում այն դեպքում, երբ պարտատոմսի միջոցով ներգրավման արդյունքում սույն կետով հաշվարկվող ցուցանիշը գերազանցում է տվյալ կետով սահմանված որոշակի սահմանաչափը, սակայն պայմանագրով սահմանվել է, որ

1) պարտատոմսի սեփականատերը ձեռք չի բերելու տվյալ սահմանաչափը գերազանցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր,

2) պարտատոմսի սեփականատերը գիտակցում է, որ պարտատոմսի փոխարկման դեպքում, սահմանված սահմանաչափը գերազանցող մասն ուղղվում է Բանկի էմիսիոն եկամտի կամ շահույթի հաշվին՝ ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար անհրաժեշտ գումարը լրացնելու նպատակով:

Ստորև ներկայացվում են բանկի կապիտալի համարժեքության հիմնական նորմատիվները՝

ՀՀ ԿԲ կողմից սահմանած հիմնական նորմատիվներ	**ՀՀ ԿԲ կողմից սահմանած թույլատրելի մեծությունը**	**Փաստացի մեծությունը 2026թ I եռ..**	**Փաստացի մեծությունը 2025թ IV եռ.**	**Փաստացի մեծությունը 2024թ IV եռ.**	**Փաստացի մեծությունը 2023թ IV եռ.**
Ն1.1*	6.2%	11.86%	12.36%	11.96%	13.06%
Ն1.2**	8.3%	17.33%	15.20%	13.52%	14.95%

* Բանկի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը

** Բանկի ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը

Հաշվի առնելով Բանկի Ն1.1 նորմատիվի փաստացի ցուցանիշի և սույն Ազդագրով սահմանված 7.061% կրիտիկական շեմի դրական տարբերությունը, ինչպես նաև բանկային համակարգի ներկա զարգացումները, Բանկի վարկավորման ցածր ռիսկային և զգուշավոր քաղաքականությունը, բանկում ռիսկերի կառավարման մակարդակը, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող խիստ վերահսկողությունը, նաև այն փասը, որ Բանկն իր գործունեության ողջ ընթացքում երբևէ չի առնչվել բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, վերոնշյալ ռիսկի ի հայտ գալու հավանականությունը գնահատվում է բավականին ցածր:

3. Անժամկետ պարտատոմսերը կարող են մարվել նաև, եթե պարտատոմսերը մարվում կամ հետ է գնվում բանկի նախաձեռնությամբ, և պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

- պարտատոմսերը մարելու նպատակով Բանկը ստացել է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը,
- պարտատոմսերի մարման ամսաթվի և միջոցների ներգրավման պայմանագրի ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի, բացառությամբ, երբ տեղի են ունեցել հարկային օրենսդրության կամ կարգավորման այնպիսի փոփոխություններ, որոնց առկայության դեպքում միջոցները կարող էին չներգրավվել կամ չբավարարել առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվելու պայմաններին և ԿԲ հիմնավոր կարծիքով բանկը միջոցների ներգրավման պահին չէր կարող կանխատեսել փոփոխությունը,
- Բանկը վաղաժամկետ մարումներ իրականացնելու սպասումներ չի ձևավորել:

Սույն կետում նշված նախնական համաձայնությունը ստանալու նպատակով Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում պարտատոմսերը վաղաժամկետ մարելու նպատակահարմարությունը և դրա հետևանքով անցանկալի հետևանքներ չառաջանալը հիմնավորող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը: Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական համաձայնության տրամադրման կամ մերժման վերաբերյալ, որի մասին ծանուցում է Բանկին 30-օրյա ժամկետի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու կամ Բանկի կողմից ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ, ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել Կենտրոնական բանկի որոշմամբ: Կենտրոնական բանկը սույն կետում նշված նախնական համաձայնությունը տրամադրում է, եթե՝

- Բանկը փոխարինում է պարտատոմսերը առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող մեկ այլ ֆինանսական գործիքով, և այդ փոխարինումը բացասաբար չի անդրադառնա Բանկի ֆինանսական վիճակի վրա, կամ
- Բանկը հիմնավորում է, որ իր կապիտալի համարժեքության նորմատիվները բավարար չափով բարձր են ՀՀ ԿԲ կանոնակարգով սահմանված նվազագույն սահմանաչափերից՝ առանց անժամկետ պարտատոմսերի, և նոր կապիտալի գործիքով փոխարինելու անհրաժեշտությունը բացակայում է:

Բանկի նախաձեռնությամբ իրականացվող անժամկետ պարտատոմսերի հետգնումը և մարման գործընթացը կիրականացվեն միևնույն Ծրագրային Ազդագրի շրջանակներում կատարված թողարկումների հերթականության համաձայն: Ընդ որում, միևնույն տրանշի շրջանակներում թողարկված և տեղաբաշխված անժամկետ պարտատոմսերի հետգնումն ու մարումն իրականացվում է ամբողջ ծավալով՝ առանց մասնակի մարումների կիրառման:

Ընդ որում, Բանկը չպետք է ձևավորի ակնկալիքներ, որ Կենտրոնական բանկը կտրամադրի համաձայնությունը:

Սույն բաժնում ներկայացված Անժամկետ պարտատոմսերի մայր գումարի, արժեկտրոնների և այդ պահի դրությամբ կուտակված արժեկտրոնների վճարման չկատարման, ինչպես նաև պարտատոմսերի դուրսգրման, փոխարկման, հետգնման կամ մարման դեպքերի առաջացման

պարագայում Թողարկողը պարտավորվում է նման դեպքի մասին տեղեկանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվություն՝ ներդրողներին տեղեկացնելու նպատակով: Նույն հաշվետվությունը նույն ժամկետում ներկայացվում է նաև Հայաստանի ֆոնդային բորսա և ՀՀ կենտրոնական բանկ: Հրապարակվող հաշվետվությունը, կախված համապատասխան դեպքի բնույթից, առնվազն պետք է ներառի՝ համապատասխան դեպքի նկարագրությունը և դրա առաջացման ամսաթիվը, ազդեցության ենթակա Անժամկետ պարտատոմսերի ծավալը և արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը (ISIN), չվճարված, փոխարկվող, հետգնվող կամ մարվող գումարի չափը, փոխարկման դեպքում՝ փոխարկման գործակիցը, որը հաշվարկվում է սույն ազդագրով սահմանված կարգով, համապատասխան գործողության իրավական և/կամ պայմանագրային հիմքերը, ներդրողների իրավունքների և պահանջների նկատմամբ ազդեցությունը, Թողարկողի կողմից նախատեսվող հետագա գործողությունները և դրանց իրականացման ակնկալվող ժամկետները, այլ տեղեկություններ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ ներդրողների կողմից ներդրումային որոշումների կայացման համար:

Վարկային/դեֆոլտի ռիսկ. Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ հավանական սնանկացման հետ:

Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ. Գնաճի առկայության պարագայում տեղի է ունենում դրամական հոսքերի գնողունակության անկում: Այսինքն, թողարկվող պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել ավելի ցածր անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից:

Վարկանիշի փոփոխության ռիսկ. Այլ հավասար պայմաններում պարտատոմսի գինը սովորաբար ուղիղ կախվածության մեջ է գտնվում Թողարկողի և/կամ հենց պարտատոմսի վարկային ռիսկը նկարագրող վարկանիշից/վարկանիշներից (Moody's, S&P, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում սովորաբար ընկնում է նաև պարտատոմսի գինը:

2.2 Հիմնական Տեղեկատվություն

Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը.

Բանկի ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային անժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները ուղղվելու են կարճաժամկետ ու երկարաժամկետ վարկերի տրամադրմանն ու ներդրումների իրականացմանը: Հնարավոր ներգրավվող գումարների մեծությունը ենթակա է տեղաբաշխման ըստ օգտագործման հետևյալ նախատեսվող ուղղությունների (ըստ առաջնահերթության).

- փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում,
- հիփոթեքային վարկեր,
- սպառողական վարկեր,
- պետական արժեթղթեր,
- այլ:

Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 օր առաջ՝ Բանկի ինտերնետային կայքում www.unibank.am:

2.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն.

2.3.1 Արժեթղթերի տեսակը և դասը.

Յունիբանկի կողմից թողարկվող պարտատոմսերը անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային անժամկետ պարտատոմսեր են: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

2.3.2 Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել են արժեթղթերը.

Բանկի ոչ փաստաթղթային արժեկտրոնային անժամկետ պարտատոմսերը թողարկվել են Հայաստանի Հանրապետության տարածքում, ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.3 Արժեթղթերի ձևը.

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են: Պարտատոմսերի ռեեստրը վարում է "ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ" ԲԲԸ-ն:

2.3.4 Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը.

Թողարկվող պարտատոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքը 100 ԱՄՆ դոլար է՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար և 10,000 ՀՀ դրամ է՝ ՀՀ դրամով փողարկվող պարտատոմսերի համար: Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 100,000,000 ԱՄՆ դոլար և 50,000,000,000 ՀՀ դրամ: Թողարկվող պարտատոմսերի քանակը կազմում է 1,000,000 հատ՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար և 5,000,000 հատ՝ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը կորոշվի տվյալ տեղաբաշխման ծավալին և անվանական արժեքին համապատասխան:

2.3.5 Թողարկման արժույթը.

Պարտատոմսերը թողարկվելու են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:

2.3.6 Թողարկված արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն.

Բանկի լուծարման դեպքում անվանական անժամկետ պարտատոմսերի սեփականատերերի պահանջները (այդ թվում՝ տոկոսների գծով) ենթակա են բավարարման Բանկի մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո, բացառությամբ Բանկի սովորական բաժնետերերի պահանջների: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի լուծարման դեպքում անվանական անժամկետ պարտատոմսերի սեփականատերերին վճարումները կատարվում են նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ: Ընդ որում՝ անվանական անժամկետ պարտատոմսերի ամբողջ գումարը, նախքան նույն օրենքով անվճարունակ ճանաչվելը, սույն Ազդագրում սահմանված կարգով

Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղված լինելու պարագայում, անժամկետ պարտատոմսերի սեփականատերերը համարվում են Բանկի սովորական բաժնետոմսերի բաժնետերեր, և նրանց պահանջները բավարարվում են Բանկի մյուս մասնակիցների պահանջների բավարարման նույն հիմքով՝ զ) ենթակետի համաձայն**, հետևյալ հերթականությամբ՝**

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից վերոնշյալ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի Խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,

բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,

գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ,

դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.

ե) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

ե.1) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Միևնույն հերթի պարտատերն/սեփականատերերն ունեն իրանց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևույն հերթի պարտատերերի/սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելեւց հետո:

Բանկի կողմից թողարկված անվանական անժամկետ պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով, կարգով և պայմաններով, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև օրենքի 5-րդ հոդվածով սահմանված հատուցման դեպքի ի հայտ գալը անվանական անժամկետ պարտատոմսերը Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հիմքով սույն Ազդագրում նկարագրված կարգով և չափով փոխարկվել են Բանկի սովորական բաժնետոմսերի:

Երաշխավորված ավանդների սահմանաչափերն են.

- Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը 16 միլիոն ՀՀ դրամ է:

- Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը 7 միլիոն ՀՀ դրամ է:

- Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և դրամային պարտատոմսերի գումարը 7 միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային պարտատոմսերի գումարը՝ մինչև 16 միլիոն ՀՀ դրամով:

- Եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և նրա դրամային պարտատոմսերի գումարը պակաս է 7 միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային պարտատոմսերի գումարն ամբողջությամբ և արտարժութային պարտատոմսերի գումարը՝ 7 միլիոն դրամի և հատուցված դրամային պարտատոմսերի տարբերության չափով:

2.3.7 Արժեթղթերից բխող հիմնական իրավունքները, պարտականությունները և սահմանափակումները

Պարտատոմսերի ձեռքբերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները՝

- Ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները՝ համաձայն համապատասխան ժամանակացույցի:
- Պարտատոմսերը կարող են գրավադրվել երրորդ անձանց օգտին, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպությունների հետ իրականացվող ՌԵՊՈ և համանման շուկայական գործարքների շրջանակում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ կամ կիրառելի կարգավորիչ պահանջներով: Սակայն, անժամկետ պարտատոմսերի գրավադրումը արգելվում է միայն Թողարկող բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների ապահովման նպատակով:
- Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում պարտատոմսի սեփականատերը կարող է ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ: Ընդ որում Պարտատոմսի գծով արժեկտրոնների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում բանկի կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում, եթե այն պայմանավորված է սույն Ազդագրի 2.1 կետի *Անժամկետ պարտատոմսերի մայր գումարը, արժեկտրոնները և այդ պահի դրությամբ կուտակված արժեկտրոնները չստանալու ռիսկը* բաժնում նկարագրված իրավիճակով և վճարումների սահմանափակումներով:
- Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը Ֆոնդային բորսայում (ցուցակված/առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ չի թույլատրվում կարգավորվող շուկայից դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր: Բացառություն են կազմում.

- ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները: Դրանք ՀՀ ԿԲ և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,

Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնամ կամ ձեռքբերման գործարքների վերաբերյալ տեղեկությունները նկարագարված են սույն Ազդագրի 2.1 կետի *Անժամկետ պարտատոմսերի մասով պարտավորությունների դուրսգրման կամ մարման ռիսկերը բաժնում:*

Պարտատոմսերի սեփականատերերը պարտավոր են՝

- Մինչև պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ ենթապահառու հանդիսացող այլ անձանց մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ:
- պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվի, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

Պարտատոմսը չի կարող հանդիսանալ բանկի հանդեպ ունեցած որոշակի պարտավորությունների կատարումն ապահովելու միջոց, պարտատոմս ձեռք բերողի պարտատոմսի գծով պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) վերջինիս՝ բանկի հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ:

Սույն Ազդագրով թողարկված պարտատոմս ձեռք բերողները չեն կարող սահմանափակել կամ խոչընդոտել բանկին այլ փոխատուներից նոր փոխառությունների ներգրավման հարցում:

2.3.8 Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները.

Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը հաշվարկվելու է հիբրիդային եղանակով, մասնավորապես.

ա. Շրջանառության առաջին 36 ամիսների ընթացքում անժամկետ պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային հաստատագրված տոկոսադրույք, որը սահմանվելու է Խորհրդի կողմից յուրաքանչյուր թողարկման համար:

բ. Շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո անժամկետ պարտատոմսերի համար կիրառվելու է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք, մասնավորապես

Պարտատոմսերի եռամսյակային վճարման պարբերականության դեպքում

- ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 3 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to

maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread),

- ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ եռամսյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 90-օրյա բազիսային տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread):

Պարտատոմսերի կիսամյակային վճարման պարբերականության դեպքում

- ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությանը (average yield to maturity) գումարելով Բանկի Խորհրդի կողմից թողարկման որոշմամբ սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread),

- ԱՄՆ դոլարով թողարկվող Պարտատոմսերի շրջանառության յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում է տարեկան արժեկտրոնային տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից հրապարակվող՝ SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված 180-օրյա բազիսային տոկոսադրույքին գումարելով Բանկի Խորհրդի կողմից սահմանված հավելյալ տոկոսադրույքը (spread):

Հաշվարկված տոկոսադրույքը կլորացվում է ստորակետից հետո երկրորդ նիշի ճշտությամբ՝ հիմք ընդունելով երրորդ նիշի արժեքը (0–4 դեպքում երկրորդ նիշը մնում է անփոփոխ, 5–9 դեպքում՝ ավելանում է մեկ միավորով), և կիրառվում է հաջորդող ժամակահատվածի (եռամսյակի/կիսամյակի) ընթացքում պարտատոմսերի գնի հաշվարկման և տվյալ ժամանակահատվածի արժեկտրոնի վճարման համար:

ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի ՊՊ եկամտաբերության կորը հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի ''ՊՊ եկամտաբերության կորեր'' բաժնի ''Եկամտաբերության կոր և պարտատոմսերի գների վերաբերյալ տեղեկատվություն (Օրական)'' ենթաբաժնում (ՊՊ եկամտաբերության կորեր | CBA):

SOFR (Secured Overnight Financing Rate) միջինացված տոկոսադրույքը պաշտոնապես հրապարակվում է ԱՄՆ Դաշնային պահուստային բանկի պաշտոնական կայքում (SOFR Averages and Index Data - FEDERAL RESERVE BANK of NEW YORK):

Այսինքն՝ Թողարկողը յուրաքանչյուր ընթացիկ ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը սահմանում է նոր արժեկտրոնային տոկոսադրույք՝ ելնելով տարեկան արժեկտրոնային եկամտաբերության վերոնշյալ հաշվարկից: Եթե ընթացիկ ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկման հիմք է ընդունվում այդ օրվան նախորդող առաջին աշխատանքային օրը:

Հաշվարկված արժեկտրոնային տոկոսադրույքը էական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով մինչև տվյալ արժեկտրոնային տոկոսադրույքի

հաշվարկման օրվա ժամը 17:00 կներկայացվի Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ և մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում (www.unibank.am): Բորսան ստացված տվյալները մուտքագրում է առևտրային համակարգ նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով դրանց հասանելիությունը հաջորդ առևտրային նստաշրջանի մեկնարկից: Ընդ որում, եթե Թողարկողը նշված ժամկետներում Հայաստանի ֆոնդային բորսա չի ներկայացնում հաշվարկված լողացող արժեկտրոնային տոկոսադրույքը, ապա ընթացիկ ժամանակահատվածի համար Բորսան շարունակում է կիրառել նախորդ ժամանակահատվածում գործող արժեկտրոնային տոկոսադրույքը:

Եթե հղումային տոկոսադրույքը տվյալ հաշվարկի օրը հասանելի չէ պաշտոնական աղբյուրներում կամ շուկայի տվյալների մատակարարների հրապարակումներում՝ ներառյալ թողարկողից անկախ տեխնիկական կամ այլ խափանումների, ինչպես նաև ֆորսմաժորային իրավիճակների պատճառով, ապա կիրառվում է տվյալ տոկոսադրույքի վերջին հասանելի օրվա ֆիքսված մակարդակը՝ առանց միջինացման հաշվարկի: Եթե սույն պարբերությունում նշված անհասանելիությունը շարունակվում է մինչև հաջորդ արժեկտրոնային տոկոսադրույքի հաշվարկի ամսաթիվը, ապա կիրառվում է նախորդ արժեկտրոնային ժամանակաշրջանի համար կիրառված տոկոսադրույքը: Երկարաժամկետ կամ կառուցվածքային անհասանելիության դեպքում կսահմանվի փոխարինող հղումային ցուցանիշ՝ ձևավորված կենտրոնական բանկի, պետական մարմինների կամ միջազգային ճանաչված շուկայի տվյալների մատակարարների համադրելի տվյալների հիման վրա: Նման փոխարինող ցուցանիշի կիրառման մեթոդաբանությունը կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկ՝ համաձայնություն ստանալու նպատակով, և կհրապարակվի Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սույն կետի իմաստով եռամսյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 3 (երեք) ամիսները, իսկ կիսամյակ է համարվում պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկվող յուրաքանչյուր 6 (վեց) ամիսները:

Անժամկետ պարտատոմսերի տոկոսագումարները վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի խորհրդի կողմից:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ արժեկտրոնային տոկոսադրույքը փոփոխական հիմքով հաշվարկվելու դեպքում պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նվազել, ինչի արդյունքում ներդրողները կարող են ստանալ ավելի ցածր արժեկտրոնային եկամուտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կարող է նաև աճել, ինչը ներդրողներին հնարավորություն կտա ստանալ ավելի բարձր եկամուտ:

Լողացող տոկոսադրույքի հիմքում ընկած ցուցանիշների նկարագրություն

ՀՀ դրամով թողարկվող անժամկետ պարտատոմսերի շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո կիրառվելու է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք՝ հիմք ընդունելով ՊՊ եկամտաբերության կորի՝ 3 ամիս կամ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերությունը:

Եկամտաբերության կորը միևնույն վարկային ռիսկով, համասեռ, տարբեր ժամկետայնություններով պարտատոմսերի եկամտաբերությունների և մինչև մարում ժամկետայնությունների միջև կապն արտահայտող գրաֆիկական ներկայացումն է: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կառուցվում են պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության և սփոթ տոկոսադրույքների կորեր Նելսոն-Սիգելի մոդելով՝ հիմնվելով պետական պարտատոմսերի գնանշումների և երկրորդային շուկայում իրականացված գործարքների եկամտաբերությունների վրա:

ՊՊ եկամտաբերության կորերի կառուցման համար օգտագործվում են Պետական պարտատոմսերի հետևյալ տվյալները.

1. Բորսայի առևտրային նստաշրջանի ընթացքում գնանշված Ուղենիշային պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումների միջին եկամտաբերությունը,
2. Երկրորդային շուկայում 366 օր և ավելի ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերով իրականացված գործարքների եկամտաբերությունները,
3. Երկրորդային շուկայում Զեղչատոկոսային պարտատոմսերով իրականացված գործարքների գները,
4. Զեղչատոկոսային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը:

Վերոնշյալ գործոնների տատանումները իրենց հերթին կարող են հանգեցնել ՊՊ եկամտաբերության կորի տատանումների:

SOFR-ը (Secured Overnight Financing Rate) ամերիկյան կարճաժամկետ պարտատոմսերով ապահովված ժամ Overnight վարկավորման տոկոսադրույք է, որը համարվում է գրեթե անռիսկ նշաձող: Նրա տատանումները պայմանավորված են մի շարք գործոններով, մասնավորապես.

1. Repo շուկայում առաջարկը և պահանջարկը. SOFR-ը հիմնված է իրական գործարքների վրա՝ repo շուկայում, որտեղ կանխիկ միջոցները փոխառվում են ԱՄՆ գանձարանի պարտատոմսերով. եթե կանխիկի պահանջարկը գերազանցում է առաջարկը, տոկոսադրույքը բարձրանում է, և հակառակը՝ եթե կանխիկի առաջարկը շատ է, տոկոսադրույքը ընկնում է:
2. Ֆեդերալ պահուստային համակարգի (Fed) քաղաքականություն. Fed-ի չափորոշիչները և դրամավարկային քաղաքականությունը անմիջական ազդեցություն են ունենում շուկայի լիկվիդության վրա և, հետևաբար, SOFR-ի վրա:
3. ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի շուկայական դինամիկան. Քանի որ SOFR-ը հիմնված է ԱՄՆ գանձապետական պարտատոմսերով ապահովված repo գործարքների վրա, դրանց պահանջարկը և առաջարկը ուղղակիորեն ազդում են տոկոսադրույքի վրա:
4. Շուկայի ճգնաժամային իրավիճակներ. Ֆինանսական լարվածության ժամանակ repo շուկան կարող է աշխատել ոչ լիովին արդյունավետ, ինչը ժամանակավորապես բարձրացնում է SOFR-ը:
5. Մակրոտնտեսական և քաղաքական զարգացումներ. ԱՄՆ պետական պարտքի սահմանաչափի շուրջ քաղաքական անորոշությունները, ֆինանսական ճգնաժամերը կամ խոշոր գլոբալ իրադարձությունները կարող են մեծացնել կարճաժամկետ ռիսկերը և ազդել repo շուկայի տոկոսադրույքների վրա:

Արժեկտրոնի լողացող տոկոսադրույքի հաշվարկը իրականացնելու է Բանկը:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային վճարումների կատարման կարգը

Անժամկետ պարտատոմսերի տոկոսագումարների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղաբաշխման համար:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային վճարումները կատարվում են այն արժույթով, որով թողարկվել են պարտատոմսերը:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը չեն կարող ունենալ նախորդ արժեկտրոնային ժամանակաշրջանի համար վճարվող արժեկտրոնի ստացման իրավունք:

Պարտատոմսերի սեփականատերերին վճարվող եկամուտները (տոկոսագումարները) վճարվելու են պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման հաջորդ օրվա ընթացքում:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն հաշվարկվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ, ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ թիվը, իսկ անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ ճշտությամբ (կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Արժեկտրոնի գումարները վճարվելու են անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Բանկը չի փոխանցում վճարումներն այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են ՀԿԴ-ից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում, և Բանկն այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Բանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ: Բանկի համապատասխան

ստորաբաժանումը ճշտում է տվյալ հաճախորդին սպասարկող օպերատորից վերջինիս ճշգրիտ հաշվեհամարը:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

ԱԳ = (FV x C) /k, որտեղ

ԱԳ - ն արժեկտրոնի գումարն է,

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

K - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4, կիսամյակային վճարման դեպքում՝ k=2):

Արժեկտրոնի կուտակումը իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$AI=FV \times \frac{C}{K} \times \frac{DCS}{DCC}$$

AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV– մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

K - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4, կիսամյակային վճարման դեպքում՝ k=2),

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում

DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];

DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];

D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;

D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;

D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.9 Արժեթղթերի մարման ժամկետը

Թողարկվող պարտատոմսերը անժամկետ են: Սակայն պարտատոմսերի թողարկման որոշմամբ և սույն Ազդագրում սահմանված դեպքերում պարտատոմսերը կարող են մարվել:

Պարտատոմսերը կարող են մարվել միայն՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, կամ

2. եթե մարման դեպքում ամբողջ գումարն ուղղվում է բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը՝ Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով:

Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում, անկախ պարտատիրոջ կողմից ներդրված գումարի չափի և առանց վերջիններիս լրացուցիչ համաձայնության, Բանկի կողմից թողարկված տրանշի շրջանակներում պարտավորության ամբողջ ծավալը դուրս է գրվում կամ մարվում ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար, սակայն ոչ ավելի, քան անժամկետ պարտատոմսի անվանական արժեքը կամ մայր գումարն է: Իրենց հերթին անժամկետ պարտատոմսերի սեփականատերերը պարտավորվում են մարված գումարն անհապաղ ուղղել Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը Բանկի սովորական բաժնետոմսերի տեսքով:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Ֆինանսական վիճակի վատթարացում է համարվում հետևյալ իրավիճակներից որևէ մեկի ի հայտ գալը.

1) Բանկի առաջին մակարդակի հիմնական կապիտալի համարժեքությունը չի գերազանցում 7.061% սահմանաչափը,

2) Կենտրոնական բանկը գրավոր կերպով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված գնահատականը վատթարացել է կամ կարող է վատթարանալ սահմանված չափից,

3) Կենտրոնական բանկը գրավոր եղանակով տեղեկացնում է Բանկին այն մասին, որ առանց Կենտրոնական բանկի կամ պետական այլ օժանդակության բանկի մոտ կառաջանան (հնարավոր է, որ առաջանան) «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքով սահմանված հիմքերից որևէ մեկը:

Բանկի կողմից թողարկման ենթակա անժամկետ պարտատոմսերը սույն Գլխում նշված դեպքերում ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով:

Անժամկետ պարտատոմսերը փոխարկվում են սովորական բաժնետոմսերի փոխարկման գործակցով, որը ցույց է տալիս յուրաքանչյուր մեկ հատ անժամկետ պարտատոմսի դիմաց ստացման ենթակա սովորական բաժնետոմսերի քանակը: Փոխարկման գործակիցը հավասար է պարտատոմսերի անվանական արժեքի և նշված փոխարկման օրվան նախորդող եռամսյակի ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում Բանկի սովորական բաժնետոմսերով երկկողմանի անընդհատ աճուրդի ժամանակ կնքված գործարքների միջին կշռված գնի հարաբերակցությանը: Եթե անժամկետ պարտատոմսերի փոխարկման օրվան նախորդող եռամսյակի ընթացքում Բանկի սովորական բաժնետոմսերով Բորսայի կողմից կազմակերպված երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով իրականացվող առևտրի շրջանակում որևէ

գործարք չի կնքվել, ապա որպես փոխարկման հիմք ընդունվում է փոխարկման օրվան նախորդող վերջին այն եռամսյակը, որի ընթացքում նշված եղանակով իրականացված առևտրի արդյունքում ձևավորվել է գործարքների վրա հիմնված եռամսյակային միջին գին:

Այսպիսով թողարկվող 1 անժամկետ պարտատոմսի համար փոխարկման գործակիցը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Փոխարկման գործակից = Պարտատոմսի անվանական արժեք / սովորական բաժնետոմսի միջին կշռված գին

Վերոնշյալ եղանակներով Բաժնետոմսերի շուկայական գնի որոշման անհնարինության դեպքում սովորական բաժնետոմսերի արժեքը գնահատելու համար Բանկը կներգրավվի առնվազն մեկ անկախ գնահատող: Այդ դեպքում թողարկվող 1 անժամկետ պարտատոմսի համար փոխարկման գործակիցը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Փոխարկման գործակից = Պարտատոմսի անվանական արժեք / Անկախ գնահատողի կողմից գնահատված բանկի սովորական բաժնետոմսերի արժեք

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսի անվանական արժեքը փոխարկվում է ՀՀ դրամի Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Փոխարկման գործակցով հաշվարկված բաժնետոմսերի քանակը ոչ ամբողջական թիվ ստացվելու դեպքում կատարվում է բաժնետոմսերի քանակի կլորացում մինչև ամբողջական թիվ հետևյալ եղանակով՝ ստորակետից հետո 5, 6, 7, 8 կամ 9 թվերից մեկը լինելու դեպքում՝ կլորացում հավելուրդով, մեկ միավորով դեպի վերև, իսկ 1, 2, 3 կամ 4 թվերից մեկը լինելու դեպքում՝ կլորացում պակասորդով, դեպի ներքև, նախորդող ամբողջական թիվը թողնելով անփոփոխ:

Անկախ սույն կետում նկարագրված փոխարկման կարգի նախքան պարտատոմսերի գումարը (կամ դրա մի մասը) Բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկելը, միջոցներ տրամադրող անձը (փոխկապակցված անձինք) պետք է ստանա (ստանան) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ի համաձայն Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, եթե ներգրավման արդյունքում հետևյալ ցուցանիշը (Ց) գերազանցում է 10, 20, 50 կամ 75 տոկոսը՝

$$Ց = \frac{ՖԳ + ԲԱգործիք}{ԲԱ+ՖԳ} * 100\%$$

որտեղ՝

ՖԳ- պարտատոմսերով միջոցներ տրամադրող անձից (փոխկապակցված անձանցից) տվյալ պարտատոմսերով ներգրավված միջոցների անվանական արժեքը կամ մայր գումարն է,

$ԲԱ_{գործիք}$– պարտատոմսի սեփականատիրոջ (փոխկապակցված անձանց)՝ բանկի կանոնադրական կապիտալում ունեցած ձայնի իրավունք տվող մասնակցության (առկայության դեպքում) անվանական արժեքն է,

ԲԱ- բանկի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի անվանական արժեքն է:

Եթե պարտատոմսը ներգրավված է արտարժութային միջոցներով, ապա սույն կետի հաշվարկում պարտատոմսի անվանական արժեքը կամ մայր գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից ներգրավվման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը չի պահանջվում այն դեպքում, երբ պարտատոմսի միջոցով ներգրավման արդյունքում սույն կետով հաշվարկվող ցուցանիշը գերազանցում է տվյալ կետով սահմանված որոշակի սահմանաչափը, սակայն պայմանագրով սահմանվել է, որ

1) պարտատոմսի սեփականատերը ձեռք չի բերելու տվյալ սահմանաչափը գերազանցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր,

2) պարտատոմսի սեփականատերը գիտակցում է, որ պարտատոմսի փոխարկման դեպքում, սահմանված սահմանաչափը գերազանցող մասն ուղղվում է Բանկի էմիսիոն եկամտի կամ շահույթի հաշվին՝ ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար անհրաժեշտ գումարը լրացնելու նպատակով:

3. Անժամկետ պարտատոմսերը կարող են մարվել նաև, եթե դրանք մարվում կամ հետ են գնվում բանկի նախաձեռնությամբ, և պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

- պարտատոմսերը մարելու նպատակով Բանկը ստացել է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը,
- պարտատոմսերի մարման ամսաթվի և միջոցների ներգրավման պայմանագրի ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի, բացառությամբ, երբ տեղի են ունեցել հարկային օրենսդրության կամ կարգավորման այնպիսի փոփոխություններ, որոնց առկայության դեպքում միջոցները կարող էին չներգրավվել կամ չբավարարել առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվելու պայմաններին և ԿԲ հիմնավոր կարծիքով բանկը միջոցների ներգրավման պահին չէր կարող կանխատեսել փոփոխությունը,
- Բանկը վաղաժամկետ մարումներ իրականացնելու սպասումներ չի ձևավորել:

Սույն գլխում նշված նախնական համաձայնությունը ստանալու նպատակով Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում պարտատոմսերը վաղաժամկետ մարելու նպատակահարմարությունը և դրա հետևանքով անցանկալի հետևանքներ չառաջանալը հիմնավորող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը: Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական համաձայնության տրամադրման կամ մերժման վերաբերյալ, որի մասին ծանուցում է Բանկին 30-օրյա ժամկետի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու կամ Բանկի կողմից ներկայացված

փաստաթղթերում փոփոխություններ, ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել Կենտրոնական բանկի որոշմամբ: Կենտրոնական բանկը սույն կետում նշված նախնական համաձայնությունը տրամադրում է, եթե՝

- Բանկը փոխարինում է պարտատոմսերը առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող մեկ այլ ֆինանսական գործիքով, և այդ փոխարինումը բացասաբար չի անդրադառնա Բանկի ֆինանսական վիճակի վրա, կամ

- Բանկը հիմնավորում է, որ իր կապիտալի համարժեքության նորմատիվները բավարար չափով բարձր են ՀՀ ԿԲ կանոնակարգով սահմանված նվազագույն սահմանաչափերից՝ առանց անժամկետ պարտատոմսերի, և նոր կապիտալի գործիքով փոխարինելու անհրաժեշտությունը բացակայում է:

Բանկի նախաձեռնությամբ իրականացվող անժամկետ պարտատոմսերի հետգնումը և մարման գործընթացը կիրականացվեն միևնույն Ծրագրային Ազդագրի շրջանակներում կատարված թողարկումների հերթականության համաձայն: Ընդ որում, միևնույն տրանշի շրջանակներում թողարկված և տեղաբաշխված անժամկետ պարտատոմսերի հետգնումն ու մարումն իրականացվում է ամբողջ ծավալով՝ առանց մասնակի մարումների կիրառման:

Ընդ որում, Բանկը չպետք է ձևավորի ակնկալիքներ, որ Կենտրոնական բանկը կտրամադրի համաձայնությունը:

2.3.10 Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն Ազդագրի 2.6 կետում բերված բանաձևի համաձայն: Տարեկան եկամտաբերությունը նշված բանաձևում նշված է Y տառով: Տեղաբաշխման ընթացքում տարեկան եկամտաբերությունը հավասար է լինելու հայտարարված արժեկտրոնի եկամտաբերությանը: Տեղաբաշխման ավարտից հետո տարեկան եկամտաբերությունը որոշվելու է երկրորդային շուկայում՝ համաձայն տվյալ պահին շուկայում ձևավորված տոկոսադրույքների:

2.3.11 Թողարկման որոշումը

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է Յունիբանկի Խորհրդի 24.10.2025թ որոշմամբ: Որոշմամբ սահմանվել է թողարկել և տեղաբաշխել անժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր հետևյալ հիմնական պայմաններով՝

- Թողարկման ծավալը՝ 100,000,000 ԱՄՆ դոլար, 50,000,000,000 ՀՀ դրամ
- Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, 10,000 ՀՀ դրամ
- Ժամկետայնությունը՝ անժամկետ
- Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար՝ 10 հատ, ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար՝ 100 հատ:

Բանկի Խորհրդի 11.05.2026 թվականի որոշմամբ սահմանվել է, որ Բանկը կարող է իրականացնել անժամկետ պարտատոմսերի թողարկում, որը նախատեսված է նպատակային խմբերի համար: Նույն որոշմամբ հաստատվել է Անժամկետ պարտատոմսերի ծրագրային ազդագրի լրացումը և սահմանվել է, որ Բանկը կիրականացնի 9մրդ ՀՀ դրամ ծավալով 900,000 հատ անժամկետ պարտատոմսերի թողարկում բացառապես բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերի, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 13.05.2026թ. գրանցված բաժնետոմսերի ազդագրի շրջանակում իրականացված Բանկի սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման ընթացքում բաժնետոմսեր ձեռք բերած անձանց համար, որոնք ունեն և ձեռք են բերել առնվազն 2.600 հատ սովորական բաժնետոմս: Նշված ներդրողներն իրավունք ունեն ձեռք բերելու անժամկետ պարտատոմսեր՝ յուրաքանչյուր 2.600 հատ սովորական բաժնետոմսի հաշվով առավելագույնը 300 հատ անժամկետ պարտատոմս հարաբերակցությամբ: 2.600 հատը գերազանցող սովորական բաժնետոմսերի առկայության դեպքում անժամկետ պարտատոմսերի ձեռքբերման առավելագույն քանակն ավելանում է նույն համամասնությամբ՝ յուրաքանչյուր լրացուցիչ 8 հատ սովորական բաժնետոմսի հաշվով ներդրողը կարող է ձեռք բերել առավելագույնը 1 հատ անժամկետ պարտատոմս:

Միաժամանակ, նման պարտատոմսերի հետագա շրջանառության, փոխանցման, ինչպես նաև դրանցից բխող իրավունքների իրականացման նկատմամբ կիրառվում են Ծրագրային ազդագրով սահմանված բոլոր պայմանները՝ նույն ծավալով և իրավական ուժով, ինչ կիրառվում է Բանկի կողմից սույն ազդագրի շրջանակներում թողարկվող այլ անժամկետ պարտատոմսերի նկատմամբ:

2.3.12 Արժեթղթերի ազատ շրջանառության սահմանափակումները

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի Խորհրդի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չկան, բացառությամբ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի:

«Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման վրա, եթե դա կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում բանկի կանոնադրական հիմնադրամի 20 տոկոսը, ԿԲ-ի նախնական համաձայնության կարիք չկա:

Եթե ստորադաս պարտատոմսերի միջոցների ձեռքբերման արդյունքում անձի կամ փոխկապակցված անձանց մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերը գերազանցում են 10, 20, 50 կամ 75 տոկոսը, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ի համաձայն բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձի կամ փոխկապակցված անձանց կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի, տեղեկությունների ցանկը, ձևը, դրանց ներկայացման կարգը և պայմանները սահմանված է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: ՀՀ Կենտրոնական բանկը պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քննում է դրանք:

ՀՀ Կենտրոնական բանկը մերժում է դիմումը՝ 10-օրյա ժամկետում ծանուցելով դիմողին, եթե՝

– անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի.

– անձն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

– անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի.

– անձի գործողությունները նախկինում հանգեցրել են բանկի կամ այլ անձի սնանկացմանը.

– տվյալ անձը կամ փոխկապակցված անձիք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը ՀՀ Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ ՀՀ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի, գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացման կամ ֆինանսական վիճակի վատթարացման, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկման.

– տվյալ գործարքն ուղղված է, կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը.

– տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձիք Հայաստանի Հանրապետության բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք, որն իրենց հնարավորություն է տալիս կանխորոշել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները.

– փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով, կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

– տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը կամ Բանկի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կարող է խոչընդոտել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտելու կամ արդյունավետ կառավարելու Բանկի ռիսկերը.

– անձը չի ներկայացնում իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

2.3.13 Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգը:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (արժեկտրոնային եկամուտ)
- պարտատոմսի վերավաճառքից (կապիտալի հավելաճ):

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով և եկամտային հարկով:

Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը.

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության համայնքների՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների, ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ու դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների:

Ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից և(կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի գումարը սույն Ազդագրի հրապարակման պահին հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 տոկոս դրույքաչափով:

Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով շահութահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով, իսկ պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալու Թողարկողը:

Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները ազատվում են շահութահարկի վճարումից՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից և բաժնետոմսերից մինչև 2027թ դեկտեմբերի 31-ը ներառյալ համապատասխանաբար ստացվող արժեկտրոնների և շահաբաժինների, ինչպես նաև նշյալ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով.

Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը.

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող եկամուտը:

Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը:

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, որպես հարկային գործակալ հանդես է գալու Թողարկողը:

Եկամտային հարկի վճարումից ազատվում են Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից մինչև 2027թ դեկտեմբերի 31-ը ստացված ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողը նախաձեռնելու է սույն Ազդագրով նախատեսված թողարկվող պարտատոմսերի ցուցակման գործընթաց, Բորսայի կողմից դրական եզրակացության դեպքում՝ Թողարկվող պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտները չեն հարկվելու մինչև 2027թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Թողարկողի սովորական բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգը:

Բաժնետոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ ձևով՝

– միջանկյալ և/կամ տարեկան շահութաբաժիններից,

– բաժնետոմսերի վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (իրացված կապիտալի հավելաճ):

Բաժնետոմսերից ստացվող եկամտի հարկման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են առանձնահատկություններ շահութահարկի և եկամտային հարկի գծով: Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը. Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 4-ի, հոդված 104-ի, հոդված 105-ի, հոդված 107-ի, հոդված 110-ի և հոդված 123-ի համաձայն: Մասնավորապես. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի ստացած շահաբաժինների գումարի չափով, այսինքն՝ շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները) չեն հարկվում շահութահարկով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց դեպքում հարկումը կատարվում է՝ ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 4-ի, հոդված 104-ի, հոդված 105–ի, հոդված 107–ի, հոդված 109-ի, հոդված 110-ի, հոդված 125-ի, հոդված 126-ի և հոդված 132-ի համաձայն: Մասնավորապես. Այս դեպքում շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները), բացառությամբ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ենթակա են շահութահարկով հարկման որպես պասիվ եկամուտներ՝ 5% դրույքաչափով: Հարկումը կատարվում է հարկային գործակալի (բանկի) կողմից՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ (ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից): ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների (բաժնետոմսերից ստացվող եկամուտների) մասով ոչ ռեզիդենտ իրավաբանական անձիք ազատվում են շահութահարկի վճարումից: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 4-ի, հոդված 140-ի, հոդված 141-ի, հոդված 143-ի, հոդված 144-ի, հոդված 147-ի, հոդված 149-ի և հոդված 150-ի

համաձայն: Մասնավորապես. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարվող շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները), բացառությամբ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ենթակա են եկամտահարկով հարկման որպես պասիվ եկամուտներ՝ 5% դրույքաչափով: Հարկումը կատարվում է հարկային գործակալի (բանկի) կողմից՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ (վճարվող եկամտի ընդհանուր գումարից): ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից մինչև 2027թ դեկտեմբերի 31-ը ստացվող շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտներ) հարկման բազան որոշելիս նվազեցվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներից:

Ծանուցում: Չնայած այն հանգամանքի, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը եւ առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն եւ ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվական ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները.

2.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Առաջարկի ընդհանուր ծավալը

Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 100,000,000 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար և 5,000,000,000 ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը սահմանված է 1,000,000 հատ՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար և 5,000,000 հատ՝ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար:

Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը և ավարտը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 3 օր առաջ:

Այն հանգամանքները, որոնց դեպքում առաջարկը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել

Առաջարկի հետաձգման կամ չեղյալ հայտարարման դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ով և հոդված 21-ով:

1. Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 3 աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո: Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

2. ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն: եթե՝

- տեղաբաշխման ընթացքում խախտվել են օրենքի և (կամ) հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
- տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
- ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

3. Տեղաբաշխումը կասեցնելու որոշումը պետք է պարունակի հայտնաբերված խախտումները և բացթողումները վերացնելու հանձնարարական և դրա կատարման ժամկետները, որի կատարումից հետո Կենտրոնական բանկի թույլտվությամբ տեղաբաշխումը կարող է շարունակվել:

4. Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի սահմանված կարգով:

2.4.2 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի նկարագրությունը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները պետք է լրացնեն և Բանկին պատշաճ կերպով առաքեն պարտատոմսերի ձեռքբերման հայտը, որով հավաստում են պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները դառնում են ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտի ներկայացման օրվա ընթացքում:

Պարտատոմսերը թողարկողի կողմից առաքվելու են ներդրողների հաշիվներին համապատասխան գումարը գանձելու օրվանից հետո հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում (T+2 սկզբունքով): Պարտատոմսերի ձեռքբերման հայտը կհամարվի պատշաճ կերպով առաքված, եթե այն առաքվել է ստորև ներկայացված կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկի գրասենյակ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53

Յունիբանկ ԲԲԸ, Գանձապետարան

Էլեկտրոնային փոստ՝ treasury@unibank.am

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Բանկի կողմից բացված և 24100336438700 բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Բանկի կողմից բացված և 24100336627500 բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Համապատասխան ձեռքբերման հայտը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողի կողմից իրենց ձեռքբերման հայտերի բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Ձեռքբերման հայտի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների ձեռքբերման հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը: Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի ձեռքբերման հայտերը պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից ձեռքբերման հայտի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել: Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո ստացված պարտատոմսերի ձեռքբերման հայտերը չեն կարող բավարարվել:

Իրավաբանական անձ և ֆիզիկական անձ ներդրողների համար պարտատոմսի ձեռքբերման հայտի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 1-ում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի պարտատոմսի ձեռքբերման հայտ:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտի ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց ձեռքբերման հայտերը չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ հաշվի վրա մնալը՝ մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտի ներկայացումից հետո նույն բանկային օրվա ընթացքում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների ձեռքբերման հայտերը համարվում են անվավեր:

2.5 Տեղաբաշխման պլանը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտերի և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ձեռքբերման հայտը, որի դիմաց վճարումը Բանկի կողմից բացված տարանցիկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Այն դեպքում, երբ հաճախորդի ներկայացրած ձեռքբերման հայտում նշված պարտատոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսերի մնացորդային քանակը, հաճախորդի ձեռքբերման հայտը բավարարվում է մասնակի՝ պարտատոմսերի մնացորդային քանակին համապատասխան, իսկ եթե, մի քանի հաճախորդ Գլխամասային գրասենյակ և մասնաճյուղ են ներկայացրել ձեռքբերման հայտերը միաժամանակ և այդ ներկայացրած ձեռքբերման հայտում նշված պարտատոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա հաճախորդների ձեռքբերման հայտերը բավարարվում են համամասնորեն:

Պարտատոմսի ձեռքբերման հայտի ներկայացումից հետո մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00 համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների ձեռքբերման հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Ներդրողների շրջանակը

Առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անփանց, որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ազատ վաճառքի սկզբունքով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Բանկի Խորհրդի առանձին որոշմամբ Բանկը կարող է իրականացնել անժամկետ պարտատոմսերի թողարկում՝ ուղղված նպատակային ներդրողների խմբերին, որոնց նկատմամբ կիրառվող սահմանափակումները սահմանվում և ամրագրվում են Բանկի Խորհրդի լրացուցիչ որոշմամբ, ինչպես նաև տեղաբաշխման վերջնական պայմաններով: Ընդ որում, այն դեպքում, երբ անժամկետ պարտատոմսերի թողարկումը նախատեսված է բացառապես Բանկի բաժնետերերի համար, Բանկի բաժնետերեր «Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդը» և «Սֆիկարո Ինվեսթմենթս Լիմիթեդը» չեն մասնակցնի նշված տեղաբաշխմանը:

Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը

Բանկի անվանական պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում Բանկի ինտերնետային

կայքում: Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում գնման նախապատվության իրավունք չի նախատեսվում: Բանկին հայտնի չէ, թե ինչ ծավալով կարող են Բանկի բաժնետերերը կամ Բանկի կառավարման մարմնի անդամները մասնակցել առաջարկին:

2.6 Առաջարկի գինը

Բանկի Խորհրդի կողմից ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի նվազագույն ձեռքբերման չափը սահմանվել է 10 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,000 ԱՄՆ դոլար: ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի նվազագույն ձեռքբերման չափը սահմանվում է 100 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,000,000 ՀՀ դրամ:

Տեղաբաշխումը սկսելուց 3 օր առաջ Բանկի ինտերնետային կայքում կհրապարակվի վերոնշյալ բանաձևով հաշվարկված պարտատոմսի տեղաբաշխման գինը՝ տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի:

Տեղաբաշխման ընթացքում և տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$\mathrm{DP} = CP + FV \cdot \frac{C_t}{f} \cdot \frac{A}{E}$$

$$CP = \frac{FV \times (C_t/f)}{(y/f)} \times (1 + y/f)^{1-\tau} - FV \cdot \frac{C_t}{f} \cdot \frac{A}{E}$$

$$\tau = \frac{DSC}{E}$$

$$C_t = ReferenceRate_{t,reset} + Spread_t$$

FV - պարտատոմսի անվանական արժեքը,

DP - պարտատոմսի ամբողջ գինը (ներառված կուտակված տոկոսագումարը),

CP - պարտատոմսի մաքուր գինը (առանց կուտակված տոկոսագումարի),

C_t - արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը (%),

y – տարեկան եկամտաբերությունը (%),

f - արժեկտրոնի վճարման պարբերականությունը (1 – տարեկան, 2 – կիսամյակային, 4 – եռամսյակային, 12 – ամսեկան),

DSC - գործարքի կատարման օրից մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվը,

E - տվյալ փուլի փաստացի տևողությունն օրերով,

A - նախորդ արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրը, փաստացի օրերի թիվը, իսկ առաջին արժեկտրոնի վճարման դեպքում՝ թողարկման օրից մինչև գործարքի կատարման օրը փաստացի օրերի թիվը,

ReferenceRate – ուղենշային տոկոսադրույք (%),

Spread – սահմանված տոկոսադրույք (%),

Ամսաթվերի միջև օրերի քանակի հաշվարկման մեթոդը - ACT/ACT:

2.7 Տեղաբաշխումը

Երաշխավորված տեղաբաշխումը

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն: Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

Վճարումն ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով Յունիբանկում բացված տարանցիկ հաշվեհամարներին: ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարումները կատարվում են **24100336438700** հաշվեհամարին, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ **24100336627500** հաշվեհամարին:

Պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշիվները բացվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի և ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված ցանկացած այլ մասնագիտացված պահառուի մոտ՝ պարտատոմսերի սեփականատիրոջ համար արժեթղթերի սեփականատիրոջ հաշիվ բացելու և վարելու միջոցով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ (հեռ.՝ (+374) 60 615555): Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է Յունիբանկ ԲԲԸ: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից սահմանված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.amx.am:

2.8 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.8.1. Առևտրին թույլտվությունը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար Բանկը նախատեսում է դիմել «Հայաստանի Ֆոնդային բորսա» ԲԲԸ: Պարտատոմսերի ցուցակման դիմումը կարող է «Հայաստանի Ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից չբավարարվել: Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:

2.8.2. Շուկա ստեղծողները

Սույն ազդագրի շրջանակներում թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում Թողարկողը պարտադիր կնքելու է մասնագիտացված անձի/անձանց հետ շուկա ստեղծողի պայմանագիր:

Ներդրողները կարող են Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի շուկա ստեղծողների մասին տեղեկատվությունը տեսնել Հայաստանի ֆոնդային բորսայի կայքում՝ www.amx.am:

2.9 Լրացուցիչ տեղեկատվություն

Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել երրորդ անձ խորհրդատուների ծառայություններից:

Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտորի անկած աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 4-ում:

Թողարկողի վարկանիշը

Թողարկողն ունի Moody's Service, Inc. Միջազգային վարկանիշ կազմակերպության կողմից շնորհված է հետևյալ վարկանիշը՝

Վարկանիշի դաս	Վարկանիշ
Հեռանկար	Կայուն
Ազգային և արտարժույթով ավանդների երկարաժամկետ վարկանիշ	B1
Վարկունակության բազային գնահատական և ճշգրտված BCA	b2
Բանկի կոնտրագենտի ռիսկի ազգային և արտարժույթով երկարաժամկետ վարկանիշները (CRRs)	B1
Կոնտրագենտի ռիսկի (CR Assessment) երկարաժամկետ գնահատական	B1(cr)

Վարկանիշ ստանալու համար Թողարկողը դիմել է սեփական նախաձեռնությամբ:
Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Անկախ աուդիտորներ

Թողարկողի բաժնետերերի 2024թ տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում որոշում է ընդունվել որպես Թողարկողի 2025-2026թթ ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ ընտրել «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, 8-րդ հարկ

Հեռ.՝ +374 (10) 59 59 99,

Էլ. հասցե՝ info@kpmg.am, general@kpmg.co.am,

Կազմակերպության տնօրենն է Իրինա Գևորգյանը:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են Հավելված 4-ում:

3.2. Ռիսկային գործոններ

Ընդհանուր բնութագիրը

Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Ռիսկերի կառավարման սկզբունքները

Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է Միջազգային հաշվարկների բանկի Բանկային վերահսկողության կոմիտեի (Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտե) փաստաթղթերի, Ռիսկերի կառավարման համընդհանուր սկզբունքների (GARP), ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ-ի նորմատիվ ակտերի հիման վրա: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար:

Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:

Ռիսկերի կառավարման համակարգը

Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի

վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում: Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, իրացվելիության ռիսկի և շուկայական ռիսկի, ընդ որում, վերջինս ենթաբաժանվում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերի: Բանկը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի հսկողության անկախ գործընթացը չի ներառում բիզնեսի հետ կապված ռիսկերը, ինչպիսիք են փոփոխվող միջավայրը, տեխնոլոգիան և արդյունաբերությունը: Դրանք հսկվում են Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Ռիսկերի կառավարման համակարգն իր նպատակին հասնելու համար առաջնորդվում է համակարգված համալիր մոտեցմամբ, որն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝

– բացահայտել և վերլուծել բանկային գործունեության ընթացքում ծագող բոլոր ռիսկերը,
– սահմանել տարբեր ռիսկերի նկատմամբ վերաբերմունք /ռիսկ ախորժակ/,
– իրականացնել ռիսկի յուրաքանչյուր տեսակի որակական և/կամ քանակական գնահատումներ,
– կատարել արդեն իսկ իրականացված և պլանավորված գործարքների գծով ռիսկերի մակարդակի ամբողջական և համալիր վերլուծություն՝ բանկային ռիսկերի համընդհանուր/գումարային չափը որոշելու նպատակով, գնահատել համընդհանուր /գումարային ռիսկերի թույլատրելի չափը և հիմնավորվածությունը:

Բանկի «Ռիսկերի կառավարման քաղաքականությունը» առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ-ի նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով /Generally Accepted Risk Principles – GARP/: Հաշվի առնելով բանկի գործունեության բնույթը և ծավալները, բանկում առանձնահատուկ ուշադրության են արժանանում հետևյալ կարևորագույն ռիսկերը.

Վարկային ռիսկ. Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է այն ռիսկը, որ գործարքի մյուս կողմը իր պարտականությունների չկատարման հետևանքով Բանկին կպատճառի ֆինանսական վնաս: Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը կարող են էապես ազդել բանկի գործունեության վրա, և առաջացնել լրացուցիչ ծախսեր, որոնք բացասական կանդրադառնան բանկի շահույթի վրա: Վարկային ռիսկը Բանկի գործունեության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով ղեկավարությունը առավել մեծ ուշադրությամբ է վերահսկում այն: Վարկային ռիսկերը հիմնականում ծագում են վարկերի ու փոխատվությունների տրամադրմանն ուղղված վարկավորման գործունեությունից, ինչպես նաև Բանկի ակտիվների պորտֆելում պարտքային և այլ արժեթղթերի ավելացմանը հանգեցնող ներդրումային գործունեությունից: Վարկային ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են, օրինակ, վարկային պարտավորությունները և դրանց հետ կապված ապահովման (գրավ, երաշխավորություն, երաշխիք և այլն) պայմանագրերից բխող պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարման ու հսկողության գործառույթներն իրականացվում են Բանկի Ռիսկերի կառավարման տնօրինության վարկային ռիսկի կառավարման խմբի և Վարկային ստորաբաժանման կողմից և զեկուցվում են Բանկի Խորհրդին ու Վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները լավագույնս ներկայացնում են առավելագույն ենթարկվածությունը դրանց հետ կապված վարկային ռիսկին, առանց հաշվի

առնելու ցանկացած գրավ կամ այլ վարկային ապահովումներ: Բանկի վարկային պորտֆելը բավականին դիվեսիֆիկացված է և իր մեջ չի պարունակում խոշոր կենտրոնացումներ: Վարկավորման գերակա ուղղություններն են հանդիսանում մանրածախ վարկավորումն ու ՓՄՁ վարկերի տրամադրումը: Այնուամենայնիվ բանկի պորտֆելում առկա են չաշխատող ակտիվներ, որոնք և բանկի համար կարող են հանդիսանալ պոտենցիալ կորուստների աղբյուր: Համաձայն բանկի վարկային պորտֆելի ռիսկայնության վերլուծությունների բանկի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը 31.03.2026 թվականի դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ		
	Ցածր ռիսկ		Միջին ռիսկ		Բարձր ռիսկ
Վարկեր, այդ թվում՝					
1. ՀՀ ռեզիդենտներին	236,783,600		11,934,416		7,672,977
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին	13,361,674		2,626,383		-
Ընդամենը	250,145,274		14,560,799		7,672,977

Միաժամանակ բանկի վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը՝

Վարկերի գծով պահուստաֆոնդ/ընդհանուր վարկեր =1.88 %

Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր = 7.83 %

Չաշխատող վարկերի պահուստ/ընդհանուր կապիտալ = 2.69 %

Հնարավոր կորուստների հատուկ պահուստ/չաշխատող վարկեր = 23.97 %

Շահույթի ծածկման գործակից (զուտ գործառնական եկամուտներ+պահուստի ստեղծման ծախսեր)/վարկերից զուտ կորուստ = 128.16%

Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տոկոսային մարժա = 1.12%

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ սահմանելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր:

Վարկային ռիսկի հետ աշխատանքում Բանկին հաջողվել է ստեղծել վաղ կանխարգելման ազդանշանների մշակման, հավաքագրման, վերլուծության և գնահատականի համալիր համակարգ, որի նպատակը հաճախորդի վարկային կայունության վատթարացման հատկանիշների վերհանումը և համապատասխան քայլերի կատարումը:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքատեսակների,

տնտեսության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում են Բանկի Խորհրդի կողմից:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Տոկոսադրույքների ռիսկերի նվազեցնելու նպատակով Բանկը նպատակահարմար է գտնում շարունակել աշխատել ֆիքսված տոկոսադրույքներով, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով կառավարել ակտիվների և պարտավորությունների գնագոյացման խնդիրը: Միևնույն ժամանակ տոկոսադրույքի ռիսկը կառավարելու համար Բանկը սահմանում է սահմանաչափեր՝ տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պարտավորությունների ժամկետայնությունների ճեղքվածքների նկատմամբ:

Արտարժութային ռիսկը զսպվում է՝ արտարժութային դիրքերի (ինչպես համախառն այնպես էլ զուտ) կառավարումը կապակցելով շուկայի վարքագծի կանխատեսումների վրա: Ռիսկի նվազեցման համար Բանկի կողմից իրականացվում է ակտիվների և պասիվների կառավարման այնպիսի քաղաքականություն, որը թույլ է տալիս արտարժութային պարտավորություններն առավելագույնս ապահովել համապատասխան արտարժույթով ակտիվներով: Բանկը, ելնելով շուկայում ստեղծվող որոշակի իրավիճակներից, վերլուծելով ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը, չի բացառում նաև հեջավորման կամ առևտրային նպատակներով ածանցյալ գործառնություններ իրականացնել հնարավորինս քիչ ռիսկային դաշտերում՝ ուսումնասիրելով գործընկերների ֆինանսական վիճակը՝ Բանկի համապատասխան ներքին կանոնակարգերով սահմանված չափանիշներին համապատասխան:

Տոկոսադրույքի ռիսկ. Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններից: Բանկի գրեթե բոլոր ակտիվներն ու պարտավորությունները ֆիքսված տոկոսադրույքով են: Այնուամենայնիվ այդ դեպքում կարող են առաջանալ ռիսկեր, կապված բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետների անհամապատասխանության հետ: Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար օգտագործվում են GAP վերլուծությունը և դյուրացիայի մեթոդը: Նշված ռիսկերը զսպելու համար բանկում վարվում է ռիսկերը նվազեցնող գնագոյացման համապատասխան քաղաքականություն:

Արտարժութային ռիսկ. Արտարժութային ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի ոչ բարենպաստ տատանումներից:

Արտարժութային ռիսկը գնահատելու համար բանկն օգտագործում է VAR /value at risk/ մեթոդը և GAP վերլուծությունը, ինչպես նաև տարբեր սթրես-թեստեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու արտարժութային ռիսկի ազդեցությունը բանկի շահութաբերության և տնտեսական նորմատիվների վրա:

Վերլուծության համաձայն, բանկում արտարժութային ռիսկը գնահատվել է ցածր մակարդակի վրա:

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիությունը բանկի՝ իր կողմից ստանձնած ֆինանսական և այլ պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու ընդունակությունն է, իսկ իրացվելիության ռիսկը բանկի կողմից այդ պարտավորությունների ամբողջ ծավալով կատարելու անկարողության արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է: Իրացվելիության

ռիսկը առաջանում է բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հոսքի անհամապատասխանությունից և/կամ չնախատեսված դեպքերում /շոկ/ բանկի կողմից անմիջապես և միանվագ կերպով իր պարտավորությունների կատարման անհրաժեշտության արդյունքում:

Իրացվելիության կառավարման համար բանկն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

– իրացվելիության կառավարում՝ ամենօրյա և անընդհատության հիմունքներով,

– բանկում իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հստակ տարանջատում ստորաբաժանումների միջև,

– բանկի գործունեության ծավալներին և առանձնահատկություններին համարժեք իրացվելիության մակարդակի սահմանաչափերի սահմանում:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սթրես թեստերի կիրառմանը, երբ գնահատվում է բանկի կողմից ներգրավված միջոցների անսպասելի /ժամկետից շուտ/ արտահոսքի ազդեցությունը բանկի իրացվելիության նորմատիվների վրա:

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկն արտաքին գործոնների, ներքին գործընթացների, համակարգերի և մարդկային գործոնի արդյունքում առաջացող կորուստների հավանականությունն է, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:

Բանկը գործառնական ռիսկի կառավարման նպատակներին և խնդիրներին հասնում է հետևյալ մեթոդների և սկզբունքների կիրառմամբ՝

«Պաշտպանական երեք գծերի մոդել»-ն իր մեջ ներառում է հիմնական երեք մակարդակները.

1.աշխատակիցների կողմից իրենց գործունեության ընթացքում անմիջական պատասխանատվություն գործառնական ռիսկի կառավարման համար,

2.ռիսկի կառավարման և վերահսկման գործառույթներ /ռիսկերի կառավարման տնօրինություն, ներքին աուդիտ/,

3.ռիսկերի ռազմավարական վերահսկողություն /Բանկի Խորհուրդ և Վարչություն/:

Գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման համար բանկը կիրառում է հետևյալ հիմնական սկզբունքները.

· գործառնական ռիսկի բացահայտման, վերլուծության, դասակարգման և մոնիտորինգի արդյունավետ համակարգի ներդրում,

· սահմանաչափերի ներդրում,

· իրավասությունների և որոշումների կայացման համակարգի ներդրում,

· տեխնոլոգիական համակարգի ներդրում,

· վերահսկման արդյունավետ համակարգի ներդրում:

Բանկի կողմից ստանձնած ԳՌ ռիսկերի մի մասը Բանկը փոխանցում է Բանկի և ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ապահովագրական կազմակերպությանը (Բանկային ռիսկերի համալիր ապահովագրության պայմանագրով (BBB)

3.3. Տեղեկատվություն թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

Բանկը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2001թ. հոկտեմբերի 9-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն (Գրանցման վկայական Ng. 0373 և Գրանցման համար թիվ 81՝ հաստատված ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի 2001թ. հոկտեմբերի 9-ի թիվ 260 որոշմամբ, Բանկային գործունեության լիցենզիա թիվ 81՝ տրված 10 հոկտեմբերի, 2001թ.): Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայումս Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

Բանկի ապրանքային նշանն է՝

UNIBANK

Գրանցման ամսաթիվ՝ 23.05.2020թ
Գրանցումն ուժի մեջ է մինչև՝ 05.12.2029թ
Գրանցման համար՝ 6906

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Ռուսերեն՝ ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «ЮНИБАНК»
Անգլերեն՝ “UNIBANK” OPEN JOINT STOCK COMPANY

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
Ռուսերեն՝ ОАО «ЮНИБАНК»
Անգլերեն՝ “UNIBANK” OJSC

Բանկի պետական գրանցման վայրն է՝

0025 ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, 1-5 հասցեում:

Բանկի գտնվելու վայրն է՝

0025 ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, 1-5 հասցեում:

Բանկի փոստային հասցեն է՝

0025, ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, 53, թիվ 1-5:

Կապի միջոցները՝

Հեռախոս՝ + 37410 59 22 59
Ֆաքս՝ + 37410 55 51 40
Էլ. փոստ՝ unibank@unibank.am
Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Բանկի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն,

Բանկի մասնաճյուղերը՝

Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 48 մասնաճյուղ, որից 30 մասնաճյուղ Երևանում, 18 մասնաճյուղ Հայաստանի այլ շրջաններում, մեկը՝ Ղազախստանի Հանրապետությունում: Յունիբանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում:

Նշանակալի իրադարձություններ

2003թ. Յունիբանկը դարձավ «ԱրՔա» տեղական վճարային համակարգի անդամ:

2004թ. Յունիբանկը դարձավ Visa International համակարգի անդամ:

2005թ. Յունիբանկը մեկնարկեց հիփոթեքի և ավտովարկերի գծով վարկավորման լայնածավալ ծրագիր, զբաղեցնելով, համապատասխանաբար, երկրորդ և առաջին տեղերը ՀՀ բանկային համակարգում:

2006թ. Յունիբանկը դարձավ IFAD-ի գյուղական վայրերում ներդրումների խթանման ծրագրի, ինչպես նաեւ SMEDNC հիմնադրամի փոքր եւ միջին բիզնեսի զարգացման ծրագրի մասնակից: 2007թ. Յունիբանկը համալրեց իր կանոնադրական կապիտալը մինչև 5 599 մլն ՀՀ դրամ:

2007թ. ներդրվեց ABN AMRO Բանկի ռիսկերի կառավարման ծրագիրը:

2008թ. Յունիբանկը դարձավ ՀՀ ֆոնդային բորսայի անդամ: Յունիբանկը գործարկեց Blade տեսակի սերվերային խումբ, որով ներդրվեց ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման միջազգային փորձը:

2009թ. Յունիբանկի մասնաճյուղային ցանցը միացվեց տվյալների գլխավոր բազային: Ներկայումս բանկի բոլոր մասնաճյուղերն աշխատում են online ռեժիմում:

2010թ. հունիսի 3-ին Moody's միջազգային վարկանշային գործակալությունը Յունիբանկին շնորհեց ֆինանսական կայունության E+, արտարժույթով և ազգային դրամով ավանդների Ba3 երկարաժամկետ և NP կարճաժամկետ վարկանիշերը: Բոլոր վարկանիշերն ունեցել են «Կայուն» կանխատեսումը:

2011թ. Յունիբանկը Ասիական Զարգացման Բանկի հետ համատեղ իրականացնում է առեւտրի ֆինանսավորման ծրագիր, որի շրջանակներում ձեռներեցներին տրամադրվում են ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ:

2012թ. Thomson Reuters միջազգային կորպորացիան Յունիբանկին շնորհեց Հայաստանում «Լավագույն դիլինգ բանկ 2012» կոչումը: 2012թ. վերջին Բանկը ավարտին հասցրեց իր սեփական պրոցեսինգային կենտրոնի գործարկման գործընթացը, որը 2013թ. հունվարին հավաստագրվեց Visa International-ի կողմից:

2013թ. Համաշխարհային բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Առևտրի և զարգացման Սևծովյան բանկը (BSTDB) և Յունիբանկը ստորագրեցին համագործակցության պայմանագիր՝ ուղղված ՓՄՁ-ների վարկավորման ծրագրի ընդլայնմանը: Յունիբանկը սկսեց համագործակցություն Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատի (AmCham) հետ՝ դառնալով կազմակերպության թղթակից անդամ:

2014թ. Յունիբանկը սկսեց համագործակցություն Intel Express միջազգային դրամական փոխանցումների համակարգի հետ: Բանկը նաև ներկայացրել է ISO 27001:2013 տեղեկատվության անվտանգության համակարգը, ներդրել է Unibank Prive անհատական ծառայությունները: Յունիբանկը ստացել է նաև «Գերազանց Որակ» մրցանակը (RBI STP Quality Awards) Ավստրիայի Ռայֆայզեն Միջազգային Բանկից SWIFT փոխանցումների ծառայության բարձր որակ ապահովելու համար:

Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայումս Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

Յունիբանկը Գերմանա-հայկական հիմնադրամի և գերմանական KfW բանկի հետ համատեղ սկսել է բիզնես վարկավորման նոր ծրագիր՝ ուղղված ձեռնարկությունների էներգոարդյունավետության բարձրացմանը: Ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեն ոչ միայն ստանալ բիզնես վարկեր շահավետ պայմաններով, այլ նաև՝ էապես կրճատել ձեռնարկության էներգոծախսերը:

2015թ. հուլիսի 1-ից Բանկը դարձավ Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր և կարգավորվող շուկայում հաշվարկային համակարգի անդամ:

2015թ.-ին կայացած "ՄԵՐԿՈՒՐԻ" ամենամյա մրցանակաբաշխությանը "Հայաստանի Ժողովրդական բանկ" անվանակարգում "Յունիբանկ" ԲԲԸ-ն ճանաչվեց լավագույնը:

2016թ.-ին բանկում ներդրվեց ISO 27001:2013 միջազգային ստանդարտների պահանջին համապատասխան տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը:

Յունիբանկը ստեղծեց corp.unibank.am կայքը՝ հատուկ իր բաժնետերերի և ներդրողների համար: Յունիբանկը գործարկեց Տվյալների մշակման ժամանակակից կենտրոն, որն իրենից ներկայացնում է ունիվերսալ տեղեկատվական ենթակառուցվածք՝ նախատեսված սերվերային, ցանցային և կոմունիկացիոն սարքավորումների տեղաբաշխման և անխափան աշխատանքի ապահովման համար:

Յունիբանկին հանձնվեց PCI DSS 3.2 ստանդարտի պահանջների համապատասխանության հավաստագիրը և Հայաստանում առաջինը հաջողությամբ անցավ SWIFT-ի ատեստավորումը:

2017թ հունվարի 13-ին 2016թ.-ի արդյունքներով Յունիբանկն անցավ PCI DSS (PCI Data Security Standard) ստանդարտի պահանջներին համապատասխանության սերտիֆիկացիոն աուդիտը և ստացավ PCI DSS 3.2 հավաստագիր: PCI DSS-ը տվյալների անվտանգության լավագույն ստանդարտներից է, որը մշակվել է միջազգային վճարային համակարգերի կողմից՝ նպատակ ունենալով կատարելագործել քարտերի միջոցով իրականացվող գործարքների պաշտպանության տեխնոլոգիան:

2017թ-ի հունվարից Յունիբանկն ավտոմատացրեց փոքր բիզնեսին տրամադրվող անգրավ վարկերի հաստատման գործընթացը՝ ներդնելով «Protobase Laboratories» ընկերության մշակած նորագույն CRM համակարգը: CRM համակարգի շահագործումը նպաստեց հաճախորդների սպասարկման որակի և արդյունավետություն բարձրացմանը, էապես արագացրեց բիզնես վարկերի տրամադրման գործընթացը և հնարավորություն տվեց կրճատել բանկի ծախսերը:

Յունիբանկն առաջին բանկն է Հայաստանում, որը հաջողությամբ անցավ SWIFT վճարային համակարգի կողմից մշակված անվտանգության պահանջներին համապատասխանության ատեստավորումը:

2018թ.-ին Յունիբանկը և Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալությունը կնքեցին համագործակցության համաձայնագիր: Յունիբանկը և FMO-ն իրականացրեցին «Կանայք բիզնեսում» նոր վարկավորման ծրագիրը, որի շրջանակներում կին ձեռներեցներին տրամադրվեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկավորում:

Unibank Prive-ն արժանացավ SPEAR'S Russia Wealth Management Awards 2018 մրցանակի ԱՊՀ երկրներում private banking-ի ոլորտում հաճախորդների լավագույն սպասարկում կազմակերպելու համար:

2019 թվականին Յունիբանկը դարձավ Visa միջազգային վճարային համակարգի մրցանակի հաղթող «Largest Visa Issuance in Armenia» անվանակարգում՝ Հայաստանում Visa քարտերի թողարկման թվով առաջատար դիրքի համար:

2020 թվականի դեկտեմբերին Բանկը մասնաճյուղ բացեց Աստանա Միջազգային Ֆինանսական Կենտրոնում՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման նոր հնարավորությունների ձեռքբերման նպատակով: Մասնաճյուղի աշխատանքը նախատեսված է առանց դրամարկղային հանգույցի միայն անկանխիկ միջոցներով գործառնությունների կատարման համար:

2020 թվականի դեկտեմբերի 25-ին Յունիբանկն արժանացել է Visa միջազգային վճարային համակարգի կողմից սահմանված «Sustainability Icon» մրցանակին:

2021 թվականին Raiffeisen Bank International ավստրիական բանկը միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու համար Յունիբանկին շնորհել է «Որակի գերազանցություն 2020» (STP Quality Award) մրցանակը: STP (Straight-Through Processing)-ը մրցանակը շնորհվում է միջազգային վճարային գործարքների ավտոմատացման և մշակման արագություն ապահովելու համար:

Յունիբանկի տվյալների մշակման կենտրոնն ամբողջությամբ սկսեց սնուցվել արևային էներգիայով: Սա Հայաստանում առաջին բանկային տվյալների կենտրոնն է, որն աշխատում է վերականգնվող էներգիայի աղբյուրով: Դեկարբոնացման նպատակով կանաչ էներգիային անցումը Յունիբանկի զարգացման ռազմավարության հիմնական բաղադրիչներից մեկն է:

2021 թվականին Յունիբանկը թողարկեց արտոնյալ բաժնետոմսեր, որոնք հնարավորություն են տալիս ստանալու ֆիքսված շահաբաժիններ: Բաժնետոմսերի եկամտաբերությունը կազմում է 12% տարեկան, իսկ թողարկման ծավալը՝ մոտ 1,1 մլրդ ՀՀ դրամ:

2022 թվականի սեպտեմբերին ESG Sustainalytics ոլորտում առաջատար վերլուծական ընկերության փորձագետները ներկայացրեցին Յունիբանկի «կանաչ» պարտատոմսերի թողարկման հայեցակարգի վերաբերյալ SPO-ն՝ երկրորդ կողմի կարծիքը և հաստատեցին դրա համապատասխանությունը միջազգային չափանիշներին ու Green Bonds Principles 2021-ի պահանջներին:

Յունիբանկի աջակցությամբ/ֆինանսավորմամբ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում բացվեց թվային բանկինգի լաբորատորիան՝ թվային բանկայի համակարգի համար նոր խելացի լուծումներ գեներացնելու և բանկային ոլորտը վերապատրաստման մի շարք ծրագրերով և մասնագիտական կադրերով համալրելու համար:

Յունիբանկի private banking-ը՝ Յունիբանկ Պրիվեն, ճանաչվել է լավագույնը Հայաստանում՝ ըստ Euromoney Global Private Banking Awards 2023-ի:

2023 թվականի մարտի 29-ին Լոնդոնում հանդիսավոր արարողության ժամանակ Յունիբանկը դարձավ Best Domestic Private Bank in Armenia անվանակարգի մրցանակակիր:

Նույն թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Յունիբանկը դարձավ նաև Ֆրանսիա-Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի (Ֆրանսիա-Հայաստան ԱԱՊ) անդամ:

Բանկը 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում դարձավ նաև Ֆրանսիա-Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի (Ֆրանսիա-Հայաստան ԱԱՊ) անդամ: Համագործակցության շրջանակում Յունիբանկը մտադիր է իրականացնել նոր նախագծեր՝ ընդլայնելով հարաբերությունները ֆրանսահայ գործարար համայնքի և Հայաստանում ֆրանսիական ընկերությունների հետ: Visa-ն Յունիբանկին շնորհեց Pinnacle Partnership մրցանակը:

Բանկային, ֆինանսական և ներդրումային ոլորտի ամենահեղինակավոր և ազդեցիկ պարբերականներից մեկի՝ Euromoney ամսագրի կողմից բանկի աշխատանքի որակի գնահատումը հաստատեց Յունիբանկի բարձր մակարդակը պրեմիում բանկային ծառայությունների և կապիտալի կառավարման ոլորտում:

2023 թվականի հոկտեմբերի վերջին Երևանում տեղի ունեցավ FINTECH360 միջազգային համաժողովը, որում տարբեր երկրներից ժամանած փորձագետներ քննարկեցին թվային փոխակերպման վերջին միտումներն ու լավագույն փորձը:

Յունիբանկի հովանավորությամբ հիմնադրվեց նոր սպորտային ակումբ՝ Unisport-ը, որը միավորեց տարբեր մարզաձևերը ներկայացնող պրոֆեսիոնալ մարզիկների: Ակումբի կազմում ընդգրկվեց նաև Unisport ֆուտզալի թիմը:

2024 թվականի մայիսի 6-ին կայացավ Յունիբանկ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որն ամփոփեց բանկի 2023 թվականի գործունեության արդյունքները: Հաշվետու տարին բանկն ավարտեց 4,5 մլրդ դրամ շահույթով, և բանկի Խորհուրդը Բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացրեց շահութաբաժինների վճարման հարցը: Շահութաբաժինների ընդհանուր գումարը կազմեց 4,1 մլրդ դրամ:

2024 թվականին Յունիբանկը միացել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների բանկային ասոցիացիային (BACEE), ինչը բանկին հնարավորություն է տալիս մասնակցել BACEE-ի տարբեր միջոցառումներին, այդ թվում՝ համաժողովներին և վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև օգտվել տեղեկատվության և տվյալների եզակի բազայից:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճի էական դինամիկան՝ Յունիբանկը դարձավ «ՅՈՒԲԻՓԵՅ» (UBPAY) դրամական փոխանցումների հայաստանյան միասնական առաջին վճարահաշվարկային համակարգի օպերատոր: Դրամական փոխանցումների «ՅՈՒԲԻՓԵՅ» հայաստանյան համակարգը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար: UBPAY փոխանցումները կարելի է ստանալ կանխիկ, բանկային հաշվին կամ քարտին փոխանցելու միջոցով:

Յունիբանկը՝ որպես լիզինգի շուկայի ակտիվ մասնակից, անդամակցել է «ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիա»-ին: Համագործակցությունը հնարավորություն կտա բարելավել լիզինգային գործարքի իրականացումը բոլոր կողմերի համար, ստանալ ոլորտային միասնական լուծումներ, որոնք կնպաստեն ճյուղային բարեփոխումներին և ոլորտի կատարելագործմանը:

2025 թվականի հունիսի 6-ին կայացավ Յունիբանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որն ամփոփեց բանկի 2024 թվականի գործունեության արդյունքները: Հաշվետու տարին բանկն ավարտեց 8.2 մլրդ ՀՀ դրամ շահույթով: Հաշվի առնելով բանկի գործունեության

ֆինանսական արդյունքը՝ որոշում ընդունվեց Բանկի կուտակված շահույթից 7.8 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով վճարել տարեկան շահաբաժիններ:

2025 թվականին Moody's-ը բարձրացրել է Յունիբանկի ազգային և արտարժույթով ավանդների երկարաժամկետ վարկանիշները B2-ից մինչև B1 և հեռանկարը սահմանել կայուն: Վարկունակության բազային գնահատականը և ճշգրտված BCA-ն b3-ից բարձրացվել են մինչև b2 մակարդակի, բանկի կոնտրագենտի ռիսկի ազգային և արտարժույթով երկարաժամկետ վարկանիշները (CRRs)՝ B2-ից մինչև B1, իսկ կոնտրագենտի ռիսկի (CR Assessment) երկարաժամկետ գնահատականy՝ B2(cr)-ից բարձրացվել է մինչև B1(cr):Վարկանիշների բարձրացումը պայմանավորված է վերջին երկու տարիների ընթացքում բանկի վարկային պորտֆելի որակի և շահութաբերության զգալի բարելավմամբ:

2025թվականին Յունիբանկը իրականացրել է 12% հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի թողարկում և տեղաբաշխում շուրջ 1.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական և տեղաբաշխման ծավալով:

2025թվականի դեկտեմբերին Յունիբանկը առաջին անգամ Հայաստանում իրականացրեց անժամկետ պարտատոմսերի թողարկում՝ երեք տրանշով, ընդհանուր 6.5 մլրդ ՀՀ դրամ և 9 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով: Բանկի կողմից թողարկված անժամկետ պարտատոմսերը սպառվեցին հաշված օրերի ընթացքում, ինչը վկայում է ներդրողների բարձր հետաքրքրության մասին: Անժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը զգալիորեն գերազանցում էր ավանդական պարտատոմսերինը. մասնավորապես դրամային պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը կազմել է 13.75%, իսկ դոլարային պարտատոմսերինը՝ 8.3%:

2025թվականի դեկտեմբերին Յունիբանկը դարձավ Visa միջազգային վճարային համակարգի մրցանակի հաղթող «Visa Strategic Partnership Award 2025» անվանակարգում:

2026 թվականի մարտին Յունիբանկը միջազգային հեղինակավոր MFR գործակալության կողմից արժանացել է «Հաճախորդների պաշտպանության հավաստագրման» (Customer Protection Certification) արծաթե մակարդակի: Այս հավաստագրումը վկայում է, որ բանկը լիովին համապատասխանում է հաճախորդների պաշտպանության ոլորտում սահմանված հիմնական միջազգային չափանիշներին և ցուցաբերում է կայուն առաջընթաց՝ առավել առաջադեմ պրակտիկաների ներդրման ուղղությամբ:

2026 թվականի ապրիլին Յունիբանկը միացել է Ածխածնի արտանետումների հաշվառման ֆինանսական համագործակցությանը (Partnership for Carbon Accounting Financials, PCAF)՝ շրջակա միջավայրի վրա իր ֆինանսական գործունեության ազդեցությունը գնահատելու և այն ավելի թափանցիկ դարձնելու համար: PCAF-ը ֆինանսական հաստատությունների համաշխարհային համագործակցություն է, որը նպաստում է վարկերի և ներդրումների արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման միասնական մոտեցումների ներդրմանը: Միանալով համագործակցությանը՝ Յունիբանկը մտադիր է կիրառել միջազգային ճանաչում ունեցող մեթոդաբանություն՝ իր գործունեության հետ կապված արտանետումների չափման և բացահայտման համար:

Այսօր Յունիբանկն ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: 31.03.2026թ. դրությամբ Յունիբանկն ունի ավելի քան 330,000 ակտիվ հաճախորդ:

3.3.2. Ներդրումները

ա. Էական ներդրումներ

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը Բանկի կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

բ. Ընթացիկ էական ներդրումներ

Ընթացքի մեջ գտնվող էական ներդրումների Բանկի կողմից չեն իրականացվում:

գ. Ապագա էական ներդրումներ

Բանկի կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

3.3. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Բանկը ՀՀ բանկային համակրգում դիրքավորվել ու իր գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ կարևորելով թե՛ մանրածախ, թե՛ կորպորատիվ և թե՛ ներդրումային բիզնեսի զարգացումը՝ բանկային ծառայությունների ստեղծման ու մշակման հիմքում դնելով յուրաքանչյուր հաճախորդի և աշխատկցի հարմարավետությունը, ծառայությունների պարզությունն ու հասանելիությունը:

Միջոցների ներգրավում. Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով:

Վարկերի և այլ միջոցների տեղաբաշխումներ. Բանկն իրականացնում է բիզնեսի վարկավորում, փաստաթղթային ակրեդիտիվներ, վարկային գծեր, օվերդրաֆտներ, բանկային երաշխիքներ և ֆակտորինգ: Յունիբանկը փոքր և միջին բիզնեսի վարկավորման զարգացումը դիտարկում է որպես առաջնահերթ ռազմավարություն: Յունիբանկն առաջարկում է ինչպես նպատակային սպառողական վարկեր, այնպես էլ ընդհանուր սպառողական նպատակի՝ վերանորոգման, բժշկական, ճամփորդական կամ այլ ծախսերը հոգալու կամ էլ ապրանքներ գնելու վարկավորում: Բանկը տրամադրում է նաև հիփոթեքային վարկեր բնակելի անշարժ գույք, բիզնես տարածք գնելու, կառուցապատելու կամ վերանորոգելու համար, ավտովարկեր, ոսկու գրավով վարկեր և այլն:

Բանկային փոխանցումների իրականացում. Բանկը 2003 թվականից սկսած անդամակցում է SWIFT միջազգային համակարգին: Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային ավելի քան 20 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած արժույթով և վճարային գործիքով:

Համաձայն ՀՀ ԿԲ-ի փետրվարի 20, 2024 թվականի թիվ 32 Ա որոշման, Յունիբանկին տրամադրվել է «ՅՈՒԲԻՓԵՅ» (UBPAY) դրամական փոխանցումների հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվությունը:

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում. Յունիբանկն իր հաճախորդներին առաջարկում է տեղական ArCa վճարային համակարգի քարտեր, ինչպես նաև Visa International

և Mastercard քարտեր: Յունիբանկը սեփական պրոցեսինգային կենտրոնի միջոցով թողարկում է նաև Visa չիպային քարտեր:

Արտարժույթով և արժեթղթերով գործարքներ և բրոքերային ծառայություններ. Բանկը կատարում է արտարժույթի առք ու վաճառքի և արժեթղթերով գործարքներ, առաջարկում է տարբեր ներդրումային գործիքներ:


Կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների ընդունում. Յունիբանկն ունի կոմունալ վճարումների ընդունման համակարգ: Հաճախորդներին անվճար տրամադրվում է UNIPAY կոմունալ վճարումների քարտ, որի վրա նշված է անհրաժեշտ տեղեկատվությունը հաճախորդների համար արագ և հարմարավետ վճարումներ կատարելու համար:

Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում Հաճախորդներին վճարահաշվարկային ծառայությունների համալիր մատուցման նպատակով Բանկը իրականացնում է հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանցից վճարների ընդունումը: Յունիբանկն իր հաճախորդներին առաջարկում է հատուկ կառուցված անվտանգ տարածքում տեղակայված անհատական պահատեղեր՝ թանկարժեք իրերն ու փաստաթղթերը պահելու համար:

Հաճախորդների սպասարկման որակի բարձրացման, ինչպես նաև չափազանց կարևոր համարվող մասնաճյուղերի աշխատանքի թեթևացման նպատակով, բանկը մշակել և շրջանառության մեջ է դրել սեփական մոբայլ բանկինգ ծառայությունը՝ նախատեսված ֆիզիկական և իրավաբանակն անձանց համար:

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկային հայտերի հաստատման ավտոմատացում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:

Վարկային պորտֆելի կառուցվածքը 31.03.2026թ դրությամբ




Մանրածախ բիզնես

Մանրածախ բիզնեսի զարգացումը Բանկի համար շարունակել է առաջնահերթություն մնալ նաև 2026 թվականին: Երկրում բնակարանաշինության զարգացման հետ մեկտեղ հիփոթեքը դարձավ մանրածախ վարկավորման զարգացման նիշային գործիք: Մանրածախ բիզնեսում Բանկի աշխատանքն ուղղված է գործիքակազմի կատարելագործմանը, բիզնես գործընթացների օպտիմալացմանը, հաճախորդների հետ հետադարձ կապի ուժեղացման միջոցով սպասարկման որակի բարձրացմանը: Կայուն աճ է արձանագրվում ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման համար սպառողական և ոսկու գրավով վարկերի գծով:

Կորպորատիվ բիզնես

Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններից մեկը փոքր և միջին բիզնեսին աջակցելն է: Կորպորատիվ բիզնեսի հիմնական խնդիրն էր կենտրոնանալ բիզնեսի առավել ցածր ռիսկային հատվածների վարկավորման վրա՝ մեծացնելով վարկային պորտֆելի ծավալը և շուկայում Բանկի մասնաբաժինը, շեշտը դնելով բարեխիղճ վարկառուների հետ հարաբերությունների զարգացման և նրանց համապարփակ սպասարկման վրա: Նիշային ուղղություններն էին փոքր արդյունաբերությունը, առևտուրը, գյուղատնտեսությունը, շինարարությունը և ծառայությունների մատուցման ոլորտը: Բանկը ակտիվորեն սկսել է ներգրավել և վարկավորել շինարարության ոլորտը՝ պայմանավորված բնակելի շենքերի և կոմերցիոն տարածքների շինարարության տեմպերի նկատելի աճով: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ ևս կնքվել է համաձայնագիր ֆինանսական լիզինգ տրամադրելու գործընթացում համագործակցության շրջանակները ընդլայնելու նպատակով:

Կորպորատիվ վարկերի կառուցվածքը 31.03.2026թ դրությամբ



Սպասարկման ցանց, հաճախորդային բազա

Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 48 մասնաճյուղ, որից 30 մասնաճյուղ Երևանում, 18 մասնաճյուղ Հայաստանի այլ շրջաններում, մեկը՝ Ղազախստանի Հանրապետությունում: Բանկը դեռևս 2022 թվականից սկսեց վերափոխել իր մասնաճյուղերը՝ նպատակ ունենալով նորարարական միջավայրում հետաքրքիր տեխնոլոգիական լուծումների միջոցով հաճախորդներին բարձրակարգ ծառայություններ մատուցել և դրանով իսկ հաճախորդների համար առավել հաճելի դարձնել Բանկ այցելությունը:

Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով Բանկն առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.

Private Banking.

Բանկը ձգտում է դառնալ գործընկեր իր հաճախորդների համար, և ոչ թե լինել պարզապես ֆինանսական հաստատություն: Իր VIP հաճախորդներին Յունիբանկը երաշխավորում է անհատական և ճկուն մոտեցում, ժամանակի խնայողություն, ցանկացած իրավիճակում աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն, մասնավոր կապիտալի կառավարման համաշխարային փորձի կիրառում: Այսպիսով Բանկը նպատակ ունի հաճախորդների համար ստեղծել հարմարավետ պայմաններ և դրանով իսկ անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրին: Բանկային ծառայությունների համալիր փաթեթից բացի, Unibank Privé-ի հաճախորդները ստանում են նաև մի շարք լրացուցիչ հնարավորություններ և ծառայություններ: Priority Pass քարտը տալիս է մուտքի իրավունք 120 երկրների օդանավակայանների 700 VIP-գոտիներ՝ հաճախորդին հնարավորություն ընձեռելով հարմարավետ սպասելու իր թռիչքին:

Առցանց բանկային ծառայություններ

Բանկն առաջարկում է մի շարք առցանց բանկային ծառայություններ և շարունակաբար քայլեր է ձեռնարկում դրանց ընդլայնման ուղղությամբ:

UNIBANK INVEST՝ Բրոքերային ծառայություններ

Հաշվի առնելով հաճախորդների կողմից ներդրումներ կատարելու նոր հնարավորությունները եւ դրանց ավելի բարձր եկամտաբերությունը Յունիբանկում 2023 թվականից սկսած բրոքերային ծառայությունների ներդրման ուղղությամբ աշխատանքներ սկսվեցին: Այժմ մեր հաճախորդները կարող են ներդրումներ կատարել համաշխարհային բոլոր առաջադեմ բորսաներում, այդ թվում՝

- NASDAQ
- New York Stock Exchange (NYSE)
- Toronto Stock Exchange (TSE)
- London Stock Exchange (LSE)
- Xetra Stock Exchange (XETRA)
- Swiss Exchange (SIX)
- EURONEXT
- Tokyo Stock Exchange (TSE)
- Hong Kong Exchange (HKEX)

Հաճախորդներին հասանելի է նաև Eurex-ը (European Exchange), որն ածանցյալ գործիքների (ֆյուչերսներ և օպցիոններ) առևտրի աշխարհի առաջատար հարթակներից մեկն է: Յունիբանկը առաջարկում է բրոքերային ծառայություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Հաճախորդները կարող են բանկում անվճար բացել բրոքերային հաշիվ և գործարքներ կատարել արժեթղթերով մոբայլ հավելվածի կամ WEB տերմինալի միջոցով, ներդրումային գործիքները ներառում են՝

- Բաժնետոմսեր
- Պետական և կորպորատիվ պարտատոմսեր
- ETF
- 70 երկրների արժութային զույգեր

3.5. Բանկի կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի Հավելված 2-ում:

3.6. Բանկի Խմբի կառուցվածքը

ՀՀ ԿԲ-ի 28.04.17թ.-ի թիվ 24 ԾՕՀ Ա որոշման համաձայն, «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերությունը և «ՌԵԳՈ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը որակվել են /ճանաչվել են/ որպես հայկական բազմապրոֆիլ ցածր ռիսկային ֆինանսական խումբ՝ բանկային ենթախմբով՝ «ՅՈՒՆԻԳՐՈՒՊ» անվանմամբ, որի կառուցվածքը ներկայացված է Բանկի պարտատոմսերի Ազդագրի Հավելված 3-ում:

Բանկը դուստր ընկերություններ չունի:

3.7. Բանկի հիմնական միջոցները

Առկա չեն բանկի տրամադրության տակ գտնվող և մոտակայքում պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցներ (շենքեր, շինություններ, հողամաս, սարք, սարքավորում և այլն), որոնց արժեքը գերազանցում է թողարկողի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը:

3.8. Բանկի կապիտալ ռեսուրսները (պասիվները)

Բանկի պասիվները 31.03.2026թ. դրությամբ կազմել են 394,685 մլն ՀՀ դրամ, որի 13.8%-ը կամ 54,450 մլն ՀՀ դրամը կազմում է ընդհանուր կապիտալը, իսկ 86.2%-ը կամ 340,685 մլն ՀՀ դրամը՝ ընդամենը պարտավորությունները:

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 24,925 մլն ՀՀ դրամ, գլխավոր պահուստը՝ 1,316 մլն ՀՀ դրամ, վերագնահատման պահուստները՝ 1,453 մլն ՀՀ դրամ և չբաշխված շահույթը՝ 12,577 մլն ՀՀ դրամ: Պարտավորությունների կառուցվածքում խոշորագույն հոդված են հանդիսանում հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, որոնք կազմել են ընդամենը պարտավորությունների 84.8%-ը կամ 288,549 մլն դրամ:

Բանկը իր եռամսյակային միջանկյալ և տարեկան հաշվետվությունները հրապարակում է բանկի ինտերնետային կայքի՝ www.unibank.am «Հաշվետվություններ» բաժնում, որտեղից կարելի է սեփական կապիտալի և ընդամենը պարտավորությունների մասին առավել ընդգրկուն տեղեկատվություն ստանալ:

Բանկի դրամական հոսքերը գոյանում են նրա հիմնական գործունեությունից, այն է վարկերի տրամադրում, ավանդների ներգրավում, արժեթղթերի առք ու վաճառք, արտարժույթի առք ու վաճառք, վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, փոխանցումներ և այլն:

Բանկի դրամական հոսքերի հիմնական գումարներն 31.03.2026թ. դրությամբ արտացոլված են ստորև:

հազ. ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2025թ 4-րդ եռ	2026թ 1-ին եռ.
Դրամական միջոցների զուտ հոսքեր նախքան գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**18,592,184**	**4,597,925**
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(15,158,779)**	**(19,861,502)**
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**(612,359)**	**(15,263,577)**
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**(2,293,032)**	**667,336**
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**12,720,918**	**(4,092,764)**

Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**10,719,749**	**(19,551,411)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**51,966,052**	**62,685,801**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**62,685,801**	**43,134,390**

հազ. ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2025թ 4-րդ եռ	2026թ 1-ին եռ.
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր, մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**18,592,184**	**4,597,925**
Ստացված տոկոսներ	32,108,294	8,640,370
Վճարված տոկոսներ	(16,050,205)	(4,137,879)
Ստացված կոմիսիոն գումարներ	5,300,388	1,022,363
Վճարված կոմիսիոն գումարներ	(1,509,458)	(354,117)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)	2,403,725	626,209
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)	6,191,984	1,205,848
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ	2,614,965	1,288,488
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(10,255,152)	(2,592,003)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(2,212,357)	(1,101,354)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(15,158,779)**	**(19,861,502)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)	(60,753,056)	(11,117,040)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)	(59,000,337)	(10,952,786)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)	25,670	28,033
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)	(1,598,485)	(649,580)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	(179,904)	457,293
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	45,594,277	(8,744,462)
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/նվազում	41,004,872	(3,278,841)
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)	4,589,405	(5,465,621)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**3,433,405**	(15,263,577)

Վճարված շահութահարկ	(4,045,764)	
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**(612,359)**	**(15,263,577)**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)	11,076,444	(14,679,678)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)		
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)	(7,821,212)	13,964,418
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(1,371,034)	(361,925)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,712,796)	(387,346)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	138,812	183,315
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	(2,603,246)	1,948,552
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**(2,293,032)**	**667,336**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**x**	**x**
Վճարված շահաբաժիններ	(8,356,034)	
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	(359,544)	(34,029)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	5,720,398	(3,834,601)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	10,633,935	
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում	5,400,000	
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)	(317,837)	(224,134)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**12,720,918**	**(4,092,764)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	904,222	(862,406)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**10,719,749**	**(19,551,411)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**51,966,052**	**62,685,801**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**62,685,801**	**43,134,390**

Բանկային գործունեությունն իրենից ներկայացնում է ֆինանսական միջնորդություն՝ միջոցների ձեռքբերման և տեղաբաշխման իրականացում, ուստի կարելի է ասել, որ ցանկացած պարագայում բանկի համար միջոցների ներգրավումը հանդիսանում է առաջնային և հիմնական խնդիր: Բանկի գործունեության վրա ուղղակի կամ անուղղակի ազդող կապիտալ ռեսուրսների օգտագործման սահմանափակումներ առկա չեն:

3.9. Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար բանկի կողմից հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված քաղաքականությունը առկա չէ:

3.10. Արտոնագրերը և Լիցենզիաները

Բանկը 2001թ.-ի հոկտեմբերի 10-ին ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա, որն անժամկետ է: Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայում Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

3.11. Զարգացման վերջին միտումները

Բանկի ընդհանուր ակտիվները 31.03.2026թ. դրությամբ կազմել 394.69 մլրդ ՀՀ դրամ, որից վարկային պորտֆելը կազմել է 247.08 մլրդ ՀՀ դրամ, իսկ արժեթղթերի պորտֆելը՝ 21.48 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 340.23 մլրդ ՀՀ դրամով: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները կազմել են 288.55 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի զարգացման հիմնական սպառնալիքները կապված են մակրոտնտեսական ռիսկերի հետ. տնտեսության աճի տեմպերի նվազում, տնտեսության որոշ ճյուղերի լճացում, հաճախորդների դեֆոլտների աճ, փոխարժեքների տատանում և այլն: Այս սպառնալիքները պահանջում են, որ Բանկն ավելի լավ աշխատի առկա հաճախորդների բազայի հետ (պահման, խաչաձև վաճառքներ, կարիքների վերլուծություն և այլն), ինչպես նաև որոնի հուսալիության բարձր մակարդակով նոր թիրախային սեգմենտներ:

Մինչև 2028թ ավարտը Բանկն իր առջև դրել է հետևյալ ռազմավարական նպատակները.

Ցուցանիշ	2026թ.	2027թ.	2028թ.
Ակտիվներ (հազ. դրամ)	439,807,680	491,025,210	551,249,400
Ակտիվների եկամտաբերություն (ROA)	3.33%	3.41%	3.49%
Կապիտալի եկամտաբերություն (ROE)	24.50%	25.50%	27.10%
Զուտ շահույթ (հազ. դրամ)	14,022,060	16,223,610	18,546,450

Յունիբանկի զարգացման ռազմավարության վեկտորն ուղղվել է դեպի ESG-օրակարգ, ինչը ենթադրում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարություն, աշխատակիցների և հաճախորդների հանդեպ պատասխանատու վերաբերմունք, թափանցիկ գործունեություն, սոցիալական, բնապահպանական նախաձեռնություններին մասնակցություն:

Դեկարբոնիզացիայի նպատակով Յունիբանկի տվյալների մշակման կենտրոնն անցել է արևային էներգիայով սնուցման, ավտոպարկն ամբողջությամբ փոխարինվել է էլեկտրական մեքենաներով: Թվային տեխնոլոգիաների և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության շնորհիվ զգալիորեն կրճատվել է թղթի սպառումը:

Միջնաժամկետ հեռանկարում Բանկի հիմնական ռազմավարական նախաձեռնությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ ոլորտները և կարող է ընդլայնվել ու համալրվել փոփոխվող իրողություններով թելադրված նոր խնդիրներով.

- Բաժնետերերի կառուցվածքի ընդլայնում, սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավում,
- Մանրածախ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում,

մասնավորապես հիփոթեքային վարկավորման ծավալների ավելացում,

- Ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում (արհեստական բանականության ամբողջական ներդրում անգրավ մանրածախ վարկերի համար, մարքեթփլեյսի հարթակի և էլեկտրոնային առևտրի գործարկում, հեռահար բանկային սպասարկման համակարգերի զարգացում):
- Որպես երկարաժամկետ համաշխարհային միտում ESG ստանդարտների ներդնում

Բանկում, որոնք կօգնեն պաշտպանել բանկը եւ դրա հաճախորդներին կլիմայի փոփոխության եւ սոցիալական այլ խնդիրների հետ կապված տարբեր ռիսկերից:

- Թղթակցային ցանցի ընդլայնում. տրանզակցիոն եկամուտների աճի նոր գործիքակազմի մշակում
- Բրոքերային ծառայությունների գործիքակազմի ընդլայնում

3.12. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Յունիբանկը կարևորում է արդյունավետ և թափանցիկ կորպորատիվ կառավարման համակարգի առկայությունը՝ ուղղված լավագույն պրակտիկայի կիրառմանը: Բանկի կորպորատիվ կառավարման քաղաքականությունը միտված է Խորհրդի անկախության, նրա կողմից կառավարման գործունեության արդյունավետ վերահսկման և բաժնետերերի հետ լավ հարաբերությունների ապահովմանը:

Յունիբանկի գլխավոր նպատակը կորպորատիվ կառավարման, բանկային տեխնոլոգիաների կիրառման և սպասարկման միջազգային բարձր չափանիշների հետ համապատասխանության ապահովումն է: Բանկերում Կորպորատիվ կառավարումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես <Բանկերի և բանկային գործունեության մասին> ՀՀ օրենքով և <Բաժնետիրական ընկերությունների մասին> ՀՀ օրենքով, ինչպես նաև Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով, որոնք կողմնորոշված են դեպի թափանցիկ հաշվետվողականության ապահովումը կառավարման բոլոր մակարդակներում:

Խորհրդի կողմից ընդունվել են Կորպորատիվ կառավարման ուղենիշներ: Ուղենիշների դրույթների հետ համապատասխանությունը սերտորեն վերահսկվում է Ներքին աուդիտի ստորաբաժանման, ինչպես նաև Խորհրդին և Վարչությանը կից գործող հանձնաժողովների կողմից՝ նրանց համապատասխան իրավասությունների շրջանակներում:

Առողջ թիմային ոգին նույնպես մեր Բանկի կորպորատիվ կառավարման հաջողության կարևոր գրավականն է: Յունիբանկը ձգտում է Բանկում ձևավորել ու զարգացնել կորպորատիվ մշակույթ և թիմային ոգի՝ աշխատակազմի կանոնավոր վերապատրաստման, կորպորատիվ միջոցառումների կազմակերպման և Բանկի ընհանուր նպատակների ու առաքելության պարզաբանումների միջոցով:

Խորհրդի և Վարչության աշխատանքներին օժանդակում են Հանձնաժողովները, որոնք առաջարկություններ են ներկայացնում իրենց իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ, մասնավորապես՝ կապված ներքին հսկողության, ռիսկերի, ֆինանսական հաշվետվությունների, վարձատրության և այլ հարցերի հետ: Դա թույլ է տալիս, որ ղեկավարությունը իր ժամանակի ավելի մեծ մասնաբաժինը նվիրի ռազմավարական, հեռանկարային օրակարգային խնդիրներին: Խորհրդին կից հանձնաժողովների կազմի մեջ մտնում են Խորհրդի անդամները,

իսկ Վարչությանը կից հանձնաժողովների կազմի մեջ՝ Վարչության անդամները և Բանկի այլ համապատասխան ղեկավարները: Խորհրդին կից հանձնաժողովները խորհրդակցական մարմիններ են:

Խորհրդին կից գործող հանձնաժողովներն են՝ Աուդիտի հանձնաժողովը, Ռիսկերի հանձնաժողովը, Ներդրումային հանձնաժողովը, Անձնակազմի և Պարգևատրումների հանձնաժողովը:

Վարչությանը կից գործող հանձնաժողովներն են՝ Սակագնային հանձնաժողովը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը, Մասնաճյուղային ցանցի կառավարման հանձնաժողովը, Բիզնեսի գնահատման հանձնաժողովը, Անվտանգության հանձնաժողովը, Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովը, Անձնակազմի կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտե:

Բանկի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի Ամփոփաթերթի 1.5 կետում:

Կառավարման մարմիններ. Ժողով

Բանկի բարձրագույն կառավարման մարմինը Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասության շրջանակներն ընդգրկում են ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի մասով որոշումներ կայացնելը:

Ժողովի իրավասություններն են՝

- Բանկի կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը,
- Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը, օրենքով սահմանված կարգով:
- Բանկի վերակազմակերպումը և լուծարումը,
- Լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփ լուծարային հաշվեկշռի հաստատումը,
- Խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ Ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
- բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման ճանապարհով կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների ամփոփումով Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամի չափի ավելացումը,
- Բանկի աուդիտն անցկացնող անձի հաստատումը,
- Բանկի տարեկան ֆինանսական և հարկային հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժնի վճարման մասին որոշման ընդունումը, տարեկան շահութաբաժինի չափի հաստատումը,
- Ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

- բաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),
- օրենքով սահմանված դեպքերում՝ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համաձայնությունը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),
- Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով նախատեսված հատուկ դեպքերում,
- Բանկի կողմից թողարկվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման ձևի /բաց կամ փակ բաժանորդագրություն/ որոշումը,
- օրենքով և կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Կառավարման մարմիններ. Խորհուրդ

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությունը հանդիսացող հարցերի: Խորհրդի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձիք: Խորհրդի անդամները և Վարչության անդամները ևս չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձիք: Խորհրդի կազմը սահմանվում է առավելագույնը 9 անդամ: Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Բանկի Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով:

Բանկի Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով Խորհրդին վերապահված իրավասության շրջանակներում: Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ՝ ներկա գտնվող մասնակիցների կողմից: Ընդհանուր ժողովի կողմից որոշվում է Խորհրդի անդամի պաշտոնավարության ժամկետը, որը չի կարող մեկ տարուց պակաս լինել: Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

– Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշում, այդ թվում՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատում.
– Բանկի տարեկան և արտահերթ ժողովների գումարում, ժողովի օրակարգի հաստատում, Ժողովի գումարման և անցկացման հետ կապված կազմակերպչական աշխատանքների իրականացման ապահովում.
– Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակում, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցում և վարձատրության պայմանների հաստատում.
– Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանում.
– Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորում, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատում, ներքին աուդիտորների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում և վարձատրության պայմանների հաստատում.
– Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի և կատարողականի հաստատում.
– Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում.
– Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի ավելացում, եթե Կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ Խորհրդին նման լիազորություն է վերապահվել.

– Շահաբաժինների վճարման մասին առաջարկությունների ներկայացում Ընդհանուր ժողովին, շահաբաժինների յուրաքանչյուր վճարման դեպքում՝ շահաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի պատրաստում. ցուցակի մեջ ընդգրկվում են այն մասնակիցները, որոնք մասնակիցների ցուցակի պատրաստման ամսաթվի դրությամբ նշված են Բանկի գրանցամատյանում և ունեն Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք.

– Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատում և ներկայացում Ընդհանուր ժողովին.

– Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացում Ընդհանուր ժողովի հաստատմանը.

– Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի որոշում.

– Բանկում անցկացված աուդիտի կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում.

– Օրենքի համաձայն Բանկի կողմից ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը որոշող կանոնակարգերի ընդունում.

– Բանկի և նրա անկախ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատում, նրանց միջև գործառույթների բաշխում.

– Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշումների ընդունում.

– Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործում.

– Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և գրասենյակների ստեղծում.

– Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության, այսինքն՝ հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվության վարման սկզբունքների, հիմքերի, միջոցների, կանոնների, ձևերի և ընթացակարգերի սահմանում.

– օրենքով սահմանված այլ հարցերով որոշումների ընդունում:

Վերը նշված հարցերը ենթակա են Բանկի Խորհրդի բացառիկ իրավասությանը և չեն կարող լուծման համար փոխանցվել Բանկի այլ կառավարման մարմինների կամ այլ կողմի, բացի օրենքով սահմանված դեպքերից:

Առնվազն տարին մեկ անգամ Խորհուրդը նիստի ժամանակ քննարկում է աուդիտորական հաշվետվությունը (Նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և, անհրաժեշտության դեպքում, վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կանոնակարգերը և այլ նորմատիվային փաստաթղթերը:

Կառավարման մարմիններ. Վարչություն

Վարչությունը, որպես մշտապես գործող կոլեգիալ գործադիր մարմին, իրականացնում է Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը:Վարչությունը հաշվետու է Խորհրդին և կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:Վարչության նախագահը և անդամները Վարչության կազմում ընտրվում և ազատվում են Խորհրդի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Վարչության անդամի պաշտոնից ազատվելը ինքնաբերաբար չի հանգեցնում Բանկում զբաղեցրած պաշտոնից ազատման: Վարչության կազմի մեջ պարտադիր ընդգրկվում են Վարչության նախագահը, նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը:

Վարչության իրավասության մեջ են մտնում Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և Բանկի կանոնադրությամբ վերապահված են Բանկի Ժողովի, Խորհրդի և Վարչության նախագահի բացառիկ իրավասությանը:

Վարչությունը լիազորված և իրավասու է՝

- իրականացնել Բանկի Խորհրդի հաստատմանը ներկայացվող բոլոր հարցերի նախնական քննարկումը, դրանց հետ առնչվող բոլոր փաստաթղթերի պատրաստումը,
- Խորհրդի հաստատմանը ներկայացնել առաջարկներ նոր սակագների ներդրման և դրանց չափերի վերաբերյալ,
- քննարկել Բանկի առևտրային գործունեության արդյունքները,
- պատրաստել փաստաթղթեր կապված Բանկի կողմից արժեթղթերի թողարկման հետ,
- հաստատել Բանկի կանոնները, կարգերը, ընթացակարգերը և այլ ներքին փաստաթղթերը, բացառությամբ կանոնադրության 11.24 կետի ը) ենթակետով սահմանված փաստաթղթերի,
- կազմակերպել Բանկի բաժնետերերի, Խորհրդի որոշումների կատարումը և Բանկի տարեկան պլանների իրականացման աշխատանքները,
- Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները,
- կոորդինացնել Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատանքները,
- լուծել Բանկի, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընթացիկ, աշխատանքային և այլ խնդիրները,Բանկի կանոնադրությանը համապատասխան, որոշում ընդունել բանկային նոր ծառայությունների ներդրման մասին,
- լուծել ներբանկային հսկողության, հաշվառման և հաշվետվությունների կազմակերպման հարցերը, պարբերաբար տեղեկացնել Խորհրդին Բանկի ֆինանսական դրության, նախընտրելի ծրագրերի իրականացման վերաբերյալ,
- ներկայացնել Խորհրդին Բանկի կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանները, տարեկան հաշվետվությունները և հաշվապահական այլ փաստաթղթերը,
- ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ ներքին աուդիտն իրականացնող անձին,
- սահմանել պատասխանատվություն Խորհրդի որոշումների չկատարման համար, Բանկի քաղաքականության և ռազմավարության իրականացման համար ներքին հսկողության կազմակերպման և իրականացման բնագավառում,
- իրականացնել Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների վերլուծություն և արդյունքների ընդհանրացում,
- սահմանել Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայողների պարտականությունները ներքին հսկողության կոնկրետ ոլորտներում,
- ստեղծել տեղեկատվության փոխանակման արդյունավետ համակարգեր, որոնք ընդգրկում են Բանկի օպերացիոն քաղաքականությունն ու գործունեության ընթացակարգերը որոշակիացնող բոլոր փաստաթղթերը,
- որոշումներ ընդունել Բանկի ընթացիկ տնտեսական գործունեության վերաբերյալ,
- ստեղծել կոմիտեներ/հանձնաժողովներ Բանկի գործունեության տարբեր ոլորտների հարցերի վերաբերյալ նյութերի մշակման և որոշումների պատրաստման համար,

- Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, դրանց վարչակազմակերպական կառուցվածքները, աշխատողների հաստիքացուցակները, աշխատավարձի դրույքաչափերը,
- Իրականացնել կանոնադրությամբ և օրենքով Վարչությանը վերապահված այլ լիազորություններ:

Կառավարման մարմիններ. Վարչության նախագահ

Ժողովի և Խորհրդի որոշումների կատարման, ինչպես նաև Բանկի առջև դրված ընթացիկ խնդիրների լուծման նպատակով Բանկում գործում է միանձնյա գործադիր մարմին՝ Վարչության նախագահ: Վարչության նախագահը նշանակվում է Խորհրդի կողմից պաշտոնավարման հինգ տարի ժամկետով: Վարչության նախագահի բացառիկ իրավասությանն են ենթակա Բանկը ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ներկայացնելը, ինչպես նաև Բանկի անունից գործարքներ կնքելը: Վարչության նախագահը Բանկի անունից լիազորված և իրավասու է՝

- իր իրավասության շրջանակներում տնօրինել Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, կնքել բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ կատարելու համար անհրաժեշտ գործարքներ, կամ լիազորել դրանց կնքումը այլ անձի, (գույքի օտարման և ձեռք բերման՝ Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ից մինչև 50% արժեքով գործարքները կնքելով միայն Խորհրդի կամ 50%-ից ավելի Ժողովի նախնական համաձայնության առկայության դեպքում),
- տալ լիազորագրեր, այդ թվում՝ Բանկի մասնաճյուղերի կառավարիչներին,
- նախագահել Վարչության նիստերը և ղեկավարել Վարչության աշխատանքները
- ստորագրել և իրավասու մարմիններին ներկայացնել Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվությունները, հայցադիմումները և անհրաժեշտ այլ փաստաթղթեր,
- աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել Բանկի աշխատակիցներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական տույժի միջոցներ,
- սահմանել իր տեղակալների աշխատանքային ոլորտները,
- իր իրավասության սահմաններում և Վարչության որոշումների հիման վրա արձակել հրամաններ, կարգադրություններ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,
- Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական տույժի միջոցներ,
- իր իրավասության սահմաններում հաստատել ֆինանսական գործառնությունների կատարման հրահանգներ և ներբանկային հսկողությունը կանոնակարգող այլ փաստաթղթեր,
- իր իրավասության սահմաններում և Բանկի իրավասու կառավարման մարմինների որոշումների հիման վրա Բանկի պարտապանների պարտքի նկատմամբ տույժերի հաշվարկի դադարեցման, հաշվարկված տույժերի ու տուգանքների զիջման մասին առաջարկությունները ներկայացնել Վարչության հաստատմանը,
- հսկել Բանկի ծախսերի հիմնավորվածությունը,
- իրականացնել կանոնադրությամբ կամ օրենքով Բանկի Ժողովի կամ Խորհրդի իրավասությունը չհամարվող այլ լիազորություններ:
- Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև

- լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Խորհրդին կից գործող հանձնաժողովներ

Աուդիտի հանձնաժողով

Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- քննարկել արտաքին աուդիտորական ստուգումներով արձանագրված խախտումների շտկման միջոցառումների ծրագիրը և վերահսկել դրանց իրագործումը, ինչպես նաև արտաքին աուդիտի հետ համատեղ քննարկել Բանկի ֆինանսական հաշվետվողական համակարգի և կառավարման գործիքների ամբողջականության և արդյունավետության հիմնահարցերը,
- գնահատել Ներքին աուդիտի կանոնակարգով սահմանված Ներքին աուդիտի աշխատակիցների գործառույթների և պարտականությունների կատարումը, Ներքին աուդիտի աշխատանքի ընդհանուր կազմակերպումը, Ներքին աուդիտի կողմից կատարված էական բացահայտումները և ղեկավարության պատասխանը:

Ռիսկերի հանձնաժողով

Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- ուսումնասիրել ֆինանսական ռիսկերի զսպման ներքին հսկողության համակարգը և օրենսդրության պահպանմանն ուղղված միջոցառումները՝ հաշվապահական հաշվառման իրականացման և ֆինանասական հաշվետվության նախապատրաստման նպատակով,
- գնահատել ներքին վերահսկողության և ռիսկերի կառավարման ընթացակարգերի ընդհանուր արդյունավետությունը,
- Խորհրդին տրամադրել խորհրդատվություն ռիսկերին առնչվող հարցերի վերաբերյալ (ներառյալ՝ Խորհրդին ներկայացվող և ռիսկերին վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ), որոնց մեջ մտնում են ինչպես ֆինանսական ռիսկերը, այնպես էլ ոչ ֆինանսական ռիսկերը,
- դիտարկել ինչպես ներքին, այնպես էլ Կենտրոնական բանկի պահանջով Բանկում իրականացվող սթրես-թեստեր:

Ներդրումային հանձնաժողով

Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- Բանկի պահուստների, ներդրումների կառավարման որոշումների ընդունման և դրանց կատարման վերահսկողություն,
- ներդրումային գործունեության ընթացիկ համակարգմանն առնչվող խնդիրների և ֆինանսական վերլուծությունների, Բանկի հեռանկարային զարգացման ծրագրերի քննարկում,
- Բանկի ակտիվային գործարքներում ներդրումների և դրանց սահմանաչափերի նախնական հաստատում և Խորհրդի հաստատմանը ներկայացում:

Անձնակազմի և Պարգևատրումների հանձնաժողով

Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- Բանկի մարդկային ռեսուրսների ընդհանուր կառավարման մշակույթի ձևավորումը և զարգացումը, Վարձատրության արդյունավետ համակարգի գործունեությունը
- Աշխատողների առաջխաղացման և մասնագիտական աճի սանդղակի (գրեյդային համակարգի) ձևավորումը և զարգացումը,

- Կորպորատիվ մշակույթի ձևավորումը և զարգացումը, այդ թվում Բանկի ռազմավարությանը համահունչ ստեղծված արժեքների համակարգի պահպանումը:

Վարչությանը կից գործող հանձնաժողովներ

Վարչությանը կից գործող հանձնաժողովներն են՝ Ակտիվների և Պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողով, SS և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով: Բանկում գործում են նաև Տենդերային հանձնաժողով, Վարկային Սքորինգի հանձնաժողով, Որակավորման հանձնաժողովը, Պահուստների կառավարման կոմիտե և Վարկային Կոմիտե:

Ակտիվների և Պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողովի գործունեությունը/գործառույթներն են ակտիվների և պասիվների կառավարումը, դրանց վերլուծությունը և կառուցվածքի արդյունավետության մոնիտորինգը, Բանկի իրացվելիության պահանջների բավարարման աղբյուրներն ու օգտագործման ուղիները, Բանկի պարտավորությունների և ակտիվների ցանկալի կամ նպատակային կառուցվածքը և ժամկետայնության սահմանները, իրացվելի միջոցների առաջնային աղբյուրների սպառման դեպքում այլընտրանքային աղբյուրների ընտրության չափանիշները, դրանց հայթայթման ուղիները, ակտիվների և պասիվների կառավարման հետ կապված ներքին լիմիտների և նորմատիվների պահպանման նկատմամբ հսկողությունը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, մատուցվող ծառայությունների սակագների տեսակների, սակագների և դրույքաչափերի սահմանման և վերանայման սկզբունքների սահմանումը:

SS և տեղեկատվական անվտանգության հանձնաժողովի գործառույթներն են ՏԱԿՀ արդյունավետության բարձրացումը, անվտանգության, ներքին ռեժիմի պահպանության հարցեր, SS և տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացի կազմակերպումը, SS և տեղեկատվական ռեսուրսների հիմնական ռիսկերի քննարկումը:

Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովի գործառույթներն են հաստատված ծախսերի նախահաշվի փոփոխությունները, Բանկի կողմից հրապարակային մրցույթների կազմակերպման և անցկացման նպատակով աշխատանքների կորդինացումը, օտարման նպատակով դուրսգրման ենթակա հիմնական միջոցների, փոքրարժեք և արագամաշ առարկաների արժեքների որոշումը և այլն:

Անձնակազմի գնահատման հանձնաժողովի գործառույթներն են Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների և աշխատակիցների կողմից կատարվող աշխատանքների ընթացիկ գնահատումը, Բանկի աշխատակիցներին խրախուսելու վերաբերյալ հարցերի քննարկումը, աշխատանքային վեճերի և կոնֆլիկտների ուսումնասիրությունը և այլն:

Տենդերային հանձնաժողովը ստեղծվել է Բանկի ընթացիկ գործունեության ապահովման համար, անհրաժեշտ գույքի (տնտեսական, տեխնիկական և այլն) գնումների գործընթացը կոլեգիալության սկզբունքով կազմակերպելու նպատակով՝ հայտարարված մրցույթի/տենդերի կազմակերպման, անցկացման և մրցույթի/տենդերի հաղթողին որոշելու համար:

Վարկային սքորինգի հանձնաժողովի գործառույթներն են՝ Բանկի կողմից կիրառվող սքորինգային համակարգի աշխատանքի գնահատումը և ստուգումը, անհրաժեշտության դեպքում փոփոխությունների կատարումը:

Բանկում առկա է Վարկային Կոմիտե. դրա գործառույթներն են Բանկի վարկավորման կառավարումը և զարգացումը, Վարկային քաղաքականությունը, Բանկի վարկային պորտֆելի նկատմամբ վերահսկողության իրականացումը նվազագույն եկամտաբերություն ապահովելու նպատակով:

Պահուստների կառավարման հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի <<Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին>> որոշման համաձայն հսկվող դասակարգված վարկերի պայմանների վերանայումը և ստանդարտ դասի բերելը, ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված վարկերի առողջացման նպատակով դրանց պայմանների վերանայումը և ստանդարտ դասի բերելը:

Որակավորման հանձնաժողովի նպատակն է՝

- իրականացնել ՀՀ կենտրոնական բանկում գրանցման ենթակա ղեկավարների (բացառությամբ Խորհրդի անդամների) և մասնաճյուղերի կառավարիչների թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգում,
- մշակել մոտեցումներ և չափորոշիչներ ղեկավարների մասնագիտական որակավորման և գիտելիքների ստուգման, պահպանման և արդիականացման ուղղությամբ,
- Մշակել և հաստատել Բանկի համար ընդունելի սեմինարների և դասընթացների և/կամ դրանք անցկացնող կազմակերպությունների ցանկը,

Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները.

Կառավարման մարմնի անդամի անուն ազգանունը	**Բնակության վայրը**	**Զբաղեցրած պաշտոնը**	**Բանկից դուրս կառավարման անդամի ծավալած գործունեությունը**	**Մասնագիտությունը (որակավորումը), փորձառությունը**	**Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում ո՞ր ընկերություններում և ինչպիսի՞ ղեկավար պաշտոններ է զբաղեցրել թողարկողի տվյալ կառավարման մարմնի անդամը:**
Գագիկ Զաքարյան	ք.Երևան, Աբովյան 9,46 բնակարան	Խորհրդի նախագահ	2008-ից առ այսօր «ՌԵԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ (ապահովագրական ընկերություն), Հայաստանի Հանրապետություն՝ Տնօրենների Խորհրդի նախագահ	Ինքնաթիռաշինություն, ինժեներ-մեխանիկ պրոֆեսիոնալ թրեյդեր, փորձառությունը՝ 33 տարի	Առկա չէ
Գեորգի Պիսկով	Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի միացյալ թագավորություն	Խորհրդի անդամ	2014թ-ից առ այսօր՝ «Protobase Laboratories» ՍՊԸ, նախագահ 2014թ-ից առ այսօր՝ «MoneyTO» ՍՊԸ, հիմնադիր	Ինքնաթիռաշինություն, ինժեներ-մեխանիկ, փորձառությունը՝ 33 տարի:	Առկա չէ
Վարդան Աթայան	ք. Երևան, Կոմիտաս 62, բն. 6	Խորհրդի անդամ	Առկա չէ	Ինժեներ-տնտեսագետ, փորձառությունը՝ 32 տարի	Առկա չէ
Ֆիլիպ Դելմոտ	3103 Րութ դե Կոտինյակ, 83570 Մունֆող սյուղ Աղժանս, ք. Փարիզ,	Խորհրդի անդամ	2016թ-ից առ այսօր՝ <POD Consulting> ընկերություն, հիմնադիր և գործադիր տնօրեն 2000 – 2015՝ <Կրեդի Ագրիկոլ Կորպորատիվ և	Տնտեսագետ, փորձառությունը՝ 28 տարի	<POD Consulting> ընկերություն, հիմնադիր և գործադիր տնօրեն

	Ֆրանսիայի Հանրապետություն		Ներդրումային Բանկ> ԲԸ, գործադիր տնօրեն		
Ռուբեն Ինջիկյան	Շվեյցարիա, 95Ֆ Ավենյու դ՛Աիրե, 1203	Խորհրդի անդամ	2013թ-ից առ այսօր՝ Վեբսթերի համալսարան, տնտեսագիտության և կառավարման պրոֆեսոր, 2011թ-ից առ այսօր՝ միջազգային խորհրդատու, սպիկեր, մոդերատոր, նեթվորքեր (Շվեյցարիա)	Տնտեսագետ, փորձառությունը՝ 33 տարի:	2013թ-ից առ այսօր՝ Վեբսթերի համալսարան, տնտեսագիտության և կառավարման պրոֆեսոր, 2011թ-ից առ այսօր՝ միջազգային խորհրդատու, սպիկեր, մոդերատոր, նեթվորքեր (Շվեյցարիա)
Կարինե Մինասյան	ք.Երևան, Գյուլբենկյան 37, բն 6	Խորհրդի անդամ	2021թ-ից առ այսօր՝ «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ի Խորհրդի անդամ, 2020թ-ից առ այսօր՝ Ռուս-Հայկական համալսարանի դասախոս	Տնտեսագետ, փորձառությունը՝ 35 տարի:	2021թ-ից առ այսօր՝ «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ի Խորհրդի անդամ, 2020թ-ից առ այսօր՝ Ռուս-Հայկական համալսարանի դասախոս
Մեսրոպ Հակոբյան	ք.Երևան, Թամանյան 1ա, բն 13	Վարչության նախագահ	03.03.2008- առ այսօր Հայաստանի Բանկերի Միության Խորհրդի անդամ ACRA վարկային գործակալության Խորհրդի անդամ 04.12.2025թ-ից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի	Ճարտարագետ-տնտեսագետ, փորձառությունը՝ 25 տարի	Առկա չէ
Արարատ Ղուկասյան	Ք. Երևան, Նորք Մարաշ, 6-րդ փողոց, 1-ին	Վարչության նախագահի առաջին տեղեկալ	Առկա չէ	Ֆիզիկոս, Ճարտարագիտության մագիստրոս,	Առկա չէ

	նրբանցք, 5-րդ տուն			փորձառությունը՝ 33 տարի	
Վաղինակ Սրեփանյան	ք.Երևան, Ադոնց 4/3 բնակարան 240	Վարչության նախագահի տեղակալ նախագծերի և ստանդարտների ներդրման գծով	Առկա չէ	Տնտեսագետ-Բանկային գործ մասնագիտացմամբ փորձառությունը՝ 26 տարի	ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական վերահսկողության վարչության, Բանկերի վերահսկողության ծառայության ղեկավար
Գոհար Գրիգորյան	ք.Երևան Կոմիտաս 35 բն. 26	Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ,	Առկա չէ	Ճարտարագետ-հետազոտող, Տեխնիկական գիտությունների թեկնածու, ACCA անդամ, MBA աստիճան, փորձառությունը՝ 33 տարի	Առկա չէ
Օվսաննա Առաքելյան	ՀՀ, ք. Աբովյան, Սևանի փող. 2/4 շ., բն. 15	Վարչության նախագահի առաջին տեղակալ - Իրավական սպաս. և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն	«Ռեգո» ԱՓԲԸ Խորհրդի անդամ, «Պոլիգրաֆիա» ՓԲԸ տնօրեն	Իրավաբան MBA աստիճան փորձառությունը՝ 28 տարի	Առկա չէ
Գուրգեն Ղուկասյան	ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբանցք, 13 շենք, բն.6	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրածախ բիզնեսի և վաճառքների գծով տնօրեն	Առկա չէ	Տնտեսագետ, ճարտարագիտու թյան մենեջմենթի մագիստրոս, փորձառությունը՝ 24 տարի	Առկա չէ

Դավիթ Պետրոսյան	ք. Երևան, Գյուլբենկյան 30/3	Վարչության անդամ, Վարչության նախագահի առաջին տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	Առկա չէ	Տնտեսագետ, Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, MBA աստիճան, փորձառությունը՝ 22 տարի	Առկա չէ
Արթուր Ապերյան	ք. Երևան, Ավան Առինջ 2-րդ միկրոշրջան, 1/13 շենք, 32 բնակարան	Վարչության անդամ, Օպերացիոն սպաս. և տեխ. համակարգերի տնօրեն	Առկա չէ	Տնտեսագետ, փորձառությունը՝ 19 տարի	Առկա չէ
Սերգեյ Քոչարյան	ք Երևան, Բագրևանդի 17/8 տուն	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն	Դասախոս, ԵՊՀ	Տնտեսագետ, փորձառությունը՝ 21 տարի	Առկա չէ

Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում խարդախության համար Խորհրդի և Վարչության անդամների մոտ դատվածություն առկա չէ:

Թողարկողի կառավարման մարմնի անդամները Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում որեւէ առնչություն չեն ունեցել որեւէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ:

Թողարկողի կառավարման մարմնի անդամները Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում պատասխանատվության չեն ենթարկվել պետական որեւէ մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից եւ վերջիններս դատարանի կողմից չեն զրկվել թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

Առկա չէ և հնարավոր չէ շահերի բախում Խորհրդի և Վարչության անդամների՝ որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իրենց պարտականությունների եւ իրենց անձնական շահերի միջեւ:

Առկա չէ պայմանավորվածություն խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ, համաձայն որի որեւէ անձ ընտրվել կամ նշանակվել է թողարկողի կառավարման մարմնի անդամ:

Բանկի կառավարման անդամները չունեն պայմանագրեր Բանկի կամ նրա դուստր ընկերությունների հետ այն մասին, որ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո պետք է ստանան պարգևավճար կամ լրավճար: Բանկի կառավարման մարմինների անդամների միջև առկա չէ ազգակցական կապ:

31.03.2026թ. դրությամբ Բանկի աշխատակիցների ընդհանուր թիվը կազմել է 989:

Տարիների ընթացքում Բանկն ակտիվորեն համագործակցում է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, մասնավորապես՝ ԵՊՀ, ՀՊՏՀ, Հայաստանում ֆրանսիական համալսարանի հիմնադրամ, Ամերիկյան համալսարան և կարիերայի կենտրոններ:

Տեղեկատվություն բանկի կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամի՝ Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության մասին:

Ա.Ա.Հ	Պաշտոն	Մասնակցության չափը Բանկի կանոնադրական կապիտալում
Գագիկ Զաքարյան	Խորհրդի նախագահ	6.116211%
Վարդան Աթայան	Խորհրդի անդամ	0.002200%
Մեսրոպ Հակոբյան	Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն	0.193296%

Արարատ Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ	0.277784%
Օվսաննա Առաքելյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն	0.020341%
Գոհար Գրիգորյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն Գլխավոր հաշվապահ	0.025737%
Դավիթ Պետրոսյան	Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	0.019129%
Գուրգեն Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրածախ բիզնեսի և վաճառքների գծով տնօրեն	0.028818%

3.13. Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք

Բանկի խոշոր բաժնետերը Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությունն է (հասցեն՝ Կիպրոս, Նիկոսիա, Պատմու 5Բ, Ագլաթզիա, ՓԱ 2103), որը հանդիսանում է 155,532,640 հատ սովորական անվանական բաժնետոմսերի (81.32%) և 32,010,000 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի (100%) սեփականատերը: Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությանը պատկանող Բանկի սովորական անվանական բաժնետոմսերը տալիս են ձայնի միևնույն իրավունք:

Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերությունը հանդիսանում է Բանկի ուղղակի հսկող անձը:

Գագիկ Ձաքարյանը և Գեորգի Պիսկովը հանդիսանում են Յունիբանկ ԲԲԸ խոշոր բաժնետիրոջ՝ Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ Ընկերության վերջնական շահառուները և անուղղակի հսկում են Յունիբանկ ԲԲԸ-ի սովորական բաժնետոմսերի համապատասխանաբար 61.4% և 19.9%-ը, և Ա դասի արտոնալ բաժնետոմսերի 75.5% և 24.5%-ը:

3.14. Փոխկապակցված անձանց հետ գործարքները

Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 1%: Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել ոչ բնականոն գործունեության շրջանակում այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:

3.15. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

2024 և 2025 թվականների Բանկի՝ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, և անկախ աուդիտորական եզրակացությունների պատճենները, ինչպես նաև 2026թ.-ի 1-ին եռամսյակի հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատճենները կցվում են սույն Ազդագրին որպես Հավելված 4:

3.16. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ

Սույն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկի ներգրավվածությամբ տեղի չեն ունեցել որևէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներ (ներառյալ այն վարույթները, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին Բանկը տեղյակ է), որոնք Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ ունեցել են էական ազդեցություն:

Հարկային արտոնությունները

Բանկը չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:

3.17. Էական պայմանագրերը

Սույն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 2 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս չեն կնքվել որևէ պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

Յունիբանկը չունի 5 տոկոսը գերազանցող ուղղակի կամ անուղղակի բաժնեմաս այլ իրավաբանական անձանց կանոնադրական հիմնադրամում:

3.18. Մասնագիտական կարծիքներ

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

3.19. Լրացուցիչ տեղեկատվություն

Թողարկողի բաժնետոմսերի յուրաքանչյուր դասի սեփականատերերի իրավունքների և պարտականությունների նկարագիրը, այդ արժեթղթերի հետ կապված սահմանափակումները, ինչպես նաև հերթական և արտահերթ բաժնետերերի ժողովների հրավիրման և դրանց մասնակցելու կարգը ներկայացված է Բանկի Կանոնադրության մեջ, Գլուխ 4-11:

3.20. Այլ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.unibank.am հասցեով:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ֆիզիկական անձ և Իրավաբանական անձ ներդրողների համար անժամկետ պարտատոմսի ձեռքբերման հայտի ձև



Date

Թողարկվող անժամկետ պարտատոմսերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
Brief Summary of Bonds Issued

Թողարկող **Issuer**	
Թողարկման արժույթը **Emission Currency**	
Թողարկման ծավալը **Issue volume**	
Պարտատոմսի ԱՄՏԾ **BOND ISIN**	

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ
Investor Information

Անուն, ազգանուն (անվանում) **Full name (Company name)**	
Անձնագրի (գրանցման) տվյալներ **Passport (Registration) details**	

Բնակության (Իրավաբանական) հասցեն **Residence (Legal) address**	
Կապի միջոցները (հեռ., ֆաքս, Էլ. փոստ) **Contact details** (tel., facsimile, e-mail)	
Արժեթղթերի հաշվի համարը **Securities account details**	
Դոլարային հաշվեհամարը **USD account details**	
Դրամային հաշվեհամարը **AMD account details**	

Ձեռքբերման Հայտի վերաբերյալ տեղեկություններ
Subscription Information

Պարտատոմսերի քանակը **Number of Bonds**	
Գործարքի ծավալը **Transaction volume**	
Գործարքի գումար **Transaction price**	
Գործարքի գին	

Transaction unit price	

Ես, ներքոստորագրյալս, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ.

I, the undersigned, hereby affirm and acknowledge that:

1. Ծանոթացել եմ Յունիբանկ ԲԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրին:

   I have read the entire Prospectus of "UNIBANK" OJSC.

2. Լիովին գիտակցում եմ սույն պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:

   I fully understand the risks associated with the investment in the offered bonds.


Ներդրող՝

Investor

անուն, ազգանուն / full name	ստորագրություն / signature

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Բանկի կազմակերպչական կառուցվածքը


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի
6 ապրիլի 2026թ.-ի արձանագրությամբ



ՈՒԺի մեջ է մտնում 13.04.2026թ.-ից

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Բանկի խմբի կառուցվածքը

«ՅՈՒՆԻԳՐՈՒՊ» ֆինանսական խմբի կառուցվածքը



ՀԱՎԵԼՎԱԾ 4. Բանկի ֆինանսական հաշվետվությունները

2024 և 2025 թվականների «Յունիբանկ» ԲԲԸ-ի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացություններ, 2026թ.-ի 1-ին եռամսյակի հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատճենները:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին
« 31 » ՄԱՐՏԻ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրու-թյուններ	Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.26_31.03.26	Նախորդ ժամանակաշրջան 01.01.25_31.03.25
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	9,387,896	8,286,648
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(4,392,239)	(3,555,752)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**4,995,657**	**4,730,896**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	1,019,887	1,258,144
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(354,117)	(332,819)
Մտացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**665,770**	**925,325**
Եկամուտ շահաբաժիններից			
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	1,197,097	1,636,197
Այլ գործառնական եկամուտներ	6	300,707	201,877
Գործառնական եկամուտներ		**7,159,231**	**7,494,295**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(174,203)	37,911
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(2,723,500)	(2,220,452)
Այլ գործառնական ծախսեր	9	(2,079,232)	(2,073,356)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10		
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**2,182,296**	**3,238,398**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(392,547)	(576,749)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		**1,789,749**	**2,661,649**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	12		
Ժամանակաշրջանի զուտ շահույթ			
Այդ թվում՝			
Մայր կազմակերպության բաժնեմաս			
Չվերահսկվող բաժնեմաս			

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2026թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

« 31 » ՄԱՐՏԻ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ, ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.26_31.03.26	Նախորդ ժամանակաշրջան 01.01.25_31.03.25
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	(440)	6,989
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		-
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	79	(1,258)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**(361)**	**5,731**
Համապարփակ ֆինանսական արդյունք	**1,789,388**	**2,667,380**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2026թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

« 31 » ՄԱՐՏԻ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանո-թագրու-թյուններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջանի վերջի դրությամբ 31.03.2026	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ 31.12.2025 (չստուգված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	15	43,134,390	62,685,801
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	26,253,286	12,880,591
Իրական արժեքով՝շահույթի և վնասի միջոցով չափվող արժեթղթեր			
Ներդրումային արժեթղթեր	18	21,482,299	15,376,730
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	18	3,592,662	9,290,097
Հաճախորդներին տրված վարկեր	19	274,082,431	266,436,733
Հիմնական միջոցներ	20	11,762,198	11,794,291
Ոչ նյութական ակտիվներ	21	4,396,114	4,260,949
Հետաձգված հարկային ակտիվներ		12,819	45,975
Կանխավճար շահութահարկի գծով		505,271	505,272
Բռնագանձված ակտիվներ	22	4,600,238	4,739,629
Այլ ակտիվներ	23	4,863,402	6,631,760
Ընդամենը՝ ակտիվներ		**394,685,110**	**394,647,828**
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	20,569,387	36,569,410
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	288,549,124	271,527,791
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Փոխառություն	26	1,810,681	4,899,845
Թողարկված պարտքային արժեթղթեր	27	25,571,144	25,718,962
Շահութահարկի գծով պարտավորություններ		359,391	
Հետաձգված հարկային պարտավորություն		-	
Այլ պարտավորություններ	28	3,375,272	3,271,100
Ընդամենը՝ պարտավորություններ		**340,234,999**	**341,987,108**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	29	24,925,448	24,925,447
Էմիսիոն եկամուտ		14,179,227	14,179,228
Պահուստներ՝		2,768,390	2,768,751
Գլխավոր պահուստ		1,315,598	1,315,598
Վերագնահատման պահուստներ		1,452,792	1,453,153
Չբաշխված շահույթ (վնաս)		12,577,046	10,787,294
Կապիտալի այլ տարրեր			
Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
Փոքրամասնության բաժնեմաս			
Ընդամենը՝ կապիտալ		**54,450,111**	**52,660,720**
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**394,685,110**	**394,647,828**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2026թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
« 31 » ՄԱՐՏԻ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան 31.03.2025	Հաշվետու ժամանակաշրջան 31.03.2026
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**x**	**x**
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**5,754,631**	**4,597,925**
Ստացված տոկոսներ		8,111,977	8,640,370
Վճարված տոկոսներ		(3,510,721)	(4,137,879)
Ստացված կոմիսիոն գումարներ		1,240,158	1,022,363
Վճարված կոմիսիոն գումարներ		(332,819)	(354,117)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		633,237	626,209
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		1,530,248	1,205,848
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		1,246,122	1,288,488
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(2,146,766)	(2,592,003)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(1,016,805)	(1,101,354)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		**(2,600,213)**	**(19,861,502)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(12,568,638)	(11,117,040)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)		(11,540,248)	(10,952,786)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(978,027)	28,033
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)		(411,504)	(649,580)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		361,141	457,293
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		9,968,425	(8,744,462)
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		8,209,419	(3,278,841)
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		1,759,006	(5,465,621)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		**3,154,418**	**(15,263,577)**
Վճարված շահութահարկ		(1,135,000)	
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**2,019,418**	**(15,263,577)**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**x**	**x**
Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		12,948,060	(14,679,678)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)		(860,524)	13,964,418
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(46,091)	(361,925)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(153,412)	(387,346)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		-	183,315
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(662,809)	1,948,552
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**11,225,224**	**667,336**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**x**	**x**
Վճարված շահաբաժիններ			
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(69,818)	(34,029)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)			(3,834,601)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)			
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		879,076	-
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում			
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		1,075,463	(224,134)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**1,884,721**	**(4,092,764)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		821,894	(862,406)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**15,951,257**	**(19,551,411)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	**51,966,052**	**62,685,801**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	**67,917,309**	**43,134,390**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2026թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 31 » ՄԱՐՏԻ 2026թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ, ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**22,425,447**	**11,279,227**	**904,203**	**34,927**	**1,406,805**	**8,186,670**	**44,237,279**
Տարվա շահույթ						2,661,649	2,661,649
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							0
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում							0
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն				6,989			6,989
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ							0
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ				-1,258			-1,258
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**5,731**	**-**	**2,661,649**	**2,667,380**
Բաժնետիրական կապիտալի ավելացում							0
Հատկացում պահուստին							0
Շահաբաժիններ բաժնետերերին							0
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	0	0	0	0	0	0	0
Հաշվեկշիռը 2025թ. Մարտի 31-ի դրությամբ	**22,425,447**	**11,279,227**	**904,203**	**40,658**	**1,406,805**	**10,848,319**	**46,904,659**

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ	**24,925,447**	**14,179,227**	**1,315,598**	**56,005**	**1,397,147**	**10,787,300**	**52,660,724**
Տարվա շահույթ						1789750	1,789,750
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							0
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում							0
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն				-440			-440
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ							0
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ				79	0		79
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**0**	**0**	**0**	**-361**	**0**	**1,789,750**	**1,789,389**
Բաժնետիրական կապիտալի ավելացում							0
Հատկացում պահուստին							0
Շահաբաժիններ բաժնետերերին							0
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	0	0	0	0	0	0	0
							0
Հաշվեկշիռը 2026թ. Մարտի 31-ի դրությամբ	**24,925,447**	**14,179,227**	**1,315,598**	**55,644**	**1,397,147**	**12,577,050**	**54,450,113**



Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2026թ.

Ծանոթագրություններ և բացահայտումներ

“Յունիբանկ” ԲԲԸ-ում հաշվապահական հաշվառումը վարվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ “Հաշվապահական հաշվառման մասին” օրենքի, Բանկի կանոնադրությանը և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հրապարակվող հաշվետվությունները կազմվում են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների: Հաշվետվությունները կազմված են ՀՀՄՍ 9 պահանջներին համապատասխան:

Բանկի հետհաշվեկշռում հաշվառված են պահուստավորման ենթակա հետևյալ հոդվածները.

տրամադրված երաշխավորություններ – 945,721 հազ. դրամ

տրամադրված վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասեր – 12,394,546 հազ. դրամ

“Յունիբանկ” ԲԲԸ-ի աշխատակիցների թվաքանակը կազմում է 972 մարդ, այդ թվում՝ սպասարկող անձնակազմի 15 մարդ:

Տվյալներ ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերի վերաբերյալ

Վարկի ժամկետը	պայմանագրային
Վարկի տարեկան տոկոսադրույք	12-24%%
Վճարումներ	պայմանագրային

Առանձին դեպքերում կապված ժամկետից, ապահովվածությունից և գումարից վարկերի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են վարկային կոմիտեի առանձին որոշմամբ:

Հիպոթեքային վարկ՝ անշարժ գույքի վերանորոգում

Վարկի ժամկետը

մինչև 15 տարի

Վարկի գումարը

մինչև 35,000,000 դրամ

Տոկոսադրույք

սկսած տարեկան 14.50%

Հիպոթեքային վարկ՝ անշարժ գույքի ձեռքբերում

Սկզբնական վճար

սկսած անշարժ գույքի արժեքի 0%-ից

Վարկի ժամկետը

մինչև 20 տարի

Վարկի գումարը

մինչև 100,000,000 դրամ

Տոկոսադրույք

սկսած տարեկան 11.9%,

Բիզնես վարկեր

Վարկի ժամկետը

մինչև 20 տարի

Վարկի գումարը

մինչև 250.000.000 դրամ կամ մինչև 500.000 եվրո կամ դոլար

Տոկոսադրույք

սկսած տարեկան 6.5%,

Ներկայացված Ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ կից ծանոթագրությունները), Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց և Բանկի ղեկավարների, ինչպես նաև Բանկի կողմից տրամադրվող այլ վարկերի, մատուցվող ծառայությունների և սակագների վերաբերյալ տեղեկատվությունը Դուք կարող եք գտնել Յունիբանկ ԲԲԸ տնային էջում:
հասցե՝ www.unibank.am

«Յունիբանկ» ԲԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 13

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յունիբանկ» ԲԲԸ-ի («Բանկ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՄԽ կանոնագիրք*), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների: Մենք կատարել ենք նաև էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների և ՀԷՄՄԽ կանոնագրքի համաձայն: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ	
Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 4(ե), 18 և 30(բ):	
Աուդիտի առանցքային հարց	**Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր**
Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ընդհանուր ակտիվների 67%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների (այսուհետ՝ ԱՊԿ) գծով պահուստը, որը գնահատվում է կանոնավոր հիմունքով և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ, ինչպես ներկայացված է ստորև: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելով ղեկավարությունից պահանջվում է կատարել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. – պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտազանցման դեպքերի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն), – պարտազանցման հավանականության և պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատում, – ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար, – ապագայամետ տեղեկատվությունը ներառելու համար կատարված ճշգրտման գնահատում:	Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով պարտքային ռիսկերի գծով մեր մասնագետներին: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը. – Իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը: – Իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կիրառված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: – Հաճախորդներին տրված վարկերի համար ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը, որոնք օգտագործվում են որպես հիմք վարկերը փուլերի միջև բաշխելու համար: – Հաճախորդներին տրված վարկերի համար, գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելներ մուտքագրված տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը՝ մոդելի ելակետային տվյալները համադրելով առաջնային փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով:

2025թ. ընթացքում Բանկը հայտնաբերել և հետընթաց կերպով ճշգրտել է 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների մնացորդների հետ կապված սխալը, ինչը մեծացրել է այդ ոլորտի կարևորությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար: Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց:	– Վարկերի ընտրանքի համար, որոնց գծով պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատվում է անհատական հիմունքով, ստուգել ենք պարտազանցման դեպքում առաջացող կորստի հաշվարկի մոդելի ելակետային տվյալների ճշգրտությունը և տեղին լինելը՝ համեմատելով գրավի արժեքներն արտաքին գնահատողների հաշվետվությունների տվյալների հետ և ստուգելով կիրառված զեղչերի տեղին լինելը: – Գնահատել ենք ապագայամետ տեղեկատվությունը ներառելու նպատակով կատարված ճշգրտման համար կիրառված մակրոտնտեսական կանխատեսումների ճշգրտությունը և տեղին լինելը՝ կրկին իրականացնելով ռեգրեսիոն վերլուծություն և համեմատելով մակրոտնտեսական տվյալները հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության հետ: – Ներգրավել ենք պարտքային ռիսկի մեր մասնագետներին գնահատելու համար ակնկալվող պարտքային ռիսկերի մոդելներում կիրառված մեթոդաբանությունը և հիմնական ենթադրությունները և դրանց կիրառման հետևողականությունը նախորդ ժամանակաշրջանների տվյալների վերահաշվարկի ժամանակ: – Գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կատարված վերանայված գնահատումները 2025թ. փաստացի արդյունքների հետ: – Գնահատել ենք, արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումները, ներառյալ նախորդ տարվա մնացորդների վերահաշվարկին վերաբերող բացահայտումները, ըստ պատշաճի արտացոլում են Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Հանգամանքի շեշտադրում. համադրելի տեղեկատվություն

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 5-ի վրա, որտեղ նշված է, որ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվի ավարտված տարվա համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է: Մեր կարծիքը ձևափոխված չէ այս հարցի հետ կապված:

Համադրելի տեղեկատվությանը վերաբերող այլ հանգամանք

Բանկի 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվերին ավարտված տարիների ֆինանսական հաշվետվությունների (որոնց տվյալների հիման վրա կազմվել է 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը), բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 5-ում ներկայացված ճշգրտումների,

աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը համապատասխանաբար 2025թ. ապրիլի 29-ի և 2024թ. ապրիլի 24-ի իր եզրակացություններում արտահայտել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի շրջանակում մենք իրականացրել ենք Ծանոթագրություն 5-ում ներկայացված ճշգրտումների աուդիտը, որոնք կատարվել են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ներկայացված և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համադրելի տվյալները վերահաշվարկելու համար: Մեզ չի հանձնարարվել իրականացնել 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ֆինանսական հաշվետվությունների (որոնք այստեղ ներկայացված չեն) աուդիտ, դիտարկում կամ կիրառել որևէ ընթացակարգ այդ ֆինանսական հաշվետվությունների հետ կապված, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 5-ում ներկայացված ճշգրտումների: Հետևաբար, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստիացում չենք արտահայտում որպես մեկ ամբողջություն վերցված համապատասխան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, Ծանոթագրություն 5-ում ներկայացված ճշգրտումները տեղին են և կատարվել են ըստ պատշաճի:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բանկը լուծարելու կամ Բանկի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

– որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի

համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի համապատասխան պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ իրավական ակտով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է այս աուդիտորական եզրակացությունը՝

Իրինա Գևորգյան
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի անունից՝ Ղեկավար գործընկեր

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 ապրիլի 2026թ.

	Ծնթգ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ Վերահաշվարկված*
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	6	35,183,315	30,274,988
Այլ տոկոսային եկամուտ	6	283,012	119,540
Տոկոսային ծախս	6	(15,202,832)	(11,751,228)
Զուտ տոկոսային եկամուտ		**20,263,495**	**18,643,300**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	7	5,288,124	4,534,247
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	7	(1,567,894)	(1,767,737)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**3,720,230**	**2,766,510**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	8	5,977,232	6,140,126
Այլ գործառնական եկամուտ	9	2,031,032	963,004
Ողղակի բանկային ծախսեր	10	(624,829)	(2,151,354)
Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը		**31,367,160**	**26,361,586**
Ֆինանսական գործիքների (արժեզրկումից զուտ կորուստներ)/ արժեզրկումից կորուստների զուտ հակադարձում	11	(958,639)	871,349
Անձնակազմի գծով ծախսեր	12	(10,654,559)	(9,673,365)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	13	(7,846,955)	(6,765,017)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**11,907,007**	**10,794,553**
Շահութահարկի գծով ծախս	14	(2,090,456)	(1,905,948)
Տարվա շահույթ		**9,816,551**	**8,888,605**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Գույքի վերագնահատում՝ առանց շահութահարկի		(9,657)	-
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
– Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի		21,079	27,323
– Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի փոփոխություններ		-	(2,840)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		***21,079***	***24,483***
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		**11,422**	**24,483**
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**9,827,973**	**8,913,088**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ, ՀՀ դրամ	29	49.8	46.2
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ, ՀՀ դրամ	29	44.2	40.8

* Համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է անճշտությունների ուղղման արդյունքում (տես Ծանոթագրություն 5):

8-ից 95-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Վարչության կողմից 2026թ. ապրիլի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մեսրոպ Հակոբյան
Վարչության նախագահ

Գոհար Գրիգորյան
Ֆինանսական տնօրեն – Գլխավոր հաշվապահ

	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2025թ. հազ. դրամ	31 դեկտեմբերի 2024թ. հազ. դրամ	1 հունվարի 2024թ. հազ. դրամ
			Վերահաշ-վարկված*	Վերահաշ-վարկված*
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	43,107,570	37,320,814	38,315,057
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր				
– Բանկի կողմից պահվող		-	119,991	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	17			
– Բանկի կողմից պահվող		1,849,500	1,823,830	1,572,613
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	17			
– Բանկի կողմից պահվող		13,536,828	31,151,370	25,501,409
– Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված		9,280,499	3,466,932	9,387,266
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	16	32,126,203	33,133,682	43,548,788
Հաճախորդներին տրված վարկեր	18	264,557,191	204,384,702	150,333,683
Հիմնական միջոցներ	19	12,109,027	7,725,450	8,183,769
Ոչ նյութական ակտիվներ	20	3,730,630	3,750,700	3,355,572
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	29	2,815,486	3,157,782	2,102,188
Ընթացիկ հարկային ակտիվ		1,035,590	-	-
Հետաձգված հարկային ակտիվ	14	485,177	146,641	-
Բռնագանձված ակտիվներ	18	1,592,107	6,546,969	4,022,113
Այլ ակտիվներ	21	7,556,540	4,586,398	3,516,224
Ընդամենը ակտիվներ		**393,782,348**	**337,315,261**	**289,838,682**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	22	15,795,557	14,172,471	5,041,307
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	27	9,066,948	3,174,430	9,012,089
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	23	271,106,891	247,536,201	211,194,225
Թողարկված պարտքային արժեթղթեր	25	25,718,962	15,085,027	9,347,121
Այլ փոխառու միջոցներ	24	18,105,978	8,442,686	9,582,025
Ընթացիկ հարկային պարտավորություն	14	-	578,673	1,596,541
Հետաձգված հարկային պարտավորություն	14	-	-	714,214
Վարձակալության գծով պարտավորություններ	28	2,570,839	2,366,028	1,710,224
Այլ պարտավորություններ	26	1,222,909	1,137,416	1,115,719
Ընդամենը պարտավորություններ		**343,588,084**	**292,492,932**	**249,313,465**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	29			
Բաժնետիրական կապիտալ		23,425,447	22,425,447	22,425,447
Էմիսիոն եկամուտ		14,179,227	11,279,227	11,279,227
Գլխավոր պահուստ		1,315,598	904,203	686,316
Այլ պահուստներ		1,453,153	1,441,732	1,440,850
Չբաշխված շահույթ		9,820,839	8,771,721	4,693,380
Ընդամենը սեփական կապիտալ		**50,194,264**	**44,822,330**	**40,525,220**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**393,782,348**	**337,315,261**	**289,838,682**

* Համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է անճշտությունների ուղղման արդյունքում (տես Ծանոթագրություն 5):

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		35,354,237	29,741,097
Վճարված տոկոսներ		(15,207,980)	(10,516,223)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		5,288,124	4,534,247
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(1,567,894)	(1,767,737)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		6,086,770	6,358,080
Ուղղակի բանկային և այլ գործառնական ծառայությունների գծով զուտ մուտքեր/(վճարումներ)		637,696	(1,203,017)
Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին		(10,569,236)	(9,652,496)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(5,453,674)	(4,757,215)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		155,485	(52,370)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ		2,838,490	8,525,248
Հաճախորդներին տրված վարկեր		(59,237,342)	(54,375,287)
Բռնագանձված և այլ ակտիվներ		(732,771)	(3,549,063)
Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ			
Այլ պարտավորություններ		(146,190)	(238,619)
Բանկերի ավանդներ և մնացորդներ		159,965	9,977,937
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		5,886,170	(5,827,859)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		22,057,385	40,468,561
Գործառնական գործունեության համար (օգտագործված)/գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը		**(14,450,765)**	**7,665,284**
Վճարված շահութահարկ		(4,045,765)	(3,790,047)
Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր		**(18,496,530)**	**3,875,237**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,835,648)	(1,901,945)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		-	(221,360)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(15,548,259)	(2,199,910)
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից		26,487,578	2,094,710
Ներդրումային գործունեությունից ստացված/ ներդրումային գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		**8,103,671**	**(2,228,505)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	28	(816,125)	(1,294,721)
Վճարված շահաբաժիններ	29	(8,356,034)	(4,615,976)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	29	3,900,000	-
Ստացված այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	24	23,848,761	1,407,749
Այլ փոխառու միջոցների և ստորադաս պարտավորությունների մարում	24	(14,069,580)	(2,455,577)
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	25	10,934,693	10,969,842
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	25	-	(5,144,495)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր		**15,441,715**	**(1,133,178)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**5,048,856**	**513,554**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		737,900	(1,507,797)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		37,320,814	38,315,057
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	15	**43,107,570**	**37,320,814**

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատ-ման պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատ-ման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների*	22,425,447	11,279,227	686,316	10,444	1,430,406	4,769,028	40,600,868
Անճշտությունների ուղղման ազդեցությունը*	-	-	-	-	-	(75,648)	(75,648)
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)	**22,425,447**	**11,279,227**	**686,316**	**10,444**	**1,430,406**	**4,693,380**	**40,525,220**
Տարվա շահույթ (վերահաշվարկված)	-	-	-	-	-	8,888,605	8,888,605
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	32,699	-	-	32,699
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստի զուտ փոփոխություններ	-	-	-	(2,840)	-	-	(2,840)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող շահութահարկ	-	-	-	(5,376)	-	-	(5,376)
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք (վերահաշվարկված)	**-**	**-**	**-**	**24,483**	**-**	**8,888,605**	**8,913,088**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում							
Հատկացում պահուստին	-	-	217,887	-	-	(217,887)	-
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(4,615,977)	(4,615,977)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**-**	**-**	**217,887**	**-**	**-**	**(4,833,864)**	**(4,615,977)**
Հիմնական միջոցների վաճառքի գծով պահուստի ճշգրտում	-	-	-	-	(23,601)	23,601	-
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)	**22,425,447**	**11,279,227**	**904,203**	**34,927**	**1,406,805**	**8,771,721**	**44,822,330**

* Համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է անճշտությունների ուղղման արդյունքում (տես Ծանոթագրություն 5):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատ-ման պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատ-ման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշվարկված)	22,425,447	11,279,227	904,203	34,927	1,406,805	8,771,721	44,822,330
Տարվա շահույթ	-	-	-	-	-	9,816,551	9,816,551
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Գույքի վերագնահատում՝ առանց շահութահարկի	-	-	-	-	(9,657)	-	(9,657)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	21,079	-	-	21,079
Տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**21,079**	**(9,657)**	**9,816,551**	**9,827,973**
Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում							
Բաժնետիրական կապիտալի թողարկում	1,000,000	2,900,000	-	-	-	-	3,900,000
Հատկացում պահուստին	-	-	411,395	-	-	(411,395)	-
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(8,356,039)	(8,356,039)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**1,000,000**	**2,900,000**	**411,395**	**-**	**-**	**(8,767,434)**	**(4,456,039)**
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**23,425,447**	**14,179,227**	**1,315,598**	**56,004**	**1,397,149**	**9,820,839**	**50,194,264**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ընդհանուր տեղեկատվություն

(ա) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Յունիբանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2001թ-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն, և վերակազմավորվել է բաց բաժնետիրական ընկերության 2015թ-ին: Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը և վարկերի տրամադրումը, փոխանցումների իրականացումը Հայաստանում և արտերկրում, արտարժույթով գործառնությունների իրականացումը և այլ բանկային ծառայությունների մատուցումը իրավաբանական և ֆիզիկական անձանց: Բանկը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից 2001թ. հոկտեմբերի 10-ին տրված թիվ 81 լիցենզիայի հիման վրա:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International վճարային համակարգերի անդամ:

«Moody's Investors Service» միջազգային վարկանիշային գործակալությունը 2025թ. հունիսի 16-ին վերահաստատել է Բանկի երկարաժամկետ՝ ազգային արժույթով և արտարժույթով ավանդների B1 վարկանիշը՝ կայուն հեռանկարով:

«Moody's Investors Service» միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է նաև վարկունակության բազային գնահատականը (BCA) և ճշգրտված WBG-ն B2 մակարդակում, ազգային արժույթով և արտարժույթով կարճաժամկետ ավանդների NP վարկանիշները, կոնտրագենտի երկարաժամկետ և կարճաժամկետ ռիսկի վարկանիշները (CRR)՝ B1/NP մակարդակում և կոնտրագենտի երկարաժամկետ և կարճաժամկետ ռիսկի (CR) վարկանիշները՝ B1(cr)/NP(cr) մակարդակում:

Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ 50 մասնաճյուղերը (2024թ-ին՝ 52 մասնաճյուղերը)՝ Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Չարենցի 12, թիվ 53, 1-5:

2025թ. ընթացքում Բանկի աշխատակիցների թիվը կազմում է 979 (2024թ-ին՝ 898):

Բանկի նշանակալից բաժնետերերն են գործարարներ Գ. Չաքարյանը և Գ. Պիսկովը, որոնց անուղղակիորեն պատկանում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 75.2%-ը: Բանկի վերջնական հսկող անձը Գ. Չաքարյանն է:

Կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 36-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Համապատասխանաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, շարունակական բնույթ կրող ռազմական հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել են անորոշությունը գործարար միջավայրում: 2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա մնում են անորոշ:

Միաժամանակ, 2026թ. ընթացքում աշխարհաքաղաքական լարվածությունը զգալիորեն սրվել է Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններից, այդ թվում՝ Իրանի մասնակցությամբ զարգացումներից հետո: Այդ իրադարձությունները մեծացրել են անորոշությունը համաշխարհային ֆինանսական շուկաներում, խաթարել են մատակարարման շղթաները և նպաստել են էներգակիրների գների տատանողականությանը: Բանկը շարունակում է գնահատել այդ զարգացումների հնարավոր ազդեցությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով, քանի որ ղեկավարությունը համոզված է, որ Բանկն ունի բավարար ռեսուրսներ տեսանելի ապագայում գործունեությունն անընդհատության հիմունքով շարունակելու համար: Այս գնահատումն իրականացնելիս ղեկավարությունը դիտարկել է տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ կանխատեսվող շահութաբերությունը, կարգավորող մարմնի կողմից կապիտալին ներկայացվող պահանջները և պահանջվող ֆինանսական միջոցները: Գնահատումն իրականացնելիս դիտարկվել են նաև ողջամտորեն հնարավոր բացասական տնտեսական սցենարները և դրանց հնարավոր ազդեցությունը Բանկի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և հողի ու շենքերի, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 381.36 դրամ և 396.56 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 449.01 դրամ և 413.89 դրամ 1 եվրոյի համար:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում գնահատումները վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա այդ փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ՝ Ծանոթագրություն 4 (ե) (i),
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն՝ Ծանոթագրություն 30 (բ),
- Փոխառությունների դասակարգումը որպես սեփական կապիտալ կամ պարտավորություն, ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի շուկայի առանձին սեգմենտին առնչվող դիտարկումներ՝ Ծանոթագրություն 24:

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ակնկալվող պարտքային կորուստների չափման մոդելի ելակետային տվյալները, այդ թվում՝ հատուցման ենթակա դրամական հոսքերը գնահատելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները և ապագայամետ տեղեկատվության ներառումը՝ Ծանոթագրություն 31 (բ),
- շենքերի գնահատում՝ շենքերի իրական արժեքի գնահատում, ներառյալ գնահատման ընթացքում կիրառված հիմնական ենթադրությունները՝ Ծանոթագրություն 35:

(ե) Դրամական հոսքերի մասին հաշվետվության ներկայացման փոփոխություն

2025թ. ընթացքում Բանկը փոխել է դրամական հոսքերի մասին հաշվետվության ներկայացման ձևը՝ անուղղակի մեթոդից անցում կատարելով ուղղակի մեթոդին: Այդ փոփոխությունն իրականացվել է ներկայացվող տեղեկատվության հստակությունը և տեղին լինելը բարելավելու, ինչպես նաև ներկայացման ձևը բանկային ոլորտում կիրառվող գործելակերպին համապատասխանեցնելու նպատակով: Համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերահաշվարկվել է: Այդ փոփոխությունը վերաբերում է միայն ներկայացման ձևին և որևէ ազդեցություն չի ունեցել Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների կամ ընդհանուր դրամական հոսքերի վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի փոփոխություններ

Բանկը ժամկետից շուտ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2025թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթով այդ ամսաթվի փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով գործառնություններից օգուտը կամ կորուստն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթով իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներն, այդ թվում՝ ՀՀ դրամով պարտադիր պահուստը և այլ բանկերում պահվող՝ օգտագործման սահմանափակում չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումներն արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է հեջի ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները և վարձակալության գծով պարտավորությունները:

(դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 4(գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք առաջանում են հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են եկամտի առաջացմանը և չեն բխում հաճախորդների հետ իրականացված փաստացի գործարքներից, Բանկը դասակարգում է որպես ուղղակի բանկային ծախսեր: Մնացած բոլոր ծախսերը դասակարգվում են որպես ընդհանուր վարչական ծախսեր:

(ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

i. Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

– արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
– ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
– արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և կորուստներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այդ գնահատումը լավագույնս արտացոլում է, թե ինչպես է գործունեությունը կառավարվում և ինչպես է այդ տեղեկատվությունը տրամադրվում ղեկավարությանը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

– պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառումը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, տոկոսային եկամտաբերության որոշակի մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են տվյալ ակտիվներով կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
– ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
– ռիսկերը, որոնք ազդում են բիզնես մոդելի վրա (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների վրա) և ինչպես են այդ ռիսկերը կառավարվում:
– ինչպես են վարձատրվում բիզնեսը կառավարող մենեջերները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե հավաքագրված դրամական հոսքերի վրա):
– նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես ընդհանուր գնահատման մաս այն մասին, թե ինչպես է իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման Բանկի նպատակը և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսներ

Այդ գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» ներառում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցումը և շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այդ դիտարկման ժամանակ գնահատվում է, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվն այլևս չբավարարի այդ պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման պայմանը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվ) և
- պայմանները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքի պարբերաբար վերասահմանումը:

Բանկն ունի հաստատուն տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի պորտֆել, որի համար հնարավորություն ունի վերանայել տոկոսադրույքը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում: Փոխառուն հնարավորություն ունի կամ համաձայնվել վերանայված տոկոսադրույքի հետ կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Բանկը որոշել է, որ այդ վարկերի պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ, քանի որ այդ հնարավորությունից օգտվելու դեպքում տոկոսադրույքն այնպես է փոփոխվում, որ դառնում է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար հատուցում: Փոխարենը, Բանկը այդ վարկերը դիտարկում է որպես ըստ էության լողացող տոկոսադրույքով վարկեր (տես Ծանոթագրություն 4 (ե) (iii)):

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

ii. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի հանրագումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում առաջացած կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են կամ չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են:

iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի վերափոխում»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես վերափոխման մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես վերափոխում, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ, եթե Բանկը փոփոխում է տոկոսադրույքները ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխության արդյունքում, եթե վարկային պայմանագրով իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության:

Եթե դրամական հոսքերի վերափոխումը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն վերափոխման նպատակն է առավելագույն չափով վերականգնել սկզբնական պայմանագրային պայմանները, այլ ոչ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես վերափոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրս գրվի նախքան վերափոխում կատարելը (տես ստորև ներկայացված դուրսգրման քաղաքականությունը): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման պայմանները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում վերափոխման նշանակալի լինելը գնահատելու համար:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ՝ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու նպատակով օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին: Վերափոխման շրջանակում կրած ցանկացած ծախս կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման վերափոխումն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա վերափոխումից օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի վերափոխումը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Դա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այդ դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր վերափոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության վերափոխումը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով վերափոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար վերափոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները վերափոխման պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

iv. Արժեզրկում

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով հետևյալ ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար կորստի պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ (բացառությամբ ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումների), որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 30 (բ)):

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքը պարտքային առումով արժեզրկված չէ) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքը պարտքային առումով արժեզրկված է):

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ*՝ որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն,
- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ*՝ որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած ցանկացած գումար, որը Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ վերափոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա վերափոխված ֆինանսական ակտիվից առաջացող՝ ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում:
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները և զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, մասնավորապես, պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկն օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ,
- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այդ ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ Բանկը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Դա սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները վերադարձնելու համար: Այդ գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր կատարման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

(զ) Հաճախորդներին տրված վարկեր

«Հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառում է՝

- հաճախորդներին տրված՝ ամորտիզացված արժեքով չափվող վարկերը, որոնց սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- զուտ ներդրումները ֆինանսական վարձակալությունում:

(է) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

(ը) Արտոնյալ բաժնետոմսեր (ֆինանսական պարտավորություններ)

Արտոնյալ բաժնետոմսերը, որոնք ներառում են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու պարտականություններ կամ փոխարկելի են Բանկի փոփոխական քանակությամբ բաժնային գործիքների դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ ՀՀՄՍ 32-ի համաձայն: Այդ գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվում է դրանց չափումն իրականացնել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Համապատասխան շահաբաժինների վճարումները ճանաչվում են որպես տոկոսային ծախս՝ շահույթում կամ վնասում:

(թ) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 4(ե)(iv)) և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 4(ե)(iv)) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

(ժ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրի կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման

գների միջև տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները: Ձեռքբերման և վերավաճառքի գների միջև տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(h) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները, բացառությամբ հողի և շենքերի, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Հողը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

(ii) Վերագնահատում

Շենքերը և հողը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա շենքերի և հողի իրական արժեքների փոփոխություններից: Եթե շենքի և հողի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե շենքի և հողի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է ձեռքբերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և օգտագործման համար պիտանի դառնալու պահից: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները:

– Շենքեր	25 տարի
– Մեքենաներ և սարքավորումներ	5 - 7 տարի
– Վարձակալված գույքի բարելավումներ	5 - 10 տարի
– Տնտեսական գույք	8 տարի
– Փոխադրամիջոցներ	10 տարի
– Այլ	5 - 7 տարի

(l) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ հաշվի առնելով հարկերը: Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում հայտարարվում են:

(ii) Արտոնյալ բաժնետոմսեր

Ոչ մարելի արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, քանի որ քանի որ դրանց դիմաց վճարվող շահաբաժինները հայեցողական են, չեն ներառում դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու պարտականություններ և չեն պահանջում մարում Բանկի փոփոխական քանակությամբ բաժնային գործիքներով: Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող հայեցողական շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխումներ՝ Բանկի բաժնետերերի հաստատումից հետո:

(խ) Բռնագանձված գրավ

Բանկը բռնագանձված ակտիվները ճանաչում է համապատասխան վարկերի և փոխատվությունների հաշվեկշռային արժեքից և բռնագանձման ամսաթվի դրությամբ իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, նվազագույնով: Բանկը որոշում է, արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար պիտանի համարվող ակտիվները (առկայության դեպքում) տեղափոխվում են ակտիվների համապատասխան դաս՝ էական լինելու դեպքում: Ակտիվները, որոնց վաճառքը խիստ հավանական է, տեղափոխվում են վաճառքի համար պահվող ակտիվների դաս՝ իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում) և իրական արժեքով՝ հանած վաճառքի ծախսումները (ոչ ֆինանսական ակտիվների դեպքում): Բռնագանձված ակտիվները հետագայում չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի գնից՝ հանած վաճառքի ծախսումները, նվազագույնով:

(ծ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Բանկը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից:

(կ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը ներառում է հարկի այն գումարը, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող շահույթի գծով՝ կիրառելով հարկի դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ակտիվների ու պարտավորությունների ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի և ո՛չ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների վերացումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր

տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այդ նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս մարելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվապահական հաշվառման ստանդարտների փոփոխություններ գործում են 2025թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը ժամկետից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված հաշվապահական հաշվառման ստանդարտները:

(i) Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

2024թ. մայիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակել է Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխությունները, որոնց արդյունքում փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 9-ում և ՖՀՄՍ 7-ում:

Պահանջները գործում են 2026թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, թույլատրվում է դրանց վաղաժամ կիրառումը և վերաբերում են՝

- ճանաչմանը և ապաճանաչմանը, այդ թվում՝ էլեկտրոնային վճարային համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման հաշվառմանը, և
- ֆինանսական ակտիվների, ներառյալ կայուն զարգացման հետ կապված բնութագրեր ունեցող ակտիվների, պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի գնահատմանը:

Բանկի գնահատմամբ փոփոխությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

(ii) ՖՀՄՍ 18 «Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից

նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվի:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից մեկ ծանոթագրությունում:
- Տրամադրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Ներկայումս Բանկը գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին հաշվետվության, դրամական հոսքերի մասին հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Բանկը նաև գնահատում է ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններում

(iii) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Բնական աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրեր (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան կատարելագործումներ՝ հրապարակում 11

5 Անճշտությունների ուղղում

Ստորև բերվող աղյուսակներում ամփոփ կերպով ներկայացված են նախորդ տարվա ուղղված անճշտությունները և ուղղման ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազ. դրամ		**Անճշտությունների ուղղման ազդեցությունը**		
1 հունվարի 2024թ.	**Ծնթգ.**	**Ըստ նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների**	**Ճշգրտումներ**	**Վերահաշ-վարկված**
Ընդամենը ակտիվներ		**288,869,984**	**968,698**	**289,838,682**
Հաճախորդներին տրված վարկեր	Ա	149,364,985	968,698	150,333,683
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Բ	55,669,030	(17,353,973)	38,315,057
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	Բ	26,194,815	17,353,973	43,548,788
Ընդամենը պարտավորություններ		**248,269,119**	**1,044,346**	**249,313,465**
Ընթացիկ հարկային պարտավորություն	Գ	726,560	869,981	1,596,541
Հետաձգված հարկային պարտավորություն	Ա	539,849	174,365	714,214
Ընդամենը սեփական կապիտալ		**40,600,868**	**(75,648)**	**40,525,220**
Չբաշխված շահույթ		4,769,028	(75,648)	4,693,380

հազ. դրամ		**Անճշտությունների ուղղման ազդեցությունը**		
31 դեկտեմբերի 2024թ.		**Ըստ նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների**	**Ճշգրտումներ**	**Վերահաշ-վարկված**
Ընդամենը ակտիվներ		**336,626,868**	**688,393**	**337,315,261**
Հաճախորդներին տրված վարկեր	Ա	203,540,544	844,158	204,384,702
Հետաձգված հարկային ակտիվ	Ա	302,402	(155,761)	146,641
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Բ	51,966,052	(14,645,238)	37,320,814
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	Բ	18,488,444	14,645,238	33,133,682
Ընդամենը սեփական կապիտալ		**44,237,280**	**585,050**	**44,822,330**
Չբաշխված շահույթ		8,186,671	585,050	8,771,721

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

հազ. դրամ		**Անճշտությունների ուղղման ազդեցությունը**		
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		**Ըստ նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների**	**Ճշգրտումներ**	**Վերահաշ-վարկված**
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	Ա	29,925,562	349,426	30,274,988
Այլ գործառնական եկամուտ	Ա	1,147,216	(184,212)	963,004
Ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստների զուտ հակադարձում	Ա	1,161,107	(289,758)	871,349
Շահութահարկի գծով ծախս	Գ	(2,794,531)	888,583	(1,905,948)
Տարվա շահույթ		**8,227,910**	**660,695**	**8,888,605**
Ամբողջական համապարփակ ֆինանսական արդյունք		**8,252,393**	**660,695**	**8,913,088**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ, ՀՀ դրամ		**42.5**	**3.7**	**46.2**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ, ՀՀ դրամ		**37.7**	**2.4**	**40.1**

Դրամական հոսքերի մասին հաշվետվության վրա

	Անճշտությունների ուղղման ազդեցությունը		
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	**Ըստ նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների**	**Ճշգրտումներ**	**Վերահաշ-վարկված**
հազ. դրամ			
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	1,285,192	2,590,045	3,875,237
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	(2,098,146)	(130,359)	(2,228,505)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	(1,144,936)	11,758	(1,133,178)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(1,957,890)	2,471,444	513,554
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	55,669,030	(17,353,973)	38,315,057
Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ	**51,966,052**	**(14,645,238)**	**37,320,814**

Ա. 2025թ. ընթացքում Բանկը հայտնաբերել է նախորդ ժամանակաշրջաններում ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված անճշտություններ, որոնք վերաբերում են հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների չափմանը, հաճախորդներին տրված վարկերի՝ ըստ փուլերի բաշխմանը, վարկեր դուրսգրմանը և զրո տոկոսադրույքով կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով տրամադրված վարկերի ամորտիզացված արժեքի չափմանը բռնագանձված ակտիվների վաճառքի հետ կապված:

Արդյունքում հաճախորդներին տրված վարկերը, համապատասխան տոկոսային եկամուտը, արժեզրկման զուտ արդյունքը և բռնագանձված ակտիվների վաճառքից ստացված եկամուտը ճիշտ չէին ներկայացվել: Բանկն ուղղել է այս անճշտությունները վերահաշվարկելով ներկայացված յուրաքանչյուր նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների համապատասխան հոդվածները:

Բ. 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը վերագնահատել է ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստների դասակարգումը՝ արտարժույթով ներգրավված միջոցների մասով և եզրահանգել է, որ այդ մնացորդները չեն համապատասխանում դրամական միջոցների և դրանց համարժեքների սահմանմանը, քանի որ Բանկը պարտավոր է պահպանել նվազագույն օրական մնացորդ: Արդյունքում, այդ մնացորդները ներկայացվել են որպես բանկերին տրված վարկեր և փոխատվություններ: Համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերադասակարգվել է:

Գ. 2025թ. ընթացքում Բանկը բացահայտել է, որ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող շահութահարկի գծով ծախսերը ճիշտ չէին ճանաչվել 2024թ-ին: Համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է արտացոլելու համար ընթացիկ շահութահարկի և համապատասխան պարտավորության ճիշտ կերպով ճանաչումը համապատասխան հաշվետու ժամանակաշրջաններում:

2025թ. ընթացքում Բանկը վերանայել է դրամական հոսքերի մասին հաշվետվության ներկայացումը, ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը, որոնք նախկինում ներառված էին բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և մնացորդներում, վերադասակարգել է որպես այլ փոխառու միջոցներ և թարմացել է որոշ ծանոթագրությունների բացահայտումները: Համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է՝ ընթացիկ տարվա ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

6 Զուտ տոկոսային եկամուտ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր	31,898,497	26,150,689
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,970,187	2,345,266
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	995,378	1,415,678
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	210,084	254,182
	35,074,146	**30,165,815**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	109,169	109,173
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	**35,183,315**	**30,274,988**
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	283,012	119,540
Ընդամենը տոկոսային եկամուտ	**35,466,327**	**30,394,528**
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	12,606,999	9,709,039
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,232,640	868,035
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	660,579	508,958
Վարձակալության գծով պարտավորություններ	321,662	276,556
Այլ փոխառու միջոցներ	205,174	229,935
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	175,778	158,705
	15,202,832	**11,751,228**
Զուտ տոկոսային եկամուտ	**20,263,495**	**18,643,300**

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		
Կանխիկ և անկանխիկ գործարքներից գանձումներ	1,698,114	1,271,182
Վճարային քարտերով գործառնություններ	1,643,805	1,849,102
Դրամական փոխանցումներ	1,029,596	922,846
Կապակցված կողմ հանդիսացող ապահովագրական ընկերությունից ստացված միջնորդավճարներ	627,154	209,837
Հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ	162,418	142,185
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	27,769	20,390
Այլ	99,268	118,705
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	**5,288,124**	**4,534,247**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		
Վճարային քարտերով գործառնություններ	1,039,439	1,235,845
Կանխիկ և անկանխիկ գործարքներից գանձումներ	204,751	193,481
Ֆինանսական կազմակերպություններից գանձվող հաշիվների սպասարկման վճարներ	75,391	41,993
Բրոքերային ծառայություններ	66,041	124,702
Դեպոզիտարիայի և ֆոնդային բորսայի ծառայություններ	23,094	72,520
Այլ	159,178	99,196
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	**1,567,894**	**1,767,737**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ	**3,720,230**	**2,766,510**

(ա) Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը չափվում է հաճախորդի հետ կնքված պայմանագրով սահմանված հատուցման հիման վրա: Բանկը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ծառայության նկատմամբ հսկողությունը: Պայմանավորված ծառայությունների բնույթով՝ Բանկը չունի պայմանագրի գծով էական ակտիվներ և պարտավորություններ:

Ծառայության տեսակը	**Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները**	**Հասույթի ճանաչումը ՖՀՄՍ 15-ի համաձայն**
Ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայություններ	Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցում է բանկային ծառայություններ, այդ թվում՝ հաշիվների կառավարման, վարկային քարտերի և հաշիվների սպասարկման, փոխանցումների ծառայություններ: Հաշիվների ընթացիկ կառավարման և սպասարկման վճարները գանձվում են հաճախորդի հաշվից ամսական կտրվածքով: Բանկը կանոնավոր կերպով սահմանում է դրույքաչափեր ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայությունների համար՝ առանձին հիմունքով: Գործարքների վճարները, ներառյալ դրամական փոխանցումների և գործարքների մշակման վճարները գանձվում են հաճախորդի հաշվից՝ գործարքն իրականացնելիս կամ ծառայությունը մատուցելիս:	Հաշիվների կառավարումից և սպասարկումից ստացվող հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգընթաց: Գործարքների և գործարքների մշակման վճարները ճանաչվում են ժամանակի որոշակի պահին՝ գործարքն իրականացնելիս կամ ծառայությունը մատուցելիս:

(բ) Պայմանագրերի գծով մնացորդներ

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել հաճախորդների հետ պայմանագրերից առաջացած էական պայմանագրի գծով ակտիվներ կամ պայմանագրի գծով պարտավորություններ:

8 Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից սփոթ գործարքների գծով	6,086,770	6,358,080
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	35,494	67,621
Զուտ օգուտ/(վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	1,158	(46,956)
Զուտ վնաս ածանցյալ գործիքներից	(146,190)	(238,619)
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**5,977,232**	**6,140,126**

9 Այլ գործառնական եկամուտ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Զուտ օգուտ բռնագանձված ակտիվների վաճառքից	1,228,978	181,284
Ստացված տույժեր և տուգանքներ	566,154	637,275
Զուտ օգուտ թանկարժեք մետաղներով գործառնություններից	101,660	32,960
Եկամուտ արժեթղթերի պահառուական ծառայություններից	89,544	52,705
Զուտ օգուտ այլ ակտիվների վաճառքից	41,845	33,440
Այլ գործառնական եկամուտ	2,851	25,340
Ընդամենը այլ գործառնական եկամուտ	**2,031,032**	**963,004**

10 Ուղղակի բանկային ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին	429,871	412,247
Ինկասացիայի ծառայություններ	95,189	86,788
Վնաս վարձակալության դադարեցումից	55,358	-
Բռնագանձված ակտիվների արժեզրկումից կորուստ	-	1,593,844
Այլ գործառնական ծախսեր	44,411	58,475
	624,829	**2,151,354**

11 Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստները:

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	87,788	(19,566)
Հաճախորդներին տրված վարկեր*	875,736	(1,254,281)
Այլ ակտիվներ	2,132	436,946
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, ներառյալ վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերը	-	(29,003)
Ֆինանսական երաշխավորություններ	(7,017)	(5,445)
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/ (պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում)	**958,639**	**(871,349)**

* Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից զուտ կորուստների/(արժեզրկումից կորուստների զուտ հակադարձման) կազմում ներառված է գրավի բռնագանձումից ստացված 2,459,549 հազար դրամ (2024թ-ին՝ 4,336,736 հազար դրամ) եկամուտը, որը գրանցվել է ուղղակիորեն արժեզրկումից զուտ կորուստների կազմում:

12 Աննախազմի գծով ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատակիցների հատուցումներ՝ ներառյալ համապատասխան հարկերը	10,576,383	9,580,987
Աշխատակիցների վերապատրաստման և այլ ծախսեր	78,176	92,378
	10,654,559	**9,673,365**

13 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	2,393,281	2,007,802
Գովազդի ծախսեր	1,095,527	666,403
Հիմնական միջոցների պահպանման ծախսեր	909,450	1,134,682
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	858,274	758,337
Հաղորդակցության ծախսեր	472,458	422,387
Ներկայացուցչական ծախսեր	420,786	432,289
Բարեգործական և սոցիալական միջոցառումներ	302,127	197,319
Անվտանգության ծառայություն	278,876	247,926
Խորհրդատվական և այլ ծառայություններ	160,046	211,143
Ապահովագրություն	121,234	118,817
Գրասենյակային ծախսեր	99,462	89,628
Գործուղման ծախսեր	93,736	62,243
Կարճաժամկետ վարձակալության և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	63,972	143,263
Այլ	577,726	272,778
	7,846,955	**6,765,017**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա խորհրդատվական և այլ ծառայությունների գումարում ներառված է Բանկի 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ՖՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արժեքը՝ 57,600 հազար դրամի չափով և ոչ աուդիտորական ծառայությունների արժեքը՝ 47,400 հազար դրամի չափով (2024թ-ին՝ ՖՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արժեքը՝ 35,580 հազար դրամի չափով), որոնք պետք է վճարվեին/ենթակա են վճարման աուդիտորական ընկերությանը: Նշված բոլոր գումարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:

14 Շահութահարկի գծով ծախս

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	2,431,501	2,772,178
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետևանքով	(341,045)	(866,230)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**2,090,456**	**1,905,948**

2025թ-ին ընթացիկ հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2024թ-ին՝ 18%):

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025թ. հազ. դրամ	%	2024թ. հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	11,907,007		10,794,553	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	2,143,261	18%	1,943,020	18%
Չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	(52,805)	0%	(37,072)	0%
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**2,090,456**	**18%**	**1,905,948**	**18%**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված են հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	**Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.**	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված**	**Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.**
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(14,620)	32,026	-	17,406
Ներդրումային արժեթղթեր	55,895	(35,023)	(4,627)	16,245
Հաճախորդներին տրված վարկեր	(249,428)	539,768	-	290,340
Հիմնական միջոցներ	(303,629)	(5,183)	2,120	(306,692)
Ոչ նյութական ակտիվներ	104,273	101,447		205,720
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	(502,687)	-	(502,687)
Բռնագանձված ակտիվներ	360,355	(360,355)	-	-
Այլ ակտիվներ	133,649	89,356	-	223,005
Վարձակալության գծով պարտավորություններ	-	465,081	-	465,081
Այլ պարտավորություններ	60,145	16,615	-	76,760
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**146,641**	**341,045**	**(2,507)**	**485,177**

հազ. դրամ	**Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.**	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված**	**Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.**
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(24,241)	9,621	-	(14,620)
Ներդրումային արժեթղթեր	72,031	(10,760)	(5,376)	55,895
Հաճախորդներին տրված վարկեր	(554,135)	304,707	-	(249,428)
Հիմնական միջոցներ	(266,029)	(37,600)	-	(303,629)
Ոչ նյութական ակտիվներ	-	104,273	-	104,273
Բռնագանձված ակտիվներ	-	360,355	-	360,355
Այլ ակտիվներ	-	133,649	-	133,649
Այլ պարտավորություններ	58,160	1,985	-	60,146
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**(714,214)**	**866,230**	**(5,376)**	**146,641**

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Բանկը կկարողանա օգտագործել դրանցից ստացված օգուտները:

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
		Վերահաշ-վարկված	Վերահաշ-վարկված
Կանխիկը դրամարկղում	15,334,334	14,960,598	16,113,644
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	15,913,555	19,568,608	19,594,833
Նոստրո հաշիվներ այլ բանկերում			
– Aa1-ից Aa3 վարկանիշով	1,176,539	478,851	262,755
– A1-ից A3 վարկանիշով	501,631	242,271	247,271
– Baa1-ից Baa3 վարկանիշով	777,915	155,819	139,419
– Ba1-ից Ba3 վարկանիշով	8,433,665	954,021	723,303
– B1-ից B3 վարկանիշով	319283	33816	384623
– վարկանիշ չունեցող	650,648	926,830	849,209
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	**11,859,681**	**2,791,608**	**2,606,580**
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**43,107,570**	**37,320,814**	**38,315,057**

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2025թ. դեկտեմբերի 31-ի Բանկը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2024թ-ին այդպիսի տեղաբաշխված միջոցներ չկային):

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (Ծանոթագրություն 16) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում պահվող վարկանիշ չունեցող նոստրո հաշիվների մնացորդներում ներառված են բանկերի հաշիվների մնացորդներ, որոնց պարտքային ռիսկը Բանկի գնահատմամբ համապատասխանում է «Moody's» վարկանիշային գործակալության Caa3 արտաքին վարկանիշին:

2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտաքային կորուստների պահուստ չի ճանաչվել, քանի որ հնարավոր ազդեցությունը համարվել է ոչ էական:

16 Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ Վերահաշ-վարկված	2023թ. հազ. դրամ Վերահաշ-վարկված
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ			
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	747,500	595,000	790,000
Ավանդ ՀՀ ԿԲ-ում, պարտադիր պահուստներ	19,245,612	14,645,238	17,353,973
Ընդամենը պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	**19,993,112**	**15,240,238**	**18,143,973**
Այլ բանկերին և ֆինանսական կազմակերպությունների տրված վարկեր և փոխատվություններ			
Հայկական բանկեր և ֆինանսական կազմակերպություններ			
– Ba1-ից Ba3 վարկանիշով	9,340,844	8,807,779	9,417,690
– B1-ից B3 վարկանիշով	740	768	783
– վարկանիշ չունեցող	124,754	2,550,306	7,113,481
Այլ ոչ ռեզիդենտ բանկեր և ֆինանսական կազմակերպություններ			
– Aa1-ից Aa3 վարկանիշով	2,348,479	2,201,645	2,318,841
– Ba1-ից Ba3 վարկանիշով	-	349	-
– Baa1-ից Baa3 վարկանիշով	-	109	-
– վարկանիշ չունեցող	332,867	4,407,140	6,648,238
Ընդամենը վարկեր և ավանդներ	**12,147,684**	**17,968,096**	**25,499,033**
Ընդամենը բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	**32,140,796**	**33,208,334**	**43,643,006**
Պարտքային կորստի պահուստ	(14,593)	(74,652)	(94,218)
Ընդամենը բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված զուտ վարկեր և փոխատվություններ	**32,126,203**	**33,133,682**	**43,548,788**

(ա) Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Վարկային քարտերով գործառնությունների համար ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցը ոչ տոկոսակիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում պահել կանխիկ ավանդ (պարտադիր պահուստ) ներգրավված միջոցների համար: ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է 4% (2024թ-ին՝ 4%) և ամբողջությամբ պահվում է ՀՀ դրամով: Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստը կազմում է ներգրավված միջոցների 15% (2024թ-ին՝ 18%, որից 6%-ը պահվում էր ՀՀ դրամով, իսկ 12%-ը՝ ներգրավված միջոցների համապատասխան արտարժույթով): ՀՀ դրամով պահվող ավանդը ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: ՀՀ դրամով պահվող պարտադիր պահուստները դասակարգվում են որպես դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 15), քանի որ անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկը պարտավոր է ապահովել նվազագույն մնացորդ յուրաքանչյուր օրվա վերջում: Այդ պահուստները չեն համարվում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և ներառված են բանկերին տրված վարկերի և փոխատվությունների կազմում:

(բ) Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկն ունի մեկ պայմանագրի կողմ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2024թ-ին՝ մեկ պայմանագրի կողմ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի): 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 6,013,731 հազար դրամ (2024թ-ին՝ 5,543,297 հազար դրամ):

Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները ժամկետանց կամ արժեզրկված չեն և ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բանկերին տրված բոլոր վարկերը և փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով կորստի պահուստի տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	74,652	-	-	74,652
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(74,652)	-	-	(74,652)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	14,593	-	-	14,593
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,593**	**-**	**-**	**14,593**

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	94,218	-	-	94,218
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(94,218)	-	-	(94,218)
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	74,652	-	-	74,652
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74,652**	**-**	**-**	**74,652**

Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային որակը բացահայտելու համար Բանկն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները: Բանկի գնահատմամբ հայկական բանկերի՝ վարկանիշ չունեցող վարկերի և ավանդների պարտքային ռիսկը մոտավորապես համապատասխանում է «Moody's» վարկանիշային գործակալության B2 վարկանիշին: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ ոչ ռեզիդենտ բանկերի վարկանիշ չունեցող վարկերի և ավանդների կազմում ներառված են երկու ֆինանսական կազմակերպության մնացորդները, որոնց պարտքային ռիսկի վարկանիշները Բանկի գնահատմամբ մոտավորապես համապատասխանում են «Moody's» վարկանիշային գործակալության A2 և Baa2 վարկանիշներին:

17 Ներդրումային արժեթղթեր

(ա) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր	10,473,188	27,166,994
Հայկական ընկերությունների կորպորատիվ պարտատոմսեր	3,126,469	4,047,205
Պարտքային կորստի պահուստ	(62,829)	(62,829)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**13,536,828**	**31,151,370**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր	9,290,097	3,476,530
Պարտքային կորստի պահուստ	(9,598)	(9,598)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**9,280,499**	**3,466,932**
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**22,817,327**	**34,618,302**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկը չունի պայմանագրի կողմ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2024թ-ին այսպիսի պայմանագրի կողմ չկար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության):

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հայկական ընկերությունների կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերը ներառում են 1,967,998 հազար դրամ գումարով ներդրում «Moody's» վարկանիշային գործակալության կողմից Ba3 վարկանիշ ստացած ընկերությունում, իսկ մնացած ներդրումները կատարված են վարկանիշ չունեցող թողարկող ընկերություններում: Բանկի գնահատմամբ վարկանիշ չունեցող պորտֆելի պարտքային ռիսկի վարկանիշը գտնվում է Caa3-ից B2 տիրույթում՝ հիմնվելով ներքին վերլուծության վրա, 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	72,427	-	-	72,427
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	30,844	-	-	30,844
Մարված	(55,300)	-	-	(55,300)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	24,456	-	-	24,456
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**72,427**	**-**	**-**	**72,427**

հազ. դրամ	2024թ.			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	101,430	-	-	101,430
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(29,003)	-	-	(29,003)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**72,427**	**-**	**-**	**72,427**

(բ) Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր	1,099,175	1,073,505
Հայկական ընկերությունների բաժնային ներդրումներ	750,325	750,325
	1,849,500	**1,823,830**

Ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտագործում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշները:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար: Կորստի պահուստը չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է:

հազ. դրամ	2025թ.			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,964	-	-	2,964
Կորստի պահուստի զուտ վերաչափում	-	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,964**	-	-	**2,964**

հազ. դրամ	2024թ.			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,840	-	-	2,840
Կորստի պահուստի զուտ վերաչափում	124	-	-	124
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,964**	**-**	**-**	**2,964**

(i) Չգնանշվող բաժնային ներդրումային արժեթղթեր նախորոշված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներում ներառված են ստորև ներկայացված չգնանշվող բաժնային արժեթղթերը:

Անվանումը	Գրանցման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող % 2025թ.	Վերահսկվող % 2024թ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	Վճարային համակարգ	1.25	1.25	16,500	16,500
«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկային հաշվետվու-թյունների գործակալություն	2.54	2.54	33,657	33,657
«Ես եմ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Ազգային նույնականացման հարթակ	8.33	8.33	200,000	200,000
					250,157	**250,157**

18 Հաճախորդներին տրված վարկեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
		Վերահաշ-վարկված	Վերահաշ-վարկված
Իրավաբանական անձանց տրված վարկեր	81,013,441	57,220,545	43,847,102
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	186,507,544	151,719,268	112,534,327
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող՝ հաճախորդներին տրված համախառն վարկեր	**267,520,985**	**208,939,813**	**156,381,429**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	3,591,495	1,982,412	364,063
Պարտքային կորստի պահուստ	(6,555,289)	(6,537,523)	(6,411,809)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող՝ հաճախորդներին տրված զուտ վարկեր	**264,557,191**	**204,384,702**	**150,333,683**

Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
		Վերահաշ-վարկված	Վերահաշ-վարկված
Իրավաբանական անձանց տրված վարկեր			
Վարկեր խոշոր ընկերություններին	46,714,420	25,079,130	25,704,339
Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	34,299,022	32,141,411	18,142,763
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**81,013,442**	**57,220,541**	**43,847,102**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր			
Հիփոթեքային վարկեր	87,834,328	63,300,620	32,609,801
Ֆիզիկական անձանց տրված սպառողական վարկեր	89,437,230	82,637,494	75,825,884
Ոսկու գրավով վարկեր	9,235,985	5,781,158	4,098,642
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր	**186,507,543**	**151,719,272**	**112,534,327**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**267,520,985**	**208,939,813**	**156,381,429**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	**3,591,495**	**1,982,412**	**364,063**
Պարտքային կորստի պահուստ	(6,555,289)	(6,537,523)	(6,411,809)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	**264,557,191**	**204,384,702**	**150,333,683**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	42,700,902	12,699,512	1,820,131	57,220,545
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	46,072,261	-	-	46,072,261
Մարված ակտիվներ	(17,862,190)	(3,850,280)	(672,890)	(22,385,360)
Տեղափոխում 1-ին փուլ	1,704,828	(1,701,643)	(3,185)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(5,600,737)	5,600,737	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(376,806)	(94,570)	471,376	-
Վերադարձումներ	-	-	226,228	226,228
Դուրսգրված գումարներ	-	-	(120,233)	(120,233)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**66,638,258**	**12,653,756**	**1,721,427**	**81,013,441**

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	35,834,832	1,214,579	6,777,409	43,826,820
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	25,888,992	-	-	25,888,992
Մարված ակտիվներ	(11,446,172)	(215,846)	(790,195)	(12,452,213)
Տեղափոխում 1-ին փուլ	154,794	(36,937)	(117,857)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(7,333,691)	11,821,929	(4,488,238)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(397,853)	(84,213)	482,066	-
Վերադարձումներ	-	-	110,311	110,311
Դուրսգրված գումարներ	-	-	(153,365)	(153,365)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**42,700,902**	**12,699,512**	**1,820,131**	**57,220,545**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի գծով կորստի պահուստի տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	110,597	1,486,010	222,623	1,819,230
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	164,184	-	-	164,184
Մարված ակտիվներ	(35,689)	(85,015)	(332,005)	(452,709)
Տեղափոխում 1-ին փուլ	49,402	(47,994)	(1,408)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(28,070)	28,070	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(26,019)	(14,641)	40,660	-
Վերադարձումներ	-	-	226,229	226,229
Դուրսգրված գումարներ	-	-	(120,234)	(120,234)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(106,624)	185,912	185,411	264,699
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**127,781**	**1,552,342**	**221,276**	**1,901,399**

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	159,811	97,923	1,816,113	2,073,847
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	87,392	-	-	87,392
Մարված ակտիվներ	(12,913)	(7,523)	(133,169)	(153,605)
Տեղափոխում 1-ին փուլ	9,467	(2,182)	(7,285)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(16,296)	1,703,550	(1,687,254)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(3,399)	(5,644)	9,043	-
Վերադարձումներ	-	-	110,311	110,311
Դուրսգրված գումարներ	-	-	(153,365)	(153,365)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(113,465)	(300,114)	268,229	(145,350)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**110,597**	**1,486,010**	**222,623**	**1,819,230**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆիզիկական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	143,295,152	3,180,921	5,243,195	151,719,268
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	91,230,662	-	-	91,230,662
Մարված ակտիվներ	(50,352,641)	(918,911)	(1,750,962)	(53,022,514)
Տեղափոխում 1-ին փուլ	789,980	(721,098)	(68,882)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(1,949,347)	1,993,526	(44,179)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(4,231,970)	(1,098,834)	5,330,804	-
Վերադարձումներ	-	-	342,562	342,562
Դուրսգրված գումարներ	-	-	(3,762,434)	(3,762,434)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**178,781,836**	**2,435,604**	**5,290,104**	**186,507,544**

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	104,022,189	2,366,130	5,716,441	112,104,760
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	87,220,318	-	-	87,220,318
Մարված ակտիվներ	(41,208,129)	(774,568)	(2,706,835)	(44,689,532)
Տեղափոխում 1-ին փուլ	361,720	(296,986)	(64,734)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(2,870,836)	2,891,282	(20,446)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(4,230,110)	(1,004,937)	5,235,047	-
Վերադարձումներ	-	-	1,606,847	1,606,847
Դուրսգրված գումարներ	-	-	(4,523,125)	(4,523,125)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**143,295,152**	**3,180,921**	**5,243,195**	**151,719,268**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է իրավաբանական անձանց տրված վարկերի գծով կորստի պահուստի տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,390,013	702,542	2,622,096	4,714,651
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,086,679	-	-	1,086,679
Մարված ակտիվներ	(403,112)	(111,263)	(868,668)	(1,383,043)
Տեղափոխում 1-ին փուլ	104,478	(83,091)	(21,387)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(46,611)	58,297	(11,686)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(103,011)	(189,348)	292,359	-
Վերադարձումներ	-	-	342,562	342,562
Դուրսգրված գումարներ	-	-	(3,762,434)	(3,762,434)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(775,430)	293,169	4,137,736	3,655,475
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,253,006**	**670,306**	**2,730,578**	**4,653,890**

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,214,963	682,496	2,439,450	4,336,909
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	930,722	-	-	930,722
Մարված ակտիվներ	(325,079)	(108,832)	(1,972,835)	(2,406,746)
Տեղափոխում 1-ին փուլ	145,630	(102,830)	(42,800)	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(54,266)	72,719	(18,453)	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(88,816)	(206,498)	295,314	-
Վերադարձումներ	-	-	1,606,847	1,606,847
Դուրսգրված գումարներ	-	-	(4,523,125)	(4,523,125)
Կորստի պահուստի զուտ վերաչափում	(433,141)	365,487	4,837,698	4,770,044
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,390,013**	**702,542**	**2,622,096**	**4,714,651**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների համախառն հաշվեկշռային արժեքների տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,982,407	-	-	1,982,407
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,345,303	-	-	2,345,303
Մարված ակտիվներ	(736,219)	-	-	(736,219)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,591,491**	**-**	**-**	**3,591,491**

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	364,062	-	-	364,062
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,692,276	-	-	1,692,276
Մարված ակտիվներ	(73,931)	-	-	(73,931)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,982,407**	**-**	**-**	**1,982,407**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով կորստի պահուստի տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	**2025թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	3,645	-	-	3,645
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,239	-	-	2,239
Մարված ակտիվներ	(527)	-	-	(527)
Կորստի պահուստի զուտ վերաչափում ներառյալ մարումները	(3,069)	-	-	(3,069)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,288**	**-**	**-**	**2,288**

հազ. դրամ	**2024թ.**			
	1-ին փուլ	**2-րդ փուլ**	**3-րդ փուլ**	**Ընդամենը**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,053	-	-	1,053
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	3,206	-	-	3,206
Կորստի պահուստի զուտ վերաչափում ներառյալ մարումները	(614)	-	-	(614)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,645**	**-**	**-**	**3,645**

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

Իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելում ներառված են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները: Ստորև ներկայացված է ֆինանսական վարձակալության վերլուծությունը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2025թ. հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2024թ. հազ. դրամ**
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներում		
Մինչև 1 տարի ժամկետով	59,978	123,099
1-2 տարի ժամկետով	178,157	526,233
2-3 տարի ժամկետով	425,515	244,479
3-4 տարի ժամկետով	1,802,237	690,538
4-5 տարի ժամկետով	1,211,670	334,297
Ավելի քան 5 տարի ժամկետով	636,025	414,922
	4,313,582	**2,333,568**
Չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով	(722,091)	(351,161)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում մինչև արժեզրկման գծով պահուստը	**3,591,491**	**1,982,407**
Արժեզրկման գծով պահուստ	(2,288)	(3,645)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**3,589,203**	**1,978,762**

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Վարկեր խոշոր ընկերություններին				
– ոչ ժամկետանց	33,631,456	12,297,720	785,243	46,714,419
Ընդամենը համախառն վարկեր խոշոր ընկերություններին	**33,631,456**	**12,297,720**	**785,243**	**46,714,419**
Պարտքային կորստի պահուստ	(38,408)	(1,506,795)	(39,262)	(1,584,465)
Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին	**33,593,048**	**10,790,925**	**745,981**	**45,129,954**
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
– ոչ ժամկետանց	32,930,882	301,017	352,361	33,584,260
– մինչև 30 օր ժամկետանց	71,568	13,299	39,888	124,755
– 31-90 օր ժամկետանց	-	41,719	207,852	249,571
– 91-270 օր ժամկետանց	-	-	182,157	182,157
– ավելի քան 271 օր ժամկետանց	4,352	-	153,927	158,279
Ընդամենը համախառն վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	**33,006,802**	**356,035**	**936,185**	**34,299,022**
Պարտքային կորստի պահուստ	(89,374)	(45,547)	(182,012)	(316,933)
Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	**32,917,428**	**310,488**	**754,173**	**33,982,089**
Ընդամենը համախառն վարկեր իրավաբանական անձանց	**66,638,258**	**12,653,756**	**1,721,427**	**81,013,441**
Ընդամենը զուտ վարկեր իրավաբանական անձանց	**66,510,476**	**11,101,413**	**1,500,152**	**79,112,043**
Հիփոթեքային վարկեր				
– ոչ ժամկետանց	86,651,847	423,190	358,479	87,433,516
– մինչև 30 օր ժամկետանց	166,609	-	6,818	173,427
– 31-90 օր ժամկետանց	-	83,560	17,077	100,637
– 91-270 օր ժամկետանց	-	-	106,587	106,587
– ավելի քան 271 օր ժամկետանց	-	-	20,161	20,161
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**86,818,456**	**506,750**	**509,122**	**87,834,328**
Պարտքային կորստի պահուստ	(33,889)	(24,792)	(36,808)	(95,489)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**86,784,567**	**481,957**	**472,314**	**87,738,839**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց				
– ոչ ժամկետանց	81,251,072	840,794	684,953	**82,776,818**
– մինչև 30 օր ժամկետանց	1,580,272	243,025	151,075	**1,974,372**
– 31-90 օր ժամկետանց	-	775,931	202,915	**978,846**
– 91-270 օր ժամկետանց	-	-	2,271,164	**2,271,164**
– ավելի քան 271 օր ժամկետանց	-	-	1,436,031	**1,436,031**
Ընդամենը համախառն սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**82,831,344**	**1,859,750**	**4,746,138**	**89,437,231**
Պարտքային կորստի պահուստ	(1,218,990)	(645,424)	(2,689,390)	**(4,553,803)**
Ընդամենը զուտ սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**81,612,354**	**1,214,327**	**2,056,748**	**84,883,428**

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ոսկու գրավով վարկեր				
– ոչ ժամկետանց	9,092,170	41,341	22,488	9,155,999
– մինչև 30 օր ժամկետանց	39,866	9,151	1,868	50,885
– 31-90 օր ժամկետանց	-	18,611	5,137	23,748
– 91-270 օր ժամկետանց	-	-	1,611	1,611
– ավելի քան 271 օր ժամկետանց	-	-	3,741	3,741
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**9,132,036**	**69,104**	**34,845**	**9,235,985**
Պարտքային կորստի պահուստ	(128)	(89)	(2,094)	(2,311)
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**9,131,908**	**69,014**	**32,751**	**9,233,674**
Ընդամենը համախառն վարկեր ֆիզիկական անձանց	**178,781,836**	**2,435,603**	**5,290,104**	**186,507,544**
Ընդամենը զուտ վարկեր ֆիզիկական անձանց	**177,528,830**	**1,765,298**	**2,561,813**	**181,855,941**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
– ոչ ժամկետանց	3,591,492	-	-	3,591,492
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդհանուր համախառ գումարներում	**3,591,492**	**-**	**-**	**3,591,492**
Պարտքային կորստի պահուստ	(2,288)	-	-	(2,288)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդհանուր զուտ գումարներում	**3,589,204**	**-**	**-**	**3,589,204**
Ընդամենը համախառն վարկեր հաճախորդներին	**249,011,585**	**15,089,359**	**7,011,532**	**271,112,478**
Ընդամենը զուտ վարկեր հաճախորդներին	**247,628,511**	**12,866,712**	**4,061,965**	**264,557,188**

* Աղյուսակում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց համար նախատեսված որոշ պրոդուկտների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Վարկեր խոշոր ընկերություններին				
– ոչ ժամկետանց	12,579,733	11,650,514	-	24,230,247
– մինչև 30 օր ժամկետանց	-	-	848,883	848,883
Ընդամենը համախառն վարկեր խոշոր ընկերություններին	**12,579,733**	**11,650,514**	**848,883**	**25,079,130**
Պարտքային կորստի պահուստ	(10,591)	(1,429,867)	(42,444)	(1,482,902)
Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին	**12,569,142**	**10,220,647**	**806,439**	**23,596,228**
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
– ոչ ժամկետանց	29,756,344	865,165	458,886	31,080,395
– մինչև 30 օր ժամկետանց	363,362	68,010	37,884	469,256
– 31-90 օր ժամկետանց	-	115,824	79,724	195,548
– 91-270 օր ժամկետանց	-	-	165,790	165,790
– ավելի քան 271 օր ժամկետանց	1,463	-	228,963	230,426
Ընդամենը համախառն վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	**30,121,169**	**1,048,998**	**971,248**	**32,141,415**
Պարտքային կորստի պահուստ	(100,006)	(56,143)	(180,179)	(336,327)
Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին	**30,021,163**	**992,855**	**791,069**	**31,805,087**
Ընդամենը համախառն վարկեր իրավաբանական անձանց	**42,700,902**	**12,699,512**	**1,820,131**	**57,220,545**
Ընդամենը զուտ վարկեր իրավաբանական անձանց	**42,590,305**	**11,213,502**	**1,597,508**	**55,401,315**
Հիփոթեքային վարկեր				
– ոչ ժամկետանց	62,204,583	329,440	285,733	62,819,756
– մինչև 30 օր ժամկետանց	69,099	203,789	31,493	304,381
– 31-90 օր ժամկետանց	-	24,246	9,157	33,402
– 91-270 օր ժամկետանց	-	-	80,858	80,858
– ավելի քան 271 օր ժամկետանց	-	-	62,223	62,223
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**62,273,682**	**557,474**	**469,464**	**63,300,620**
Պարտքային կորստի պահուստ	(5,482)	(14,651)	(40,236)	(60,368)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**62,268,200**	**542,823**	**429,229**	**63,240,252**
Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց				
– ոչ ժամկետանց	74,063,739	1,384,024	786,265	76,234,028
– մինչև 30 օր ժամկետանց	908,765	256,411	108,499	1,273,675
– 31-90 օր ժամկետանց	-	934,466	205,436	1,139,902
– 91-270 օր ժամկետանց	-	-	2,241,741	2,241,741
– ավելի քան 271 օր ժամկետանց	342,935	-	1,405,212	1,748,148
Ընդամենը համախառն սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**75,315,439**	**2,574,902**	**4,747,153**	**82,637,494**
Պարտքային կորստի պահուստ	(1,384,451)	(687,809)	(2,580,195)	(4,652,455)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր ֆիզիկական անձանց	**73,930,988**	**1,887,093**	**2,166,958**	**77,985,039**

	1-ին փուլ հազ. դրամ	2-րդ փուլ հազ. դրամ	3-րդ փուլ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ոսկու գրավով վարկեր				
– ոչ ժամկետանց	5,679,185	31,703	23,129	5,734,017
– մինչև 30 օր ժամկետանց	26,845	8,506	352	35,703
– 31-90 օր ժամկետանց	-	8,337	2,695	11,032
– 91-270 օր ժամկետանց	-	-	402	402
– ավելի քան 271 օր ժամկետանց	-	-	-	-
Ընդամենը համախառն ոսկու գրավով վարկեր	**5,706,030**	**48,546**	**26,578**	**5,781,154**
Պարտքային կորստի պահուստ	(79)	(81)	(1,666)	(1,826)
Ընդամենը զուտ ոսկու գրավով վարկեր	**5,705,951**	**48,464**	**24,912**	**5,779,329**
Ընդամենը համախառն վարկեր ֆիզիկական անձանց	**143,295,151**	**3,180,921**	**5,243,195**	**151,719,268**
Ընդամենը զուտ վարկեր ֆիզիկական անձանց	**141,905,139**	**2,478,380**	**2,621,099**	**147,004,619**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ				
– ոչ ժամկետանց	1,982,407	-	-	1,982,407
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդհանուր համախառ գումարներում	**1,982,407**	**-**	**-**	**1,982,407**
Պարտքային կորստի պահուստ	(3,645)	-	-	(3,645)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ընդհանուր զուտ գումարներում	**1,978,763**	**-**	**-**	**1,978,763**
Ընդամենը համախառն վարկեր հաճախորդներին	**187,978,460**	**15,880,433**	**7,063,326**	**210,922,220**
Ընդամենը զուտ վարկեր հաճախորդներին	**186,474,208**	**13,691,882**	**4,218,608**	**204,384,697**

* Աղյուսակում ներկայացված կորստի պահուստը ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձանց համար նախատեսված որոշ պրոդուկտների, այդ թվում՝ վարկային քարտերի և օվերդրաֆտների հետ կապված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

(բ) Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Պարտքային կորստի պահուստի գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները ներկայացված են Ծանոթագրություն 30 (բ) կետում:

(գ) Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն

Իրավաբանական անձանց տրված վարկեր

Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև ներկայացված է ընդհանուր վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ գրավի:

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Անշարժ գույք	119,640,703	96,068,368
Դրամական միջոցներ	12,116,289	1,441,133
Փոխադրամիջոցներ	229,461	242,939
Ոսկի	9,235,985	5,781,154
Այլ պաշարներ	3,045,291	1,707,041
Այլ	56,368,600	40,994,264
Գրավով չապահովված	70,476,151	64,687,326
	271,112,480	**210,922,225**

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3-րդ փուլ դասված՝ հաճախորդներին տրված վարկերի համար որպես ապահովություն ծառայող գրավի վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2025թ.	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Գրավի գնահատված շուկայական արժեք**					**Գրավով չապահովված գումար**	**Համապատասխան ԱՊԿ**
հազ. դրամ		**Անշարժ գույք**	**Ավտոմեքենաներ**	**Այլ գրավ**	**Ավելցուկ**	**Ընդամենը գրավ**		
Վարկեր իրավաբանական անձանց	1,721,428	5,361,557	49,900	5,676	(3,908,425)	1,508,707	212,720	(221,276)
Հիփոթեքային վարկեր	509,122	1,781,305	-	24,626	(1,299,755)	506,176	2,946	(36,808)
Սպառողական վարկեր	4,746,138	4,105,414	57,200	-	(3,230,663)	931,951	3,814,187	(2,689,390)
Ոսկու գրավով վարկեր	34,845	-	-	50,000	(15,155)	34,845	-	(2,094)
Ընդամենը	**7,011,533**	**11,248,276**	**107,100**	**80,302**	**(8,453,998)**	**2,981,679**	**4,029,853**	**(2,949,568)**

31 դեկտեմբերի 2024թ.	**Համախառն հաշվեկշռային արժեք**	**Գրավի գնահատված շուկայական արժեք**					**Գրավով չապահովված գումար**	**Համապատասխան ԱՊԿ**
հազ. դրամ		**Անշարժ գույք**	**Ավտոմեքենաներ**	**Այլ գրավ**	**Ավելցուկ**	**Ընդամենը գրավ**		
Վարկեր իրավաբանական անձանց	1,820,131	4,766,533	245,000	19,488	(3,393,592)	1,637,429	182,701	(222,623)
Հիփոթեքային վարկեր	469,464	1,579,473	4,389	-	(1,114,873)	468,989	475	(40,236)
Սպառողական վարկեր	4,747,153	4,476,209	29,880	13,000	(3,532,356)	986,733	3,760,420	(2,580,195)
Ոսկու գրավով վարկեր	27,828	-	-	40,106	(12,278)	27,828	-	(1,666)
Ընդամենը	**7,064,576**	**10,822,216**	**279,269**	**72,594**	**(8,053,098)**	**3,120,980**	**3,943,596**	**(2,844,719)**

Ղեկավարության գնահատմամբ վարկերի, այդ թվում՝ 3-րդ փուլ դասված վարկերի իրական արժեքը ցածր չէ առանձին վարկերի հաշվեկշռային արժեքից (բացառությամբ գրավով չապահովված վարկերի):

Բանկն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել հետագա փոփոխություններն արտացոլելու համար, ինչպես նաև վարկեր, որոնց գրավի իրական արժեքը չի որոշվել: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն հանգամանքից, թե երբ է այն գնահատվել, եթե այդպիսի գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել տեղին է արժեզրկման գնահատման համար: Ֆիզիկական անձանցից, օրինակ՝ ՓՄՁ վարկառուների բաժնետերերից ստացված երաշխավորությունները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար:

Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆիզիկական անձանց տրված վարկեր

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներառում են սպառողական վարկերը, վարկային քարտերը, հիփոթեքային և այլ վարկերը: Սպառողական վարկերը, վարկային քարտերը և այլ վարկերը (բացառությամբ ոսկու գրավով վարկերի) հիմնականում գրավով ապահովված չեն:

Ոսկու գրավի իրական արժեքն առնվազն հավասար է համապատասխան վարկերի հաշվեկշռային արժեքներին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվին որոշված արժեքները:

Հիփոթեքային վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ՝ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ: Անշարժ գույքի գրավի իրական արժեքն առնվազն հավասար է համապատասխան վարկերի հաշվեկշռային արժեքներին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվին որոշված արժեքները:

(դ) Բռնագանձված գրավ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել 4,126,215 հազար դրամ (2024թ-ին՝ 137,181 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված միջոցների բռնագանձման միջոցով: 2025թ. ընթացքում 3,174,522 հազար դրամ արժեքով բռնագանձված գույքը վերադասակարգվել է հիմնական միջոցների՝ գույքը որպես Բանկի գլխամասային գրասենյակ օգտագործելու նպատակով ղեկավարության մտադրության փոփոխության արդյունքում: Բռնագանձված գրավի մի մասը 5,906,555 հազար դրամ գումարով վաճառվել էր 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում (2024թ-ին՝ 331,903 հազար դրամ) հետաձգված վճարման պայմաններով, և առաջացած դերիտորական պարտքը ներառվել է հաճախորդներին տրված վարկերի կազմում:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավը ներառում է.

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Անշարժ գույք	1,566,646	3,446,628
Այլ	25,461	3,100,341
Ընդամենը բռնագանձված գրավ	**1,592,107**	**6,546,969**

Բանկը մտադիր է վաճառել այդ ակտիվները հնարավորինս սեղմ ժամկետներում:

(ե) Վարկային պորտֆելի ըստ աշխարհագրական տարածաշրջանների և տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են տնտեսության հետևյալ ճյուղերում գործունեություն իրականացնող հաճախորդներին.

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Շինարարություն	18,699,637	13,774,309
Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և փայտամշակում	10,089,370	6,338,023
Մեծածախ առևտուր	3,273,206	2,786,670
Հանքարդյունաբերություն/մետալուրգիա	64,744	938,844
Անշարժ գույք	11,184,252	7,680,621
Սննդի և խմիչքի արտադրություն	4,523,741	228,577
Էներգետիկայի բնագավառ	1,322,844	756,324
Տրանսպորտ	184,956	395,354
Ավիաուղիներ	2,216,136	-
Հյուրանոցային/ռեստորանային ոլորտ	1,895,925	2,202,368
Հեռահաղորդակցության ծառայություններ	313,108	658,607
Արդյունաբերություն	3,369,064	2,909,728
Ֆինանսներ և ներդրումներ	4,372,984	2,042,273
Կրթություն և մշակույթ	429,583	513,799
Անհատ ձեռնարկատերեր	17,836,941	14,763,897
Առողջապահություն և բժշկություն	1,136,184	1,005,292
Այլ	100,766	225,859
Ֆիզիկական անձանց տրված վարկեր	186,507,544	151,719,268
	267,520,985	**208,939,813**
Պարտքային կորստի պահուստ	(6,553,002)	(6,533,878)
	260,967,983	**202,405,935**

(զ) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հաճախորդ, որին տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2024թ-ին նման հաճախորդ չկար):

(է) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ի (դ) կետում, որն արտացոլում է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի՝ պայմանագրով նախատեսված մարման ժամկետը մնացած ժամանակահատվածը:

19 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հող և շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Մեքենաներ և սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	5,481,545	446,349	1,685,610	5,349,079	462,828	13,425,411
Ավելացումներ	9,072	205,376	534,105	157,532	41,330	947,415
Օտարումներ	(589,160)	(5,037)	(17,229)	(619,848)	(59,488)	(1,290,762)
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,901,457**	**646,688**	**2,202,486**	**4,886,763**	**444,670**	**13,082,064**
Մաշվածություն						
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	387,922	70,158	1,097,402	3,625,483	60,677	5,241,642
Տարվա մաշվածություն	283,243	14,829	261,636	228,852	44,761	833,321
Օտարումներ	(59,130)	(5,037)	(16,876)	(619,848)	(17,458)	(718,349)
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**612,035**	**79,950**	**1,342,162**	**3,234,487**	**87,980**	**5,356,614**
Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,289,422**	**566,738**	**860,324**	**1,652,276**	**356,690**	**7,725,450**

հազ. դրամ	Հող և շենքեր	Վարձակալված գույքի բարելավում	Մեքենաներ և սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	4,901,457	646,688	2,202,486	4,886,763	444,670	13,082,064
Ավելացումներ	3,843,895	270,959	433,457	793,056	50,060	5,391,427
Օտարումներ	(62,179)	(21,988)	(43,302)	(288,412)	(12,807)	(428,688)
Վերագնահատում	(11,777)	-	-	-	-	(11,777)
Տեղափոխում	28,036	-	-	(28,036)	-	-
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,699,432**	**895,659**	**2,592,641**	**5,363,371**	**481,923**	**18,033,026**
Մաշվածություն						
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	612,035	79,950	1,342,162	3,234,487	87,980	5,356,614
Տարվա մաշվածություն	240,005	28,084	151,449	315,678	39,345	774,561
Օտարումներ	(15,979)	(21,983)	(40,680)	(128,174)	(360)	(207,176)
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**836,061**	**86,051**	**1,452,931**	**3,421,991**	**126,965**	**5,923,999**
Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,863,371**	**809,608**	**1,139,710**	**1,941,380**	**354,958**	**12,109,027**

(ա) Ակտիվների վերագնահատում

Շենքերը ներկայացված են վերագնահատված արժեքով: Բանկին պատկանող շենքերը վերագնահատվել են անկախ գնահատողի կողմից 2026թ. մարտին՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները: Ղեկավարության գնահատմամբ այդ գնահատումը տրամադրում է իրական արժեքի ապացույց 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, քանի որ հաշվետու ամսաթվի և գնահատման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում շուկայական պայմանների էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Համապատասխանաբար, անկախ գնահատման արդյունքներն օգտագործվել են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի իրական արժեքը որոշելու համար: Վերագնահատման արդյունքում գրանցվել է հաշվեկշռային արժեքի նվազում՝ 11,777 հազար դրամի չափով:

(բ) Հիմնական միջոցների սեփականության իրավունքի սահմանափակումներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որպես պարտավորությունների ապահովման միջոց գրավադրված հիմնական միջոցներ կամ հիմնական միջոցներ, որոնց սեփականության իրավունքն այլ կերպ սահմանափակված է (2024թ-ին այդպիսի հիմնական միջոցներ չկային):

(գ) Պայմանագրային հանձնառություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային հանձնառություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու հետ կապված (2024թ-ին Բանկն այդպիսի հանձնառություններ չուներ):

20 Ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Լիցենզիաներ և արտոնագրեր	Ձեռքբերված համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	1,134,958	3,969,269	101,021	5,205,248
Ավելացումներ	32,664	921,866	-	954,530
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,167,622**	**4,891,135**	**101,021**	**6,159,778**
Ամորտիզացիա				
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	762,626	1,002,035	85,015	1,849,676
Տարվա ամորտիզացիա	102,178	454,077	3,147	559,402
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**864,804**	**1,456,112**	**88,162**	**2,409,078**
Սկզբնական արժեք				
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	1,167,622	4,891,135	101,021	6,159,778
Ավելացումներ	118,067	473,676	-	591,743
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,285,689**	**5,364,811**	**101,021**	**6,751,521**
Ամորտիզացիա				
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	864,804	1,456,112	88,162	2,409,078
Տարվա ամորտիզացիա	110,072	498,607	3,134	611,813
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**974,876**	**1,954,719**	**91,296**	**3,020,891**
Հաշվեկշռային արժեք				
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**302,818**	**3,435,023**	**12,859**	**3,750,700**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**310,813**	**3,410,092**	**9,725**	**3,730,630**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային հանձնառություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու հետ կապված (2024թ-ին Բանկն այդպիսի հանձնառություններ չուներ):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որպես պարտավորությունների ապահովման միջոց գրավադրված ոչ նյութական ակտիվներ կամ ոչ նյութական ակտիվներ, որոնց սեփականության իրավունքն այլ կերպ սահմանափակված է (2024թ-ին այդպիսի ոչ նյութական ակտիվներ չկային):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգչային ծրագիրը ներառում է վարկավորման ավտոմատացված ProtoCRM ծրագիրը 1,991,425 հազար դրամ (2024թ-ին՝ 2,146,183 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով:

21 Այլ ակտիվներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ստացվելիք գումարներ	3,886,166	2,376,472
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**3,886,166**	**2,376,472**
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	2,210,659	1,334,223
Նյութեր	282,059	267,031
Թանկարժեք մետաղներ	267,002	170,799
Այլ կանխավճարված հարկեր	107,348	140,152
Այլ ակտիվներ	796,306	297,724
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**3,670,374**	**2,209,929**
Ընդամենը այլ ակտիվներ	**7,556,540**	**4,586,398**

Դեբիտորական պարտքերը հիմնականում ներկայացնում են վճարային համակարգերի օպերատորների ցպահանջ մնացորդները: Մնացորդները ժամկետանց կամ արժեզրկված չեն: Ղեկավարության գնահատմամբ այդ մնացորդների գծով ակնկալվող պարտքային կորուստները էական չեն լինի:

22 Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	11,437,290	6,846,727
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	2,184,771	6,371,441
Ֆինանսական կազմակերպությունների ավանդներ	2,173,496	954,303
	15,795,557	**14,172,471**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրի կողմ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2024թ-ին այդպիսի պայմանագրի կողմ չկար):

Ֆինանսական կազմակերպությունների բոլոր ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Վարկերի համար գործում են փոփոխական և հաստատուն տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Բանկը չի ունեցել որևէ պարտազանցում մայր գումարի և տոկոսների հետ կապված կամ պարտավորությունների այլ խախտումներ (2024թ-ին պարտազանցում կամ խախտում չի եղել):

23 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	60,872,475	52,972,096
Ժամկետային ավանդներ	25,884,995	28,208,368
	86,757,470	**81,180,464**
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/ցպահանջ հաշիվներ	69,101,412	68,136,279
Ժամկետային ավանդներ	115,248,009	98,219,458
	184,349,421	**166,355,737**
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**271,106,891**	**247,536,201**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց ընթացիկ և ժամկետային ավանդների հաշիվներում ներառված են 11,664,987 հազար դրամ (2024թ-ին՝ 2,552,961 հազար դրամ) գումարով ավանդները, որոնք պահվում են որպես ապահովություն տրամադրված վարկերի և երաշխավորությունների համար: Այդ ավանդների իրական արժեքը մոտավորապես հավասար է է դրանց հաշվեկշռային արժեքին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք պայմանագրի կողմ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք պայմանագրի), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 21,364,763 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 21,312,210 հազար դրամ):

24 Այլ փոխառու միջոցներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	11,706,986	5,959,803
Ստորադաս փոխառություն մայր ընկերությունից	1,525,732	1,586,544
Փոխառություններ այլ բաժնետիրոջից	3,065,500	653,241
Վարկեր ՀՀ կառավարությունից	307,760	243,098
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,500,000	-
	18,105,978	**8,442,686**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերն ապահովված են հաճախորդներին տրված՝ 5,980,472 հազար դրամ ընդհանուր գումարով (2024թ.՝ 6,208,670 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքով (Ծանոթագրություն 18): Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն վարկեր է տրամադրում Բանկին, որն էլ իր հերթին վարկեր է տրամադրում համապատասխան պահանջները բավարարող փոխառուներին: Վարկերի մոնիտորինգն իրականացվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից: Վարկերը համարվում են շուկայի առանձին սեգմենտի վարկեր: Այդ վարկերի թվում են Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորվող «Փոքր և միջին բիզնեսի զարգացում» վարկային ծրագրի, KFW-ի կողմից ֆինանսավորվող «Վերականգնվող էներգիայի խթանում», «Միկրո, փոքր և միջին բիզնեսի էներգախնայողության աջակցություն» և «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» վարկային ծրագրերի շրջանակներում ստացված վարկերը: Վարկերի համար գործում են հաստատուն տոկոսադրույքներ:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են արտոնյալ բաժնետոմսերի տիրապետողների նկատմամբ պարտավորությունները, այդ թվում՝ փոփոխական քանակությամբ բաժնային գործիքներ տրամադրելու Բանկի պայմանագրային պարտականությունը: 2025թ. ընթացքում Բանկը թողարկել է 3,846,154 փոխարկելի արտոնյալ բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 390 դրամ անվանական արժեքով: Այդ բաժնետոմսերը նախատեսում են ֆիքսված եռամսյակային շահաբաժիններ և փոխարկելի են փոփոխական քանակությամբ Բանկի սովորական բաժնետոմսերի: Թեև շահաբաժինների վճարումը հայեցողական է, բայց քանի որ փոխարկման պայմանը հանգեցնում է փոփոխական քանակությամբ բաժնային գործիքների տրամադրմանը, այդ գործիքները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ:

(ա) Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների կենտրոնացում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրի կողմ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի պայմանագրի կողմ չկար), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

(բ) Ստորադաս փոխառություն

2019թ. ընթացքում Բանկը մայր ընկերությունից ստացել էր 4,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով ստորադաս փոխառություն (Ծանոթագրություն 34), որը, 2025թ-ին կատարված վերջին փոփոխության համաձայն, անժամկետ է:

Վարկային պայմանագիրը ներառում է բաժնետիրական կապիտալի փոխարկման պայմանագրային մեխանիզմ (սեփական կապիտալի փոխարկում)՝ կարգավորող կամ ֆինանսական անբարենպաստ իրադարձությունների, այդ թվում՝ կապիտալի համարժեքության վատթարացման և ՀՀ ԿԲ-ի հրահանգների դեպքում: Սնանկության, լուծարման կամ ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում մարումը կարող է ստորադասվել կամ փոխարկվել սեփական կապիտալի՝ 1 բաժնետոմս = 230 դրամ հարաբերակցությամբ:

Ստացված փոխառությունները Բանկը դիտարկում է որպես ստորադաս փոխառություններ, եթե սնանկության դեպքում փոխառությունը մարվում է Բանկի մյուս բոլոր այլ պարտավորությունների ամբողջական մարումից հետո:

(գ) Սահմանափակող պայմաններ (կովենանտներ)

Բանկը պարտավոր է պահպանել ՀՀ կառավարության հետ վարկային պայմանագրերով սահմանված որոշակի սահմանափակող պայմանները (կովենանտները): 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը պահպանել է բոլոր կովենանտները և ակնկալում է համապատասխանել դրանց նաև բոլոր միջանկյալ ժամանակաշրջաններում՝ առաջիկա 12 ամիսների ընթացքում:

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	Այլ փոխառու միջոցներ
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**8,442,686**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	
Մուտքեր	23,848,761
Մարումներ	(14,069,580)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**9,779,181**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(131,093)
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախս	205,174
Վճարված տոկոսներ	(189,970)
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**18,105,978**

հազ. դրամ	Այլ փոխառու միջոցներ
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**9,582,335**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	
Մուտքեր	1,407,749
Մարումներ	(2,455,577)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(1,047,828)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	(99,843)
Այլ փոփոխություններ	
Հաշվեգրված տոկոսներ	8,022
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,442,686**

25 Թողարկված պարտքային արժեթղթեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Թողարկված տոկոսակիր պարտավորություններ	11,865,251	12,099, 511
Թողարկված ստորադաս անժամկետ տոկոսակիր պարտավորություններ	10,013,163	-
Թողարկված ստորադաս տոկոսակիր պարտավորություններ	3,840,548	2,985,516
	25,718,962	**15,085,027**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսակիր պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտա-տոմսերի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
05/09/2023	ԱՄՆ դոլար	100	50,000	5	05/09/2026	5,000,000
01/02/2024	ԱՄՆ դոլար	100	50,000	5	01/02/2027	5,000,000
09/07/2024	ԱՄՆ դոլար	100	50,000	5	09/07/2027	5,000,000
05/09/2023	ՀՀ դրամ	10,000	100,000	11	05/09/2026	1,000,000,000
02/10/2023	ՀՀ դրամ	10,000	100,000	10.75	02/10/2026	1,000,000,000
01/02/2024	ՀՀ դրամ	10,000	200,000	11	01/02/2027	2,000,000,000
09/07/2024	ՀՀ դրամ	10,000	200,000	9.75	09/07/2027	2,000,000,000

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է անժամկետ տոկոսակիր պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտա-տոմսերի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
4/12/2025	ՀՀ դրամ	10,000	350,000	13.75	Անժամկետ	3,500,000,000
4/12/2025	ԱՄՆ դոլար	100	90,000	8.30	Անժամկետ	9,000,000
11/12/2025	ՀՀ դրամ	10,000	300,000	13.75	Անժամկետ	3,000,000,000

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է ստորադաս տոկոսակիր պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտա-տոմսերի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
19/11/2024	ԱՄՆ դոլար	100	100,000	6.25	19/11/2031	10,000,000

Բանկի կողմի թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում: Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2024թ-ին պարտատոմսերը հետ չեն գնվել):

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Բանկը չի ունեցել որևէ պարտազանցում մայր գումարի և տոկոսների հետ կապված կամ այլ խախտումներ (2024թ-ին պարտազանցում կամ խախտում չի եղել):

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**15,085,027**	**9,347,121**
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից	10,934,693	10,969,842
Մարում	-	(5,144,495)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**26,019,720**	**15,172,468**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը	**(375,616)**	**(155,906)**
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	1,232,640	108,778
Վճարված տոկոսներ	(1,157,782)	(40,313)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**25,718,962**	**15,085,027**

26 Այլ պարտավորություններ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Այլ կրեդիտորական պարտքեր	272,724	192,620
Վճարվելիք շահաբաժիններ	5,205	969
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**277,929**	**193,589**
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	684,442	268,718
Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	126,665	451,192
Այլ պարտավորություններ	133,873	223,917
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**944,980**	**943,827**
Ընդամենը այլ պարտավորություններ	**1,222,909**	**1,137,416**

27 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Այլ հայկական բանկերին վճարվելիք գումարներ	9,066,948	3,174,430
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	**9,066,948**	**3,174,430**

Այլ հայկական բանկերին վճարվելիք գումարները ներառում են հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված արժեթղթերի վաճառքից ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարները: Այդ պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով: Հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված արժեթղթերի իրական արժեքը կազմում է 9,479,467 հազար դրամ (2024թ-ին՝ 3,482,172 հազար դրամ):

(ա) Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կենտրոնացում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ պայմանագրի կողմ, որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2024թ-ին այդպիսի պայմանագրի կողմ չկար): 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 4,906,800 հազար դրամ:

28 Վարձակալություն

Բանկը վարձակալում է մասնաճյուղերի գրասենյակները, որոնց վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 5-ից 20 տարի: Վարձակալության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները, որոնք ստեղծում են վարձակալության ժամկետը երկարաձգման տարբերակներն օգտագործելու տնտեսական խթան, ներառյալ մասնաճյուղի գտնվելու վայրի կարևորությունը Բանկի գործունեության համար, անցյալում կիրառված գործելակերպը և տեղափոխման ծախսերը:

Բանկը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այդ վարձակալությունների վարձավճարները Բանկը ճանաչում է որպես ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	3,157,782	2,102,188
Ավելացումներ Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին	661,292	1,406,717
Տարվա մաշվածության գումար	(1,059,318)	(615,079)
Վարձակալության պայմանագրի օտարում և դադարեցում	(193,626)	(60,399)
Վարձակալության պայմանագրի փոփոխություններ	249,356	324,355
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,815,486**	**3,157,782**

(բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	1,059,318	615,079
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	321,662	276,557
Կարճաժամկետը վարձակալությանը վերաբերող ծախսեր	329,972	143,263

(գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով	816,125	1,294,721

(դ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**2,366,029**	**1,710,224**
Վարձակալության գծով վճարումներ	(816,125)	(1,294,721)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ	**(816,125)**	**(1,294,721)**
Այլ փոփոխություններ		
Ավելացումներ վարձակալության գծով պարտավորություններին	588,185	1,406,717
Դադարեցում	(138,268)	(57,103)
Փոփոխություն	249,356	324,354
Տոկոսային ծախս	321,662	276,557
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,570,839**	**2,366,028**

29 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 3,425,447 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22,425,447 հազար դրամ)։ Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը բաղկացած է 191,254,472 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով և 36,788,261 արտոնյալ բաժնետոմսից, որոնցից 32,010,000 բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 100 դրամ, իսկ 4,778,261 բաժնետոմսինը՝ 230 դրամ։

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 22,425,447 հազար դրամ։ Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը բաղկացած է8 181,254,472 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով և 36,788,261 արտոնյալ բաժնետոմսից, որոնցից 32,010,000 բաժնետոմսի անվանական արժեքը կազմում էր 100 դրամ, իսկ 4,778,261 բաժնետոմսինը՝ 230 դրամ։

Սովորական բաժնետոմսերի տիրապետողներն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով։

Արտոնյալ բաժնետոմսերը փոխարկելի են սովորական բաժնետոմսերի: Արտոնյալ բաժնետոմսերի տիրապետողներն իրավունք ունեն ստանալու հաստատուն դրույքաչափով շահաբաժիններ՝ թողարկման պայմաններում սահմանված կարգով՝ առաջնահերթություն ունենալով սովորական բաժնետոմսերի տիրապետողների նկատմամբ: Շահաբաժինները հայեցողական չեն և կուտակային չեն: Յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմս բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք այն ընդհանուր ժողովներում, որոնցում քննարկվում են Բանկի վերակազմակերպմանը կամ լուծարմանը վերաբերող հարցեր կամ դիտարկվում է Բանկի կանոնադրությունում այնպիսի փոփոխությունների կատարումը, որոնք կսահմանափակեն արտոնյալ բաժնետոմսերի տիրապետողների իրավունքները:

Բանկի անմիջական մայր ընկերությունն է «Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ»-ը, որին պատկանում է 75.2% հսկող բաժնեմաս (2024թ-ին՝ 83.6%). Վերջնական մայր ընկերությունն է «Գլորիսքայ Էնջինիրինգ Լիմիթեդ»-ը: Վերջնական հսկող անձն է Գագիկ Ձաքարյանը (75.5%):

2025թ-ին Բանկի բաժնետերերը ավելացրել են Բանկի բաժնետիրական կապիտալը՝ թողարկելով 10,000,000 սովորական բաժնետոմսեր՝ անվանական արժեքից բարձր արժեքով, որի արդյունքում բաժնետիրական կապիտալը աճել է 1,000,000 հազար դրամով, իսկ էմիսիոն եկամուտը՝ 2,900,000 հազար դրամով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության զծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը: Այդ գումարը նվազեցվում է կորստի պահուստի գումարի չափով: Պարտքային գործիքի ապաճանաչման դեպքում պահուստի համապատասխան մասը վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Հողի և շենքերի վերագնահատումից աճ

Հողի և շենքերի վերագնահատումից աճը ներառում է հողի և շենքերի վերագնահատման կուտակային դրական տարբերությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը: Մաշվածությունը վերաձևակերպվում է չբաշխված շահույթի միջոցով:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրության համաձայն որոշվող Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով՝ բացառության բաշխման ոչ ենթակա պահուստների: Բաշխման ոչ ենթակա պահուստները իրենցից ներկայացնում են գլխավոր պահուստը, որը ստեղծվել է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ ընդհանուր բանկային ռիսկերը, այդ թվում՝ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը կամ ծախսերը ծածկելու համար: Պահուստը ստեղծվել է Բանկի կանոնադրության համաձայն, որը նախատեսում է պահուստի ձևավորում այդ նպատակների համար Բանկի մատյաններում գրանցված Բանկի բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 15%-ի չափով: Պահուստը ձևավորվում է Բանկի շահույթից՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տարեկան արդյունքների հաստատումից հետո, և ավելացվում է զուտ շահույթից կատարվող տարեկան մասհանումների միջոցով՝ ոչ պակաս, քան 5%-ի չափով, մինչև 15% սահմանաչափին հասնելը:

2025թ-ին հայտարարվել և արտոնյալ բաժնետոմսերի տիրապետողներին վճարվել են 578,699 հազար դրամ (2024թ-ին՝ 515,978 հազար դրամ) գումարով շահաբաժիններ: Մեկ արտոնյալ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը սահմանված է 12% ֆիքսված դրույքաչափով:

2024թ. ֆինանսական արդյունքներով 2025թ-ին հայտարարվել և սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վճարվել են 7,777,340 հազար դրամ (2024թ-ին՝ 4,100,000 հազար դրամ) գումարով շահաբաժիններ: Մեկ սովորական բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմում է 40.66 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22.62 դրամ).

(դ) Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
		Վերահաշ-վարկված
Տարվա շահույթ	9,816,551	8,888,605
Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ	(578,699)	(515,976)
Տիրապետողների՝ սովորական բաժնետոմսերին բաժին ընկնող շահույթ	9,237,852	8,372,629
Արտոնյալ բաժնետոմսերի կշռված միջին թիվը	185,421,139	181,254,472
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ, ՀՀ դրամ	49.8	46.2
Տարվա շահույթ	9,816,551	8,888,605
Նոսրացնող բաժնետոմսեր	36,790,256	36,788,261
Սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	185,421,139	181,254,472
Ընդհանուր բաժնետոմսերի կշռված միջին թիվը	222,211,395	218,042,733
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ, ՀՀ դրամ	44.2	40.8

30 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Ֆինանսական, շուկայական և պարտքային ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, անընդհատ վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող պրոդուկտների և ծառայությունների փոփոխությունները և ընդունված լավագույն պրակտիկան արտացոլելու նպատակով: Բանկը մշակել է նշանակալի ռիսկերի և կապիտալի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի մեղմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման վարչության ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում և վերահսկվում են Վարկային հանձնաժողովների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական ստորաբաժանումների հետ՝ վերջիններիս գործունեության ոլորտներին առնչվող մասնագիտական դատողությունները ստանալու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման վարչությունը և Ներքին աուդիտի վարչությունը պարբերաբար պատրաստում են Բանկի նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և դրանց բարելավմանն ուղղված առաջարկություններ:

(բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը դիտարկվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային հայտերի ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրի կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին, շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային հայտերը պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման վարչություն, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի բիզնեսի և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Վարկային հայտը և հաշվետվությունն այնուհետև անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկային հայտը Վարկավորման վարչության և Ռիսկերի կառավարման վարչության կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Հաշվապահական հաշվառման, Իրավաբանական և Հարկային վարչությունների կողմից՝ կախված դրանց հատուկ ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վերջինիս կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային հայտերն ուսումնասիրվում են Մանրածախ բիզնեսի վարկավորման վարչության կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման վարչության հետ համատեղ մշակած գնահատման մոդելները և հայտերի տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկ. Ակնկալվող պարտքային կորստների գումարները

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ

Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 4(ե)(iv) կետում:

Արժեզրկման գնահատում

Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է:

Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

Պարտազանցման հավանականության	*Պարտազանցման հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու հավանականության գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
Պարտքի չափը պարտազանցման պահին	*Պարտքի չափը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի չափի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:
Կորուստը պարտազանցման դեպքում	*Կորուստը պարտազանցման դեպքում* կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ, այդ թվում՝ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, ինչպես ներկայացված է ստորև.

1-փուլ	Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
2-րդ փուլ	Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, սակայն չկա պարտքային առումով արժեզրկված լինելու վկայություն, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
3-րդ փուլ	Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով:
Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված	Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Պարտազանցման սահմանում

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը դիտարկում է նաև որոշ դեպքեր, այդ թվում՝ վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը և այլ դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման քիչ հավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդպիսի դեպք տեղի է ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց

Պահառուական և միջբանկային հարաբերություններ

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և պայմանագրային կողմերն իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ և դիլերներ, ֆոնդային բորսաներ և քլիրինգային կազմակերպություններ: Այս հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հիրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշերը:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

(i) Խմբավորում

Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է պորտֆելի մակարդակով: 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից առանձնացվել են հետևյալ պորտֆելները.

- Գրավով ապահովված սպառողական վարկեր,
- Գրավով չապահովված սպառողական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր,
- ՓՄՁ և կորպորատիվ վարկեր,
- Վարկային քարտեր,
- Վաճառքի կետերում տրամադրվող վարկեր (PoS),
- Քարտով տրամադրված սպառողական վարկեր (այն հաճախորդների համար, ովքեր ունեն PoS վարկեր),
- Ոչ դրամական սպառողական վարկեր,
- Օվերդրաֆտներ (U-Unicard),
- Ոսկու գրավով վարկեր,
- Միկրո և այլ վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի պարտազանցման հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության անցումային մատրիցների միջոցով՝ հիմնվելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալների վրա: Պարտազացնման հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբից 12-ամսյա ժամանակահատվածում ընդհանուր վարկերից որպես պարտազանցված դասակարգված վարկերի մասնաբաժին: Պարտազանցման հավանականությունը հաշվարկելիս Բանկը հաշվի է առնում ապագայամետ մակրոտնտեսական պարամետրերը, որոնք ազդեցություն են ունեցել պարտազանցման հավանականության վրա՝ գնահատված ժամանակային շարքերի ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Պարտազանցման հավանականության կանխատեսումները գնահատվում են պաշտոնապես հասանելի ապագայամետ մակրոտնտեսական պարամետրերի հիման վրա:

Պարտազանցման հավանականության վերջնական արդյունքի ձևավորմանը ուղղված են ապագայամետ մակրոտնտեսական զարգացման երեք սցենարներ, որոնք ունեն 20%, 50% և 30% հավանականության կշիռ (2024թ-ին՝ 20%, 50% և 30%)՝ համապատասխանաբար լավագույն, բազային և վատթարագույն սցենարների համար:

Ժամկետանց օրերն օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ խմբային հիմունքով գնահատվող՝ պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս անցումային մատրիցների Մարկովի մոդելում: Անցումային մատրիցները կառուցվում են նախորդ 36 ամիսների տվյալների հիման վրա:

1-ին փուլին և 2-րդ փուլին դասված հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, կիրառվում են պարտազանցման հավանականության հետևյալ միջին տոկոսները.

	2025թ.		2024թ.	
	12 ամսում պարտազանցման տեղի ունենալու հավանակա-նություն	**Ամբողջ ժամկետի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու հավանակա-նություն**	**12 ամսում պարտազանցման տեղի ունենալու հավանակա-նություն**	**Ամբողջ ժամկետի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու հավանակա-նություն**
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
– ոչ ժամկետանց	0.06-8.61%	9.46-72.47%	0.14-4.55%	8-76%
– մինչև 30 օր ժամկետանց	1.58-31.56%	4.85-60.93%	6.57-35.62%	5-85%
– 30-89 օր ժամկետանց		39.16-61.27%		16-65%
Ֆիզիկական անձանց տրված վարկեր				
– ոչ ժամկետանց	0.03-9.36%	0.48-83.76%	0.002-9.53%	0.25-84.01%
– մինչև 30 օր ժամկետանց	0.06-53.26%	1.92-83.76%	0.09-52.16%	0.51-94.20%
– 30-89 օր ժամկետանց		1.92-94.24%		0.25-84.02%

Պարտքի չափը պարտազանցման պահին

Պարտքի չափը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը: Բանկը հաշվարկում է պարտքի չափը պարտազանցման պահին հիմք ընդունելով պայմանագրային կողմի հետ կապված ընթացիկ ռիսկը և ընթացիկ գումարի հնարավոր փոփոխությունները, որոնք թույլատրվում են պայմանագրով և առաջանում են ամորտիզացիայի արդյունքում: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի չափը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ, 3-րդ-փուլի և ձեռքբերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը հավասար է հաշվեկշռային արժեքին:

(ii) Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է ստորև բերվող աղյուսակներում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ ԿԲ): Բանկի Պարտքային ռիսկի կառավարման բաժնի մասնագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները:

2025թ-ին և 2024թ-ին բազային կանխատեսումների հետ մեկտեղ (տեղի ունենալու 50% հավանականությամբ) Բանկն օգտագործում է նաև ցնցումների ենթարկված մակրոտնտեսական փոփոխականներ ակնկալվող պարտքային կորուստները լավատեսական (տեղի ունենալու 20% հավանականությամբ) և վատատեսական (տեղի ունենալու 30% հավանականությամբ) սցենարներով հաշվարկելու համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2025թ-ին ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները:

	ԱՊԿ սցենար	Որոշված հավանականություն, %	2025թ.
Հիմնական գործոններ			
Առևտրի ինդեքս (2015 = 100)	Լավատեսական	20%	274.9
	Բազային	50%	255.4
	Վատատեսական	30%	235.8
Սպառման ինդեքս (2015 = 100)			
	Լավատեսական	20%	171.0
	Բազային	50%	158.8
	Վատատեսական	30%	146.6
ԱՄՆ դոլար /ՀՀ դրամ փոխարժեք			
	Լավատեսական	20%	383.0
	Բազային	50%	392.5
	Վատատեսական	30%	410.0
Ծառայությունների ինդեքս (2015 = 100)			
	Լավատեսական	20%	199.0
	Բազային	50%	184.9
	Վատատեսական	30%	170.7
Գործազրկության մակարդակ			
	Լավատեսական	20%	11.1
	Բազային	50%	12.3
	Վատատեսական	30%	14.6
Արտահանում (2015 = 100)			
	Լավատեսական	20%	303.9
	Բազային	50%	280.9
	Վատատեսական	30%	257.9

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2024թ-ին ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները:

	ԱՊԿ սցենար	Որոշված հավանականություն, %	2024թ.
Հիմնական գործոններ			
Առևտրի ինդեքս (2015 = 100)	Լավատեսական	20%	278.1
	Բազային	50%	248.5
	Վատատեսական	30%	218.9
Սպառման ինդեքս (2015 = 100)			
	Լավատեսական	20%	162.8
	Բազային	50%	145.2
	Վատատեսական	30%	127.6
ԱՄՆ դոլար /ՀՀ դրամ փոխարժեք			
	Լավատեսական	20%	380.0
	Բազային	50%	400.0
	Վատատեսական	30%	418.2
Ծառայությունների ինդեքս (2015 = 100)			
	Լավատեսական	20%	183.0
	Բազային	50%	163.5
	Վատատեսական	30%	144.1
Գործազրկության մակարդակ			
	Լավատեսական	20%	12.7
	Բազային	50%	13.8
	Վատատեսական	30%	15.2
Արտահանում (2015 = 100)			
	Լավատեսական	20%	404.7
	Բազային	50%	351.8
	Վատատեսական	30%	298.9

Կորուստը պարտազանցման դեպքում

Գրավով ապահովված պորտֆելի համար Բանկը պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում է անհատական հիմունքով՝ հաշվի առնելով գրավի իրացումից ակնկալվող դրամական միջոցները: Անհատական հիմունքով հաշվարկվող պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատելու համար Բանկը կիրառում է հետևյալ ենթադրությունները.

- գրավադրված անշարժ գույքի արժեքը նվազեցվում է 10-20%-ով, իսկ շարժական գույքի արժեքը՝ 40%-ով,
- գրավի իրացման ժամկետը գնահատվում է 36 ամիս:

Գրավով չապահովված վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի գումարը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները այն բոլոր վարկերի համար, որոնց հետ կապված պարտականությունները չեն կատարվել: Հավաքագրվում են պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ բոլոր տվյալները և զեղչվում են պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր:

Բանկն օգտագործում է երկու չափանիշ որոշելու համար, արդյոք տեղի է ունցել պարտքային ռիսկի նշանակալի աճ՝

- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ:

Պարտքային ռիսկին ենթարկվող գործիքները կանոնավոր կերպով վերահսկվում են, որի արդյունքում հնարավոր է որոշել, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ: Վերահսկողության համար որպես կանոն օգտագործվում է հետևյալ տեղեկատվությունը.

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական անձինք)	**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (իրավաբանական և ֆիզիկական անձինք)**
– Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են համախառն շահույթը, ֆինանսական լծակավորման ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, կովենանտների պահպանումը, կառավարման որակը, վերադաս ղեկավար անձնակազմի փոփոխությունները	– Վճարումների, ներառյալ ժամկետանցության կարգավիճակի, մարումների փոփոխականության մասին տեղեկատվությունը:
– Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը	– Տրամադրված սահմանաչափի օգտագործումը – Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը
– Պարտատոմսերի գնանշված գները և պարտքի պարտազանցման սվոփերի գները փոխառուի համար՝ առկայության դեպքում – Փոխառուի քաղաքական, կարգավորող և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները	– Գործարար, ֆինանսական և տնտեսական պայմանների առկա և կանխատեսվող փոփոխությունները

Պարտքային ռիսկի կենտրոնացում

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Գրավ սովորաբար չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների, արժեթղթերում ներդրումների և բանկերին տրված վարկերի նկատմամբ պահանջների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացման մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Այս գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Դա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այդ պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	**Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվու-թյունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորու-թյան/ակտիվի համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվու-թյունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**		**Զուտ գումար**
				Ֆինանսական գործիքներ	**Որպես գրավ ստացված դրամական միջոցներ**	
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	9,066,948	-	9,066,948	(9,280,499)	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**9,066,948**	**-**	**9,066,948**	**(9,280,499)**	**-**	**-**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	**Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվու-թյունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորու-թյան/ակտիվի համախառն գումար**	**Ֆին. վիճակի մասին հաշվետվու-թյունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար**	**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ**		**Զուտ գումար**
				Ֆինանսական գործիքներ	**Որպես գրավ ստացված դրամական միջոցներ**	
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,174,430	-	3,174,430	(3,466,932)	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**3,174,430**	**-**	**3,174,430**	**(3,466,932)**	**-**	**-**

Վերը աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց օպտիմալ եկամտաբերություն:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման վարչության առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

(i) Տոկոսադրույքային ռիսկ

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այդ տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2025թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			**2024թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %**		
	ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Այլ արտարժույթ***	**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար**	**Այլ արտարժույթ***
Տոկոսալիր ակտիվներ						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	10.71	-	-	10.71	-	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9.69	7.06	18.66	9.41	6.25	-
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10.62	5.24	2.45	10.62	5.47	6.5
Հաճախորդներին տրված վարկեր	14.26	9.70	6.56	14.78	9.87	6.07
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	7.60	3.24	11.82	7.54	-	14.9
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6.50	4.88	3.50	-	4.50	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	12.20	6.24	-	10.50	5.60	-
Հաճախորդների ժամկետային ավանդներ	9.85	3.83	2.26	10.20	3.60	2.50
Այլ փոխառու միջոցներ	6.01	5.66	4.00	6.64	6.74	4.00
Վարձակալության գծով պարտավորություններ	12.11	-	-	11.85	-	-

* Այլ արտարժույթը ներառում է եվրոն և ռուսական ռուբլին:

Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության մոնիտորինգով: Բանկի ֆինանսական գործիքների գծով կիրառվում են հաստատուն տոկոսադրույքներ՝ առանց մինչև մարումը էական վերանայումների: Արդյունքում, տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծությունը ըստ էության համանման է մարման ժամկետայնության վերլուծությանը: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (տոկոսադրույքների վերանայման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և դիրքերի հիման վրա:

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Զուգահեռ աճ 100 բազիսային կետով	(1,106,762)	(334,041)
Զուգահեռ նվազում 100 բազիսային կետով	1,106,762	334,041

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2025թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	**2024թ. Սեփական կապիտալ հազ. դրամ**
Զուգահեռ նվազում 100 բազիսային կետով	18,983	26,339
Զուգահեռ աճ 100 բազիսային կետով	(18,983)	(26,339)

(ii) Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, այդ գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման հարաբերություններ՝ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ* հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,233,508	12,092,702	2,243,398	32,569,608
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	16,233,920	-	689,823	16,923,743
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	13,927,441	17,415,529	-	31,342,970
Հաճախորդներին տրված վարկեր	36,710,620	30,482,251	6,379,339	73,572,210
Այլ ֆինանսական ակտիվներ	1,917,574	526,720	52,822	2,497,116
Ընդամենը ակտիվներ	**87,023,063**	**60,517,202**	**9,365,382**	**156,905,647**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	8,346,946	2,064,088	2,204,850	12,615,884
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,815,128	2,250,217	-	6,065,345
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	58,088,040	40,896,778	7,354,050	106,338,868
Թողարկված պարտքային արժեթղթեր	13,065,272	-	-	13,065,272
Այլ փոխառու միջոցներ	10,310,062	1,570	-	10,311,632
Այլ ֆինանսական պարտավորություններ	20,092	-	812	20,904
Ընդամենը պարտավորություններ	**93,645,540**	**45,212,653**	**9,559,712**	**148,417,905**
Զուտ դիրքը	**(6,622,477)**	**15,304,549**	**(194,330)**	**8,487,742**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	**12,869,471**	**(11,090,547)**	**(1,779,777)**	**(853)**
Զուտ դիրքը	**6,246,994**	**4,214,002**	**(1,974,107)**	**8,486,889**

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ* հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,689,390	11,946,240	2,606,272	29,241,902
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	55,757	-	64,234	119,991
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	26,983,103	-	-	26,983,103
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	10,935,343	17,574,971	4,091,123	32,601,437
Հաճախորդներին տրված վարկեր	36,313,541	17,447,558	142,046	53,903,145
Այլ ֆինանսական ակտիվներ	1,095,486	300,909	707,532	2,103,927
Ընդամենը ակտիվներ	**90,072,620**	**47,269,678**	**7,611,207**	**144,953,505**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	1,315,492	2,901,511	2,247,861	6,464,864
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,174,430	-	-	3,174,430
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	58,622,567	41,167,626	5,532,738	105,322,931
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,980,453	-	-	8,980,453
Այլ փոխառու միջոցներ	7,546,170	9,988	-	7,556,158
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	787	787
Ընդամենը պարտավորություններ	**79,639,112**	**44,079,125**	**7,781,386**	**131,499,623**
Զուտ դիրքը	**10,433,508**	**3,190,553**	**(170,179)**	**13,453,882**
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	**165,556**	**-**	**(165,207)**	**349**
Զուտ դիրքը	**10,599,064**	**3,190,553**	**(335,386)**	**13,454,231**

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլին:

Ստորև աղյուսակում ներկայացված՝ 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը նշված արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է առանց հաշվի առնելու հարկերը և հիմնվելով արտարժույթների փոխարժեքների փոփոխությունների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվել է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով	624,699	1,059,906
ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով	421,400	319,055

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար, քանի որ իրականացվող գործարքները հաճախ ունեն անորոշ ժամկետ և տարբեր բնույթ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման դիվերսիֆիկացված և կայուն բազա, որը ներառում է թողարկված պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և ֆիզիկական անձանց ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված պորտֆելները՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներին արագ և արդյունավետ արձագանքելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Գանձապետարանը վարչություններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «սթրես թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարներն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ներհոսքի/ (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	13,684,786	603,359	1,568,353	8,674	-	15,865,172	15,795,557
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	5,818,970	190,474	687,430	6,499,186	9,573,285	22,769,345	18,105,978
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	9,073,888	-	-	-	-	9,073,888	9,066,948
Թողարկված պարտքային արժեթղթեր	89,860	724,466	5,529,078	23,519,937	4,081,004	33,944,345	25,718,962
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	135,531,962	16,189,744	86,804,253	40,974,129	115,880	279,615,968	271,106,891
Վարձակալության գծով պարտավորություններ	78,064	140,793	552,274	2,044,263	842,431	3,657,825	2,570,839
Այլ ֆինանսական պարտավորություններ	277,929	-		-	-	277,929	277,929
Ընդամենը ոչ ածանցյալ պարտավորություններ	**164,555,459**	**17,848,836**	**95,141,388**	**73,046,189**	**14,612,600**	**365,204,472**	**342,643,104**
Փոխատվության հանձնառություններ	**15,207,510**	**-**	**-**	**-**	**-**	**15,207,510**	**-**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ներհոսքի/ (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	10,370,222	7,349	337,644	567,898	3,132,744	14,415,857	14,172,471
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս պարտավորություններ	2,964,970	97,728	365,618	2,737,983	5,902,511	12,068,810	8,442,686
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,179,515	-	-	-	-	3,179,515	3,174,430
Թողարկված պարտքային արժեթղթեր	73,247	178,381	836,374	13,867,874	3,334,673	18,290,549	15,085,027
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	128,017,909	9,721,700	54,074,781	65,170,236	94,977	257,079,603	247,536,201
Վարձակալության գծով պարտավորություններ	45,903	91,806	370,806	1,289,672	746,073	2,544,260	2,366,028
Այլ ֆինանսական պարտավորություններ	193,589	-	-	-	-	193,589	193,589
Ընդամենը ոչ ածանցյալ պարտավորություններ	**144,845,355**	**10,096,964**	**55,985,223**	**83,633,663**	**13,210,978**	**307,772,183**	**290,970,432**
Փոխատվության հանձնառություններ	**13,315,458**	**-**	**-**	**-**	**-**	**13,315,458**	**-**

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավոր է վճարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն ավանդատուի պահանջով՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը նշված աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ իրենց սահմանված մարման ժամկետների: Ստորև ներկայացված աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

	2025թ. **հազ. դրամ**	**2024թ.** **հազ. դրամ**
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	3,501,703	7,201,356
1-ից 3 ամիս ժամկետով	13,579,695	7,417,176
3-ից 6 ամիս ժամկետով	23,596,785	9,981,055
6-ից 12 ամիս ժամկետով	46,609,393	20,622,884
Ավելի քան 1 տարի ժամկետով	27,960,710	52,996,963
	115,248,286	**98,219,434**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ընդամենը**
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	43,107,570	-	-	-	-	-	43,107,570
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	20,605,221	-	4,780,791	3,475,873	-	3,264,318	32,126,203
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	54,171	52,157	992,847	-	750,325	1,849,500
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	132,711	565,158	1,373,926	7,201,560	13,543,972	-	22,817,327
Հաճախորդներին տրված վարկեր	13,504,449	6,101,491	33,041,194	106,422,029	105,488,029	-	264,557,191
Հիմնական միջոցներ	-	-	-	-	-	12,109,027	12,109,027
Ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	3,730,630	3,730,630
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	-	1,592,107	1,592,107
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	2,815,486	2,815,486
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	485,177	485,177
Ընթացիկ հարկային ակտիվ	-	1,035,590	-	-	-	-	1,035,590
Այլ ակտիվներ	3,886,166	-	-	-	-	3,670,374	7,556,540
Ընդամենը ակտիվներ	**81,236,117**	**7,756,410**	**39,248,068**	**118,092,309**	**119,032,001**	**28,417,444**	**393,782,348**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	13,681,837	598,214	1,507,150	8,356	-	-	15,795,557
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	9,066,948	-	-	-	-	-	9,066,948
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	134,891,547	14,733,891	81,929,091	39,454,383	97,979	-	271,106,891
Թողարկված պարտքային արժեթղթեր	89,860	162,805	3,906,800	17,745,840	3,813,657	-	25,718,962
Այլ փոխառու միջոցներ	5,783,413	18,245	82,939	3,550,754	7,170,627	1,500,000	18,105,978
Վարձակալության գծով պարտավորություններ	73,258	90,481	390,186	1,308,089	708,825	-	2,570,839
Այլ պարտավորություններ	277,250	685,121	-	-	-	260,538	1,222,909
Ընդամենը պարտավորություններ	163,864,113	16,288,757	87,816,166	62,067,422	11,791,088	1,760,538	343,588,084
Զուտ դիրքը*	**(82,627,996)**	**(8,532,347)**	**(48,568,098)**	**56,024,887**	**107,240,913**	**26,656,906**	**50,194,264**

* Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Բանկն օգտագործում է բարձր իրացվելի ֆինանսական ակտիվները, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հակադարձ հետգնման պայմանագրերով և հիմնվում է այն ենթադրության վրա, որ Ժամկետային ավանդները ժամկետի ավարտից հետո կերկարաձգվեն և կապահովվի ցպահանջ պարտավորությունների նվազագույն օրական մնացորդի հարաբերական կայունությունը: Բացի այդ, Բանկը կառավարում է իրացվելիությունը միջբանկային ֆինանսավորման հասանելիության միջոցով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	37,320,814	-	-	-	-	-	37,320,814
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	5,238,839	-	10,075,795	3,173,810	-	14,645,238	33,133,682
Իրական արժեքով՝ այլ շահույի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	21,473	-	5,676	37,085	55,757	-	119,991
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	1,823,830	-	-	1,823,830
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	3,469,271	22,888,012	3,544,231	2,440,214	2,276,574	-	34,618,302
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	15,776,448	6,275,095	32,595,937	59,785,582	89,951,640	-	204,384,702
Հիմնական միջոցներ	-	-	-	-	-	7,725,450	7,725,450
Ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	3,750,700	3,750,700
Բռնագանձված ակտիվներ	-	-	-	-	-	6,546,969	6,546,969
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	-	-	-	3,157,782	3,157,782
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	-	146,641	146,641
Այլ ակտիվներ	2,376,472	-	-	-	-	2,209,926	4,586,398
Ընդամենը ակտիվներ	**64,203,317**	**29,163,107**	**46,221,639**	**67,260,521**	**92,283,971**	**38,182,706**	**337,315,261**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	10,399,378	94,819	609,335	365,407	2,703,532	-	14,172,471
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,174,430	-	-	-	-		3,174,430
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	127,996,195	9,601,169	51,494,663	58,382,860	61,314	-	247,536,201
Թողարկված պարտքային արժեթղթեր	60,468	67,476	44,754	11,948,400	2,963,929	-	15,085,027
Այլ փոխառու միջոցներ	2,940,266	9,288	57,714	975,017	4,460,401	-	8,442,686
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	578,673	-	-	-	-	578,673
Վարձակալության գծով պարտավորություններ	42,790	85,578	345,011	1,199,269	693,380		2,366,028
Այլ պարտավորություններ	296,933	268,718	-	-	-	571,765	1,137,416
Ընդամենը պարտավորություններ	**144,910,460**	**10,705,721**	**52,551,477**	**72,870,953**	**10,882,556**	**571,765**	**292,492,932**
Զուտ դիրքը	**(80,707,143)**	**18,457,386**	**(6,329,838)**	**(5,610,432)**	**81,401,415**	**37,610,941**	**44,822,329**

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այդ նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները: Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	**2024թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված**
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	67.53%	79.86%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափի հետ համապատասխանությունը գնահատելու համար, որը չպետք է պակաս լինի 60%-ից:

31 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել կապիտալի համապատասխանությունն արտաքին կարգավորող մարմինների կողմից սահմանված կապիտալի պահանջներին, կայուն վարկանիշ և կապիտալի համարժեքության համապատասխան նորմատիվներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետոմսերի արժեքն առավելագույնի հասցնելու նպատակով:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ հաշվի առնելով տնտեսական պայմանների փոփոխությունները և իր գործունեությանը բնորոշ ռիսկերի առանձնահատկությունները: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները չեն փոխվել նախորդ տարիների համեմատ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2024թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2025թ. և 2024. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն ընդհանուր կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության նորմատիվը («կապիտալի համարժեքության նորմատիվ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 11%: 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ապահովել է համապատասխանությունը սահմանված կապիտալի համարժեքության նորմատիվին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության նորմատիվը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված	2024թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված
Հիմնական կապիտալ	57,377,302	35,569,780
Լրացուցիչ կապիտալ	6,992,757	4,485,960
Ընդամենը կապիտալ	**64,370,059**	**40,055,740**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ՝ ներառյալ պարտքային, շուկայական և գործառնական ռիսկերը	**301,478,730**	**254,514,850**
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցությունը (ընդամենը կապիտալի համարժեքության նորմատիվ)	**21.35%**	**15.74%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրի կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով սահմանված չափանիշներին համապատասխանող գրավը կամ երաշխավորությունները: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

32 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այդ հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այդ պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք սահմանված են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկերի տրամադրման համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրի կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Տրամադրված երաշխավորություններ	571,651	547,221
Վարկային գծերի սահմանաչափերի չօգտագործված մաս	12,712,518	11,011,623
Վարկային քարտերի սահմանաչափերի չօգտագործված մաս	1,804,387	1,756,614
Օվերդրաֆտների սահմանաչափերի չօգտագործված մաս	118,954	-
	15,207,510	**13,315,458**
Պարտքային կորստի պահուստ	(19,518)	(7,018)

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այդ հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը: Փոխատվության հանձնառությունը դասված են փուլ 1:

33 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համարաժեքորեն է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

34 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	**2,809,382**	**3,013,753**

Այդ գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2025թ. հազ. դրամ	Անվանական տոկոսադրույք, %	2024թ. հազ. դրամ	Անվանական տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխատվություններ	960,404	13.36%	566,860	13.12%
Պարտքային կորստի պահուստ	(2,518)	-	(1,304)	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	388,281	0 - 9.21%	573,998	0- 8.96%
Թողարկված պարտատոմսերի ձեռքբերում	272,768	14%	129,046	14%

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում ներառված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ	75,553	71,108
Տոկոսային ծախս	(14,002)	(18,982)
Այլ ծախսեր	(8,770)	(8,863)

(գ) Գործարքներ բաժնետերերի և համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպությունների հետ

Ստորև ներկայացված են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի և համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպությունների հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները և 2025թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ստորադաս պարտավորություն	1,525,733*	7%	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	518,097	10-11%
Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն				
Միջնորդավճարների տեսքով եկամուտ		-	627,154	
Տոկոսային ծախս	(108,356)	-	(25,901)	-
Այլ ծախսեր	(165,212)	-	-	-

Ստորև ներկայացված են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի և համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպությունների հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները և 2024թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ստորադաս պարտավորություն	1,586,544	7%	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	446,132	10-11%
Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն				
Միջնորդավճարների տեսքով եկամուտ			209,837	
Տոկոսային ծախս	(110,256)	-	(23,173)	-
Այլ ծախսեր	(165,212)	-	-	-

35 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

Ֆինանսական գործիքներ, որոնք չեն չափվում իրական արժեքով

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները և դրանց վերլուծությունն իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով:

	31 դեկտեմբերի 2025թ.				
հազ. դրամ	**1-ին մակարդակ**	**2-րդ մակարդակ**	**3-րդ մակարդակ**	**Ընդամենը իրական արժեք**	**Ընդամենը հաշվեկշռային արժեք**
Ֆինանսական ակտիվներ					
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	260,573,212	260,573,212	262,323,022
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	23,483,070	-	23,483,070	22,731,207
Ֆինանսական պարտավորություններ					
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	-	271,718,877	271,718,877	271,528,562
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	25,745,963	-	25,745,963	25,718,962
Այլ փոխառու միջոցներ	-	-	18,106,831	18,106,831	18,106,831

	31 դեկտեմբերի 2024թ.				
հազ. դրամ	**1-ին մակարդակ**	**2-րդ մակարդակ**	**3-րդ մակարդակ**	**Ընդամենը իրական արժեք**	**Ընդամենը հաշվեկշռային արժեք**
Ֆինանսական ակտիվներ					
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	204,004,768	204,004,768	204,384,698
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	35,970,593	-	35,970,593	34,618,302
Ֆինանսական պարտավորություններ					
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	-	246,454,834	246,454,834	247,536,201
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	14,928,462	-	14,928,462	15,085,027
Այլ փոխառու միջոցներ	-	-	8,442,686	8,442,686	8,442,686

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտավորապես հավասար է հաշվեկշռային արժեքին

Եթադրվում է, որ իրացվելի կամ կարճ (մինչև երեք ամիս) մարման ժամկետ ունեցող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են դրանց իրական արժեքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է ստացվելիք գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք զեղչվում են նմանատիպ պարտքային ռիսկ և մնացորդային մարման ժամկետ ունեցող նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Զեղչման դրույքները կազմում են մոտավորապես 7.8-11.33% (2024թ-ին՝ 7.87-10.26%) արտարժույթով արտահայտված վարկերի համար և 11.83-14.68% (2024թ-ին՝ 11.62-14.27%)՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար:

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է վճարվելիք գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք զեղչվում են նմանատիպ մնացորդային մարման ժամկետ ունեցող և նույն արժույթով արտահայտված նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Զեղչման դրույքները կախված են մարման ժամկետից և կազմում են տարեկան 2.5%-ից 9.5% (2024թ.՝ տարեկան 2.3%-ից 9.9%):

Այլ փոխառու միջոցներ

Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է վճարվելիք գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք զեղչվում են նմանատիպ մնացորդային մարման ժամկետ ունեցող և նույն արժույթով արտահայտված նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Զեղչման դրույքները կախված են մարման ժամկետից և կազմում են տարեկան 4.5%-ից 8% (2024թ-ին՝ տարեկան 4.5%-ից 8%):

Ֆինանսական գործիքներ, որոնք չափվում իրական արժեքով

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

2025թ. **հազ. դրամ**	**1-ին մակարդակ**	**2-րդ մակարդակ**	**3-րդ մակարդակ**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր՝ պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ	-	1,099,175	-	1,099,175
Բաժնային գործիքներ	-	500,168	250,157	750,325

2024թ. **հազ. դրամ**	**1-ին մակարդակ**	**2-րդ մակարդակ**	**3-րդ մակարդակ**	**Ընդամենը**
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Ներդրումային արժեթղթեր՝ պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ	-	1,073,505	-	1,073,505
Բաժնային գործիքներ	-	500,168	250,157	750,325
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	119,991	-	119,991

Իրական արժեքի չափման համար կիրառված մեթոդները և գնահատման տեխնիկան մնացել են անփոփոխ՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ: 2025թ. ընթացքում մակարդակների միջև տեղափոխություններ չեն եղել (2024թ-ին տեղափոխություններ չեն եղել): 2025թ. ընթացքում 3-րդ մակարդակ դասակարագված իրական արժեքով չափվող ակտիվների փոփոխություններ չեն գրանցվել (2024թ.՝ 200,000 հազար ՀՀ դրամ գումարով ձեռքբերումներ):

Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափում իրական արժեքով

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	
	3-րդ մակարդակ	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հող և շենքեր	7,863,371	7,863,371
	7,863,371	**7,863,371**

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2024թ.**	
	3-րդ մակարդակ	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հող և շենքեր	4,289,422	4,289,422
	4,289,422	**4,289,422**

3-րդ մակարդակ դասակարգված իրական արժեքի չափում

Բանկի՝ 3-րդ մակարդակ դասակարգված ոչ ֆինանսական ակտիվների համար կիրառվում են գնահատման այնպիսի մեթոդներ, որոնց համար հիմք են ծառայում դիտելի շուկայական տվյալների վրա չհիմնված նշանակալի ելակետային տվյալները: Այս մակարդակում ներառված ոչ ֆինանսական ակտիվների տարեսզբի և տարեվերջի մնացորդների համադրումը ներկայացված է ստորև:

	Հող և շենքեր	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	4,289,422	4,289,422
Գնումներ	3,871,931	3,871,931
Օտարումներ	(57,977)	(57,977)
Մաշվածության գումար	(240,005)	(240,005)
Զուտ իրական արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,863,371**	**7,863,371**

	Հող և շենքեր	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Մնացորդը 202ձթ. հունվարի 1-ի դրությամբ	5,093,623	5,093,623
Գնումներ	9,072	9,072
Օտարումներ	(530,030)	(530,030)
Մաշվածության գումար	(283,243)	(283,243)
Զուտ իրական արժեքը 202ձթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,289,422**	**4,289,422**

Բանկի գույքի իրական արժեքը գնահատվում է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ խորհրդակցությամբ: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Գնահատումն իրականացվել է համեմատական և եկամտային մեթոդների կիրառմամբ, որոնք արտացոլում են նմանատիպ անշարժ գույքի հետ կապված շուկայում վերջերս իրականացված գործարքների դիտելի գները և ներառում են ճշգրտումներ՝ պայմանավորված տվյալ գույքի առանձնահատուկ գործոններով, որոնցից են հողատարածքի չափը, գտնվելու վայրը, ծանրաբեռնվածությունը և ընթացիկ օգտագործումը:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2025թ-ին, որի արդյունքում հաշվեկշռային արժեքը նվազել է 11,777 հազար դրամով:

Ստորև բերված աղյուսակում ներակայացված է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակ դասակարգված Բանկի հողի և շենքերի իրական արժեքի չափման զգայնությունը հիմնական ոչ դիտելի ելակետային տվյալների փոփոխությունների նկատմամբ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Կապիտալացման դրույք	Գույքից ստացված եկամուտ
1% աճ	(516,659)	X
1% նվազում	657,590	X
1% աճ	X	484,102
1% նվազում	X	(440,092)

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	11
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	13
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	15

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենթարկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (այսուհետ՝Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՄԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 4.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ Ծանոթագրություն 36.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՄ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՄ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՄ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:

- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և այլն):

Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բանկը լուծարելու կամ Բանկի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր

կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի պատասխանատուն, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը հանդիսանում է Նաիրա Ուլունցը:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նաիրա Ուլունց
Առաջադրանքի պատասխանատու

29 ապրիլի, 2025թ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	5	29,925,162	25,234,749
Այլ տոկոսային եկամուտ	5	119,940	10,726
Տոկոսային ծախսեր	5	(11,751,228)	(9,302,421)
Զուտ տոկոսային եկամուտներ		**18,293,874**	**15,943,054**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ	6	4,534,247	5,665,379
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	6	(1,767,737)	(1,924,180)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		**2,766,510**	**3,741,199**
Զուտ առևտրային եկամուտ	7	6,187,082	7,741,691
Այլ եկամուտներ	8	1,147,216	830,414
Պարտքային կորուստների գծով (ծախս) ծախսի հակադարձում	9	1,161,107	(3,216,147)
Վնաս պարտքի զիջումից	10	-	(2,407,241)
Ներդրումային արժեթղթերի սկզբնական ճանաչումից վնաս	18	-	(303,964)
Զուտ գործառնական եկամուտ		**29,555,789**	**22,329,006**
Անձնակազմի գծով ծախսեր	11	(9,570,021)	(7,479,231)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(1,448,400)	(1,450,435)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	(559,402)	(679,425)
Այլ ծախսեր	12	(6,955,525)	(6,331,998)
Շահույթ մինչև հարկումը		**11,022,441**	**6,387,917**
Շահութահարկի գծով ծախս	13	(2,794,531)	(1,933,719)
Տարվա շահույթ		**8,227,910**	**4,454,198**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն		32,699	47,342
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		(2,840)	(4,980)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(5,376)	(6,935)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		**24,483**	**35,427**
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ շահութահարկից հետո		**24,483**	**35,427**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**8,252,393**	**4,489,625**
Մեկ բաժնետոմսերին բաժին ընկնող շահույթ	14	0.0425476	0.0217275

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	51,966,052	55,669,030
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	349	11,236
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	18,488,095	26,183,579
Իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող արժեթղթեր		119,991	-
Ներդրումային արժեթղթեր	18	32,975,200	27,074,022
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	18	3,466,932	9,387,266
Հաճախորդներին տրված վարկեր	19	203,540,544	149,364,985
Հիմնական միջոցներ	20	10,883,232	10,285,957
Ոչ նյութական ակտիվներ	21	3,750,700	3,355,572
Հետաձգված հարկային ակտիվ	13	302,403	-
Բռնագանձնված ակտիվներ	22	6,546,969	4,022,113
Այլ ակտիվներ	23	4,586,401	3,516,224
Ընդամենը՝ ակտիվներ		**336,626,868**	**288,869,984**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	23,306,704	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	247,536,201	211,193,170
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	-	1,055
Փոխառություններ	26	2,482,883	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	27	15,085,027	9,347,121
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		578,673	726,560
Հետաձգված հարկային պարտավորություն	13	-	539,849
Այլ պարտավորություններ	28	3,400,097	2,825,940
Ընդամենը՝ պարտավորություններ		**292,389,585**	**248,269,116**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	22,425,447	22,425,447
Էմիսիոն եկամուտ		11,279,227	11,279,227
Գլխավոր պահուստ		904,203	686,316
Այլ պահուստներ		1,441,732	1,440,850
Չբաշխված շահույթ		8,186,674	4,769,028
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**44,237,283**	**40,600,868**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**336,626,868**	**288,869,984**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. ապրիլի 29-ին:

Հակոբյան Մեսրոպ
Վարչության նախագահ

Գոհար Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս Ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**22,425,447**	**11,279,227**	**686,316**	**10,444**	**1,430,406**	**4,769,028**	**40,600,868**
Տարվա շահույթ	-	-	-	-	-	8,227,910	8,227,910
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(23,601)	23,601	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-		32,699	-	-	32,699
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	(2,840)	-	-	(2,840)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(5,376)	-	-	(5,376)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**24,483**	**(23,601)**	**8,251,511**	**8,252,393**
Հատկացում պահուստին	-	-	217,887	-	-	(217,887)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(4,615,978)	(4,615,978)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**-**	**-**	**217,887**	**-**	**-**	**(4,833,865)**	**(4,615,978)**
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,425,447**	**11,279,227**	**904,203**	**34,927**	**1,406,805**	**8,186,674**	**44,237,283**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**21,588,653**	**9,605,638**	**641,779**	**(24,983)**	**1,509,813**	**795,960**	**34,116,860**
Տարվա շահույթ	-	-	-	-	-	4,454,198	4,454,198
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(79,407)	79,407	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	47,342	-	-	47,342
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	(4,980)	-	-	(4,980)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(6,935)	-	-	(6,935)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**35,427**	**(79,407)**	**4,533,605**	**4,489,625**
Բաժնետիրական կապիտալի ավելացում	836,794	1,673,589	-	-	-	-	2,510,383
Հատկացում պահուստին	-	-	44,537	-	-	(44,537)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(516,000)	(516,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	**836,794**	**1,673,589**	**44,537**	**-**	**-**	**(560,537)**	**1,994,383**
Հաշվեկշիռը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,425,447**	**11,279,227**	**686,316**	**10,444**	**1,430,406**	**4,769,028**	**40,600,868**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	11,022,441	6,387,917
Ճշգրտումներ		
Պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)	(1,161,107)	3,216,147
Այլ ակտիվների արժեզրկումից վնաս	1,593,844	489,531
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	2,007,802	2,129,860
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	-	366,872
Վնաս պարտքի զիջումից	-	2,407,241
Ներդրումային արժեթղթերի սկզբնական ճանաչումից վնաս	-	303,964
Ստացվելիք տոկոսներ	(544,991)	(14,098)
Վճարվելիք տոկոսներ	836,143	81,318
Ածանցյալ գործիքների վերագնահատում	9,832	(15,427)
Այլ հաշվեգրումներ	-	91,638
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	46,956	169,905
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**13,810,920**	**15,614,868**
(Ավելացում) նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,018,112	4,864,598
Հաճախորդներին տրված վարկեր	(58,372,466)	(31,132,594)
Բռնագանձված ակտիվներ	131,181	-
Այլ ակտիվներ	(1,746,027)	(7,209,847)
Ավելացում (նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,134,057	(1,224,663)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	40,626,263	(43,880,609)
Այլ պարտավորություններ	473,199	616,834
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը	**5,075,239**	**(62,351,413)**
Վճարված շահութահարկ	(3,790,047)	(1,266,699)
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**1,285,192**	**(63,618,112)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք) վաճառք	(504,658)	14,414,725
Հիմնական միջոցների առք	(947,415)	(1,201,041)
Հիմնական միջոցների վաճառք	308,457	549,616
Ոչ նյութական ակտիվների առք	(954,530)	(356,870)
Ներդրումային գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**(2,098,146)**	**13,406,430**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	2,510,383
Շահաբաժինների վճարում	(4,615,978)	(516,000)
Ֆինանսական կազմակերպություններից վարկերի և ավանդների ստացում	1,318,811	3,609,202
Պարտքային արժեթղթերի թողարկում	5,785,034	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(1,294,721)	(898,617)
Փոխառությունների ստացում (մարում)	(2,338,082)	627,092
Ֆինանսավորման գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**(1,144,936)**	**5,332,060**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	**(1,957,890)**	**(44,879,622)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	55,669,030	100,012,097
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,745,088)	536,555
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (Ծանոթագրություն 15)	**51,966,052**	**55,669,030**
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	**29,380,571**	**25,228,685**
Վճարված տոկոսներ	**(10,915,085)**	**(9,332,355)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով, բացառությամբ մեկ բաժնետոմսի գումարի)

1 Գործառնությունների բնույթը

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, (ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը), ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՄ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ («Բանկ») հիմնադրվել է 2001թ. Հոկտեմբերի 9-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2001թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ) կողմից N 81 արտոնագրային համարով:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

«Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային ռեյտինգային գործակալությունը 2024թ. հունիսի 27-ին վերահաստատել է Բանկի՝ ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների B2 վարկանիշը՝ բարելավելով սահմանելով այն «դրական» նախկին կայունի փոխարեն:

«Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային ռեյտինգային գործակալությունը նաև հաստատել է Բանկի վարկունակության բազային գնահատականի (BCA) և ճշգրտված ՎԲԳ-ի b3 մակարդակը, NP ազգային և արտարժույթով կարճաժամկետ ավանդների վարկանիշները, կոնտրագենտի երկարաժամկետ և կարճաժամկետ ռիսկի (CRRs) վարկանիշի B2/NP և Կոնտրագենտի երկարաժամկետ և կարճաժամկետ ռիսկի (CR) գնահատականի B2(cr)//NP (cr) մակարդակները:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 51 մասնաճյուղեր գտնվում են Երևանում և ՀՀ տարբեր մարզերում և մեկ մասնաճյուղ Աստանա քաղաքում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենց 12 շենք թիվ 53, թիվ 1-5:

Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 898 մարդ (2023թ.՝ 823 մարդ):

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժութային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Բանկի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և

քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

2.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Բանկը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ըստ իրացվելիության՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվության համապատասխան հոդվածային տողի ակտիվների/պարտավորությունների մեծ մասը ստանալու/մարելու Բանկի մտադրության և ակնկալվող կարողության վրա: Հաշվետու ամսաթվից (ընթացիկ) հետո 12 ամսվա և հաշվետու ամսաթվից (ոչ ընթացիկ) հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում ակտիվների/պարտավորությունների ստացման կամ մարման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 35-ում:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Բանկն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- *«Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում»* (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- *«Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ»* (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- *«Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Բանկի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Բանկի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից և ներկայացված են ստորև.

- *«Փոխանակելիության բացակայություն»* (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»*
- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

Ղեկավարության կանխատեսմամբ՝ բացառությամբ ստորև նշված ստանդարտների, որոնք գտնվում են գնահատման գործընթացում, այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ)

2024թ. մայիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԽ) հրապարակել է փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման վերաբերյալ, որոնք փոփոխել են ՖՀՄՄ 9-ը և ՖՀՄՄ 7-ը:

Պահանջները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման հնարավորությամբ և վերաբերում են՝

- էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարմանը և
- ֆինանսական ակտիվների՝ ներառյալ կայուն զարգացման հետ կապված ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի գնահատմանը:

Բանկը գտնվում է նոր փոփոխությունների ազդեցության գնահատման գործընթացում:

ՖՀՄՄ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

ՖՀՄՄ 18-ը փոխարինում է ՀՀՄՄ 1-ին՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ուժի մեջ է մտնում 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններից հետո: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

Ընկերությունները պետք է դասակարգեն բոլոր եկամուտներն ու ծախսերը շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում հինգ՝ մասնավորապես՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, դադարեցված գործառնությունների և շահութահարկի կատեգորիաներով: Ընկերությունները պետք է ներկայացնեն նաև գործառնական շահույթի նոր ենթագումար: Ընկերությունների զուտ շահույթը չի փոխվի:

Ղեկավարության կողմից որոշված կատարողականի ցուցանիշները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններին կից առանձին ծանոթագրությունում:

Տրամադրում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վերաբերյալ:

Բացի այդ, բոլոր կազմակերպությունները անուղղակի մեթոդով գործառնական դրամական միջոցների հոսքերը ներկայացնելիս պետք է օգտագործեն գործառնական շահույթի ենթագումարը՝ որպես դրամական միջոցների հոսքերի հաշվետվության ելակետ:

Բանկը շարունակում է գնահատել նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես՝ կապված Բանկի շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունների կառուցվածքի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների և Ղեկավարության կողմից որոշված կատարողականի ցուցանիշներ համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ: Բանկը նաև գնահատում է ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա ազդեցությունը, ներառյալ որպես «այլ» դասակարգված հոդվածների մասով:

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով: Ֆինանսական գործիքները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով, ինչպես նաև իրական արժեքով: Որոշ հիմնական միջոցներ հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Բանկը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական

ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Բանկի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Բանկի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող) իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի

փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր արտարժութային գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90
ՀՀ դրամ/1 Ռուբ	3.71	4.50

4.4 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման

գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ) -ում:

Այլ տոկոսային եկամուտ

Այլ տոկոսային եկամտի հաշվարկում անվանական տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն արժեքի նկատմամբ գծային հիմունքով:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը

կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.5 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.6 Ֆինանսական գործիքներ

ա) Ճանաչում և սկզբնական չափում

Ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

բ) Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է՝

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը,
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,

- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

գ) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տե՛ս նաև Ծանոթագրություն 4.6(գ)) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակայինօգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոփով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

դ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ)), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս Ծանոթագրություն 4.6(զ)), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ե) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

զ) Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է Ծանոթագրություն 36.1.2-ում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են Ծանոթագրություն 36.1.2-ում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս Ծանոթագրություն 4.6(գ)), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,

- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է փոխատվության հանձնառության ամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և:
  - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Այդ նպատակով Բանկը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները՝ հիմնվելով ակնկալվող վճարումների ներկա արժեքի վրա՝ պարտատիրոջ կրած պարտքային կորուստները փոխհատուցելու համար: Նվազեցումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.6.1 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6.2 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.3 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել

են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում զուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոփեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.6.4 Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.6.5 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,

- ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.6.6 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.7 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Բանկը որպես վարձատու

Որպես վարձատու՝ Բանկը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

Վարձակալության մեկնարկն այն ամսաթիվն է, երբ վարձակալն իրավունք ունի օգտվել վարձակալած ակտիվը օգտագործելու իր իրավունքից: Դա վարձակալության սկզբնական ճանաչման ամսաթիվն է: Ֆինանսական վարձակալության մեկնարկից հետո Բանկը ճանաչում է վարձակալության զուտ ներդրումը, որը ստացվելիք նվազագույն վարձավճարն է, որը զեղչվում է վարձակալության ենթադրվող տոկոսադրույքով: Համախառն ներդրման և ներկայիս արժեքի միջև տարբերությունը գրանցվում է որպես ֆինանսական վարձակալության չվաստակված եկամուտ:

Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են զուտ ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Բանկի տիրապետության տակ է անցնում վարձակալության առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքի և պատմական ամորտիզացված արժեքների նվազագույնով:

4.8 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա: Թանկարժեք մետաղները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ ակտիվներ հոդվածում:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.9 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը և համակարգչային տեխնիկա և կապի միջոցները ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	25	4
Համակարգիչներ և կապի միջոցներ	5	20
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	10	10
Բանկոմատներ	10	10
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս

ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.10 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.11 Բռնագանձված ակտիվներ

Բանկի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Բանկի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.12 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի

համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.13 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.14 Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

Բանկի թողարկված ոչ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը համապատասխանում են փոխատվության հանձնառության սահմանմանը և կիրառվում է ՖՀՄՍ 9-ը:

4.15 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է Ծանոթագրություն 4.20-ում:

4.16 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում :

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.17 Սեգմենտների ներկայացում

ՖՀՄՄ 8-ի համաձայն՝ Բանկի գործառնությունները առանձնացված չեն գործառնական սեգմենտների և ամբողջական բիզնես միավոր են: Բանկի գործառնությունների վերաբերյալ որոշումներ կայացնող գլխավոր մարմինը որոշումներ է կայացնում համատեղ արդյունքների հիման վրա, և ոչ մի օպերացիոն սեգմենտ չի հանվում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետության տարածքում:

4.18 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՄ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4.18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս Ծանոթագրություն 4.6(բ)):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Բանկը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

4.18.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս Ծանոթագրություն 33):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման օպցիոններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս Ծանոթագրություն 36.1.2), ինչպես նաև

վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.6(գ)):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս Ծանոթագրություն 31:

5 Զուտ տոկոսային եկամուտ

	2024թ.	2023թ.
Արդյունավետ տոկոադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	25,800,863	20,902,774
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	109,173	82,146
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	2,345,266	2,984,250
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,415,678	1,263,760
Հակադարձ ռեպո գործառնություններ	254,182	1,819
	29,925,162	**25,234,749**
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	119,940	10,726
Ընդամենը տոկոսային եկամուտ	**30,045,102**	**25,245,475**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9,709,039	7,296,056
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	508,958	234,039
Կառավորության վարկեր	47,661	79,302
Ռեպո գործառնություններ	158,705	810,458
Փոխառություններ	182,274	168,746
Վարձակալության գծով պարտավորություններ	276,556	177,668
Թողարկված պարտքային արժեթղթեր	868,035	536,152
Ընդամենը տոկոսային ծախս	**11,751,228**	**9,302,421**
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	**18,293,874**	**15,943,054**

6 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ և ծախս

	2024թ.	2023թ.
Դրամարկղային գործառնություններ	1,574,235	1,316,796
Վճարային քարտերով գործառնություններ	1,849,102	2,652,646
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	20,390	26,396
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	777,843	1,377,121
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	312,677	292,420
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**4,534,247**	**5,665,379**

Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	235,359	376,502
Վճարային քարտերով գործառնություններ	1,235,845	1,187,677
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	12,791	42,691
Բորսայական ծառայություններ	125,518	50,077
Հաճախորդների ներգրավման գծով ծախսեր	131,887	249,894
Այլ ծախսեր	26,337	17,339
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**1,767,737**	**1,924,180**

7 Զուտ առևտրային եկամուտ

	2024թ.	2023թ.
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	6,358,080	7,850,398
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից օգուտ	67,621	-
Ածանցյալ գործիքներից զուտ վնաս	(238,619)	(108,707)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**6,187,082**	**7,741,691**

8 Այլ եկամուտներ

	2024թ.	2023թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	637,275	758,709
Պահառության գործունեությունից օգուտ	52,705	12,070
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	365,496	-
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտներ	32,960	20,435
Այլ ակտիվների վաճառքից օգուտ	33,440	-
Այլ եկամուտ	25,340	39,200
Ընդամենը այլ եկամուտներ	**1,147,216**	**830,414**

9 Պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)

2024թ.

	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	(19,566)	-	-	(19,566)
Հաճախորդներին տրված վարկեր	19	334,912	671,441	(2,550,392)	(1,544,039)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	18	124	-	-	124
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	18	(29,003)	-	-	(29,003)
Այլ ակտիվներ	23	436,822	-	-	436,822
Ֆինանսական երաշխավորություններ	30	(5,445)	-	-	(5,445)
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)		**717,844**	**671,441**	**(2,550,392)**	**(1,161,107)**

2023թ.

	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	(10,656)	-	-	(10,656)
Հաճախորդներին տրված վարկեր	19	80,591	(589,241)	3,283,592	2,774,942
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	18	(2,140)	-	-	(2,140)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	18	(106,276)	-	-	(106,276)
Այլ ակտիվներ	23	616,667	-	-	616,667
Ֆինանսական երաշխավորություններ	30	(56,390)	-	-	(56,390)
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս (ծախսի հակադարձում)		**521,796**	**(589,241)**	**3,283,592**	**3,216,147**

10 Վնաս պարտքի զիջումից

2023թ սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից վերսկսվեց ռազմական գործողություններն Լեռնային Ղարաբաղի տարածքում, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը տեղահանվեց իր բնակության տարածքներից և Լեռնային Ղարաբաղի նախագահը ստորագրեց հրամանագիր՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը գերատեսչական ենթակայության բոլոր պետական հիմնարկների և կազմակերպությունների լուծարման մասին:

Հայաստանի Հանրապետությունում գործող ֆինանսական կազմակերպությունները՝ այդ թվում «Յունիբանկ» ԲԲԸ-ն, ունեին ստորև նշված ներդրումները.

- Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերում ներդրումներ,

- ֆիզիկական անձանց տրված վարկեր:

Հաշվի առնելով տուժած ֆինանսական կազմակերպությունների կրած կորուստների վերականգնման կարևորությունը տնտեսության զարգացման վրա՝ 2023թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկսեց իրականացնել միջոցառումներ զինված հակամարտության հետևանքով տուժած Ֆինանսական կազմակերպություններին աջակցման նպատակով:

2023թ դեկտեմբերին ՀՀ կառավարությունը կայացրեց որոշում, համաձայն որի Կառավարությունը թողարկում է 9.6% արժեկտրոնային եկամտաբերությամբ պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր՝ Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա կողմից ստեղծված հիմնադրամների և ֆիզիկական անձանց նկատմամբ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների զիջման դիմաց տեղաբաշխելու համար:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ՀՀ կառավարությանն է զիջել 7,876,602 հազ. ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերում ներդրումների և 147,537 հազ. ՀՀ դրամ ֆիզիկական անձանց վարկերի նկատմամբ (Ծանոթագրություն 18, 19) պահանջի իրավունքը, որի դիմաց ստացել է ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր ընդհանուր 5,616,898 հազ. ՀՀ դրամ նոմինալ արժեքով: Փոխարինելու պահին ստացված պարտատոմսերի անվանական արժեքը համապատասխանում էր զիջված պահանջի իրավունքի գումարի 70%-ին, որի արդյունքում Բանկը կրել է 2,407,241 հազ. ՀՀ դրամ գումարի չափով վնաս պարտքի զիջումից գործարքի ամսաթվի դրությամբ:

11 Անձնակազմի գծով ծախսեր

	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	9,477,643	7,411,376
Անձնակազմի ուսուցման և այլ ծախսեր	92,378	67,855
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**9,570,021**	**7,479,231**

12 Այլ ծախսեր

	2024թ.	2023թ.
Այլ ակտիվների արժեզրկումից վնաս	1,593,844	489,531
Համաակարգչային ծրագրեր սպասարկում	763,854	692,891
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	758,337	633,287
Գովազդի ծախսեր	666,403	438,901
Ներկայացուցչական ծախսեր	432,289	240,645
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	422,387	431,553
Ավանդների ապահովագրություն	412,247	490,704
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	370,828	553,024
Անվտանգության գծով ծախսեր	247,926	207,961
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	211,143	183,989
Բարեգործական նվիրատվություններ	108,662	180,826
Գրասենյակային ծախսեր	89,628	169,555
Ինկասացիոն ծառայություններ	86,788	98,143
Գործուղման ծախսեր	62,243	76,618
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումից զուտ վնաս	46,956	169,905
Վճարված տուգանքներ	15,227	120,000
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	143,263	191,951
Թանկարժեք մետաղներով գործառնություններից ծախսեր	-	4,931
Հիմանական միջոցների օտարումից զուտ վնաս	-	366,872
Այլ ծախսեր	523,500	590,711
Ընդամենը այլ ծախսեր	**6,955,525**	**6,331,998**

13 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	2,772,178	1,682,245
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	869,981	-
Հետաձգված հարկ	(847,628)	251,474
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**2,794,531**	**1,933,719**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2023թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**11,022,441**		**6,387,917**	
Շահութահարկ	1,984,039	18	1,149,825	18
Զուտ չնվազեցվող ծախսեր	191,244	2	753,311	12
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	869,981	8	-	-
Նախորդ տարվա հետաձգված հարկի ճշգրտում	(259,185)	(2)	-	-
Արտարժույթի (դրական) բացասական փոխարժեքային տարբերություն	8,452	-	30,583	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	**2,794,531**	**26**	**1,933,719**	**30**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ՝

				2024թ.		
	2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(24,241)	9,621	-	(14,620)	-	(14,620)
Ներդրումային արժեթղթեր	72,031	(10,760)	(5,376)	55,895	55,895	-
Հաճախորդներին տրված վարկեր	(379,769)	304,707	-	(75,062)	-	(75,062)
Հիմնական միջոցներ	(266,029)	(37,600)	-	(303,629)	-	(303,629)
Ոչ նյութական ակտիվներ	-	104,273	-	104,273	104,273	-
Բռնագանձված ակտիվներ	-	360,355	-	360,355	360,355	-
Այլ ակտիվներ	-	133,649	-	133,649	133,649	-
Այլ պարտավորություններ	58,159	(16,617)	-	41,542	41,542	-
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	**(539,849)**	**847,628**	**(5,376)**	**302,403**	**695,714**	**(393,311)**

	2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2023թ. Զուտ մնացորդ	2023թ. Հետաձգված հարկային ակտիվ	2023թ. Հետաձգված հարկային պարտավորություն
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(33,170)	8,929	-	(24,241)	-	(24,241)
Ներդրումային արժեթղթեր	42,871	36,095	(6,935)	72,031	72,031	-
Հաճախորդներին տրված վարկեր	(26,378)	(353,391)	-	(379,769)	-	(379,769)
Հիմնական միջոցներ	(299,676)	33,647	-	(266,029)	-	(266,029)
Այլ պարտավորություններ	34,913	23,246	-	58,159	58,159	-
Հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	**(281,440)**	**(251,474)**	**(6,935)**	**(539,849)**	**(130,190)**	**(670,039)**

14 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

	2024թ.	2023թ.
Տարվա շահույթ	8,227,910	4,454,198
Հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	(515,976)	(516,000)
Սովորական բաժնետոմսերի սեփականատերին վերագրվող զուտ շահույթ	7,711,934	3,938,198
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հազար հատ)	181,254,472	181,254,472
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	**0,0425476**	**0,0217275**

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Կանխիկ դրամական միջոցներ	14,960,598	16,113,644
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	34,213,846	36,948,806
Նոստրո հաշիվներ այլ բանկերում	2,791,608	2,606,580
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**51,966,052**	**55,669,030**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 4%-ի (2023թ՝ 4%) չափով և արտարժույթով ներգրաված միջոցների 18%-ի չափով: Բանկերը արտարժույթով ներգրաված միջոցների 12%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 6%-ը՝ արտարժույթով:

ՀՀ դրամով պահվող պահուստները ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Պահուստները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 30,284,825 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 28,051,811 հազար ՀՀ դրամ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,832,167 հազար ՀՀ դրամ գումարով (65.63%) թղթակցային հաշիվները կենտրոնացված են երեք բանկում (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,062,122 հազար ՀՀ դրամը՝ (41%) երկու բանկում):

2024թ. ընթացքում իրականացվել է վարկային պարտավորությունների մարում գրավի սեփականության իրավունքի փոխանցման միջոցով 4,556,098 հազար ՀՀ դրամ գումարով (2023թ.՝ 1,069,605 հազար ՀՀ դրամ):

16 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոփերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոփային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.		
	Պայմանական գումար	**Ակտիվների իրական արժեք**	**Պարտավորությունների իրական արժեք**
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային ֆորվարդ պայմանագրեր	165,207	349	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		**349**	**-**

	31 դեկտեմբերի 2023թ.		
	Պայմանական գումար	**Ակտիվների իրական արժեք**	**Պարտավորությունների իրական արժեք**
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	2,013,980	11,025	1,055
Արտաժութային ֆորվարդ պայմանագրեր	268,529	211	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		**11,236**	**1,055**

17 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	595,000	790,000
Դեպոնացված միջոցներ այլ բանկերում	2,365,111	2,480,385
Բանկերում ներդրված ավանդներ	3,202,269	3,331,913
Բանկերին տրամադրված վարկեր	11,950,806	17,094,524
Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	449,561	2,580,975
	18,562,747	**26,277,797**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(74,652)	(94,218)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**18,488,095**	**26,183,579**

Ավանդները բանկերում ունեն 90 օրից ավել մարման ժամկետ (կամ կարճաժամկետ են, բայց պարբերաբար մարման ժամկետները վերանայվում են և երկարաձգվում):

Դեպոնացված միջոցները բանկերում իրենցից ներկայացնում են Master Card և Visa վճարային համակարգերով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդներ:

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և արտարժույթով պահվող պարտադիր պահուստ (տե՛ս Ծանոթագրություն 15):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ բանկի տրված վարկեր, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այս մնացորդների համախառն արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 5,543,297 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,092,730 հազար ՀՀ դրամ, որը տրամադրվել է երեք բանկերի):

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	94,218	94,218	104,874	104,874
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(19,566)	(19,566)	(10,656)	(10,656)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74,652**	**74,652**	**94,218**	**94,218**

18 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	27,166,994	22,783,607
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	4,047,205	2,793,618
Պարտքային կորուստների գծով պահուստ	(62,829)	(75,816)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**31,151,370**	**25,501,409**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	3,476,530	9,412,880
Պարտքային կորուստների գծով պահուստ	(9,598)	(25,614)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**3,466,932**	**9,387,266**
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	**34,618,302**	**34,888,675**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ՀՀ կառավարությանն է զիջել Լեռնային Ղարաբաղի և նրա հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերում ներդրումների (տե՛ս Ծանոթագրություն 10) պահանջի իրավունքը 7,876,602 հազար ՀՀ դրամ, որի դիմաց ստացել է ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր 5,513,622 հազար ՀՀ դրամ նոմինալ արժեքով: Արժեթղթերից զիջումից վնասը կազմել է 2,362,980 հազար ՀՀ դրամ:

Ստացված արժեթղթերը դասակարգվել են, որպես ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր: Արժեթղթերի սկզբնական արժեքի ճշտման արդյունքում Բանկը կրել է 303,964 հազար ՀՀ դրամ գումարով վնաս, գործարքի ամսաթվի դրությամբ:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	101,430	207,706
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(29,003)	(106,276)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**72,427**	**101,430**

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերը, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	7.15-11	2025-2033	6.25-11	2024-2023
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	3.75-7.95	2025-2029	3.75-5	2024-2025

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում, Բանկի պարտազանցման բացակայության դեպքում գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով, բայց գործընկերոջ կողմից պայմանագրի ժամկետի ավարտին արժեթղթերը հետ վերադարձնելու պայմանով: Բանկը սահմանել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերն ու հատույցները և հետևաբար, չի ապաճանաչում դրանք: Գրավադրված արժեթղթերի դիմաց հաշվառվող պարտավորությունները ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	1,073,505	1,043,802
ՀՀ բաժնային գործիքներ	750,325	528,811
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	**1,823,830**	**1,572,613**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	2,840	4,980
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	124	(2,140)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,964**	**2,840**

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Բանկը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2023թ.-ի ընթացքում՝ նույնպես):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	11	2028	11	2028

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերում ներառված չգնանշվող բաժնային արժեթղթերը ներկայացված են ստորև.

		Վերահսկվող %			
	Գրանցման երկիրը	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	1.25	1.25	16,500	16,500
ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ	Հայաստանի Հանրապետություն	2.54	2.54	33,657	12,143
Ես Եմ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	8.33	-	200,000	-
				250,157	**28,643**

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

19 Հաճախորդներին տրված վարկեր

	31 դեկտեմբերի 2024թ.			31 դեկտեմբերի 2023թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Պարտքային կորուստների գծով պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	64,973,408	(938,037)	64,035,371	35,287,237	(946,889)	34,340,348
Սպառողական վարկեր	86,263,752	(3,012,607)	83,251,145	76,600,307	(2,789,607)	73,810,700
	151,237,160	**(3,950,644)**	**147,286,516**	**111,887,544**	**(3,736,496)**	**108,151,048**
Առևտրային վարկեր						
Արդյունաբերություն	7,846,079	(1,213,983)	6,632,096	7,405,037	(1,186,776)	6,218,261
Գյուղատնտեսություն	2,738,729	(13,264)	2,725,465	2,897,358	(54,365)	2,842,993
Շինարարություն	16,989,962	(175,160)	16,814,802	7,815,868	(138,931)	7,676,937
Տրանսպորտ	720,905	(7,180)	713,725	581,118	(13,141)	567,977
Առևտուր	9,597,990	(100,748)	9,497,242	7,946,239	(233,823)	7,712,416
Սպասարկում	11,004,143	(83,219)	10,920,924	8,654,049	(158,443)	8,495,606
Այլ	9,384,430	(434,656)	8,949,774	7,904,942	(205,195)	7,699,747
	58,282,238	**(2,028,210)**	**56,254,028**	**43,204,611**	**(1,990,674)**	**41,213,937**
Ընդամենը	**209,519,398**	**(5,978,854)**	**203,540,544**	**155,092,155**	**(5,727,170)**	**149,364,985**

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել փոխատվության հանձնառության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 4,556,098 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1,069,605 հազար ՀՀ դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ փոխառու և կապակցված կողմերի խումբ, որոնց վարկի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այս վարկի համախառն արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 4,832,875 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,384,708 հազար ՀՀ դրամ, համախառն վարկային պորտֆել): Նշված վարկերի գծով պարտքային կորուստների պահուստը կազմում է 6,637 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 21,051 հազար ՀՀ դրամ):

2023թ դեկտեմբերի ՀՀ կառավարության որոշման հիման վրա Բանկը ՀՀ կառավարությանն է զիջել 147,537 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի պահանջի իրավունքը, որի դիմաց ստացել է ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր 103,276 հազար ՀՀ դրամ նոմինալ արժեքով (տե՛ս Ծանոթագրություն 10): Ղեկավարության գնահատմամբ մոտ էր վարկերի իրական արժեքին: Վարկերի զիջումից վնասը կազմել է 44,261 հազար ՀՀ դրամ:

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

				2024թ.
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	104,111,602	1,399,564	6,376,378	111,887,544
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	92,028,821	730,104	1,128,340	93,887,265
Մարված ակտիվներ	(47,208,156)	(566,505)	(2,252,861)	(50,027,522)
- փոխանցում Փուլ 1	621,235	(240,767)	(380,468)	-
- փոխանցում Փուլ 2	(1,162,693)	1,216,460	(53,767)	-
- փոխանցում Փուլ 3	(3,881,388)	(813,370)	4,694,758	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(636,932)	(5,060)	(50,756)	(692,748)
Վերականգնում	-	-	2,056,719	2,056,719
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(5,874,098)	(5,874,098)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**143,872,489**	**1,720,426**	**5,644,245**	**151,237,160**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	35,792,650	3,052,832	4,359,129	43,204,611
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	24,415,478	1,197,180	134,344	25,747,002
Մարված ակտիվներ	(7,275,575)	(458,346)	(7,293,007)	(15,026,928)
- փոխանցում Փուլ 1	97,886	(16,623)	(81,263)	-
- փոխանցում Փուլ 2	(275,341)	2,179,247	(1,903,906)	-
- փոխանցում Փուլ 3	(313,848)	(46,860)	360,708	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(1,084,818)	(135,039)	(35,692)	(1,255,549)
Վերականգնում	-	-	6,119,613	6,119,613
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(506,511)	(506,511)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**51,356,432**	**5,772,391**	**1,153,415**	**58,282,238**

	2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	78,562,744	1,542,293	7,010,765	87,115,802
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	75,266,721	664,282	1,804,647	77,735,650
Մարված ակտիվներ	(46,759,247)	(819,395)	(4,410,343)	(51,988,985)
- փոխանցում Փուլ 1	878,632	(216,144)	(662,488)	-
- փոխանցում Փուլ 2	(1,039,289)	1,100,082	(60,793)	-
- փոխանցում Փուլ 3	(3,324,858)	(880,149)	4,205,007	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	526,899	8,595	60,309	595,803
Վերականգնում	-	-	3,044,882	3,044,882
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(4,615,608)	(4,615,608)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**104,111,602**	**1,399,564**	**6,376,378**	**111,887,544**

	2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	25,522,146	161,322	17,616,791	43,300,259
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	33,750,194	-	48,496	33,798,690
Մարված ակտիվներ	(21,647,153)	(51,523)	(6,667,559)	(28,366,235)
- փոխանցում Փուլ 1	132,614	(18,245)	(114,369)	-
- փոխանցում Փուլ 2	(446,371)	3,074,868	(2,628,497)	-
- փոխանցում Փուլ 3	(1,917,098)	(115,579)	2,032,677	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	398,318	1,989	136,539	536,846
Վերականգնում	-	-	1,533,823	1,533,823
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(7,598,772)	(7,598,772)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**35,792,650**	**3,052,832**	**4,359,129**	**43,204,611**

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,115,446	109,333	2,511,717	3,736,496
- փոխանցում Փուլ 1	152,775	(14,529)	(138,246)	-
- փոխանցում Փուլ 2	(15,924)	34,786	(18,862)	-
- փոխանցում Փուլ 3	(38,826)	(14,887)	53,713	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(657,497)	168,479	2,909,665	2,420,647
Նոր տրամադրված վարկեր	825,693	273,497	511,690	1,610,880
Վերականգնում	-	-	2,056,719	2,056,719
Դուրսգրում տարվա ընթացքում			(5,874,098)	(5,874,098)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,381,667**	**556,679**	**2,012,298**	**3,950,644**

	2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	351,279	401,503	1,237,892	1,990,674
- փոխանցում Փուլ 1	24,887	(143)	(24,744)	-
- փոխանցում Փուլ 2	(2,059)	696,458	(694,399)	-
- փոխանցում Փուլ 3	(2,654)	(273)	2,927	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(18,157)	98,771	(5,987,054)	(5,906,440)
Նոր տրամադրված վարկեր	184,873	130,694	15,307	330,874
Վերականգնում	-	-	6,119,613	6,119,613
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(506,511)	(506,511)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**538,169**	**1,327,010**	**163,031**	**2,028,210**

	2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	974,832	124,987	2,795,589	3,895,408
- փոխանցում Փուլ 1	257,192	(15,080)	(242,112)	-
- փոխանցում Փուլ 2	(17,969)	40,279	(22,310)	-
- փոխանցում Փուլ 3	(56,017)	(86,026)	142,043	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(792,564)	(24,988)	787,058	(30,494)
Նոր տրամադրված վարկեր	749,972	70,161	622,175	1,442,308
Վերականգնում	-	-	3,044,882	3,044,882
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(4,615,608)	(4,615,608)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,115,446**	**109,333**	**2,511,717**	**3,736,496**

	2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	211,851	7,395	6,473,249	6,692,495
- փոխանցում Փուլ 1	35,138	(453)	(34,685)	-
- փոխանցում Փուլ 2	(1,439)	1,035,628	(1,034,189)	-
- փոխանցում Փուլ 3	(17,454)	(6,653)	24,107	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(103,271)	(634,414)	1,861,917	1,124,232
Նոր տրամադրված վարկեր	226,454	-	12,442	238,896
Վերականգնում	-	-	1,533,823	1,533,823
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(7,598,772)	(7,598,772)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**351,279**	**401,503**	**1,237,892**	**1,990,674**

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի և տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 36.1.2-ում:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների տրված 6,208,670 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ.՝ 4,914,274 հազար ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը գրավադրված է ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և 555,282 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ.՝ 745,480 հազար ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը ՝ՀՀ կառավարությունից ստացված վարկերի համար (տե՛ս Ծանոթագրություն 24, 26).

Ինչպես նշված է Ծանոթագրություն 33-ում, 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 35-ում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 36-ում:

Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է Ծանոթագրություն 32-ում:

Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումները ներառված են հաճախորդներին տրված առևտրային վարկերում և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 1,982,408 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 364,062 հազար ՀՀ դրամ):

Ֆինանսական վարձակալության զուտ ներդրումների գծով արժեզրկման պահուստները ներառված են հաճախորդներին տրված վարկեր գծով արժեզրկումից պահուստում և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 24,745 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,813 հազար ՀՀ դրամ):

Ֆինանսական վարձակալության զուտ ներդրումների գծով ենթադրվող միջին տոկոսադրույքը կազմում է 10.3% (2023թ.՝ 9.9%):

20 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Վարձակալված հիմանական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա միջոցներ	Գրասենյակային սարքավորումներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	5,941,612	455,948	1,559,956	404,230	5,222,719	3,166,244	16,750,709
Ավելացում	670,779	5,268	169,524	90,251	265,219	554,863	1,755,904
Վերաչափում	-	-	-	-	-	309,247	309,247
Օտարում	(1,130,846)	(14,867)	(43,870)	(31,653)	(138,859)	(155,416)	(1,515,511)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,481,545**	**446,349**	**1,685,610**	**462,828**	**5,349,079**	**3,874,938**	**17,300,349**
Ավելացում	9,072	205,376	534,105	41,330	157,532	1,406,717	2,354,132
Վերաչափում	-	-	-	-	-	324,355	324,355
Օտարում	(589,160)	(5,037)	(17,229)	(59,488)	(619,848)	(79,690)	(1,370,452)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,901,457**	**646,688**	**2,202,486**	**444,670**	**4,886,763**	**5,526,320**	**18,608,384**
Կուտակված մաշվածություն							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**150,549**	**68,254**	**1,005,808**	**29,664**	**3,290,260**	**1,309,199**	**5,853,734**
Տարվա ծախս	307,670	9,623	133,838	42,586	429,815	526,903	1,450,435
Օտարում	(70,297)	(7,719)	(42,244)	(11,573)	(94,592)	(63,352)	(289,777)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**387,922**	**70,158**	**1,097,402**	**60,677**	**3,625,483**	**1,772,750**	**7,014,392**
Տարվա ծախս	283,243	14,829	261,636	44,761	228,852	615,079	1,448,400
Օտարում	(59,130)	(5,037)	(16,876)	(17,458)	(619,848)	(19,291)	(737,640)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**612,035**	**79,950**	**1,342,162**	**87,980**	**3,234,487**	**2,368,538**	**7,725,152**
Հաշվեկշռային արժեք							
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,093,623**	**376,191**	**588,208**	**402,151**	**1,723,596**	**2,102,188**	**10,285,957**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,289,422**	**566,738**	**860,324**	**356,690**	**1,652,276**	**3,157,782**	**10,883,232**

Ակտիվների վերագնահատում

Բանկի հողը և շենքերը, համակարգչային տեխնիկան և կապի միջոցները ներկայացված են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2020թ. դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 408,411 հազար ՀՀ դրամ գումարով: Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե հողը և շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 3,445,416 հազար ՀՀ դրամ (2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,293,225 հազար ՀՀ դրամ):

Համակարգչային տեխնիկայի և կապի միջոցների վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2018թ. դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 32,831 հազար ՀՀ դրամ գումարով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ պարտավորություններ տողում (տե՛ս Ծանոթագրություն 28): Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,897,725 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,350,908 հազար ՀՀ դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

21 Ոչ նյութական ակտիվներ

	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,092,712	3,788,944	101,021	4,982,677
Ավելացում	88,600	268,270	-	356,870
Օտարում	(46,354)	(87,945)	-	(134,299)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,134,958**	**3,969,269**	**101,021**	**5,205,248**
Ավելացում	32,664	921,866	-	954,530
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,167,622**	**4,891,135**	**101,021**	**6,159,778**
Կուտակված ամորտիզացիա				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	578,999	639,540	76,259	1,294,798
Օտարում	(36,602)	(87,945)	-	(124,547)
Մասհանումներ	220,229	450,440	8,756	679,425
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**762,626**	**1,002,035**	**85,015**	**1,849,676**
Մասհանումներ	102,178	454,077	3,147	559,402
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**864,804**	**1,456,112**	**88,162**	**2,409,078**
Հաշվեկշռային արժեք				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**372,332**	**2,967,234**	**16,006**	**3,355,572**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**302,818**	**3,435,023**	**12,859**	**3,750,700**

Պայմանագրային պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումների գծով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգչային ծրագրերում ներառված է 2,146,183 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով ProtoCRM վարկավորման ավտոմատացված ծրագիրը (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,983,225 հազար ՀՀ դրամ):

2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվներում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 513,478 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 202,294 հազար ՀՀ դրամ):

22 Բռնագանձված ակտիվներ

Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ տարվա ընթացքում սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Անշարժ գույք	3,446,628	2,069,916
Այլ	3,100,341	1,952,197
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**6,546,969**	**4,022,113**

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Կազմակերպությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները:

23 Այլ ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ստացվելիք գումարներ	2,484,631	1,402,286
Պարտքային կորուստների գծով պահուստ	(108,159)	(151,799)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**2,376,472**	**1,250,487**
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	1,347,822	1,717,646
Պահեստ	267,031	128,403
Թանկարժեք մետաղներ	170,799	145,658
Այլ ակտիվներ	424,277	274,030
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**2,209,929**	**2,265,737**
Ընդամենը այլ ակտիվներ	**4,586,401**	**3,516,224**

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

	2024թ.	2023թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	151,799	35,462
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	436,822	616,667
Զուտ դուրսգրում	(480,462)	(500,330)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**108,159**	**151,799**

24 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	6,846,727	3,018,649
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	6,371,441	1,146,549
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	5,959,803	4,667,439
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	954,303	876,109
Վարկեր բանկերից հետգնման համաձայնագրերով	3,174,430	9,012,089
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**23,306,704**	**18,720,835**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 6,208,670 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,914,274 հազար ՀՀ դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տե՛ս Ծանոթագրություն 19):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ բանկից ներգրավված հետգնման համաձայնագրով վարկ, որը ապահովված են Բանկի կողմից գրավադրված 3,476,530 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,412,880 հազար ՀՀ դրամ) ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթով (տե՛ս Ծանոթագրություն 19):

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները չեն գերազանցում Բանկի բաժնետիրական կապիտալի 10%-ը (2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,000,340 հազար ՀՀ դրամ, մեկ բանկ):

Ֆինանսական կազմակերպություններից ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Ֆինանսական կազմակերպություններից վարկերն ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ.-ի ընթացքում՝ նույնպես):

25 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	52,972,096	34,274,763
Ժամկետային ավանդներ	28,208,368	4,740,434
	81,180,464	**39,015,197**
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	68,136,279	84,434,229
Ժամկետային ավանդներ	98,219,458	87,743,744
	166,355,737	**172,177,973**
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**247,536,201**	**211,193,170**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված

վարկերի, երաշխիքների գծով 2,552,961 հազար ՀՀ դրամ գումարով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,968,212 հազար ՀՀ դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող երեք հաճախորդների, հաշիվների և ավանդների մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այդ ավանդների և հաշվարկային հաշիվների ընդհանուր գումարը կազմում է 21,312,210 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չի ունեցել):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ.-ի ընթացքում՝ նույնպես):

26 Փոխառություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ստորադաս փոխառություն ոչ պետական ֆինանսական կազմակերպություններից	1,586,544	1,619,470
Վարկեր ՀՀ կառավարությունից	243,098	844,143
Այլ փոխառություն	653,241	2,450,973
Ընդամենը փոխառություններ	**2,482,883**	**4,914,586**

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներառում են վարկեր ստացված EIB-ի «Փոքր, Միջին Բիզնեսի Զարգացման», KFW-ի «Վերականգնվող էներգիայի աջակցություն», KFW-ի «Մանր, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) էներգաարդյունավետության աջակցության» վարկային ծրագրի, «Գյուղատնտեսության ոլորտի աջակցման» վարկային ծրագիր շրջանակներում իրականացվող ֆինանսավորման նպատակով: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարությունից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 555,282 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 745,480 հազար ՀՀ դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տե՛ս Ծանոթագրություն 19):

Բանկը ներգրավել է ստորադաս երկարաժամկետ փոխառություն Բանկի հետ կապակցված Կազմակերպությունից (տե՛ս Ծանոթագրություն 32):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ.-ի ընթացքում՝ նույնպես):

27 Թողարկված պարտքային արժեթղթեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Թողարկված տոկոսային պարտատոմսեր	12,099,511	9,347,121
Թողարկված ստորադաս տոկոսային պարտատոմսեր	2,985,516	-
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	**15,085,027**	**9,347,121**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
05/09/2023	ԱՄՆ դոլար	100	50,000	5	05/09/2026	5,000,000
01/02/2024	ԱՄՆ դոլար	100	50,000	5	01/02/2027	5,000,000
09/07/2024	ԱՄՆ դոլար	100	50,000	5	09/07/2027	5,000,000
05/09/2023	ՀՀ դրամ	10,000	100,000	11	05/09/2026	1,000,000,000
02/10/2023	ՀՀ դրամ	10,000	100,000	10.75	02/10/2026	1,000,000,000
01/02/2024	ՀՀ դրամ	10,000	200,000	11	01/02/2027	2,000,000,000
09/07/2024	ՀՀ դրամ	10,000	200,000	9.75	09/07/2027	2,000,000,000

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային ստորադաս պարտատոմս հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
19/11/2024	ԱՄՆ դոլար	100	74,741	6.25	19/11/2031	7,474,100

Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2023թ.-ի ընթացքում՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ. ընթացքում՝ նույնպես):

28 Այլ պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վճարվելիք գումարներ	193,586	370,804
Վարձակալության գծով պարտավորություններ	2,366,028	1,710,224
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	268,718	310,243
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**2,828,332**	**2,391,271**
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	451,192	351,754
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	113,555	70,452
Ակնկալվող պարտքային կորուստներ ֆինանսական երաշխիքների գծով	7,018	12,463
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**571,765**	**434,669**
Ընդամենը այլ պարտավորություններ	**3,400,097**	**2,825,940**

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի տարածքների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների (տե՛ս Ծանոթագրություն 12)՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս Ծանոթագրություն 20):

Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

	2024թ.	2023թ.
Հունվարի 1-ի դրությամբ	1,710,224	1,648,614
Ավելացում	1,406,717	554,863
Դադարեցում	(57,103)	(81,551)
Վերաչափում	324,355	309,247
Տոկոսի կուտակում	276,556	177,668
Վճարումներ	(1,294,721)	(898,617)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,366,028**	**1,710,224**

2024թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 10% (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է Ծանոթագրություն 36.3-ում:

29 Սեփական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 22,425,447 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 181,254,472 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով և թվով 36,788,261 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից, այդ թվում 32,010,000-ը՝ 100 ՀՀ դրամ և 4,778,261-ը՝ 230 ՀՀ դրամ անվանական արժեքներով:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ	18,754,264	83.6	18,758,224	83.6
Սֆիկարո Ինվեսթմենթս Լիմիթեդ	1,211,900	5.4	1,211,900	5.4
Կարապետյան Վահե	745,890	3.3	745,890	3.3
Զաքարյան Գագիկ	164,128	0.7	255,951	1.2
Այլ	1,549,265	7	1,453,482	6.5
	22,425,447	**100**	**22,425,447**	**100**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

2024թ. Բանկի բաժնետիրական կապիտալում ավելացում չի եղել: 2023թ. Բանկը համալրել է բաժնետիրական կապիտալը՝ թողարկելով 836,794 հազ. ՀՀ դրամի սովորական բաժնետոմսեր, որոնց տեղաբաշխման արդյունքում ստացել է 1,673,589 հազ. ՀՀ դրամի էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում: Արտոնյալ բաժնետոմսերը ունեն մեկ ձայնի իրավունք միայն Բանկի վերակազմակերպման կամ լուծարման և կանոնադրության մեջ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները սահմանափակող որոշումների իրականացման հարցերում և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2024թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է 515,978 հազար ՀՀ դրամ (2023թ. հայտարարված շահաբաժինների գումարը կազմում է 516,000 հազար ՀՀ դրամ):

Սովորական բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2024թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է 4,100,000 հազար ՀՀ դրամ (2023թ. ՝ չի ունեցել), որը վճարվել է 2023թ. Ֆիանսական արդյունքների հիման վրա:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

30 Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարները հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վարկերի և վարկային գծերի չօգտագործված մաս	12,768,237	15,608,585
Տրամադրված երաշխիքներ	547,221	600,823
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**13,315,458**	**16,209,408**

Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում (տե՛ս Ծանոթագրություն 19):

Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները ներկայացվում է ստորև՝

	2024թ.	2023թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ֆինանսական երաշխավորություն		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	12,463	68,853
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(5,445)	(56,390)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,018**	**12,463**

Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են «Այլ պարտավորություններում» (տե՛ս Ծանոթագրություն 28-ում):

31 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի նշանակալից բաժնետերեր են հանդիսանում գործարարներ Գ. Զաքարյանը և Գ. Պիսկովը, որոնց անուղղակի պատկանում է ձայների իրավունք տվող բաժնետոմսերի 84.33%:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

	2024թ.		2023թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	196,001	638,969	6,297,013	1,107,869
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	56,364	451,866	51,977	357,819
Տարվա ընթացքում մարված վարկեր	(83,920)	(163,091)	(6,152,989)	(826,719)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	**168,445**	**927,744**	**196,001**	**638,969**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(336)	(43,763)	(1,261)	(67,951)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**168,109**	**883,981**	**194,740**	**571,018**

	2024թ.		2023թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները				
Հունվարի 1-ի դրությամբ	199,744	-	873,160	-
Տարվա ընթացքում տրամադրված	366,783,095	-	121,778,841	-
Տարվա ընթացքում մարված	(366,750,182)	-	(122,452,257)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**232,657**	**-**	**199,744**	**-**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	904,563	-	231,147	-
Տարվա ընթացքում ստացված	219,264,687	-	24,073,416	-
Տարվա ընթացքում վճարված	(218,473,871)	-	(23,400,000)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,695,379	-	904,563	-
Պարտքային կորուստների գծով պահուստ	(20,104)	-	(11,589)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,675,275**	**-**	**892,974**	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	2,211,003	-	3,457,139	-
Տարվա ընթացքում ստացված	21,037,021	-	75,293,613	-
Տարվա ընթացքում վճարված	(22,454,795)	-	(76,539,749)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**793,229**	-	**2,211,003**	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	2,345,086	140,540	5,876,898	346,399
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	77,877,739	5,250,550	68,818,876	12,542,137
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(78,886,561)	(4,277,746)	(72,350,688)	(12,747,996)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,336,264**	**1,113,344**	**2,345,086**	**140,540**

	2024թ.		2023թ.	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ստորադաս փոխառություններ	**1,586,544**	**-**	**1,619,470**	**-**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**-**	**67,662**	**-**	**69,063**
Ոչ նյութական ակտիվների առք	**463,065**	**-**	**205,920**	**-**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	68,333	99,846	14,889	46,296
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(79,193)	(23,173)	(108,462)	(58,082)
Պարտքային կորուստների գծով (ծախս) ծախսի հակադարձում	(7,590)	24,188	2,669,535	3,686
Ապահովագրության գծով ծախսեր	(118,817)	-	(82,699)	-
Համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսեր	-	-	643,920	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	3,013,753	1,929,187
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**3,013,753**	**1,929,187**

33 Իրական արժեքի չափումը

ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	31 դեկտեմբերի 2024թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	51,966,052	-	51,966,052	51,966,052
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	18,488,095	-	18,488,095	18,488,095
Հաճախորդներին տրված վարկեր	-	203,540,544	-	203,540,544	203,540,544
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, նեռարյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	3,895,008	30,527,768	-	34,422,776	34,618,302
Այլ ֆինանսական ակտիվներ	-	2,376,472	-	2,376,472	2,376,472
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	23,306,704	-	23,306,704	23,306,704
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	246,454,834	-	246,454,834	247,536,201
Փոխառություններ	-	2,482,883	-	2,241,998	2,482,883
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	14,928,462	-	14,928,462	15,085,027
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,828,332	-	2,828,332	2,828,332

	31 դեկտեմբերի 2023թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	55,669,030	-	55,669,030	55,669,030
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	26,183,579	-	26,183,579	26,183,579
Հաճախորդներին տրված վարկեր	-	148,206,576	-	148,206,576	149,364,985
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, նեռարյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	2,660,185	32,204,122	-	34,864,307	34,888,675
Այլ ֆինանսական ակտիվներ	-	1,250,487	-	1,250,487	1,250,487
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	18,720,835	-	18,720,835	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	211,188,579	-	211,188,579	211,193,170
Փոխառություններ	-	4,812,074	-	4,812,074	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	9,326,016	-	9,326,016	9,347,121
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,391,271	-	2,391,271	2,391,271

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով:

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

	31 դեկտեմբերի 2024թ.			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող արժեթղթեր	-	119,991	-	119,991
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,823,830	-	1,823,830
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	349	-	349
Ընդամենը	**-**	**1,944,170**	**-**	**1,944,170**
Զուտ իրական արժեք	**-**	**1,944,170**	**-**	**1,944,170**

	31 դեկտեմբերի 2023թ.			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,572,613	-	1,572,613
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	11,236	-	11,236
Ընդամենը	**-**	**1,583,849**	**-**	**1,583,849**
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	1,055	-	1,055
Ընդամենը	**-**	**1,055**	**-**	**1,055**
Զուտ իրական արժեք	**-**	**1,582,794**	**-**	**1,582,794**

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային ֆորվարդային պայմանագրերից:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական վաճառքների մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Հողը և շենքը վերագնահատվել են 2020 թվականի դեկտեմբերին:

Նշանակալի չդիտարկվող ներդրումը՝ վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նյութապես ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

				31 դեկտեմբերի 2024թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով (Ծանոթ. 18, 24)	3,174,430	-	3,174,430	(3,466,932)	-	(292,502)
Ընդամենը	**3,174,430**	**-**	**3,174,430**	**(3,466,932)**	**-**	**(292,502)**

				31 դեկտեմբերի 2023թ.			
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել			
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով (Ծանոթ. 18,24)	9,012,089	-	9,012,089	(9,387,266)	-	(375,177)
Ընդամենը	**9,012,089**	**-**	**9,012,089**	**(9,387,266)**	**-**	**(375,177)**

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 36.3-ում:

	31 դեկտեմբերի 2024թ.							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	51,966,052	-	-	51,966,052	-	-	-	51,966,052
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	349	-	-	349	-	-	-	349
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,238,490	-	10,075,795	15,314,285	3,173,810	-	3,173,810	18,488,095
Հաճախորդներին տրված վարկեր	13,669,732	6,275,095	32,595,937	52,540,764	61,048,141	89,951,639	150,999,780	203,540,544
Ներդրումային արժեթղթեր								
Իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող արժեթղթեր	21,473	-	5,676	27,149	37,085	55,757	92,842	119,991
Իռական արժեքով ՝ այլ համապառփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեռր	-	-	-	-	1,823,830	-	1,823,830	1,823,830
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	3,469,271	22,888,012	3,544,231	29,901,514	2,440,214	2,276,574	4,716,788	34,618,302
Այլ ֆինանասական ակտիվներ	2,376,472	-	-	2,376,472	-	-	-	2,376,472
	76,741,839	**29,163,107**	**46,221,639**	**152,126,585**	**68,523,080**	**92,283,970**	**160,807,050**	**312,933,635**

31 դեկտեմբերի 2024թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Պարտավորություններ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16,502,704	104,107	635,320	17,242,131	487,184	5,577,389	6,064,573	23,306,704
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	127,996,195	9,601,169	51,494,663	189,092,027	58,382,860	61,314	58,444,174	247,536,201
Փոխառություններ	11,370	-	31,729	43,099	853,240	1,586,544	2,439,784	2,482,883
Թողարկված պարտքային արժեթղթեր	60,468	67,476	44,754	172,698	11,948,400	2,963,929	14,912,329	15,085,027
Վարձակալության գծով պարտավորություններ	42,790	85,578	345,011	473,379	1,199,269	693,380	1,892,649	2,366,028
Այլ ֆինանսական պարտավորություններ	193,586	268,718	-	462,304	-	-	-	462,304
	144,807,113	**10,127,048**	**52,551,477**	**207,485,638**	**72,870,953**	**10,882,556**	**83,753,509**	**291,239,147**
Զուտ դիրք	**(68,065,274)**	**19,036,059**	**(6,329,838)**	**(55,359,053)**	**(4,347,873)**	**81,401,414**	**77,053,541**	**21,694,488**
Կուտակված ճեղքվածք	**(68,065,274)**	**(49,029,215)**	**(55,359,053)**		**(59,706,926)**	**21,694,488**		

	31 դեկտեմբերի 2023թ.							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	55,669,030	-	-	55,669,030	-	-	-	55,669,030
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,895,678	-	9,673,472	19,569,150	6,614,429	-	6,614,429	26,183,579
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	11,236	-	-	11,236	-	-	-	11,236
Հաճախորդներին տրված վարկեր	13,246,111	5,067,876	24,185,978	42,499,965	52,448,885	54,416,135	106,865,020	149,364,985
Ներդրումային արժեթղթեր								
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	-	528,811	1,043,802	1,572,613	1,572,613
-Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	951,612	361,244	1,151,599	2,464,455	27,122,151	5,302,069	32,424,220	34,888,675
Այլ ֆինանասական ակտիվներ	1,250,487	-	-	1,250,487	-	-	-	1,250,487
	81,024,154	**5,429,120**	**35,011,049**	**121,464,323**	**86,714,276**	**60,762,006**	**147,476,282**	**268,940,605**
Պարտավորություններ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,323,450	91,444	629,286	14,044,180	368,968	4,307,687	4,676,655	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	128,763,420	16,646,224	55,623,877	201,033,521	10,113,257	46,392	10,159,649	211,193,170
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,055	-	-	1,055	-	-	-	1,055
Փոխառություններ	9,345	-	2,490,847	2,500,192	789,352	1,625,042	2,414,394	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	74,905	1,605,156	3,643,110	5,323,171	4,023,950	-	4,023,950	9,347,121
Վարձակալության գծով պարտավորություններ	35,139	70,279	305,728	411,146	982,828	316,250	1,299,078	1,710,224
Այլ ֆինանսական պարտավորություններ	370,804	310,243	-	681,047	-	-	-	681,047
	142,578,118	**18,723,346**	**62,692,848**	**223,994,312**	**16,278,355**	**6,295,371**	**22,573,726**	**246,568,038**
Զուտ Դիրք	**(61,553,964)**	**(13,294,226)**	**(27,681,799)**	**(102,529,989)**	**70,435,921**	**54,466,635**	**124,902,556**	**22,372,567**
Կուտակված ճեղքվածք	**(61,553,964)**	**(74,848,190)**	**(102,529,989)**		**(32,094,068)**	**22,372,567**		

36 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Ռիսկերի կառավարման տնօրենություն

Ռիսկերի կառավարման տնօրինությունը ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման կարևոր խնդիրների համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

Բանկի Ֆինանսական տնօրինություն

Բանկի ֆինանսական տնօրինությունը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Ֆինանսական տնօրինությունը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես ակնկալվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Տնօրինությանը, ռիսկերի կոմիտեին և բոլոր բաժինների ղեկավարներին: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ կրեդիտային ռիսկի համապարփակ չափի, կանխատեսումային կրեդիտային ցուցանիշների, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, արժեքը ներառյալ ռիսկը (VaR), իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների: Եռամսյակային կտրվածքով ավագ ղեկավարող անձնակազմը որոշում է պահուստի ստեղծման անհրաժեշտությունը վարկային կորուստների համար: Տնօրինությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Բանկի բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Բանկի բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև խորհրդակցություն ղեկավարության և Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է արժեքը ներառյալ ռիսկըVaR, ներդրումները, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, արտարժույթի, բաժնետոմսերի արժեքների փոփոխության ռիսկի, պարտքային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Բանկն ակտիվ կիրառում է ապահովումը, իր պարտքային ռիսկի նվազեցման համար (հավելյալ տեղեկությունը տե՛ս ստորև):

36.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

36.1.1 Պարտքային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև

բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 36.1.23536.1.2-ում:

Ներքին վարկանիշեր

	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացառությամբ կանխիկի)				
Ստանդարտ	37,005,454	-	-	37,005,454
Համախառն հաշվեկշռային արժեք	**37,005,454**	**-**	**-**	**37,005,454**
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	**37,005,454**	**-**	**-**	**37,005,454**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	18,562,747	-	-	18,562,747
Համախառն հաշվեկշռային արժեք	**18,562,747**	**-**	**-**	**18,562,747**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(74,652)	-	-	(74,652)
Զուտ հաշվեկշռային արժեք	**18,488,095**	**-**	**-**	**18,488,095**
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	142,069,073	-	-	142,069,073
Ստանդարտ	1,803,416	885,600	-	2,689,016
Ցածր	-	834,826	-	834,826
Չաշխատող	-	-	5,644,245	5,644,245
Համախառն հաշվեկշռային արժեք	**143,872,489**	**1,720,426**	**5,644,245**	**151,237,160**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(1,381,667)	(556,679)	(2,012,298)	(3,950,644)
Զուտ հաշվեկշռային արժեք	**142,490,822**	**1,163,747**	**3,631,947**	**147,286,516**
Առևտրային վարկեր				
Բարձր	49,127,352	-	-	49,127,352
Ստանդարտ	2,229,080	5,715,826	-	7,944,906
Ցածր	-	56,565	-	56,565
Չաշխատող	-	-	1,153,415	1,153,415
Համախառն հաշվեկշռային արժեք	**51,356,432**	**5,772,391**	**1,153,415**	**58,282,238**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(538,169)	(1,327,010)	(163,031)	(2,028,210)
Զուտ հաշվեկշռային արժեք	**50,818,263**	**4,445,381**	**990,384**	**56,254,028**

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	34,690,729	-	-	34,690,729
Համախառն հաշվեկշռային արժեք	**34,690,729**	**-**	**-**	**34,690,729**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(72,427)	-	-	(72,427)
Զուտ հաշվեկշռային արժեք	**34,618,302**	**-**	**-**	**34,618,302**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ վարկանիշ	1,073,505	-	-	1,073,505
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	**1,073,505**	**-**	**-**	**1,073,505**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(2,964)	-	-	(2,964)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	2,484,631	-	-	2,484,631
Համախառն հաշվեկշռային արժեք	**2,484,631**	**-**	**-**	**2,484,631**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(108,159)	-	-	(108,159)
Զուտ հաշվեկշռային արժեք	**2,376,472**	**-**	**-**	**2,376,472**
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Ստանդարտ	**13,315,458**	**-**	**-**	**13,315,458**
Պարտքային կորուստների գծով պահուստ*	(7,018)	-	-	(7,018)

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	39,555,386	-	-	39,555,386
Համախառն հաշվեկշռային արժեք	**39,555,386**	**-**	**-**	**39,555,386**
Պարտքային կորուստների գծով պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	**39,555,386**	**-**	**-**	**39,555,386**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	26,277,797	-	-	26,277,797
Համախառն հաշվեկշռային արժեք	**26,277,797**			**26,277,797**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(94,218)			(94,218)
Զուտ հաշվեկշռային արժեք	**26,183,579**			**26,183,579**

Ներքին վարկանիշեր

	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	103,011,031	-	-	103,011,031
Ստանդարտ	1,100,571	666,499	-	1,767,070
Ցածր	-	733,065	-	733,065
Չաշխատող	-	-	6,376,378	6,376,378
Համախառն հաշվեկշռային արժեք	**104,111,602**	**1,399,564**	**6,376,378**	**111,887,544**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(1,115,446)	(109,333)	(2,511,717)	(3,736,496)
Զուտ հաշվեկշռային արժեք	**102,996,156**	**1,290,231**	**3,864,661**	**108,151,048**
Առևտրային վարկեր				
Բարձր	35,777,108	-	-	35,777,108
Ստանդարտ	15,542	2,974,250	-	2,989,792
Ցածր	-	78,582	-	78,582
Չաշխատող	-	-	4,359,129	4,359,129
Համախառն հաշվեկշռային արժեք	**35,792,650**	**3,052,832**	**4,359,129**	**43,204,611**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(351,279)	(401,503)	(1,237,892)	(1,990,674)
Զուտ հաշվեկշռային արժեք	**35,441,371**	**2,651,329**	**3,121,237**	**41,213,937**
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Բարձր	1,312,856	-	-	1,312,856
Ստանդարտ	33,677,249	-	-	33,677,249
Համախառն հաշվեկշռային արժեք	**34,990,105**	**-**	**-**	**34,990,105**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(101,430)	-	-	(101,430)
Զուտ հաշվեկշռային արժեք	**34,888,675**			**34,888,675**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ վարկանիշ	1,043,802	-	-	1,043,802
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	**1,043,802**	**-**	**-**	**1,043,802**
Պարտքային կորուստների գծով պահուստ	**(2,840)**	**-**	**-**	**(2,840)**
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	1,402,286	-	-	1,402,286
Համախառն հաշվեկշռային արժեք	**1,402,286**	**-**	**-**	**1,402,286**
Պարտքային կորուստների գծով պահուստ	(151,799)	-	-	(151,799)
Զուտ հաշվեկշռային արժեք	**1,250,487**	**-**	**-**	**1,250,487**
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Ստանդարտ	**16,209,408**	**-**	**-**	**16,209,408**
Պարտքային կորուստների գծով պահուստ*	(12,463)	-	-	(12,463)

* Պարտքային կորուստների պահուստը ներկայացնում է Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները: Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում:

Ածանցյալ գործարքների հետևանքով առաջացող պարտքային ռիսկը բացահայտվում է 16 ծանոթագրությունում:

36.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս Ծանոթագրություն 4.6 (գ)):

Ռիսկերի կառավարման նպատակներով պարտքային ռիսկերի գնահատումը բարդ է և պահանջում է մոդելների կիրառում, քանի որ շուկայական պայմաններով, ակնկալվող դրամական հոսքերով և ժամանակային փոփոխություններով պայմանավորված պարտքային ռիսկը կարող է տարբերվել: Ակտիվների պորտֆելի պարտքային ռիսկի գնահատումը պահանջում է հետագա գնահատումներ կատարել՝ կապված պարտազանցման, դրանից բխող կորուստների գործակիցների և գործընկերների միջև պարտազանցման կորելացիաների հավանականության հետ: Բանկը պարտքային ռիսկը գնահատում է պարտազանցման տեղի ունենալու հավանականության (PD), կորուստը պարտազանցման դեպքում (LGD) և պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Սա մոտ է ECL-ի չափման նպատակով կիրառված մոտեցմանը՝ համաձայն ՖՀՄՄ 9-ի:

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը

գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:

- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան):Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալուհավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ թողարկողները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

		2024թ.	2023թ.
	Վարկանիշ	12-ամսյա PD	12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.023%	0.001-0.028%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.040-3.137%	0.047-2.813%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	5.403-27.625%	4.695-21,841%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,

- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապափակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Պարտազանցման սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների նպատակով բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն պարտազանցման ենթարկված է,
- նույն մնացորդի բազմակի վերածևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերածևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- Բանկը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտազանցման

սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է Ծանոթագրություն 4.6 (գ) -ում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Բանկի կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

	2024թ.	2023թ.
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	2,237,113	3,452,253
Փոփոխությունից զուտ օգուտ	351,193	928,965

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են պարտազանցումից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է Ծանոթագրություն 4.6(գ) -ի գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ակնկալվող պարտքային կորուստների մակրոտնտեսական ճշգրտումը հաշվարկելու համար Ընկերությունն օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես իր մոդելների տնտեսական ներածություն, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճ/նվազում
- ՀՆԱ (արտահայտված ՀՀ դրամով)
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանսֆերտներ
- Գործազրկության մակարդակ
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում (%)
- Առևտուր (աճի տեմպ %)
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)
- Շինարարություն (աճի տեմպ %)
- Գյուղատնտեսություն (աճի տեմպ %)
- Արտարժույթի պաշտոնական փոխարժեք
- Գնաճ
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

36.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

	ՀՀ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	49,190,543	2,128,680	646,829	51,966,052
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	349	-	-	349
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,892,452	4,293,534	2,302,109	18,488,095
Հաճախորդներին տրված վարկեր	203,366,282	173,717	545	203,540,544
Իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող արժեթղթեր	-	119,991	-	119,991
Ներդրումային արժեթղթեր	36,442,132	-	-	36,442,132
Այլ ֆինանսական ակտիվներ	256,843	1,541,543	578,086	2,376,472
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**301,148,601**	**8,257,465**	**3,527,569**	**312,933,635**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**255,170,936**	**12,809,699**	**959,970**	**268,940,605**

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտքային ռիսկերը դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացած են ֆինանսական հատվածում, բացառությամբ վարկերի: Տնտեսության ճյուղայնության բաշխումը վարկերի համար տե՛ս Ծանոթագրություն 19-ը:

36.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Բանկը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Անշարժ գույք	131,728,383	87,317,290
Շարժական գույք	3,403,826	3,470,884
Շրջանառու միջոցներ	1,789,538	612,851
Կազմակերպությունների երաշխիքներ	4,219,649	2,932,513
Դրամական միջոցներ	2,078,008	1,392,727
Կենցաղային տեխնիկա	32,937,602	29,556,893
Ապահովվածություն չունեցող	33,362,392	29,808,997
Ընդամենը վարկեր (համախառն)	**209,519,398**	**155,092,155**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի:

Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

36.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

36.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով եկամտաբերության կորի ենթադրվող փոփոխությունները:

Արտարժույթ		2024թ.	2023թ.
	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	**Կապիտալի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**
ՀՀ դրամ	+1	(26,339)	(31,795)
ՀՀ դրամ	-1	27,217	33,122

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2024թ.			2023թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլլար	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Բանկերին տրամադրված վարկեր	-	-	7.74	-	-	8
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	10.75	9	5.04	-	-	5.5
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	-	5.0	2.3	-	5.0	2.3
Առևտրային վարկեր	14.06	11.9	6.46	15.42	10.04	6.17
Հիփոթոքային և սպառողական վարկեր	17.04	9.85	6.23	18.65	12.04	7.07
Ներդրումային արժեթղթեր	9.6	6.3	-	9.6	6.6	2.3
Տոկոսակիր պարտավորություններ						
Վարկեր բանկերից հետգնման պայմանագրերով	-	4.5	-	9.5	-	-
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	7.54	-	14.9	7.23	-	-
Ավանդներ ֆիզիկականկն և իրավաբանական անձանցից	10.2	3.6	2.5	9.7	2.85	2.2
Վարկեր ՀՀ Կառավորությունից	10.9	-	-	6.5	-	-
Ստորադաս փոխառություն	-	12.6	-	-	12.6	-
Սուբորդինացված թողարկված պարտատոմսեր	-	6.25	-	-	-	-
Թողարկված պարտատոմսեր	10.5	5	-	10.8	5	-
Այլ փոխառություններ	-	5.1	4.1	-	11.1	10.9

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված արտարժութային սվոփերի և որպես դրամական միջոցների

հոսքերի հեջ օգտագործված արտարժույթի ֆորվարդների պայմանագրերի իրական արժեքի փոփոխմամբ և կապիտալի գործիքների հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+5	95,493	+5	80,682
Եվրո	+5	(22,287)	+5	(15,922)
ԱՄՆ դոլար	(5)	(95,493)	(5)	(80,682)
Եվրո	(5)	22,287	(5)	15,922

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	31 դեկտեմբերի 2024թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,724,150	26,810,182	2,431,720	51,966,052
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	606,547	13,831,328	4,050,220	18,488,095
Հաճախորդներին տրված վարկեր	150,550,597	52,624,549	365,398	203,540,544
Իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող արժեթղթեր	-	55,757	64,234	119,991
Ներդրումային արժեթղթեր	9,459,029	26,983,103	-	36,442,132
Այլ ֆինանսական ակտիվներ	272,545	1,396,395	707,532	2,376,472
Ընդամենը	**183,612,868**	**121,701,314**	**7,619,104**	**312,933,286**
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,950,416	13,166,739	2,189,549	23,306,704
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	142,213,270	99,936,573	5,386,358	247,536,201
Փոխառություն	653,241	1,829,642	-	2,482,883
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,104,574	8,980,453	-	15,085,027
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,827,545	787	-	2,828,332
Ընդամենը	**159,749,046**	**123,914,194**	**7,575,907**	**291,239,147**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	**-**	**349**	**-**	**349**
Զուտ դիրք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**23,863,822**	**(2,212,531)**	**43,197**	**21,694,488**

	31 դեկտեմբերի 2024թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2024թ. դեկտեմբերի 31-ին	**5,987,635**	**7,327,823**	**-**	**13,315,458**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**134,390,980**	**123,732,918**	**10,805,471**	**268,929,369**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**109,391,544**	**126,431,524**	**10,743,915**	**246,566,983**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	**(2,282,509)**	**2,023,950**	**268,740**	**10,181**
Զուտ դիրք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,716,927**	**(674,656)**	**330,296**	**22,372,567**
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2023թ. դեկտեմբերի 31-ին	**4,750,268**	**11,459,140**	**-**	**16,209,408**

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

36.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 4%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տե՛ս Ծանոթագրություն 15): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտի չենթարկված	
	2024թ., %	2023թ., %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	26.05	31.23
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	79.86	71.06

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս Ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

	31 դեկտեմբերի 2024թ.						
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 – 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16,503,336	105,077	669,750	567,898	8,465,009	26,311,070	23,306,704
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	128,017,909	9,721,700	54,074,781	65,170,236	94,977	257,079,603	247,536,201
Փոխառություններ	11,371	-	33,512	1,014,014	2,294,214	3,353,111	2,482,883
Թողարկված պարտքային արժեթղթեր	73,247	178,381	836,374	13,867,874	3,334,673	18,290,549	15,085,027
Վարձակալության գծով պարտավորություններ	45,903	91,806	370,806	1,289,672	746,073	2,544,260	2,366,028
Այլ ֆինանսական պարտավորություններ	193,586	268,718	-	-	-	462,304	462,304
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**144,845,352**	**10,365,682**	**55,985,223**	**81,909,694**	**14,934,946**	**308,040,897**	**291,239,147**

31 դեկտեմբերի 2024թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 – 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր							
Ներհոսք	165,556	-	-	-	-	165,556	**349**
Արտահոսք	(165,207)	-	-	-	-	(165,207)	-
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**41,860**	**351,940**	**1,152,310**	**9,382,597**	**2,386,751**	**13,315,458**	**13,315,458**

31 դեկտեմբերի 2023թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,331,193	92,269	667,015	425,894	6,700,693	21,217,064	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	128,796,761	16,827,385	57,867,132	11,165,368	73,332	214,729,978	211,193,170
Փոխառություններ	9,344	-	2,557,695	944,232	2,462,817	5,974,088	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	26,875	1,727,575	3,976,247	4,608,546	-	10,339,243	9,347,121
Վարձակալության գծով պարտավորություններ	43,621	87,241	377,387	1,158,676	652,073	2,318,998	1,710,224
Այլ ֆինանսական պարտավորություններ	370,804	310,243	-	-	-	681,047	681,047
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**142,578,598**	**19,044,713**	**65,445,476**	**18,302,716**	**9,888,915**	**255,260,418**	**246,566,983**

31 դեկտեմբերի 2023թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռա-յին արժեք
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Արտարժույթի սվոփ պայմանագրեր							
Ներհոսք	2,023,950	-	-	-	-	2,023,950	**9,970**
Արտահոսք	(2,013,980)	-	-	-	-	(2,013,980)	
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր							
Ներհոսք	268,740	-	-	-	-	268,740	**211**
Արտահոսք	(268,529)					(268,529)	
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	**78,829**	**204,496**	**1,933,921**	**6,377,445**	**7,614,717**	**16,209,408**	**16,209,408**

Բանկի մոտ առկա է էական բացասական կուտակային իրացվելիության ճեղքվածք մինչև մեկ տարվա կտրվածքով: Տե՛ս Ծանոթագրություն 35-ը: Դա այն բանի հետևանք է, որ 2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հիմնական ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ չնայած մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները էական կշիռ են կազմում, վերջին տարիներին ձևավորված փորձը ցույց է տալիս, որ նշված ավանդները հանդիսանում են կայուն և երկարատև ֆինանսավորման աղբյուր:

36.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման վարչությունը, Խորհուրդը, Գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,

- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

37 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների համադրում

	31 դեկտեմբերի 2024թ.				
	Ավանդներ և վարկեր ֆինանսական կազմակերպություններից	**Փոխառություններ**	**Թողարկված պարտքային արժեթղթեր**	**Վարձակալության գծով պարտավորություններ**	**Ընդամենը**
2024թ հունվարի 1-ի դրությամբ	5,543,548	4,914,586	9,347,121	1,710,224	21,515,479
Վճարումներ	(61,128,849)	(2,455,577)	(5,144,495)	(1,294,721)	(70,023,642)
Ստացված գումար	62,447,660	117,495	10,929,529	-	73,494,684
Վարձակալության գծով պարտավորությունների ճշգրտում	-	-	-	1,673,969	1,673,969
Փոխարժեքային տարբերություն	46,366	(101,643)	(155,906)	-	(211,183)
Հաշվարկված տոկոսներ	5,381	8,022	108,778	276,556	398,737
2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,914,106**	**2,482,883**	**15,085,027**	**2,366,028**	**26,848,044**

	31 դեկտեմբերի 2023թ.				
	Ավանդներ և վարկեր ֆինանսական կազմակերպություններից	**Փոխառություններ**	**Թողարկված պարտքային արժեթղթեր**	**Վարձակալության գծով պարտավորություններ**	**Ընդամենը**
2023թ հունվարի 1-ի դրությամբ	2,048,603	4,278,478	9,147,395	1,648,614	17,123,090
Վճարումներ	(1,667,049)	(8,123,212)	-	(898,617)	(10,688,878)
Ստացված գումար	5,276,251	8,750,304	-	-	14,026,555
Վարձակալության գծով պարտավորությունների ճշգրտում	-	-	-	782,559	782,559
Փոխարժեքային տարբերություն	(114,257)	9,016	195,627	-	90,386
Հաշվարկված տոկոսներ	-	-	4,099	177,668	181,767
2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,543,548**	**4,914,586**	**9,347,121**	**1,710,224**	**21,515,479**

38 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր պարտքային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված է ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը 12% (Ն1.2), իսկ առաջին մակարդակի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը՝ 9% (Ն1.1):

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները, ստորադաս փոխառություն:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտի չենթարկված	
	31 դեկտեմբերի 2024թ.	**31 դեկտեմբերի 2023թ.**
Առաջին մակարդակի կապիտալ	32,824,462	29,657,134
Երկրորդ մակարդակի կապիտալ	4,300,000	4,300,000
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**37,124,462**	**33,957,134**
Ռիսկով կշռված ակտիվներ	**310,504,476**	**260,037,478**
Կապիտալի համարժեքության նորմատիվ (Ն1.1)	**11.96%**	**13.06%**

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել է 30,000,000 հազար ՀՀ դրամ:

39 Սեգմենտային հաշվետվություններ

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՄ 8 'Գործառնական սեգմենտներ' ստանդարտի պահանջների:

Հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:


40 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Բանկի իրականացրել է սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ թվով 10,000,000 հատ, յուրաքանչյուրը 390 ՀՀ դրամ տեղաբաշխման արժեքով, բաց բաժանորդագրության միջոցով: Բաժանորդագրությունը սկսվել է 2025թ-ի փետրվարի 3-ին և ավարտվել է 2025թ-ի ապրիլի 7-ին: 2025թ. մայիսի 14-ին բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում կիաստատվի փոփոխված կանոնադրությունը:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2023թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9

Հ. + 374 10 500 964
Ֆ.+ 374 10 500 961

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia

T + 374 10 500 964
F + 374 10 500 961

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և

ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

- *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 36.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և այլն):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության

անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական

ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

– Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը հանդիսանում է Նաիրա Ուլունցը:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նաիրա Ուլունց
Առաջադրանքի պատասխանատու

25 ապրիլի 2024թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2023	2022
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	25,242,783	19,984,152
Այլ տոկոսային եկամուտ	6	2,692	3,591
Տոկոսային ծախսեր	6	(9,302,421)	(10,072,314)
Զուտ տոկոսային եկամուտներ		15,943,054	9,915,429
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	5,665,379	11,843,885
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(1,924,180)	(2,685,090)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		3,741,199	9,158,795
Զուտ առևտրային եկամուտ	8	7,741,691	14,476,869
Այլ եկամուտներ	9	830,414	966,177
Պարտքային կորուստների գծով ծախս	10	(3,216,147)	(17,241,935)
Վնաս պարտքի զիջումից	11	(2,407,241)	-
Ներդրումային արժեթղթերի սկզբնական ճանաչումից վնաս	20	(303,964)	-
Անձնակազմի գծով ծախսեր	12	(7,479,231)	(5,593,768)
Հիմնական միջոցների մաշվածություն	21	(1,450,435)	(1,203,950)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22	(679,425)	(201,995)
Այլ ծախսեր	13	(6,331,998)	(4,607,873)
Շահույթ մինչև հարկումը		6,387,917	5,667,749
Շահութահարկի գծով ծախս	14	(1,933,719)	(1,270,724)
Տարվա շահույթ		4,454,198	4,397,025

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ		2023	2022
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)		47,342	(83,368)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		(4,980)	(3,034)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(6,935)	15,552
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի զծով զուտ օգուտ/(վնաս)		35,427	(70,850)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ շահութահարկից հետո		35,427	(70,850)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		4,489,625	4,326,175
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	15	0,0217275	0,0197624

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ։

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	55,669,030	100,012,097
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17	11,236	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18	26,183,579	31,943,460
Հաճախորդներին տրված վարկեր	19	149,364,985	119,828,158
Ներդրումային արժեթղթեր	20	27,074,022	44,730,472
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	20	9,387,266	5,175,583
Հիմնական միջոցներ	21	10,285,957	10,896,975
Ոչ նյութական ակտիվներ	22	3,355,572	3,687,879
Այլ ակտիվներ	23	7,538,337	3,791,168
Ընդամենը՝ ակտիվներ		288,869,984	320,065,792
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	18,720,835	16,603,170
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	211,193,170	252,805,069
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	17	1,055	5,246
Փոխառություններ	26	4,914,586	4,278,478
Թողարկված պարտքային արժեթղթեր	27	9,347,121	9,147,395
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		726,560	311,014
Հետաձգված հարկային պարտավորություն	14	539,849	281,440
Այլ պարտավորություններ	28	2,825,940	2,517,120
Ընդամենը՝ պարտավորություններ		248,269,116	285,948,932

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի, 2023թ.	31 դեկտեմբերի, 2022թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	22,425,447	21,588,653
Էմիսիոն եկամուտ		11,279,227	9,605,638
Գլխավոր պահուստ		686,316	641,779
Այլ պահուստներ		1,440,850	1,484,830
Չբաշխված շահույթ		4,769,028	795,960
Ընդամենը՝ սեփական կապիտալ		40,600,868	34,116,860
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		288,869,984	320,065,792

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2024թ. ապրիլի 4-ին:

Հակոբյան Մեսրոպ
Վարչության նախագահ

Գոհար Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	21,588,653	9,605,638	641,779	(24,983)	1,509,813	795,960	34,116,860
Տարվա շահույթ	-	-	-	-	-	4,454,198	4,454,198
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(79,407)	79,407	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	47,342	-	-	47,342
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	(4,980)	-	-	(4,980)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(6,935)	-	-	(6,935)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	35,427	(79,407)	4,533,605	4,489,625
Բաժնետիրական կապիտալի ավելացում	836,794	1,673,589	-	-	-	-	2,510,383
Հատկացում պահուստին	-	-	44,537	-	-	(44,537)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(516,000)	(516,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	836,794	1,673,589	44,537	-	-	(560,537)	1,994,383
Հաշվեկշիռը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,425,447	11,279,227	686,316	10,444	1,430,406	4,769,028	40,600,868

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	21,588,653	9,605,638	641,779	45,867	1,686,412	(2,797,297)	30,771,052
Տարվա շահույթ	-	-	-	-	-	4,397,025	4,397,025
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(176,599)	176,599	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	(83,368)	-	-	(83,368)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	(3,034)	-	-	(3,034)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	15,552	-	-	15,552
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(70,850)	(176,599)	4,573,624	4,326,175
Շահաբաժիններ բաժնետերերին	-		-	-	-	(980,367)	(980,367)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	-	-	-	(980,367)	(980,367)
Հաշվեկշիռը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,588,653	9,605,638	641,779	(24,983)	1,509,813	795,960	34,116,860

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ։

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2023	2022
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	6,387,917	5,667,749
Ճշգրտումներ		
Պարտքային կորուստների գծով ծախս	3,216,146	17,241,935
Այլ ակտիվների իրացումից վնասներ	489,531	34,468
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	2,129,860	1,405,945
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	366,872	26,546
Վնաս պարտքի զիջումից	2,407,241	-
Ներդրումային արժեթղթերի սկզբնական ճանաչումից վնաս	303,964	-
Ստացվելիք տոկոսներ	(14,098)	(19,581)
Վճարվելիք տոկոսներ	81,318	108,607
Ածանցյալ գործիքների վերագնահատում	(15,427)	(382)
Այլ հաշվեգրումներ	91,639	-
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ (օգուտ)/վնաս	169,905	(150,124)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	15,614,868	24,315,163
Ավելացում/(նվազում) գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,864,598	(19,625,210)
Հաճախորդներին տրված վարկեր	(31,132,594)	(13,790,008)
Այլ ակտիվներ	(7,209,847)	3,188,011
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(1,224,663)	12,198,555
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(43,880,609)	90,486,543
Այլ պարտավորություններ	616,834	275,647
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը	(62,351,413)	97,048,701
Վճարված շահութահարկ	(1,266,699)	-
Գործառնական գործունեությունից ստացված /(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	(63,618,112)	97,048,701

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	14,414,725	(34,939,608)
Հիմնական միջոցների առք	(1,201,041)	(950,260)
Հիմնական միջոցների վաճառք	549,616	494,620
Ոչ նյութական ակտիվների առք	(356,870)	(1,161,125)
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	13,406,430	(36,556,373)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	2,510,383	-
Շահաբաժինների վճարում	(516,000)	(543,224)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ներգրավում/(մարում)	3,609,202	(4,914,832)
Պարտքային արժեթղթերի մարում	-	(1,433,631)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(898,617)	(799,130)
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ներգրավում	627,092	1,518,594
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	5,332,060	(6,172,223)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(44,879,622)	54,320,105
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	100,012,097	63,239,222
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	536,555	(17,547,230)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 16)	55,669,030	100,012,097
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	25,228,685	19,964,571
Վճարված տոկոսներ	(9,332,355)	(9,963,707)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ։

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 2001թ. հոկտեմբերի 9-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2001թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N81 արտոնագրային համարով:

2015թ. հունիսի 23-ին համաձայն Բանկի Գրանցման թիվ 0373 վկայականի «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմավորվեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ՝ թողարկելով 14,500,000 հատ բաժնետոմս:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, (ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը), ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկն ունի 50 մասնաճյուղ ՀՀ-ում և մեկ ներկայացուցչություն ՌԴ Մոսկվա քաղաքում, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենց 12 շենք թիվ 53, թիվ 1-5:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի աշխատակիցների թիվը կազմում էր 823 (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 819):

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են Ռուսաստանի՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների դեմ տնտեսական խիստ պատժամիջոցների մասին: Պատերազմը դեռ շարունակվում է, բայց արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը դրսևորել և շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Տնտեսական աճի և ակտիվության տեմպերը շարունակում են բարձր մնալ՝ պայմանավորված նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքով: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում բիզնես շահեր ունենալու, հիմնելու կամ տնօրինելու իրավունքի սահմանափակումներ չկան:

Բիզնեսի գրանցման ընթացակարգերը հիմնականում պարզ են: Օտարերկրյա քաղաքացիների սպասարկման արդյունքում 2022-2023թթ. Հայաստանի բանկերն արձանագրել են միջնորդական գործունեությունից եկամտի զգալի աճ:

2023 թվականի օգոստոսի 25-ին Standard & Poor's-ը բարձրացրել է Հայաստանի վարկային վարկանիշը մինչև «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Moody's-ի Հայաստանի վարկային վարկանիշը վերջին անգամ սահմանվել է «Ba3» մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ 2023 թվականի հունիսի 22-ին: Fitch Ratings-ի կողմից Հայաստանի թողարկողի դեֆոլտի վարկանիշը 2023թ-ի հուլիսին «B+»-ից դարձել է «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված վարկանիշի բարձրացումն արտացոլում է տնտեսական աճի ուժեղ հեռանկարները, պետական պարտքի կայունացումը միջինից ցածր մակարդակներում, կայուն հարկաբյուջետային կատարողականի հեռանկարը և արտաքին հաշվեկշռի բարելավումը:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Բանկի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Բանկն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, նորմատիվային կապիտալի պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Բանկի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ, հողի, շինությունների և համակարգչային և կապի միջոցների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության փոփոխություններ

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄ 17 Ապահովագրության պայմանագրեր և ՖՀՄՄ 17 Ապահովագրության պայմանագրերի փոփոխություններ

- *Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ (ՀՀՄՄ 12 փոփոխություններ)*
- *Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՄ 1-ի և ՖՀՄՄ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)*
- *Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՄ 8 փոփոխություններ),*
- *Միջազգային հարկային բարեփոխումների օրինակելի կանոններ – երկրորդ բաղադրիչ (ՀՀՄՄ 16 փոփոխություններ)*

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՄ 1 փոփոխություններ),*
- *Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում (ՖՀՄՄ 16 փոփոխություններ),*
- *Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ (ՀՀՄՄ 7 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ),*
- *Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՄ 1 փոփոխություններ)*
- *Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՄ 21 փոփոխություններ)*

– *ՖՀՄՍ S1 -ընդհանուր պահանջներ կայունության հետ կապված ֆինանսական տեղեկատվության բացահայտման համար և ՖՀՄՍ S2- կլիմայի հետ կապված բացահայտումներ։*

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4.4.6 ծանոթագրությունում:

Այլ տոկոսային եկամուտ

Այլ տոկոսային եկամտի հաշվարկում անվանական տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն արժեքի նկատմամբ գծային հիմունքով:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված օգուտը և վնասը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև

արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	404.79	393.57
ՀՀ դրամ/1 Եվրո	447.90	420.06
ՀՀ դրամ/1 Ռուբ	4.50	5.59

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն

հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,

- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակայինօգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՝ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 36.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են 36.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական

ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է փոխատվության հանձնառությանամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի

    վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորստներից առանձին՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից:

Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և:

– Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում զուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.8 Հաճախորդներին տրված վարկեր

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.10 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են 20 ծանոթագրությունում: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,

- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.12 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը և համակարգչային տեխնիկա և կապի միջոցները ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	25	4
Համակարգչային տեխնիկա	5	20
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	10	10
Բանկոմատներ	10	10
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշված օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Բռնագանձված ակտիվներ

Բանկի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Բանկի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.16 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.17 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.18 Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Բանկի թողարկված ոչ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը համապատասխանում են փոխատվության հանձնառության սահմանմանը և կիրառում է ՖՀՄՍ 9-ը:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.19 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխավորությունների և

փոխատվության հանձնառությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.19 ծանոթագրությունում:

4.20 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.21 Սեգմենտների ներկայացում

ՖՀՄՍ 8-ի համաձայն՝ Բանկի գործառնությունները առանձնացված չեն գործառնական սեգմենտների և ամբողջական բիզնես միավոր են: Բանկի գործառնությունների վերաբերյալ որոշումներ կայացնող գլխավոր մարմինը որոշումներ է կայացնում համատեղ արդյունքների հիման վրա, և ոչ մի օպերացիոն սեգմենտ չի հանվում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետության տարածքում:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

5.1 Դատողություններ

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս 4.4.2 ծանոթագրությունը):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբերող չափանիշների սահմանում

Բանկը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

5.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տե՛ս ծանոթագրություն 33):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս ծանոթագրություն 36.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 31:

6 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	20,910,808	17,376,277
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	82,146	71,638
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	2,984,250	1,691,510
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,263,760	801,147
Եկամուտ ֆինանսական երաշխավորության պայմանագրերից	-	408
Հակադարձ ռեպո գործառնություններ	1,819	43,172
	25,242,783	19,984,152

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	2,692	3,591
Ընդամենը տոկոսային եկամուտ	25,245,475	19,987,743

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	7,296,056	8,021,034
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	234,039	222,286
Կառավարության վարկեր	79,302	97,363
Ռեպո գործառնություններ	810,458	613,632
Փոխառություններ	168,746	223,003
Վարձակալության գծով պարտավորություններ	177,668	180,991
Թողարկված պարտքային արժեթղթեր	536,152	703,800
Այլ տոկոսային ծախս	-	10,205
Ընդամենը տոկոսային ծախս	9,302,421	10,072,314
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	15,943,054	9,915,429

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Դրամարկղային գործառնություններ	1,316,796	7,232,521
Վճարային քարտերով գործառնություններ	2,652,646	3,287,724
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	26,396	17,585
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	1,377,121	1,059,868
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	292,420	246,187
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	5,665,379	11,843,885

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	376,502	493,198
Վճարային քարտերով գործառնություններ	1,187,677	925,213
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	42,691	1,224,468
Բորսայական ծառայություններ	50,077	31,379
Հաճախորդների ներգրավման գծով ծախսեր	249,894	-
Այլ ծախսեր	17,339	10,832
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	1,924,180	2,685,090

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	7,850,398	15,574,604
Ածանցյալ գործիքներից զուտ վնաս	(108,707)	(1,097,735)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	7,741,691	14,476,869

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Ստացված տույժեր և տուգանքներ	758,709	736,544
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումից զուտ օգուտ	-	150,124
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտներ	20,435	-
Ֆինանսական երաշխիքների գծով օգուտ	-	563
Այլ եկամուտ	51,270	78,946
Ընդամենը այլ եկամուտներ	830,414	966,177

10 Պարտքային կորուստների գծով ծախս/(ծախսի հակադարձում)

Հազար ՀՀ դրամ					2023
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը 2022թ.
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18	(10,656)	-	-	(10,656)
Հաճախորդներին տրված վարկեր	19	80,591	(589,241)	3,283,592	2,774,942
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	(2,140)	-	-	(2,140)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20	(106,276)	-	-	(106,276)
Այլ ակտիվներ	23	616,667	-	-	616,667
Ֆինանսական երաշխավորություններ	30	(56,390)	-	-	(56,390)
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(ծախսի հակադարձում)		521,796	(589,241)	3,283,592	3,216,147

Հազար ՀՀ դրամ					2022
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը 2021թ.
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18	(47,133)	-	-	(47,133)
Հաճախորդներին տրված վարկեր	19	(63,082)	56,015	17,168,612	17,161,545
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	(3,034)	-	-	(3,034)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20	65,340	-	-	65,340
Այլ ակտիվներ	23	34,498	-	-	34,498
Ֆինանսական երաշխավորություններ	30	30,719	-	-	30,719
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(ծախսի հակադարձում)		17,308	56,015	17,168,612	17,241,935

11 Վնաս պարտքի զիջումից

2023թ սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից վերսկսվեց ռազմական գործողություններն Լեռնային Ղարաբաղի տարածքում, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը տեղահանվեց իր բնակության տարածքներից և Լեռնային Ղարաբաղի նախագահը ստորագրեց հրամանագիր՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը գերատեսչական ենթակայության բոլոր պետական հիմնարկների և կազմակերպությունների լուծարման մասին։

Հայաստանի Հանրապետությունում գործող ֆինանսական կազմակերպությունները՝ այդ թվում «Յունիբանկ» ԲԲԸ-ն, ունեին ստորև նշված ներդրումները.

- Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերում ներդրումներ,

- ֆիզիկական անձանց տրված վարկեր:

Հաշվի առնելով տուժած ֆինանսական կազմակերպությունների կրած կորուստների վերականգնման կարևորությունը տնտեսության զարգացման վրա՝ 2023թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկսեց իրականացնել միջոցառումներ զինված հակամարտության հետևանքով տուժած Ֆինանսական կազմակերպություններին աջակցման նպատակով:

2023թ դեկտեմբերին ՀՀ կառավարությունը կայացրեց որոշում, համաձայն որի Կառավարությունը թողարկում է 9.6% արժեկտրոնային եկամտաբերությամբ պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր՝ Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա կողմից ստեղծված հիմնադրամների և ֆիզիկական անձանց նկատմամբ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների զիջման դիմաց տեղաբաշխելու համար:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ՀՀ կառավարությանն է զիջել 7,876,602 հազ. ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերում ներդրումների և 147,537 հազ. ՀՀ դրամ ֆիզիկական անձանց վարկերի նկատմամբ (Ծանոթագրություն 19, 20) պահանջի իրավունքը, որի դիմաց ստացել է ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր ընդհանուր 5,616,898 հազ. ՀՀ դրամ նոմինալ արժեքով: Փոխարինելու պահին ստացված պարտատոմսերի անվանական արժեքը համապատասխանում էր զիջված պահանջի իրավունքի գումարի 70%-ին, որի արդյունքում Բանկը կրել է 2,407,241 հազ. ՀՀ դրամ գումարի չափով վնաս պարտքի զիջումից գործարքի ամսաթվի դրությամբ:

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	7,411,376	5,574,196
Անձնակազմի ուսուցման և այլ ծախսեր	67,855	19,572
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	7,479,231	5,593,768

13 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	553,024	708,236
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	191,951	100,978
Գովազդի ծախսեր	438,901	298,146
Գործուղման ծախսեր	76,618	54,311
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	431,553	307,466
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	633,287	950,689

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումից զուտ վնաս	169,905	-
Այլ ակտիվների իրացումից զուտ վնաս	489,531	34,468
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	183,989	173,886
Անվտանգության գծով ծախսեր	207,961	235,029
Ներկայացուցչական ծախսեր	240,645	264,619
Գրասենյակային ծախսեր	169,555	199,559
Վճարված տուգանքներ	120,000	62,353
Ավանդների ապահովագրություն	490,704	365,846
Համակարգչային ծրագրերի սպասարկում	692,891	52,884
Ինկասացիոն ծառայություններ	98,143	89,880
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	366,872	26,546
Թարնկարժեք մետաղներով գործառնություններից ծախսեր	4,931	37,509
Բարեգործական նվիրատվություններ	180,826	168,317
Այլ ծախսեր	590,711	477,151
Ընդամենը այլ ծախսեր	6,331,998	4,607,873

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,682,245	534,753
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	-	(41,356)
Հետաձգված հարկ	251,474	777,327
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,933,719	1,270,724

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2023	Արդյունավետ դրույքաչափ (%)	2022	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	6,387,917		5,667,749	-
Շահութահարկ	1,149,825	18	1,020,195	18
Զուտ չնվազեցվող ծախսեր	753,311	12	318,907	5
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	-	-	(41,356)	-
Արտարժույթի բացասական/ (դրական) փոխարժեքային տարբերություն	30,583	-	(27,022)	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,933,719	30	1,270,724	23

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	01 հունվարի 2023	31 դեկտեմբերի 2023				
	Զուտ մնացորդ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(33,170)	8,929	-	(24,241)	-	(24,241)
Ներդրումներ արժեթղթերում	42,871	36,095	(6,935)	72,031	72,031	-
Հաճախորդներին տրված վարկեր	(26,378)	(353,391)	-	(379,769)	-	(379,769)
Հիմնական միջոցներ	(299,676)	33,647	-	(266,029)	-	(266,029)
Այլ պարտավորություններ	34,913	23,246	-	58,159	58,159	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(281,440)	(251,474)	(6,935)	(539,849)	130,190	(670,039)

Հազար ՀՀ դրամ	01 հունվարի 2022			31 դեկտեմբերի 2022		
	Զուտ մնացորդ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	(33,170)	-	(33,170)	-	(33,170)
Ներդրումներ արժեթղթերում	18,983	8,336	15,552	42,871	42,871	-
Հաճախորդներին տրված վարկեր	589,322	(615,700)	-	(26,378)	-	(26,378)
Հիմնական միջոցներ	(343,136)	43,460	-	(299,676)	-	(299,676)
Այլ ակտիվներ	170,909	(170,909)	-	-	-	-
Այլ պարտավորություններ	44,257	(9,344)	-	34,913	34,913	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	480,335	(777,327)	15,552	(281,440)	77,784	(359,224)

15 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Տարվա շահույթ	4,454,198	4,397,653
Հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	(516,000)	(980,997)
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող զուտ շահույթ	3,938,198	3,416,656
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	181,254,472	172,886,525
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0,0217275	0,0197624

16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Կանխիկ դրամական միջոցներ	16,113,644	16,728,190
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	36,948,806	71,446,838
Նոստրո հաշիվներ այլ բանկերում	2,606,580	11,837,069
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	55,669,030	100,012,097

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 4%-ի չափով և արտարժույթով ներգրաված միջոցների 18%-ի չափով: Բանկերը արտարժույթով ներգրաված միջոցների 12%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 6%-ը՝ արտարժույթով:

ՀՀ դրամով պահվող պահուստները ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Պահուստները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 28,051,811 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 37,090,829 հազար դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,062,122 հազար դրամ գումարով (41%) թղթակցային հաշիվները կենտրոնացված են երկու բանկում, (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,541,050 հազար դրամը՝ (40%) մեկ բանկում):

2023թ. ընթացքում իրականացվել է վարկային պարտավորությունների մարում գրավի սեփականության իրավունքի փոխանցման միջոցով 1,069,605 հազար դրամ գումարով (2022թ. ՝ 1,269,391 հազար դրամ):

17 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոփերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոփային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավո-րությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	2,013,980	11,025	1,055
Արտարժութային ֆորվարդ պայմանագիր	268,529	211	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		11,236	1,055

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	1,973,097	-	5,246
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		-	5,246

18 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	790,000	785,000
Դեպոնացված միջոցներ այլ բանկերում	2,480,385	2,324,109
Բանկերում ներդրված ավանդներ	3,331,913	5,131,505
Բանկերին տրամադրված վարկեր	17,094,524	23,535,582
Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	2,580,975	272,138
	26,277,797	32,048,334
Պարտքային կորուստների պահուստ	(94,218)	(104,874)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	26,183,579	31,943,460

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

Դեպոնացված միջոցները բանկերում իրենցից ներկայացնում են Master Card և Visa վճարային համակարգերով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք բանկերի տրված վարկեր և ավանդներ , որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այս մնացորդների համախառն արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 14,092,730 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16,305,228 հազար դրամ, որը տրամադրվել է չորս բանկերի):

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստը հունվարի 1-ի դրությամբ	104,874	152,007
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(10,656)	(47,133)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	94,218	104,874

19 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			31 դեկտեմբերի 2022թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	32,367,317	(230,792)	32,136,525	12,103,050	(120,188)	11,982,862
Սպառողական վարկեր	79,520,227	(3,505,704)	76,014,523	75,012,752	(3,775,220)	71,237,532
	111,887,544	(3,736,496)	108,151,048	87,115,802	(3,895,408)	83,220,394
Առևտրային վարկեր						
Արդյունաբերություն	7,405,037	(1,186,776)	6,218,261	7,897,064	(2,310,543)	5,586,521
Գյուղատնտեսություն	2,897,358	(54,365)	2,842,993	819,797	(55,603)	764,194
Շինարարություն	7,815,868	(138,931)	7,676,937	3,793,590	(108,374)	3,685,216
Տրանսպորտ	581,118	(13,141)	567,977	6,399,454	(2,751,468)	3,647,986
Առևտուր	7,946,239	(233,823)	7,712,416	7,156,386	(229,219)	6,927,167
Սպասարկում	8,654,049	(158,443)	8,495,606	6,709,463	(316,360)	6,393,103
Այլ	7,904,942	(205,195)	7,699,747	10,524,505	(920,928)	9,603,577
	43,204,611	(1,990,674)	41,213,937	43,300,259	(6,692,495)	36,607,764
Ընդամենը	155,092,155	(5,727,170)	149,364,985	130,416,061	(10,587,903)	119,828,158

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել փոխատվության հանձնառության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 1,069,605 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,269,391 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ փոխառու և կապակցված կողմերի խումբ, որոնց վարկի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այս վարկերի համախառն արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 4,384,708 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,870,879 հազար դրամ, համախառն վարկային պորտֆել, որը տրամադրվել է երկու փոխառու և կապակցված կողմերի խմբին): Նշված վարկերի գծով պարտքային կորուստների պահուստը կազմում է 21,051 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,584,168 հազար դրամ):

2023թ դեկտեմբերի ՀՀ կառավարության որոշման հիման վրա Բանկը ՀՀ կառավարությանն է զիջել 147,537 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի պահանջի իրավունքը, որի դիմաց ստացել է ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր 103,276 նոմինալ արժեքով (տես ծանոթագրություն 11): Ղեկավարության գնահատմամբ մոտ էր վարկերի իրական արժեքին: Վարկերի զիջումից վնասը կազմել է 44,261 հազար դրամ:

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ				2023
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հուվարի 1-ի դրությամբ	78,562,744	1,542,293	7,010,765	87,115,802
Սկզբնավորված նոր ակտիվներ	75,266,721	664,282	1,804,647	77,735,650
Մարված ակտիվներ	(46,759,247)	(819,395)	(4,410,343)	(51,988,985)
- փոխանցում Փուլ 1	878,632	(216,144)	(662,488)	-
- փոխանցում Փուլ 2	(1,039,289)	1,100,082	(60,793)	-
- փոխանցում Փուլ 3	(3,324,858)	(880,149)	4,205,007	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	526,899	8,595	60,309	595,803
Վերականգնում	-	-	3,044,882	3,044,882
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(4,615,608)	(4,615,608)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,111,602	1,399,564	6,376,378	111,887,544

Հազար ՀՀ դրամ				2023
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հուվարի 1-ի դրությամբ	25,522,146	161,322	17,616,791	43,300,259
Սկզբնավորված նոր ակտիվներ	33,750,194	-	48,496	33,798,690
Մարված ակտիվներ	(21,647,153)	(51,523)	(6,667,559)	(28,366,235)
- փոխանցում Փուլ 1	132,614	(18,245)	(114,369)	-
- փոխանցում Փուլ 2	(446,371)	3,074,868	(2,628,497)	-
- փոխանցում Փուլ 3	(1,917,098)	(115,579)	2,032,677	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	398,318	1,989	136,539	536,846
Վերականգնում	-	-	1,533,823	1,533,823
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(7,598,772)	(7,598,772)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	35,792,650	3,052,832	4,359,129	43,204,611

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հուվարի 1-ի դրությամբ	71,459,875	1,315,156	10,138,209	82,913,240
Սկզբնավորված նոր ակտիվներ	73,841,074	944,115	3,453,346	78,238,535
Մարված ակտիվներ	(60,433,762)	(896,646)	(5,015,039)	(66,345,447)
- փոխանցում Փուլ 1	959,967	(291,816)	(668,151)	-
- փոխանցում Փուլ 2	(981,558)	1,067,571	(86,013)	-
- փոխանցում Փուլ 3	(3,168,742)	(555,621)	3,724,363	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	(3,114,110)	(40,466)	(718,124)	(3,872,700)
Վերականգնում	-	-	2,547,509	2,547,509
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(6,365,335)	(6,365,335)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	78,562,744	1,542,293	7,010,765	87,115,802

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հուվարի 1-ի դրությամբ	49,339,112	203,686	13,460,610	63,003,408
Սկզբնավորված նոր ակտիվներ	21,647,960	54,366	62,183	21,764,509
Մարված ակտիվներ	(18,353,970)	(56,601)	(2,668,191)	(21,078,762)
- փոխանցում Փուլ 1	284,643	(50,750)	(233,893)	-
- փոխանցում Փուլ 2	(128,513)	153,146	(24,633)	-
- փոխանցում Փուլ 3	(21,618,806)	(119,544)	21,738,350	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	(5,648,280)	(22,981)	(1,458,224)	(7,129,485)
Վերականգնում	-	-	1,090,788	1,090,788
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(14,350,199)	(14,350,199)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,522,146	161,322	17,616,791	43,300,259

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ				2023
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	974,832	124,987	2,795,589	3,895,408
- փոխանցում Փուլ 1	257,192	(15,080)	(242,112)	-
- փոխանցում Փուլ 2	(17,969)	40,279	(22,310)	-
- փոխանցում Փուլ 3	(56,017)	(86,026)	142,043	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(792,564)	(24,988)	787,058	(30,494)
Նոր տրամադրված վարկեր	749,972	70,161	622,175	1,442,308
Վերականգնում	-	-	3,044,882	3,044,882
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(4,615,608)	(4,615,608)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,115,446	109,333	2,511,717	3,736,496

Հազար ՀՀ դրամ				2023
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	211,851	7,395	6,473,249	6,692,495
- փոխանցում Փուլ 1	35,138	(453)	(34,685)	-
- փոխանցում Փուլ 2	(1,439)	1,035,628	(1,034,189)	-
- փոխանցում Փուլ 3	(17,454)	(6,653)	24,107	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(103,271)	(634,414)	1,861,917	1,124,232
Նոր տրամադրված վարկեր	226,454	-	12,442	238,896
Վերականգնում	-	-	1,533,823	1,533,823
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(7,598,772)	(7,598,772)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	351,279	401,503	1,237,892	1,990,674

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	944,281	97,683	3,462,884	4,504,848
- փոխանցում Փուլ 1	287,606	(17,433)	(270,173)	-
- փոխանցում Փուլ 2	(14,926)	51,359	(36,433)	-
- փոխանցում Փուլ 3	(52,593)	(55,662)	108,255	
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(858,854)	(32,131)	2,747,204	1,856,219
Նոր տրամադրված վարկեր	669,318	81,171	601,678	1,352,167
Վերականգնում	-	-	2,547,509	2,547,509
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(6,365,335)	(6,365,335)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	974,832	124,987	2,795,589	3,895,408

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	168,515	3,900	5,826,332	5,998,747
- փոխանցում Փուլ 1	11,337	(1,261)	(10,076)	-
- փոխանցում Փուլ 2	(261)	261	-	-
- փոխանցում Փուլ 3	(94,194)	(2,480)	96,674	-
Կորուստների զծով պահուստների զուտ վերաչափում	(3,475)	2,351	13,799,899	13,798,775
Նոր տրամադրված վարկեր	129,929	4,624	19,831	154,384
Վերականգնում	-	-	1,090,788	1,090,788
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(14,350,199)	(14,350,199)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	211,851	7,395	6,473,249	6,692,495

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել համախառն պորտֆելի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 36.1.2 ծանոթագրությունում:

2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 4,914,274 հազար դրամ համախառն գումարով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 890,132 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը գրավադրված է ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և 745,480 հազար դրամ համախառն գումարով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,317,314 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը՝ ՀՀ կառավարությունից ստացված վարկերի դիմաց (տես ծանոթագրություն 24, 26):

Ինչպես նշված է 33 ծանոթագրությունում, 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 35 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 36 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 32 ծանոթագրությունում:

20 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
Պետական պարտատոմսեր	22,783,607	35,171,110
Կորպորատիվ պարտատոմսեր	2,793,618	8,712,976
Պարտքային կորուստների պահուստ	(75,816)	(181,791)
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	25,501,409	43,702,295
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	9,412,880	5,201,498
Պարտքային կորուստների պահուստ	(25,614)	(25,915)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9,387,266	5,175,583
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	34,888,675	48,877,878

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ՀՀ կառավարությանն է զիջել Լեռնային Ղարաբաղի և նրա հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերում ներդրումների (Ծանոթագրություն 11) պահանջի իրավունքը 7,876,602 հազար ՀՀ դրամ, որի դիմաց ստացել է ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր 5,513,622 հազար ՀՀ դրամ նոմինալ արժեքով: Արժեթղթերից զիջումից վնասը կազմել է 2,362,980 հազար դրամ:

Ստացված արժեթղթերը դասակարգվել են, որպես ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր: Արժեթղթերի սկզբնական արժեքի ճշտման արդյունքում Բանկը կրել է 303,964 հազար ՀՀ դրամ գումարով վնաս, գործարքի ամսաթվի դրությամբ:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023	2022
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	207,706	142,366
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(106,276)	65,340
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	101,430	207,706

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.		31 դեկտեմբերի 2022թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
Պետական պարտատոմսեր	6.25-11	2024-2033	1.50-11	2023-2025
Կորպորատիվ պարտատոմսեր	3.75-5	2024-2025	3.75-11.75	2023-2029

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	1,043,802	999,534
ՀՀ բաժնային գործիքներ	528,811	28,643
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,572,613	1,028,177

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023	2022
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	4,980	8,014
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(2,140)	(3,034)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,840	4,980

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Բանկը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2022թ.-ի ընթացքում՝ նույնպես):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.		31 դեկտեմբերի 2022թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	11	2028	11	2028

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերում ներառված բաժնային արժեթղթերը ստորև ներկայացվող չգնանշվող բաժնային արժեթղթերն են.

Անվանումը	Գրանցման երկիրը	Վերահսկվող %		Հազար ՀՀ դրամ	
		2023	2022	2023	2022
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	1.25	1.25	16,500	16,500
ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ	Հայաստանի Հանրապետություն	2.54	2.54	12,143	12,143
				28,643	28,643

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում, Բանկի պարտազանցման բացակայության դեպքում գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով, բայց գործընկերոջ կողմից պայմանագրի ժամկետի ավարտին արժեթղթերը հետ վերադարձնելու պայմանով: Բանկը սահմանել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերն ու հատույցները և հետևաբար, չի ապաճանաչում դրանք: Գրավադրված արժեթղթերի դիմաց հաշվառվող պարտավորությունները ներկայացված են 24 ծանոթագրությունում:

21 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Վարձակալ. ակտ. միջ. գծով կապ. ներդր.	Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա-միջոցներ	Գրասենյակային սարքավորումներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք /վերագնահատված արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	6,311,465	435,962	1,364,497	234,852	4,954,965	2,303,649	15,605,390
Ավելացում	-	23,232	201,443	301,993	423,592	560,769	1,511,029
Վերաչափում	-	-	-	-	-	343,685	343,685
Օտարում	(369,853)	(3,246)	(5,984)	(132,615)	(155,838)	(41,859)	(709,395)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,941,612	455,948	1,559,956	404,230	5,222,719	3,166,244	16,750,709

	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ. գծով կապ. ներդր.	Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա-միջոցներ	Գրասենյակային սարքավորումներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Ավելացում	670,779	5,268	169,524	90,251	265,219	554,863	1,755,904
Վերաչափում	-	-	-	-	-	309,247	309,247
Օտարում	(1,130,846)	(14,867)	(43,870)	(31,653)	(138,859)	(155,416)	(1,515,511)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,481,545	446,349	1,685,610	462,828	5,349,079	3,874,938	17,300,349
Կուտակված մաշվածություն							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	79,962	60,107	857,080	79,341	2,916,953	844,570	4,838,013
Տարվա ծախս	79,068	11,393	154,712	26,925	425,724	506,128	1,203,950
Օտարում	(8,481)	(3,246)	(5,984)	(76,602)	(52,417)	(41,499)	(188,229)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	150,549	68,254	1,005,808	29,664	3,290,260	1,309,199	5,853,734
Տարվա ծախս	307,670	9,623	133,838	42,586	429,815	526,903	1,450,435
Օտարում	(70,297)	(7,719)	(42,244)	(11,573)	(94,592)	(63,352)	(289,777)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	387,922	70,158	1,097,402	60,677	3,625,483	1,772,750	7,014,392
Հաշվեկշռային արժեք							
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,791,063	387,694	554,148	374,566	1,932,459	1,857,045	10,896,975
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,093,623	376,191	588,208	402,151	1,723,596	2,102,188	10,285,957

Ակտիվների վերագնահատում

Բանկի հողը և շենքերը, համակարգչային տեխնիկան և կապի միջոցները ներկայացված են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2020թ. դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 408,411 հազար դրամ գումարով: Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե վերագնահատված հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 4,293,225 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,028,264 հազար դրամ):

Համակարգչային տեխնիկայի և կապի միջոցների վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2018թ. դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 32,831 հազար դրամ գումարով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ պարտավորություններ տողում (տե՛ս ծանոթագրություն 28): Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,350,908 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,247,459 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 658,142 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 580,965 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

22 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,064,052	2,656,479	101,021	3,821,552
Ավելացում	28,660	1,132,465	-	1,161,125
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,092,712	3,788,944	101,021	4,982,677
Ավելացում	88,600	268,270	-	356,870
Օտարում	(46,354)	(87,945)	-	(134,299)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,134,958	3,969,269	101,021	5,205,248
Կուտակված ամորտիզացիա				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	516,655	502,286	73,862	1,092,803
Մասհանումներ	62,344	137,254	2,397	201,995
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	578,999	639,540	76,259	1,294,798
Օտարում	(36,602)	(87,945)	-	(124,547)
Մասհանումներ	220,229	450,440	8,756	679,425
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	762,626	1,002,035	85,015	1,849,676
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	513,713	3,149,404	24,762	3,687,879
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	372,332	2,967,234	16,006	3,355,572

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումների գծով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգչային ծրագրերում ներառված է 1,983,225 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ProtoCRM վարկավորման ավտոմատացված ծրագիրը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,042,864 հազար դրամ):

2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվներում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 202,294 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 35,098 հազար դրամ):

23 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ստացվելիք գումարներ	1,402,286	319,867
Պարտքային կորուստների պահուստ	(151,799)	(35,462)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	1,250,487	284,405
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	1,717,646	1,040,858
Բռնագանձված ակտիվներ	4,022,113	1,751,007
Պահեստ	128,403	171,284
Թանկարժեք մետաղներ	145,658	117,232
Այլ ակտիվներ	274,030	426,382
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	6,287,850	3,506,763
Ընդամենը այլ ակտիվներ	7,538,337	3,791,168

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023	2022
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	35,462	5,799
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	616,667	34,498
Զուտ դուրսգրում	(500,330)	(4,835)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	151,799	35,462

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

24 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	3,018,649	9,083,003
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	1,146,549	440,992
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	4,667,439	1,746,361
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	876,109	302,242
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով	9,012,089	5,030,572
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18,720,835	16,603,170

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 4,914,274 հազար դրամ համախառն գումարով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 890,132 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տես ծանոթագրություն 19):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ բանկից ներգրավված ռեպո համաձայնագրերով վարկեր, որոնք ապահովված են Բանկի կողմից գրավադրված 9,412,880 հազար ՀՀ դրամ համախառն գումարով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,201,498 հազար ՀՀ դրամ) ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերով (տես ծանոթագրություն 20):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բանկից ներգրավված միջոցների մնացորդը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը, որը կազմում է 7,000,340 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,507,682 հազար ՀՀ դրամ, մեկ բանկ):

Ֆինանսական կազմակերպություններից ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Ֆինանսական կազմակերպություններից վարկերն ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2022թ.-ի ընթացքում՝ նույնպես):

25 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	34,274,763	51,174,850
Ժամկետային ավանդներ	4,740,434	11,437,986
	39,015,197	62,612,836
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	84,434,229	86,364,521
Ժամկետային ավանդներ	87,743,744	103,827,712
	172,177,973	190,192,233
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	211,193,170	252,805,069

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների գծով 2,968,212 հազար դրամ գումարով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,427,371 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներ, այդ թվում Բանկի հետ կապված անձի և նրա հետ կապակցված անձանց (ծանոթագրություն 32), հաշիվների և ավանդների մնացորդներ, որոնք գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12,063,623 հազար դրամ, երկու հաճախորդների):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2022թ.-ի ընթացքում՝ նույնպես):

26 Փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ստորադաս փոխառություն ոչ ֆինանսական կազմակերպություններից	1,619,470	1,574,797
Վարկեր ՀՀ կառավարությունից	844,143	1,451,236
Այլ փոխառություն	2,450,973	1,252,445
Ընդամենը փոխառություններ	4,914,586	4,278,478

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներառում են վարկեր ստացված EIB-ի «Փոքր, Միջին Բիզնեսի Զարգացման», KFW-ի «Վերականգնվող էներգիայի աջակցություն», KFW-ի «Մանր, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) էներգաարդյունավետության աջակցության» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող ֆինանսավորման նպատակով: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարությունից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 745,480 հազար դրամ համախառն գումարով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,317,314 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տես ծանոթագրություն 19):

Բանկը ներգրավել է ստորադաս երկարաժամկետ փոխառություն Բանկի հետ կապակցված Կազմակերպությունից (տես ծանոթագրություն 32):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2022թ.-ի ընթացքում՝ նույնպես):

27 Թողարկված պարտքային արժեթղթեր

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
05.02.2021	ԱՄՆ դոլար	100	33,478	5.30	05.02.2024	3,347,800
20.05.2021	ԱՄՆ դոլար	100	40,000	5.25	20.05.2024	4,000,000
26.11.2021	ԱՄՆ դոլար	100	50,000	4.80	26.11.2024	5,000,000
05.09.2023	ԱՄՆ դոլար	100	50,000	5.00	05.09.2026	5,000,000
26.11.2021	ՀՀ դրամ	10,000	25,000	9.80	26.02.2024	250,000,000
05.09.2023	ՀՀ դրամ	10,000	100,000	11.00	05.09.2026	1,000,000,000
02.10.2023	ՀՀ դրամ	10,000	100,000	10.75	02.10.2026	1,000,000,000

Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2022թ.-ի ընթացքում՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2022թ. ընթացքում՝ նույնպես):

28 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Վճարվելիք գումարներ	370,804	171,560
Վարձակալության գծով պարտավորություններ	1,710,224	1,648,614
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	310,243	218,605
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	2,391,271	2,038,779
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	351,754	355,658
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	70,452	53,830
Ակնկալվող պարտքային կորուստներ ֆինանսական երաշխիքների գծով	12,463	68,853
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	434,669	478,341
Ընդամենը այլ պարտավորություններ	2,825,940	2,517,120

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի տարածքների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների (տե՛ս ծանոթագրություն 13)՝ յուրաքանչյուր

վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս ծանոթագրություն 21):

Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Հունվարի 1-ի դրությամբ	1,648,614	1,362,299
Ավելացում	554,863	560,769
Դադարեցում	(81,551)	-
Վերաչափում	309,247	343,685
Տոկոսի կուտակում	177,668	180,991
Վճարումներ	(898,617)	(799,130)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,710,224	1,648,614

2023թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 10% (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10.5%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 36.3-ում:

29 Սեփական կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 22,425,447 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 181,254,472 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով և թվով 36,788,261 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից 32,010,000-ը՝ 100 ՀՀ դրամ և 4,778,261-ը՝ 230 ՀՀ դրամ անվանական արժեքներով:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ	18,758,224	83.6	17,981,523	83.3
Սֆիկարո Ինվեսթմենթս Լիմիթեդ	1,211,900	5.4	1,350,900	6.3
Առոլովա Էնթերփրայզիս լիմիթեդ	-	-	776,701	3.6
Կարապետյան Վահե	745,890	3.3	745,890	3.4
Զաքարյան Գագիկ	255,951	1.2	-	-
Այլ	1,453,482	6.5	733,639	3.4
	22,425,447	100	21,588,653	100

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

2023թ. Բանկը համալրել է կանոնադրական կապիտալը՝ թողարկելով 836,794 հազ. ՀՀ դրամի սովորական բաժնետոմսեր, որոնց տեղաբաշխման արդյունքում ստացել է 1,673,589 հազ. ՀՀ դրամի էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում: Արտոնյալ բաժնետոմսերը ունեն մեկ ձայնի իրավունք միայն Բանկի վերակազմակերպման կամ լուծարման և կանոնադրության մեջ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները սահմանափակող որոշումների իրականացման հարցերում և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2023թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է 516,000 հազար դրամ (2022թ. հայտարարված շահաբաժինների գումարը կազմում է 980,367 հազար ՀՀ դրամ, որից 464,367 հազար դրամը տրվել էր կանխավճարի տեսքով 2021թ.-ին):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

30 Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն

պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Վարկերի և վարկային գծերի չօգտագործված մաս	15,608,585	4,184,146
Տրամադրված երաշխիքներ	600,823	373,246
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	16,209,408	4,557,392

Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում (տե՛ս ծանոթագրություն 19-ում):

Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ֆինանսական երաշխիքներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	68,853	38,134
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(56,390)	30,719
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,463	68,853

Երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են «Այլ պարտավորություններում» (տե՛ս ծանոթագրություն 28-ում) :

31 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների

մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի նշանակալից բաժնետերեր են հանդիսանում գործարարներ Գ. Զաքարյանը և Գ. Պիսկովը, որոնց անուղղակի պատկանում է ձայների իրավունք տվող բաժնետոմսերի 84.8%:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2023		2022	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	6,297,013	1,107,869	11,791,629	3,351,868
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	51,977	357,819	20,708	134,564
Տարվա ընթացքում մարված վարկեր	(6,152,989)	(826,719)	(5,515,324)	(2,378,563)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	196,001	638,969	6,297,013	1,107,869
Պարտքային կորուստների պահուստ	(67,951)	(1,261)	(2,733,831)	(4,947)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	128,050	637,708	3,563,182	1,102,922
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Հունվարի 1-ի դրությամբ	873,160	-	293,798	-
Տարվա ընթացքում տրամադրված	145,852,257	-	585,182,409	-
Տարվա ընթացքում մարված	(145,621,110)	-	(584,603,047)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,104,307	-	873,160	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	3,457,139	-	1,615,586	-
Տարվա ընթացքում ստացված	75,293,613	-	198,370,979	-
Տարվա ընթացքում վճարված	(76,539,749)	-	(196,529,426)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,211,003	-	3,457,139	-

Հազար ՀՀ դրամ	2023		2022	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	5,876,898	346,399	671,440	115,301
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	68,818,876	12,542,137	7,945,608	2,720,737
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(72,350,688)	(12,747,996)	(2,740,150)	(2,489,639)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,345,086	140,540	5,876,898	346,399
Ստորադաս փոխառություններ	1,619,470	-	1,574,797	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	69,063	-	58,232
Ոչ նյութական ակտիվների առք	205,920	-	995,760	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	14,889	46,296	177,587	62,019
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(108,462)	(58,082)	(176,644)	(8,335)
Պարտքային կորուստների (ծախս)/հակադարձում	2,669,535	3,686	(2,715,938)	40,418
Ապահովագրության գծով ծախսեր	(82,699)	-	(63,772)	-
Համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսեր	643,920	-	-	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Աշխատավարձ և պարգևատրումներ	1,929,187	1,557,216
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	1,929,187	1,557,216

33 Իրական արժեքի չափումը

ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	55,669,030	-	55,669,030	55,669,030
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	26,183,579	-	26,183,579	26,183,579
Հաճախորդներին տրված վարկեր	-	148,206,576	-	148,206,576	149,364,985
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր (ներառյալ գրավադրվածները)	2,660,185	32,204,122	-	34,864,307	34,888,675
Այլ ֆինանսական ակտիվներ	-	1,250,487	-	1,250,487	1,250,487
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	18,720,835	-	18,720,835	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	211,188,579	-	211,188,579	211,193,170
Փոխառություններ	-	4,812,074	-	4,812,074	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	9,326,016	-	9,326,016	9,347,121
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,391,272	-	2,391,272	2,391,272

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	100,012,097	-	100,012,097	100,012,097
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	31,943,460	-	31,943,460	31,943,460
Հաճախորդներին տրված վարկեր	-	118,522,313	-	118,522,313	119,828,158
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր (ներառյալ գրավադրվածները)	2,175,430	46,055,065	-	48,230,495	48,877,878
Այլ ֆինանսական ակտիվներ	-	284,405	-	284,405	284,405
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	16,603,170	-	16,603,170	16,603,170
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	251,565,031	-	251,565,031	252,805,069
Փոխառություններ	-	4,247,607	-	4,247,607	4,278,478
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	9,153,166	-	9,153,166	9,147,395
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,038,779	-	2,038,779	2,038,779

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 11% մինչև 24% տարեկան (2022թ. 5% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է

անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումների իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,572,613	-	1,572,613
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	11,236	-	11,236
Ընդամենը	-	1,583,849	-	1,583,849
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	1,055	-	1,055
Ընդամենը	-	1,055	-	1,055
Զուտ իրական արժեք	-	1,582,794	-	1,582,794

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,028,177	-	1,028,177
Ընդամենը	-	1,028,177	-	1,028,177
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	5,246	-	5,246
Ընդամենը	-	5,246	-	5,246
Զուտ իրական արժեք	-	1,022,931	-	1,022,931

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, որպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը: Բանկի կողմից ներդրվող

ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային ֆորվարդային պայմանագրերից:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական վաճառքների մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2020 թվականի դեկտեմբերին:

Նշանակալի չդիտարկվող ներդրումը՝ վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նյութապես ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով (ծանոթ. 20,24)	9,012,089	-	9,012,089	(9,387,266)	-	(375,177)
Ընդամենը	9,012,089	-	9,012,089	(9,387,266)	-	(375,177)

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով (ծանոթ. 20,24)	5,030,572	-	5,030,572	(5,175,583)	-	(145,011)
Ընդամենը	5,030,572	-	5,030,572	(5,175,583)	-	(145,011)

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	55,669,030	-	-	55,669,030	-	-	-	55,669,030
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,895,678	-	9,673,472	19,569,150	6,614,429	-	6,614,429	26,183,579
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	11,236	-	-	11,236	-	-	-	11,236
Հաճախորդներին տրված վարկեր	13,246,111	5,067,876	24,185,978	42,499,965	52,448,885	54,416,135	106,865,020	149,364,985
Ներդրումային արժեթղթեր								
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	-	528,811	1,043,802	1,572,613	1,572,613
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	951,612	361,244	1,151,599	2,464,455	27,122,151	5,302,069	32,424,220	34,888,675
Այլ ֆինանսական ակտիվներ	1,250,487	-	-	1,250,487	-	-	-	1,250,487
	81,024,154	5,429,120	35,011,049	121,464,323	86,714,276	61,762,006	147,476,282	268,940,605

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Պարտավորություններ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,323,450	91,444	629,286	14,044,180	368,968	4,307,687	4,676,655	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	128,763,420	16,646,224	55,623,877	201,033,521	10,113,257	46,392	10,159,649	211,193,170
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,055	-	-	1,055	-	-	-	1,055
Փոխառություններ	9,345	-	2,490,847	2,500,192	789,352	1,625,042	2,414,394	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	74,905	1,605,156	3,643,110	5,323,171	4,023,950	-	4,023,950	9,347,121
Վարձակալության գծով պարտավորություններ	35,139	70,279	305,728	411,146	982,828	316,250	1,299,078	1,710,224
Այլ ֆինանսական պարտավորություններ	370,804	310,243	-	681,047	-	-	-	681,047
	142,578,114	18,723,346	62,692,848	223,994,312	16,278,355	6,295,371	22,573,726	246,568,038
Զուտ Դիրք	(61,553,965)	(13,294,226)	(27,681,799)	(102,529,990)	70,435,921	54,466,635	124,902,556	22,372,566
Կուտակված ճեղքվածք	(61,553,965)	(74,848,191)	(102,529,990)		(32,094,069)	22,372,566		

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաշվառումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաշվառումար	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	100,012,097	-	-	100,012,097	-	-	-	100,012,097
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,877,864	9,679,291	9,287,370	28,844,525	3,098,935	-	3,098,935	31,943,460
Հաճախորդներին տրված վարկեր	18,856,305	4,945,199	25,439,357	49,240,861	42,222,683	28,364,614	70,587,297	119,828,158
Ներդրումային արժեթղթեր								
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	-	28,643	999,534	1,028,177	1,028,177
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	8,566,325	10,386,113	18,952,438	27,589,523	2,335,917	29,925,440	48,877,878
Այլ ֆինանսական ակտիվներ	284,405	-	-	284,405	-	-	-	284,405
	129,030,671	23,190,815	45,112,840	197,334,326	72,939,784	31,700,065	104,639,849	301,974,175
Պարտավորություններ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,556,539	84,192	1,132,455	15,773,186	374,050	455,934	829,984	16,603,170
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	147,803,335	18,928,229	67,628,555	234,360,119	18,400,873	44,077	18,444,950	252,805,069
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	5,246	-	-	5,246	-	-	-	5,246
Փոխառություններ	8,811	-	894,312	903,123	2,180,258	1,195,097	3,375,355	4,278,478
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	69,822	3,967,850	4,037,672	5,109,723	-	5,109,723	9,147,395
Վարձակալության գծով պարտավորություններ	38,739	77,476	311,100	427,315	999,097	222,202	1,221,299	1,648,614
Այլ ֆինանսական պարտավորություններ	171,560	218,605	-	390,165	-	-	-	390,165
	162,584,230	19,378,324	73,934,272	255,896,826	27,064,001	1,917,310	28,981,311	284,878,137
Զուտ Դիրք	(33,553,559)	3,812,491	(28,821,432)	(58,562,500)	45,875,783	29,782,755	75,658,538	17,096,038
Կուտակված ճեղքվածք	(33,553,559)	(29,741,068)	(58,562,500)		(12,686,717)	17,096,038		

36 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Ռիսկերի կառավարման տնօրինություն

Ռիսկերի կառավարման տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի գործընթացների իրականացման և կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքագրումը:

Բանկի Ֆինանսական տնօրինություն

Բանկի ֆինանսական տնօրինությունը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Ֆինանսական ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, վարկային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

36.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

36.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վարկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 36.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացառությամբ կանխիկի)				
Ստանդարտ	39,555,386	-	-	39,555,386
Համախառն հաշվեկշռային արժեք	39,555,386	-	-	39,555,386
Պարտքային կորուստների պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	39,555,386	-	-	39,555,386
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	26,277,797	-	-	26,277,797
Համախառն հաշվեկշռային արժեք	26,277,797	-	-	26,277,797
Պարտքային կորուստների պահուստ	(94,218)	-	-	(94,218)
Զուտ հաշվեկշռային արժեք	26,183,579	-	-	26,183,579
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	103,011,031	-	-	103,011,031
Ստանդարտ	1,100,571	666,499	-	1,767,070
Ցածր	-	733,065	-	733,065
Չաշխատող	-	-	6,376,378	6,376,378
Համախառն հաշվեկշռային արժեք	104,111,602	1,399,564	6,376,378	111,887,544
Պարտքային կորուստների պահուստ	(1,115,446)	(109,333)	(2,511,717)	(3,736,496)
Զուտ հաշվեկշռային արժեք	102,996,156	1,290,231	3,864,661	108,151,048
Առևտրային վարկեր				
Բարձր	35,777,108	-	-	35,777,108
Ստանդարտ	15,542	2,974,250	-	2,989,792
Ցածր	-	78,582	-	78,582
Չաշխատող	-	-	4,359,129	4,359,129
Համախառն հաշվեկշռային արժեք	35,792,650	3,052,832	4,359,129	43,204,611
Պարտքային կորուստների պահուստ	(351,279)	(401,503)	(1,237,892)	(1,990,674)
Զուտ հաշվեկշռային արժեք	35,441,371	2,651,329	3,121,237	41,213,937

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2023թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրվածները				
Բարձր	1,312,856	-	-	1,312,856
Ստանդարտ	33,677,249	-	-	33,677,249
Համախառն հաշվեկշռային արժեք	34,990,105	-	-	34,990,105
Պարտքային կորուստների պահուստ	(101,430)	-	-	(101,430)
Զուտ հաշվեկշռային արժեք	34,888,675	-	-	34,888,675
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ վարկանիշ	1,572,613	-	-	1,572,613
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	1,572,613	-	-	1,572,613
Պարտքային կորուստների պահուստ	(2,840)	-	-	(2,840)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	1,402,286	-	-	1,402,286
Համախառն հաշվեկշռային արժեք	1,402,286	-	-	1,402,286
Պարտքային կորուստների պահուստ	(151,799)	-	-	(151,799)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,250,487	-	-	1,250,487
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Ստանդարտ	16,209,408	-	-	16,209,408
		-	-	
Պարտքային կորուստների պահուստ	(12,463)	-	-	(12,463)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացառությամբ կանխիկի)				
Ստանդարտ	83,283,907	-	-	83,283,907
Համախառն հաշվեկշռային արժեք	83,283,907	-	-	83,283,907
Պարտքային կորուստների պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	83,283,907	-	-	83,283,907
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	32,048,334	-	-	32,048,334
Համախառն հաշվեկշռային արժեք	32,048,334	-	-	32,048,334
Պարտքային կորուստների պահուստ	(104,874)	-	-	(104,874)
Զուտ հաշվեկշռային արժեք	31,943,460	-	-	31,943,460
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	77,743,525	-	-	77,743,525
Ստանդարտ	819,219	665,186	-	1,484,405
Ցածր	-	877,107	-	877,107
Չաշխատող	-	-	7,010,765	7,010,765
Համախառն հաշվեկշռային արժեք	78,562,744	1,542,293	7,010,765	87,115,802
Պարտքային կորուստների պահուստ	(974,832)	(124,987)	(2,795,589)	(3,895,408)
Զուտ հաշվեկշռային արժեք	77,587,912	1,417,306	4,215,176	83,220,394
Առևտրային վարկեր				
Բարձր	25,405,990	-	-	25,405,990
Ստանդարտ	116,156	128,991	-	245,147
Ցածր	-	32,331	-	32,331
Չաշխատող	-	-	17,616,791	17,616,791
Համախառն հաշվեկշռային արժեք	25,522,146	161,322	17,616,791	43,300,259
Պարտքային կորուստների պահուստ	(211,851)	(7,395)	(6,473,249)	(6,692,495)
Զուտ հաշվեկշռային արժեք	25,310,295	153,927	11,143,542	36,607,764

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրվածները				
Բարձր	15,416,113	-	-	15,416,113
Ստանդարտ	33,669,471	-	-	33,669,471
Համախառն հաշվեկշռային արժեք	49,085,584	-	-	49,085,584
Պարտքային կորուստների պահուստ	(207,706)	-	-	(207,706)
Զուտ հաշվեկշռային արժեք	48,877,878	-	-	48,877,878
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ վարկանիշ	1,028,177	-	-	1,028,177
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	1,028,177	-	-	1,028,177
Պարտքային կորուստների պահուստ	(4,980)	-	-	(4,980)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	319,867	-	-	319,867
Համախառն հաշվեկշռային արժեք	319,867	-	-	319,867
Պարտքային կորուստների պահուստ	(35,462)	-	-	(35,462)
Զուտ հաշվեկշռային արժեք	284,405	-	-	284,405
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Ստանդարտ	4,557,392	-	-	4,557,392
	4,557,392	-	-	4,557,392
Պարտքային կորուստների պահուստ*	(68,853)	-	-	(68,853)

* Պարտքային կորուստների պահուստը ներկայացնում է Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները: Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում:

Ածանցյալ գործարքների հետևանքով առաջացող պարտքային ռիսկը բացահայտվում է 17 ծանոթագրությունում:

36.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալուհավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:

- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	Վարկանիշ	2023 12-ամսյա PD	2022 12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.028%	0.001-0.026%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.047-2.813%	0.045-3.231%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	4.695-21.841%	5.519-27.516%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և

ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,

- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Պարտազանցման սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է պարտազանցման ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն պարտազանցման ենթարկված է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտազանցման սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.3 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Բանկի կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	3,452,253	885,713
Փոփոխությունից զուտ օգուտ/(վնաս)	928,965	(302,330)

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճ/նվազում
- ՀՆԱ (արտահայտված ՀՀ դրամով)
- Ջուտ ընթացիկ արտասահմանյան տրանսֆերտներ
- Գործազրկության մակարդակ
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում (%)
- Առևտուր (աճի տեմպ %)
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)
- Շինարարություն (աճի տեմպ %)
- Գյուղատնտեսություն (աճի տեմպ %)
- Արտարժույթի պաշտոնական փոխարժեք
- Գնաճ
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

36.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	53,176,822	346,685	2,145,523	55,669,030
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17,211,264	215,404	8,756,911	26,183,579
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	11,236	-	-	11,236
Հաճախորդներին տրված վարկեր	149,115,883	247,727	1,375	149,364,985
Ներդրումային արժեթղթեր	34,703,300	-	1,757,988	36,461,288
Այլ ֆինանսական ակտիվներ	952,431	150,154	147,902	1,250,487
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	255,170,936	12,809,699	959,970	268,940,605
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	249,285,686	28,956,034	23,732,455	301,974,175

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտքային ռիսկերը դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացած են ֆինանսական հատվածում, բացառությամբ վարկերի: Տնտեսության ճյուղայնության բաշխումը վարկերի համար տե՛ս ծանոթագրություն 19-ը:

36.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառռության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա չեն արժեզրկված վարկեր, որոնց համար արժեզրկման ակնկալվող կորուստների գծով պահուստ չի ձևավորվել գրավների առկայության պատճառով (2022թ.՝ 790,819 հազար դրամ):

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Անշարժ գույք	87,317,290	51,442,051
Շարժական գույք	3,470,884	5,816,178
Շրջանառու միջոցներ	612,851	1,729,510
Կազմակերպությունների երաշխիքներ	2,932,513	2,489,248
Դրամական միջոցներ	1,392,727	10,200,400
Կենցաղային տեխնիկա	29,556,893	30,259,528
Ապահովվածություն չունեցող	29,808,997	28,479,146
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր (համախառն)	155,092,155	130,416,061

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

36.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

36.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով եկամտաբերության կորի ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ		2023	2022
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Կապիտալի զգայունություն	Կապիտալի զգայունություն
ՀՀ դրամ	+1	(31,795)	(44,782)
ՀՀ դրամ	-1	33,122	37,300

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

Հազար ՀՀ դրամ	2023			2022		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Բանկերին տրամադրված վարկեր	-	-	8	-	3.4	4.3
Վարկեր ֆինանսական կազմակերպություններին	-	-	5.5	-	-	-
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	-	5.0	2.3	-	4.4	2.3
Առևտրային վարկեր	15.42	10.04	6.17	11.16	10.89	5.67
Հիփոթեքային և սպառողական վարկեր	18.65	12.04	7.07	20.04	12.37	8.36
Ներդրումային արժեթղթեր	9.6	6.6	2.3	9.3	4.5	2.4

Հազար ՀՀ դրամ	2023			2022		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր պարտավորություններ						
Վարկեր բանկերից ռեպո համաձայնագրերով	9.5	-	-	11.15	-	-
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	7.23	-	-	6.86	5.6	-
Ավանդներ ֆիզիկական և իրավաբանական անձանցից	9.7	0.6	2.2	9.4	3.8	3.0
Վարկեր ՀՀ Կառավարությունից	6.5	-	-	6.5	-	-
Ստորադաս փոխառություն	-	12.6	-	-	12.6	-
Թողարկված արժեթղթեր	6.4	-	-	6.5	-	-
Փոխառություններ այլ կազմակերպություններից	-	11.1	10.9	-	12.6	12.6

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.		31 դեկտեմբերի 2022թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+5	80,682	+5	(2,036)
Եվրո	+5	(15,922)	+5	(12,090)
ԱՄՆ դոլար	(5)	(80,682)	(5)	2,036
Եվրո	(5)	15,922	(5)	12,090

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,200,279	38,487,740	1,981,011	55,669,030
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	906,630	16,720,571	8,556,378	26,183,579
Հաճախորդներին տրված վարկեր	108,466,771	40,630,132	268,082	149,364,985
Ներդրումային արժեթղթեր	8,850,792	27,610,496	-	36,461,288
Այլ ֆինանսական ակտիվներ	966,508	283,979	-	1,250,487
	134,390,980	123,732,918	10,805,471	268,929,369
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15,233,325	1,564,992	1,922,518	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	88,636,688	113,735,085	8,821,397	211,193,170
Փոխառություններ	844,143	4,070,443	-	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,286,929	7,060,192	-	9,347,121
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,390,459	812	-	2,391,271
Ընդամենը	109,391,544	126,431,524	10,743,915	246,566,983
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(2,282,509)	2,023,950	268,740	10,181
Զուտ դիրք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,716,927	(674,656)	330,296	22,372,567
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2023թ. դեկտեմբերի 31-ին	4,750,268	11,459,140	-	16,209,408

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	114,542,469	171,380,483	16,051,223	301,974,175
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	94,654,040	174,236,989	15,981,862	284,872,891
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(1,973,097)	1,967,851	-	(5,246)
Զուտ դիրք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,915,332	(888,655)	69,361	17,096,038
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2022թ. դեկտեմբերի 31-ին	2,131,300	2,426,092	-	4,557,392

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

36.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 4%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տե՛ս ծանոթագրություն 16-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտի չենթարկված	
	2023, %	2022, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	31.23	44.47
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	71.06	92.62

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.						
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվե-կշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,331,193	92,269	667,015	425,894	6,700,693	21,217,064	18,720,835
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	128,796,761	16,827,385	57,867,132	11,165,368	73,332	214,729,978	211,193,170
Փոխառություններ	9,344	-	2,557,695	944,232	2,462,817	5,974,088	4,914,586
Թողարկված պարտքային արժեթղթեր	26,875	1,727,575	3,976,247	4,608,546	-	10,339,243	9,347,121
Վարձակալության գծով պարտավորություններ	43,621	87,241	377,387	1,158,676	652,073	2,318,998	1,710,224
Այլ ֆինանսական պարտավորություններ	370,804	310,243	-	-	-	681,047	681,047
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	142,578,598	19,044,713	65,445,476	18,302,716	9,888,915	255,260,418	246,566,983

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2023թ.						
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվե-կշռային արժեք
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Արտարժույթի սվոպ պայմանագրեր							
Ներհոսք	2,023,950	-	-	-	-	2,023,950	9,970
Արտահոսք	(2,013,980)	-	-	-	-	(2,013,980)	
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր							
Ներհոսք	268,740	-	-	-	-	268,740	211
Արտահոսք	(268,529)	-	-	-	-	(268,529)	
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	78,829	204,496	1,933,921	6,377,445	7,614,717	16,209,408	16,209,408

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.						
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,562,688	84,533	1,181,186	445,492	669,017	16,942,916	16,603,170
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	147,834,525	19,159,404	70,246,249	20,268,262	74,215	257,582,655	252,805,069
Փոխառություններ	8,811	-	938,418	2,903,798	2,027,890	5,878,917	4,278,478
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	147,438	4,304,126	5,307,683	-	9,759,247	9,147,395
Վարձակալության գծով պարտավորություններ	44,552	89,104	372,098	1,165,421	463,746	2,134,921	1,648,614
Այլ ֆինանսական պարտավորություններ	171,560	218,605	-	-	-	390,165	390,165
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	162,622,136	19,699,084	77,042,077	30,090,656	3,234,868	292,688,821	284,872,891

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.						
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Արտարժույթի սվոպ պայմանագրեր							
Ներհոսք	1,967,851	-	-	-	-	1,967,851	
Արտահոսք	(1,973,097)	-	-	-	-	(1,973,097)	(5,246)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	291,376	284,345	1,053,672	2,166,850	761,149	4,557,392	4,557,392

Բանկի մոտ առկա է էական բացասական կուտակային իրացվելիության ճեղքվածք մինչև մեկ տարվա կտրվածքով: Տես ծանոթագրություն 35-ը: Դա այն բանի հետևանք է, որ 2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հիմնական ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ չնայած մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները էական կշիռ են կազմում, վերջին տարիներին ձևավորված փորձը ցույց է տալիս, որ նշված ավանդները հանդիսանում են կայուն և երկարատև ֆինանսավորման աղբյուր:

36.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման վարչությունը, Խորհուրդը, Գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,

- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

36.5 Կլիմայի հետ կապված ռիսկեր

Բանկը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, երաշտը և ծովի մակարդակի բարձրացումը և վտանգները:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Բանկը զգալի առաջընթաց է գրանցել կլիմայական ռիսկը իր ռիսկերի շրջանակում ներառելու հարցում, ներառյալ ռիսկերի համապատասխան չափումների մշակումը և Կլիմայական ռիսկերի կոմիտեի ստեղծումը, որը պատասխանատու է ամբողջ խմբի քաղաքականության, գործընթացների և վերահսկողության մշակման համար՝ կլիմայական ռիսկերը հիմնական ռիսկերի կատեգորիաների կառավարման մեջ ինտեգրելու նպատակով:

Բացի այդ, Բանկը վերագնահատել է իր մոդելները՝ հաշվի առնելով կլիմայական ռիսկերը և դրանց ազդեցությունը վարկառուի պարտքային ռիսկի վրա: Այս տարի Բանկը նաև կատարելագործել է տվյալների հավաքագրման իր համակարգերը՝ կլիմային առնչվող իր նպատակներին հասնելու համար: Օրինակ, Բանկը ներդրել է մեխանիզմներ՝ հաճախորդների անցումային և ֆիզիկական ռիսկերի ենթարկվածության հետ կապված տեղեկատվության հավաքագրման և այդպիսի ազդեցության գնահատման համար՝ հասկանալու համար կլիմայական ռիսկերի ազդեցությունը կորպորատիվ հաճախորդների վրա ազդեցության ենթարկված հատվածներում: Բանկը նաև զգալի առաջընթաց է գրանցել կլիմայական ռիսկի սցենարների մշակման գործում, որոնք կօգտագործվեն կանխատեսվող տեղեկատվության վրա կլիմայի ռիսկի ազդեցությունը գնահատելու համար. և բարելավելու իր աշխատակիցների

գիտելիքներն ու կարողությունները կլիմայական ռիսկի հետ կապված հարցերի վերաբերյալ: Թեև առաջընթաց է գրանցվել, Բանկը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Բանկի ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

37 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	2023				
	Ավանդներ և վարկեր ֆինանսական կազմակերպություններից	Փոխառություններ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	2,048,603	4,278,478	9,147,395	1,648,614	17,123,090
Վճարումներ	(1,667,049)	(8,123,212)	-	(898,617)	(10,688,878)
Ստացված գումար	5,276,251	8,750,304	-	-	14,026,555
Վարձակալության գծով պարտավորության ճշգրտում	-	-	-	782,559	782,559
Փոխարժեքային տարբերություն	(114,257)	9,016	195,627	-	90,386
Հաշվեգրված տոկոսներ	-	-	4,099	177,668	181,767
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,543,548	4,914,586	9,347,121	1,710,224	21,515,479

Հազար ՀՀ դրամ

	2022				
	Պարտավորու-Ավանդներ և վարկեր ֆինանսական կազմակերպություններից	Փոխառություններ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	7,906,667	3,121,387	12,168,789	1,362,299	24,559,142
Վճարումներ	(6,437,324)	(2,366,739)	(1,433,631)	(799,130)	(11,036,824)
Ստացված գումար	1,522,492	3,885,333	-	-	5,407,825
Վարձակալության գծով պարտավորության ճշգրտում	-	-	-	904,454	904,454
Փոխարժեքային տարբերություն	(943,232)	(361,503)	(1,587,763)	-	(2,892,498)
Հաշվեգրված տոկոսներ	-	-	-	180,991	180,991
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,048,603	4,278,478	9,147,395	1,648,614	17,123,090

38 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը/վնասը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները և ստորադաս փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտի չենթարկված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Առաջին մակարդակի կապիտալ (2022թ՝ հիմնական կապիտալ)	29,657,134	28,608,121
Երկրորդ մակարդակի կապիտալ (2022թ՝ լրացուցիչ կապիտալ)	4,300,000	2,786,875
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	33,957,134	31,394,996
Ռիսկով կշռված ակտիվներ	260,037,478	196,540,404
Կապիտալի համարժեքության նորմատիվ	13.06%	15.97%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափ 30,000,000 հազար ՀՀ դրամ:

38 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 ՙԳործառնական սեգմենտներ՚ ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

<<Յունիբանկ>> ՓԲԸ բաժնետերերի
հիմնադիր ժողովի 04.09.2001թ. որոշմամբ

Փոփոխված է <<Յունիբանկ>> ԲԲԸ բաժնետերերի
արտահերթ ընդհանուր ժողովում 23.10.2025թ.

Բանկի Խորհրդի նախագահ

Գագիկ Ջաքարյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
09.10.2001թ

Գրանցման համար 81

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Մարտին Գալստյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ

(փոփոխություններ և լրացումներ)

Փոփոխված է	Փոփոխությունը գրանցված է
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 25.06.2002թ.	15.08.2002թ. թիվ 551Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 18.08.2003թ.	10.10.2003թ. թիվ 1/381Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 21.04.2003թ.	17.06.2003թ. թիվ ..... որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 20.08.2004թ.	14.10.2004թ. թիվ 1/618Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 14.10.2004թ.	29.12.2004թ. թիվ 1/785Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 26.01.2005թ.	25.02.2005թ. թիվ 1/101Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ժողովում 14.02.2006թ.	25.12.2006թ. թիվ 1/1401Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 10.01.2007թ.	26.02.2007թ. թիվ 1/224Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 01.08.2007թ.	28.12.2007թ. թիվ 1/1579Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 05.12.2008թ.	12.02.2009թ. թիվ 1/139Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 05.12.2008թ.	16.10.2009թ. թիվ 1/1311Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 18.03.2010թ.	24.03.2010թ. թիվ 1/240Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 29.04.2011թ.	02.06.2011թ. թիվ 1/574Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 21.07.2011թ.	31.08.2011թ. թիվ 1/976Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 01.06.2013թ.	20.08.2013թ. թիվ 1/721Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 21.10.2013թ.	27.11.2013թ. թիվ 1/142Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 12.03.2015թ.	23.06.2015թ. թիվ 1/146Ա որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 26.04.2016թ.	30.12.2015թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 30.08.2016թ.	27.04.2016թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 16.12.2016թ.	14.09.2016թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովում 18.01.2017թ.	21.12.2016թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում 20.06.2018թ.	22.02.2017թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 13.11.2020թ.	01.08.2018թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 30.11.2021թ.	..... որոշմամբ
Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում 22.05.2023թ.	14.06.2023թ. որոշմամբ

Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 28.11.2024թ.	22.01.2025թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 14.05.2025թ.	04.06.2025թ. որոշմամբ
Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 23.10.2025թ.	..... որոշմամբ

1. ԸՆԴՀԱՆՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ՝ Բանկ) շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է:

1.2. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման բոլոր մարմինների համար:

1.3. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու օրվանից:

1.4. Բանկն իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու օրվանից:

1.5. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը օրենքով սահմանված կարգով:

1.6. Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդի հաշիվների կասեցման, գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.7. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.8. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք՝ իր և Բանկի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումներով կնիքի ու մուտքի, ինչպես նաև դրամարկղի կնիքներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, դրոշմներ, բանկներ և համարային կնիքներ Բանկի տարածքային ստորաբաժանումների համար:

1.9. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր կամ պատասխանող դատարաններում:

1.10. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, թիվ 1-5: Բանկի փոստային հասցեն է՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, թիվ 1-5:

1.11. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն - «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն - ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО "ЮНИБАНК" անգլերեն – "UNIBANK" OPEN JOINT STOCK COMPANY

1.12. Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն - «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
ռուսերեն - ОАО "ЮНИБАНК"
անգլերեն - "UNIBANK" OJSC

1.13. Բանկի խորհրդանիշն է՝ կապույտ գույնի քառակուսի, որի ձախ վերևի անկյունը կլորացված է և ծիրանագույն, որի մեջ գտնվում է դեղին հավասարակողմ եռանկյունի՝ համատեղված դեղին շրջանով, որի մեջտեղում դեղին լատինատառ «U» տառն է: Ներքևում հայերենով գրված է « ՅՈՒՆԻԲԱՆԿ» բառը:

2. ԲԱՆԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

2.1. Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

2.2. Բանկի տարածքային ստորաբաժանումները գործում են Բանկի Խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

2.3. Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2.4. Մասնաճյուղը Բանկի անունից իրականացնում է բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությունում նախատեսված ֆինանսական գործառնություններ:

2.5. Ներկայացուցչությունը ներկայացնում է Բանկը , ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր՝ առանց բանկային գործունեություն կամ օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու:

2.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Բանկի հաշվեկշռում, այնպես էլ դրանց առանձին հաշվեկշիռներում:

2.7. Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Բանկի կողմից և գործում են Բանկի կողմից երեք տարուց ոչ ավելի ժամկ ետով տրված լիազորագրերի հիման վրա:

3. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

3.1. Բանկը, բանկային գործունեություն իրականաց ցնելու լիցենզիայի հիման վրա, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները, այդ թվում՝

ա. ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդ ներ.

բ. տրամադրել վարկեր.

գ. իրականացնել դրամական պահանջների զի ջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ).

դ. տրամադրել բանկային երաշխիքներ, բացել կամ իրականացնել հաշվարկներ ակրեդիտիվներով.

ե. մատուցել այլ վճարահաշվարկային ծառա ւյություններ, այդ թվում՝ բացել, վարել, սպասարկել բանկային հաշիվներ, ներառյալ՝ բանկերի թղթակց ային հաշիվները.

զ. թողարկել, սպասարկել արժեթղթեր իր անունից և իր հաշվին արժեթղթերով, ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարե լ.

է. մատուցել ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

ը. օրենքով սահմանված պահանջները բավա արելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառությա ն գործունեություն.

թ. կառավարել այլ անձանց միջոցները (հ ւվատարմագրային (լիազորագրային) կառավարում), բացառությամբ արժեթղթերի փաթեթի, որի կառա վարումն իրականացվում է սույն մասի «է» ենթակետի համաձայն.

ժ. գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

ժա. գնել և վաճառել, փոխանակել արտարժո ւյթ.

ժբ. իրականացնել լիզինգ.

ժգ. ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժդ. մատուցել ֆինանսական խորհրդատվությո ն, բացառությամբ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության, որն իրականացվում ; սույն մասի «է» ենթակետի համաձայն.

ժե. ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ.

ժզ. իրականացնել պարտքերի հավաքման հետ կապված գործողություններ.

ժէ. իրացնել ապահովագրական վկայագրեր և/կամ պայմանագրեր, օրենքով սահմանված կարգովիրականացնել ապահովագրական գործակ ալի գործառնություններ.

ժը. իրականացնել «Կուտակային կենսաթո ւշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործա ռույթներ:

3.2. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավակ ան ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն իրակա նացնելու համար:

3.3. Բանկը չի կարող իրականացնել արտ ադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե բանկերի համար դրանք թույլատր ված չեն օրենքով:

3.4. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների:

3.5. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդն երի, իր կողմից տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և իր ծառայություններ ի միջնորդավճարների չափը:

3.6. Բանկի և հաճախորդի միջև հարաբերություն ները կարգավորվում են օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրով:

4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆ ԱԴՐԱՄԸ, ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմու մ է 24,925,447,290 (քսանչորս միլիարդ ինը հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 191,254,472 (մեկ հարյուր իննսունմեկ մի լիոն երկու հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր յոթանասուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրա քանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 32,010,000 (երեսուներկու միլիոն տաս ը հազար) հատ հաստատագրված տարեկան

շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 4,778,261 (չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 230 (երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով, 3,846,154 (երեք միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր հիսունչորս) հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 390 (երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 507,742,528 (հինգ հարյուր յոթ միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր քսանութ) հատ՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի (այսուհետ՝ Ա դասի արտոնյալ բաժնետոմսեր) տեղաբաշխման, շահութաբաժնի վճարման կարգը, պայմանները և լուծարային արժեքը հետևյալն են.

- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով, տարեկան շահութաբաժնի հաշվարկն իրականացնել բաժնետոմսերի ձեռքբերման օրվանից՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ:
- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարումը նախատեսել դրամական միջոցներով, թողարկման ժամանակ Խորհրդի կողմից սահմանվող արժեքով՝ թողարկման մասին որոշմամբ,
- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը սահմանել անվանական արժեքին համարժեք,
- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը ենթակա է վճարման միայն Բանկի զուտ շահույթից և /կամ/ դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից,
- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերը ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի՝ մեկ արտոնյալ բաժնետոմսը մեկ սովորական բաժնետոմս հարաբերակցությամբ: Փոխարկումն իրականացվում է բաժնետերերի պահանջով՝ ոչ ուշ, քան այդ պահանջը Բանկին ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում: Փոխարկման պահանջ ներկայացնելու ժամկետը չի սահմանափակվում: Փոխարկումն իրականացվում է Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով, որի արդյունքում Ա դասի արտոնյալ բաժնետոմսերը փոխարինվում են նույն քանակությամբ լրացուցիչ սովորական բաժնետոմսերով,
- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինն՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սահմանված տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, ընդ որում՝
  ա. ամբողջությամբ կամ մասամբ չվճարված շահութաբաժինն ենթակա չէ հետագայում վճարվելու պայմանով կուտակման,
  բ. Բանկի և Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում Բանկի համար, շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջը, բացառությամբ եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժնի վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժնի վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել Ա. դասի արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինը:

Հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի (այսուհետ՝ Բ դասի արտոնյալ բաժնետոմսեր) տեղաբաշխման, շահութաբաժնի վճարման կարգը, պայմանները և լուծարային արժեքը հետևյալն են.

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով, տարեկան շահութաբաժնի հաշվարկն իրականացնել բաժնետոմսերի ձեռքբերման օրվանից՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ:
- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարումը նախատեսել դրամական միջոցներով, թողարկման ժամանակ Խորհրդի կողմից թողարկման մասին որոշմամբ սահմանվող արժեքով,
- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը սահմանել անվանական արժեքին համարժեք,

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը ենթակա է վճարման միայն Բանկի զուտ շահույթից և /կամ/ դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից,

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերը ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի՝ Բանկի Խորհրդի՝ թողարկման մասին որոշմամբ սահմանված պայմաններով: Փոխարկումն իրականացվում է բաժնետերերի պահանջով՝ ոչ ուշ, քան այդ պահանջը Բանկին ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում: Փոխարկման պահանջ ներկայացնելու ժամկետը չի սահմանափակվում: Փոխարկումն իրականացվում է Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով,

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սահմանած տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, ընդ որում՝

ա. ամբողջությամբ կամ մասամբ չվճարված շահութաբաժինը ենթակա չէ հետագայում վճարվելու պայմանով կուտակման,

բ. Բանկի և Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում Բանկի համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ, բացառությամբ եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժնի վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել Բ դասի արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինը:

Հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի (այսուհետ՝ Գ դասի արտոնյալ բաժնետոմսեր) տեղաբաշխման, շահութաբաժնի վճարման կարգը, պայմանները և լուծարային արժեքը հետևյալն են.

- Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով, տարեկան շահութաբաժնի հաշվարկն իրականացնել բաժնետոմսերի ձեռքբերման օրվանից՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ,

- Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարումը նախատեսել դրամական միջոցներով, թողարկման ժամանակ Խորհրդի կողմից թողարկման մասին որոշմամբ սահմանվող արժեքով,

- Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը սահմանել անվանական արժեքին համարժեք,

- Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը ենթակա է վճարման միայն Բանկի զուտ շահույթից և /կամ/ դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից,

- Գ դասի արտոնյալ բաժնետոմսերը ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի՝ Բանկի Խորհրդի՝ թողարկման մասին որոշմամբ սահմանված պայմաններով: Փոխարկումն իրականացվում է բաժնետերերի պահանջով՝ ոչ ուշ, քան այդ պահանջը Բանկին ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում: Փոխարկման պահանջ ներկայացնելու ժամկետը չի սահմանափակվում: Փոխարկումն իրականացվում է Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով,

- Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սահմանված տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, ընդ որում՝

ա. ամբողջությամբ կամ մասամբ չվճարված շահութաբաժինը ենթակա չէ հետագայում վճարվելու պայմանով կուտակման,

բ. Բանկի և Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում Բանկի համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ, բացառությամբ եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժնի վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել Գ դասի արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք

շահութաբաժինը:

Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված հաստատագրված տարեկան շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 16,153,846 /տասնվեց միլիոն մեկ հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր քառասունվեց/ հատ՝ յուրաքանչյուրը 390 (երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:

4.2. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ սույն կանոնադրությամբ հայտարարված լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե փաստացի տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարվել են:

4.3. Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Բանկը կանոնադրական հիմնադրամը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

4.4. Բանկն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը՝

ա. շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ.

բ. Բանկի զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական հիմնադրամի, պահուստային հիմնադրամի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական հիմնադրամ:

4.5. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Բանկը չի կարող ավելացնել կանոնադրական հիմնադրամն ավելի, քան Ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

4.6. Բանկը կարող է թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր, որոնց տեսակարար կշիռը կանոնադրական հիմնադրամում չի կարող ավելի լինել 25%-ից: Ժողովը ֆինանսական տարվա /հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը/ ավարտից հետո՝ ելնելով Բանկի ֆինանսական ցուցանիշներից, կարող է որոշում ընդունել արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

4.7. Կանոնադրական հիմնադրամի նվազեցումը կարող է կատարվել՝

ա. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.

բ. բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

4.8. Կանոնադրական հիմնադրամի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում Բանկը գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին:

4.9. Բանկի զուտ ակտիվների արժեքը Բանկի կանոնադրական հիմնադրամի չափից նվազելու հիմքով Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցումը կատարվում է բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի համամասնորեն պակասեցման ձևով՝ առանց բաժնետերերին որևէ հատուցման:

4.10. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևերով արգելվում է, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի:

4.11. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի 15%-ի չափով, որն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, Բանկի թողարկած պարտատոմսերը մարելու համար, եթե Բանկի շահույթը այդ նպատակին չի բավարարում:

4.12. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից՝ տարեկան արդյունքները Ժողովի կողմից հաստատելուց հետո: Պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների չափը սահմանվում է Ժողովի կողմից, ոչ պակաս տարեկան զուտ շահույթի 5%-ը:

4.13. Բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման ֆոնդեր (պահուստաֆոնդեր):

4.14. Հիմնադրամների ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Ժողովի կողմից:

4.15. Բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ Բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել Բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) անվանական արժեքի ավելացմանը:

5. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

5.1. Բանկի բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել բաց և փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է դրանց անվանական արժեքն է կամ Խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

5.2. Բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց որպես վճարման միջոց կարող են օգտագործվել հայկական դրամը, թողարկման որոշմամբ նախատեսված և բանկերի գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ չարգելված այլ վճարամիջոցներ: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռք բերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:

5.3. Թողարկվող բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարում կարող է կատարվել վճարման միանվագ կամ տարաժամկետ (ոչ ավել մեկ տարուց) եղանակով, ըստ բաժնետոմսերի թողարկման որոշման: Ընդ որում՝ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25%-ը:

5.4. Բանկի մեկ սովորական բաժնետոմսը տվյալ բաժնետոմսի սեփականատիրոջը տալիս է Ժողովում մեկ ձայնի իրավունք:

5.5. Բանկի մեկ արտոնյալ բաժնետոմսը դրա սեփականատիրոջը Ժողովում տալիս է մեկ ձայնի իրավունք, եթե քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը, կամ Բանկի կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություն կատարելու մասին հարցերը, որի հետևանքով սահմանափակվում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները:

5.6. Արտոնյալ բաժնետոմսերը սովորական բաժնետոմսերով փոխարկելու ժամանակ Բանկը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել դրանք այլ ձևով:

5.7. Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են: Բանկն իրավունք ունի իր կողմից թողարկված բաժնետոմսերը և այլ արժեթղթերը տեղաբաշխել բաց բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բաց բաժանորդագրության ձևով Բանկի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում Բանկի խորհուրդը հաստատում է բաժնետոմսերի թողարկման ազդագիրը, որը ենթակա է հաստատման ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Բանկն իրավունք ունի իր կողմից թողարկված բաժնետոմսերը և այլ արժեթղթերը տեղաբաշխել նաև փակ բաժանորդագրության միջոցով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բաժնետոմսերի տեղաբաշխման ձևը սահմանվում է Ժողովի կողմից: Բանկի բաժնետոմսերը կարող են ցանկացած անձի կողմից գնվել, տնօրինվել և օտարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.8. Բանկի կողմից իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալը արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.9. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը, եթե՝

ա. որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, և նշված բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ նշված խոշոր գործարք կնքելու դեմ, կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել.

բ. կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

5.10. Բանկից իրենց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը կարող է հանգեցնել բաժնետերերի իրավունքների՝ սույն կանոնադրության 5.9 կետում նշված սահմանափակմանը:

5.11. Բանկի կողմից բաժնետոմսերի հետգնումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, որը որոշվում է առանց բաժնետոմսի գնահատման՝ հետգնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

5.12. Բանկը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին՝ նրանց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին:

5.13. Ժողովի մասին ծանուցումը, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հանգեցնել բաժնետոմսերի

հետգնման պահանջի իրավունքի առաջացմանը, պետք է պարունակի սույն կանոնադրության 5.12 կետում նշված տեղեկությունները: Ծանուցումը պետք է պարունակի նաև տեղեկություններ բաժնետոմսերի հետգնման գնի մասին, եթե վերջինս սահմանված կարգով մինչ այդ որոշված է:

Նշված որոշումների ընդունման պահից՝ 7-օրյա ժամկետում, Բանկը պարտավոր է ծանուցել հետգնման իրավունք ունեցող բաժնետերերին՝ նրանց մոտ Բանկից բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացման և հետգնման կարգի մասին:

5.14. Բաժնետիրոջ՝ իրեն պատկանող բաժնետոմսերը հետգնելու մասին գրավոր պահանջը, որը պարունակում է տեղեկություններ հետգնման ներկայացված բաժնետոմսերի քանակի և բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրի մասին, ներկայացվում է Բանկին՝ Ժողովի կողմից համապատասխան որոշումների ընդունման պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում:

5.15. Սույն կանոնադրության 5.14 կետում սահմանված ժամկետի ավարտից հետո Բանկը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետգնել բաժնետոմսերը՝ հետգնման գրավոր պահանջ ներկայացրած բաժնետերերից:

5.16. Բաժնետոմսերի հետգնումն իրականացվում է սույն կանոնադրության 5.13 կետի առաջին մասում նշված ծանուցման մեջ սահմանված գնով, իսկ եթե սահմանված չէ նման գին, ապա այն սահմանվում է սույն կանոնադրության 5.9 կետում նշված որոշումների ընդունման պահի դրությամբ:

Բաժնետոմսերի հետգնմանն ուղղվող միջոցների գումարը չի կարող գերազանցել Բանկի զուտ ակտիվների արժեքի տաս տոկոսը: Զուտ ակտիվների արժեքը սահմանվում է սույն կանոնադրության 5.9 կետում նշված որոշումների ընդունման պահի դրությամբ: Եթե բաժնետերերի պահանջով հետգնման ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում է այն գումարը, որը Բանկը կարող է տրամադրել բաժնետոմսերի հետգնման համար, ապա բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետերերի ներկայացվածպահանջներին համամասնորեն:

5.17. Եթե բաժնետերը համաձայն չէ հետգնման գնի հետ, ապա նա իրավունք ունի բաժնետոմսերի վերագնահատման պահանջով դիմել դատարան՝ Բանկի կողմից բաժնետերերին վճարումը կատարելու սահմանված օրվանից 3 ամսվա ընթացքում:

5.18. Սույն կանոնադրության 5.9 կետով սահմանված հիմքերով հետգնված բաժնետոմսերն ուղղվում են Բանկի տնօրինությանը: Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում Ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված արժեթղթերի մարման միջոցով կանոնադրական հիմնադրամի չափի նվազեցման մասին:

5.19. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց Բանկի այլբաժնետերերի համաձայնության:

6. ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

6.1. Բանկը կարող է թողարկել անվանական կամ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:

6.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Խորհրդի որոշմամբ, որում սահմանվում են պարտատոմսերի մարման ձևը, ժամկետները և պայմանները:

6.3. Բանկը կարող է Ժողովի կողմից հաստատված՝ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կարգով աշխատակիցների միջև տեղաբաշխել (տրամադրել) Բանկի բաժնետոմսեր:

6.4. Բանկը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման իրավունք:

6.5. Բանկն իրավունք ունի թողարկել մուրհակներ, չեկեր և օրենսդրությամբ նախատեսված այլ արժեթղթեր:

6.6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի երկրորդային տեղաբաշխման արդյունքում նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխությունը գրանցելուց հետո:

6.7. Բանկի բաժնետերների ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

7. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

7.1. Բանկի բաժնետեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ենթարկվելով օրենքով և սույն կանոնադրությամբ բաժնետերերի համար նախատեսված սահմանափակումներին:

7.2. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

7.3. Իրեն տեղաբաշխված բաժնետոմսի դիմաց վճարումը ոչ լրիվ կատարած բաժնետերը Բանկի պարտավորությունների համար կրում է համապատասխան պարտավորություն նաև իր կողմից չվճարված ներդրման սահմաններում:

7.4. Բանկին պարտադիր ցուցում տալու իրավունք կամ Բանկի գործունեությունը օրենքով չարգելված այլ կերպ կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերը(երը) Բանկի անվճարունակության դեպքում Բանկի պարտավորությունների դիմաց կրում է(են) լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն, եթե նշված իրավունքը կամ հնարավորությունը ունեցող բաժնետերը(երը) դրանք իրագործելիս նախօրոք իմացել է, որ դրա հետևանքով Բանկը կհայտնվի օրենքով սահմանված անվճարունակության վիճակում, այդ թվում՝ կսպառի հիմնական կապիտալի զգալի մասը:

7.5. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն լրիվ վճարված սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

7.6. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերը Ժողովում ձայնի իրավունքից կարող է օգտվել միայն սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

7.7. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր մասնակցի (մասնակիցների) պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկությունները, թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք:

7.8. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա. բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը,

բ. ձեռնպահ մնալ Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց,

գ. ենթարկվել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջներին:

7.9. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա. անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի՝ ենթարկվելով օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին,

բ. անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,

գ. ստանալ շահաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից՝ ենթարկվելով օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին,

դ. ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին,

ե. առաջնահերթության կարգով ձեռք բերել Բանկի կողմից փակ բաժանորդագրությամբ թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը,

զ. Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը,

է. սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,

ը. իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7.10. Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերն իրավունք ունի՝

ա. անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Ժողովին՝ իր իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի՝ ենթարկվելով օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին,

բ. ստանալ տարեկան շահաբաժին Ժողովի կողմից որոշված չափով և կարգով, գ) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,

գ. ստանալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված ցանկացած տեղեկատվություն, թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք,

դ. Բանկի լուծարման դեպքում մնացորդային գույքից ստանալ իր բաժնետոմսի լուծարային արժեքը, որի որոշման կարգը և չափը սահմանում է Ժողովը,

ե. սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,

զ. իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ,

8. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

8.1. Տարեկան գործունեության արդյունքում Բանկի ստացած համախառն եկամտի և օրենքով

թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

8.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

8.3. Զուտ շահույթի բաշխումն իրականացվում է սույն կանոնադրությամբ և Ժողովի կողմից սահմանված ֆոնդերի համալրման, ինչպես նաև սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահաբաժինների վճարման նպատակով:

8.4. Բանկն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Շահութաբաժինները կարող են վճարվել դրամով, ինչպես նաև այլ գույքով, այդ թվում՝ Բանկի բաժնետոմսերով:

8.5. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ՝ սահմանելով նաև վճարման ժամկետը:

8.6. Բանկի բաժնետերերին շահաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե լրիվ չի վճարվել Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը, ինչպես նաև, եթե տվյալ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

8.7. Առաջին հերթին վճարվում են Գ դասի և Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինը և լուծարային արժեքը, երկրորդ հերթին՝ Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինը և լուծարային արժեքը, վերջում վճարվում են սովորական բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինը և լուծարային արժեքը:

9. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

9.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

ա. Բաժնետերերի ընդհանուր Ժողովը (այսուհետ՝ «Ժողով»),

բ. Խորհուրդը,

գ. կոլեգիալ գործադիր մարմին Վարչությունը (այսուհետ՝ «Վարչություն»),

դ. միանձնյա գործադիր մարմին Վարչության նախագահը (այսուհետ՝ «Վարչության նախագահ»):

9.2. Բացի սույն կանոնադրության 9.1 կետում նշված կառավարման մարմիններից՝ Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի, ռիսկերի կառավարման գործառույթ իրականացնող և համապատասխանության ապահովման գործառույթ իրականացնող ստորաբաժանումներ:

10. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ: ԺՈՂՈՎ: ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

10.2. Ժողովները կարող են գումարվել հերթական կամ արտահերթ:

10.3. Ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի կամ հեռակա քվեարկության (հարցման) կարգով: Հեռակա քվեարկության կարգով չեն կարող ընդունվել սույն կանոնադրության 10.1.1 կետի «գ» և «թ» ենթակետերով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումները:

10.4. Ժողովի անցկացման ամսաթիվը և կարգը, ինչպես նաև ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է Խորհուրդը՝ օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

10.5. Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան Ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո երկուսից վեց ամսվա ընթացքում: Տարեկան Ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության /հարցման/ միջոցով:

10.6. Տարեկան ընդհանուր ժողովից բացի գումարվող ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

10.7. Արտահերթ ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է օրակարգը, գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա քվեարկության կարգով:

10.8. Արտահերթ ժողովները կարող են գումարվել նաև Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի սովորական բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով, եթե պահանջը ներկայացված է օրենքով սահմանված կարգով, և ներկայացված օրակարգի հարցերը սույն կանոնադրությամբ

վերապահված են Ժողովի իրավասությանը:

10.9. Բանկի աուդիտն անցկացնող անձի կամ պա հանջը ներկայացնելու դրությամբ Բանկի սովորական բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատե ր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կա րգով պահանջ ներկայացնելու դեպքում Խորհուրդը պարտավոր է 10 օրվա ընթացքում որոշում ընդունե արտահերթ Ժողովի գումարման մասին և Ժողովը գումարել պահանջը ներկայացնելու պահից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Խորհրդի կողմից Ժողով չգումարելու դեպքում Ժողովը կարող է գումարվե պահանջը ներկայացրած անձանց կողմից՝ սույն կանոնադրությամբ Ժողով գումարելու համար սահման ված կարգով:

10.10. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա. Բանկի հասարակ (սովորական) բաժնե տոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժ տետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

բ. Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող արտոնյա բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

գ. Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդ և Վարչության անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

դ. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմա ն անդամները՝ որպես դիտորդ,

ե. Բանկի արտաքին աուդիտն իրականացնո ղ անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի օրակարգի հարցերով),

զ. Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ ՝ որպես դիտորդ,

է. տարածքային և կառուցվածքային ստորաբ աժանումների ղեկավարները՝ որպես դիտորդ,

ը. Բանկի այլ աշխատակիցները՝ իրենց կող ից ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը զեկուցելու համար,

թ. Ժողովի օրակարգում ընդգրկված ո րոշակի հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներին տիրապետող անձինք:

10.11. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա Խորհրդի կողմից սա ահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ:

10.12. Բաժնետերերի ցուցակում բաժնետիրոջ կողմից տիրապետվող ձայների կազմում չեն հաշվարկվում այն բաժնետոմսերը, որոնց արժեքը լրիվ վճարված չէ, և նշանակալից մասնակցություն հանդիսացող այն բաժնետոմսերը, որոնց սեփականա տերերի ձայնի իրավունքը սահմանափակված է իրենց և իրենց հետ փոխկապակցված անձանց հետ մի ասին նշանակալից մասնակցության ունենալու հետ կապված օրենսդրությամբ նախատեսված սահմանափ ակումներով:

10.13. Բանկը պարտավոր է ցանկացած բաժնետի ոջը, վերջինիս առաջին իսկ պահանջով, տրամադրել տեղեկանք՝ նրան բաժնետերերի ցուցակում ընդգրկված լինելու կամ չլինելու մասին:

10.14. Ժողովի գումարման մասին Բանկը Ժողո վին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը ծանուցում է Ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ՝ պատվիրված նամակ ուղարկելու կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի հասց ով ծանուցելու միջոցով: Ժողովի գումարման մասին ծանուցումը հրապարակվում է Բանկի պաշտոնական կայքում, azdarar.am կայքում և մամուլում: Ծանուցումը պետք է բովանդակի օրենքով սահմանված տեղեկո ւթյուններ: Ժողովի գումարման մասին վերը նշված կարգով ծանուցվում են նաև օրենքով սահմանված դեպքերում խորհրդակցական ձայնի իրավունքով Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք:

10.15. Հեռակա քվեարկության /հարցման/ կար ով Ժողով գումարելու դեպքում, ի լրումն օրենքով սահմանված տեղեկությունների, պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստի հասցեով բաժնետերերին առաքվում են նաև քվեաթերթիկն երը, Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկությունները և նյութերը:

10.16. Բանկի ձայնի իրավունք տվող բաժնե տոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջը տրամադրվում է նաև Ժողովին մասնակ ցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը:

10.17. Բաժնետերն իրավունք ունի համատեղ նիստի ձևով գումարվող Ժողովի քվեարկությանը մասնակցել իր կողմից լրացված քվեաթերթիկը Բանկ ին ուղարկելու միջոցով, եթե քվեաթերթիկը Բանկին հասել է Ժողովի գումարման օրվանից առնվազն եր կու օր առաջ: Նշված ժամկետում Բանկին հասած քվեաթերթիկը գրանցվում է Ժողովի բաժնետերե րի գրանցման ցուցակում և հաշվի է առնվում քվեարկության ժամանակ:

10.18. Հեռակա քվեարկության (հարցման) կա րգով ժողովի գումարման դեպքում տրամադրված քվեաթերթիկների ստացման վերջին օր է համարվում Ժողովի գումարման ամսաթվին նախորդող երկրորդ աշխատանքային օրը:

10.19. Բանկի բաժնետերերը, որոնք ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր են հանդիսանում Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում իրավունք ունեն երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ:

10.20. Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով օրենքով սահմանված տեղեկատվությունը:

10.21. Բանկի տարեկան կամ արտահերթ ժողովների անցկացման ժամանակ քվեարկությունը կարող է անցկացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Բանկին տրամադրված համապատասխան ծրագրային ապահովման կիրառմամբ:

10.22. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին սույն կանոնադրության 10.19 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

10.23. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետիրոջը կամ բաժնետերերին՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

10.24. Խորհրդի որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին, կարող է բողոքարկվել դատական կարգով:

10.25. Ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝

ա. Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը.

բ. Ժողովի օրակարգը.

գ. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ. Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե. բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ. քվեարկության անցկացման եղանակը,

է. քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

10.26. Ժողովում սովորական բաժնետոմսերի սեփականատերերն ունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց լրիվ վճարված բաժնետոմսերին համամասնական ձայնի իրավունք, եթե բացակայում են սույն կանոնադրությամբ սահմանված սահմանափակումները: Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը կարող են ձայնի իրավունք ունենալ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

10.27. Ժողովի քվորումն ապահովված է համարվում, եթե Ժողովի բաժնետերերների գրանցման ավարտի պահին գրանցվել են բաժնետերերի ցուցակում ընդգրկված և Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50%-ից ավելին համատեղ տիրապետող բաժնետերերը (ներկայացուցիչները), կամ նրանց կողմից լրացված քվեաթերթիկները:

10.28. Քվորումի բացակայության դեպքում Խորհուրդը նշանակում է նոր Ժողովի գումարման ամսաթիվը և այդ ամսաթվից առնվազն 10 օր շուտ պաստվիրված նամակներով բաժնետերերին ծանուցում է նոր Ժողով գումարելու մասին՝ նույն նամակով ուղարկելով նաև քվեաթերթիկը:

10.29. Եթե նոր Ժողովի գումարման ամսաթիվը Խորհուրդը տեղափոխում է առաջին Ժողովի գումարման օրվանից 20 օրից պակաս ժամկետում, ապա Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակներ չեն կազմվում: Հակառակ դեպքում նոր Ժողովի գումարման ամսաթվին նախորդող 45-րդ օրը Խորհրդի կողմից սահմանվում է Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակների կազմման ամսաթիվ:

10.30. Նոր Ժողովի քվորումն ապահովված է համարվում, եթե Ժողովի բաժնետերերների գրանցման ավարտի պահին գրանցվել են բաժնետերերի ցուցակում ընդգրկված և Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 30%-ից ավելին համատեղ տիրապետող բաժնետերերը (ներկայացուցիչները), կամ նրանց կողմից լրացված քվեաթերթիկները:

10.1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ: ԺՈՂՈՎ: ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

10.1.1. Ժողովի իրավասություններն են՝

ա. Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ. Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը, օրենքով սահմանված կարգով,

գ. Բանկի վերակազմակերպումը և լուծարումը,

դ. ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե արտահերթ Ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է. բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման ճանապարհով կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների ամփոփումով Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամի չափի ավելացումը,

ը. Խորհրդի ներկայացմամբ Բանկի աուդիտն անցկացնող անձի հաստատումը,

թ. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժ. Ժողովի վարման կարգի հաստատումը, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժա. բաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),

ժբ. օրենքով սահմանված դեպքերում՝ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համաձայնությունը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),

ժգ. Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով նախատեսված հատուկ դեպքերում,

ժդ. Բանկի կողմից թողարկվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման ձևի (բաց կամ փակ բաժանորդագրություն) որոշումը,

ժե. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

10.1.2. Սույն կանոնադրության 10.1.1 կետում նշված իրավասությունները հանդիսանում են Ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Բանկի Խորհրդին կամ Գործադիր մարմնի անդամներին:

10.1.3. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ սույն կանոնադրության 10.1.1 կետով Ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

10.1.4. Որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդ որում, սույն կանոնադրության 10.1.1 կետի «ա», «գ», «ե», «զ» և «ժբ» ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

10.1.5. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

10.1.6. Հեռակա կարգով քվեարկությամբ Ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

10.1.7. Ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ժողովի բաժնետերները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստում (հեռակա) հարցման կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված: Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով անցկացվող Ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված Ժողովի գումարման ծանուցման կարգով:

10.1.8. Ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները Բանկի բաժնետերերին հայտնվում են պատվիրված նամակներ ուղարկելու, կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու, կամ Բանկի ինտերնետային պաշտոնական կայքում տեղադրելու միջոցով՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

10.1.9. Ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, երկու օրինակից, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և քարտուղարը:

10.1.10. Ժողովի արձանագրության մեջ նշվում են՝

ա. Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

բ. Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.

գ. Ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների քանակը.

դ. Ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը), Ժողովի օրակարգը.

ե. Ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, Ժողովի ընդունած որոշումները:

10.1.11. Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

11. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ: ԽՈՐՀՈՒՐԴ

11.1. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությունը հանդիսացող հարցերի:

11.2. Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որը բավարարում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, Կենտրոնական բանկի իրավական ակտերով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին:

11.3. Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել մեկ տեղ: Բանկի բաժնետեր չհանդիսացող անձինք ևս կարող են ընտրվել Խորհրդի կազմում:

11.4. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովի կողմից, ձայների 3/4-ով, և ոչ պակաս մեկ տարի պաշտոնավարման ժամկետով: Խորհրդի անդամի լիազորության ընդհանուր ժամկետը չի սահմանափակվում: Խորհրդի անդամները վարձատրվում են:

11.5. Խորհրդի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք: Խորհրդի անդամները և Վարչության անդամները ևս չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

11.6. Խորհրդի կազմը սահմանվում է առավելագույնը 9 անդամ:

11.7. Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Բանկի Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

11.8. Ժողովին Բանկի Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Խորհուրդը և Բանկի մասնակիցները:

11.9. Բանկի բաժնետերերը իրենց կողմից Խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրելու դեպքում այդ մասին գրավոր հայտնում են Բանկի Խորհրդի նախագահին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել Խորհրդի անդամների սահմանված քանակը:

11.10. Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, գրավոր առաջարկում նշվում է թեկնածուի անուն-ազգանունը, նրան Բանկի բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը (առկայության դեպքում), նրան առաջադրող Բանկի բաժնետիրոջ /բաժնետերերի/ անուն-ազգանունը կամ անվանումը, վերջինիս պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը:

Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին սույն կանոնադրության 11.9 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա. առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ /բաժնետերերի/ կողմից խախտվել է սույն կանոնադրության 11.9 կետով սահմանված ժամկետը,

բ. լրիվ չեն կամ բացակայում են սույն կետով սահմանված տվյալները,

գ. առաջարկը հակասում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

11.11. Խորհուրդն իր կողմից սույն կանոնադրության 11.10 կետով նախատեսված Խորհրդի անդամության թեկնածու առաջադրում է Բանկի ժողովի օրակարգում ընդգրկելու միջոցով:

11.12. Բանկի այն բաժնետերները, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

11.13. Բանկի այն մասնակիցները, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և

ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդպայմանագրի վերաբերյալ Ժողովին տեղեկացնելու դեպքում: Այդ պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա. Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

բ. միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող Խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները.

գ. պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

դ. միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ժողովի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ հետագա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից 30 օր առաջ:

11.14. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի Խորհրդի կազմում:

11.15. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կանոնադրության 11.13 կետում նշված պայմանագիրը: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի Խորհրդի կազմում՝ առանց Ժողովի կողմից ընտրության:

11.16. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն Ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, եթե միայն դրանց թիվը կազմի մեկ: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում սույն կանոնադրության 11.13 կետում նշված պայմանագիրը կնքած Բանկի մասնակիցները:

11.17. Բանկի փոքր բաժնետերները ծանուցվում են Բանկի Խորհրդի կողմից իրենց փոքր մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու մասին Ժողովի համար ծանուցման կարգով՝ սույն կանոնադրության 11.13 կետում նշված պայմանագիրը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Ծանուցվելուց հետո փոքր բաժնետերները առաջադրում են Խորհրդի անդամի իրենց թեկնածուին: Համաձայնության չգալու դեպքում Ժողովի անցկացման օրը փոքր բաժնետերները փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում են Խորհրդի անդամի թեկնածու՝ իրենց կողմից առաջադրված թեկնածուների թվից: Քվեարկությունը կազմակերպվում և անցկացվում է Բանկի Խորհրդի նախագահի կամ նրա նշած Խորհրդի անդամի կողմից:

11.18. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին՝ օրենքով սահանջվող տեղեկատվությունը Խորհրդի կողմից ներկայացվում է Ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ժողովի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ հետագա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից 30 օր առաջ:

11.19. Խորհրդի անդամը պարտավոր է Խորհրդին և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություններ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին:

11.20. Բանկի Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Բանկի Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ: Հանձնաժողովների գործունեության հիմնական սկզբունքներն ու իրավասությունները սահմանվում են այդ հանձնաժողովների՝ Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերով:

11.21. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կազմից և վերընտրվում ու ազատվում է Խորհրդի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

11.22. Խորհրդի նախագահը՝

ա. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

բ. գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,

գ. կազմակերպում է Ժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ. նախագահում է Ժողովում կամ նշանակում է Ժողովի նախագահող,

ե. ստորագրում է Ժողովի և Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը,

զ. Վարչության նախագահի, Վարչության անդամների, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աշխատակիցների Բանկի գլխավոր հաշվապահի հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր,

է. կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքները:

Խորհրդի նախագահը Խորհրդին կից հանձնաժողովներին տալիս է հանձնարարականներ, որոնք ենթակա են կատարման Խորհրդի նախագահի կողմից սահմանված ժամկետում:

11.23. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

11.24. Խորհուրդը լիազորված և իրավասու է՝

ա. որոշել Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, հաստատել Բանկի զարգացման տնտեսական ծրագրեր, Բանկի ֆինանսական դրության առողջացման ծրագրեր,

բ. Կենտրոնական բանկի հետ կնքել պայմանագրեր բանկային օրենսդրության, տնտեսական նորմատիվների խախտումների վերացման վերաբերյալ,

գ. որոշումներ ընդունել Կենտրոնական բանկի կողմից Բանկին տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ,

դ. գումարել Բանկի տարեկան և արտահերթ Ժողով,

ե. հաստատել Ժողովի օրակարգը,

զ. լուծել Ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը, այդ թվում՝ սահմանել Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,

է. որոշում ընդունել Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծման և լուծարման մասին,

ը. հաստատել Բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը,

թ. որոշում ընդունել Բանկի հայտարարված բաժնետոմսերի կամ դրանց մի մասի թողարկման մասին, սահմանել բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները,

ժ. որոշում ընդունել Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին, սահմանել դրանց տեղաբաշխման և մարման կարգը և պայմանները,

ժա. նշանակել Բանկի գործադիր մարմնի անդամներին, Վարչության նախագահի ներկայացմամբ վաղաժամկետ դադարեցնել նրանց լիազորությունները, հաստատել վարձատրության պայմանները,

ժբ. սահմանել Բանկում ներքին հսկողության ստանդարտները, ձևավորել ներքին աուդիտի ստորաբաժանումը և հաստատել տարեկան աշխատանքային ծրագիրը, վաղաժամկետ դադարեցնել ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունները և հաստատել նրանց վարձատրության պայմանները,

ժգ. հաստատել Բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը և կատարողականը,

ժդ. օրենքով սահմանված կարգով որոշել Բանկի գույքի (ներառյալ՝ թողարկվող բաժնետոմսերի) շուկայական արժեքը,

ժե. Ժողովի հաստատմանը ներկայացնել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին,

ժզ. սահմանել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափը,

ժէ. Ժողովին ներկայացնել առաջարկություններ տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,

ժը. օգտագործել Բանկի պահուստային և այլ հիմնադրամներ, Ժողովի լիազորությամբ հաստատել շահույթից ձևավորված այլ ֆոնդերի օգտագործման կարգը,

ժթ. հաստատել Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերը և ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանները,

ի. քննարկել ստուգումների և վերստուգումների արդյունքները:

իա. որոշում ընդունել դուստր ընկերությունների ստեղծման, նրանց և այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցության չափի մասին,

իբ. համաձայնություն տալ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքմանը (բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ի չափով), եթե որոշումն ընդունվում է միաձայն,

իգ. որոշում ընդունել շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին,

իդ. հաստատել Բանկի պարտապանների պարտավորության վոա տոկոսների հաշվառնի

դադարեցման, պարտքերի զեղչման կամ ներմա մասին որոշումների ընդունման վերաբերյալ ներքին համապատասխան իրավական ակտ,

իե. տարեկան Ժողովի գումարման ամսաթ վից առնվազն 30 օր առաջ նախնական հաստատել Բանկի տարեկան հաշվետվությունը և ներկայացն ել Ժողովին,

իզ. մեծացնել բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Բանկի կանոնադ ական հիմնադրամի չափը,

իէ. ստեղծել Բանկի Վարչություն, հաստատել Վարչության կազմը, խնդիրները, նիստերի գումարման և անցկացման, որոշումներ ընդունելու կարգը, հա ստատել Վարչության Կանոնակարգը,

իը. հաստատել Բանկի ներքին վարչակազմա վերպական կառուցվածքը և աշխատատեղերը,

իթ. սահմանել Խորհրդի անդամների վարձա որության և պարգևատրման չափը,

լ. Բանկի բաժնետոմսերի բաց բաժանորդա գրություն իրականացնելու դեպքում հաստատել դրանց տեղաբաշխման ազդագիրը,

լա. իրականացնել սույն կանոնադրութ ամբ և օրենքով Խորհրդին վերապահված այլ լիազորություններ:

11.25. Սույն կանոնադրության 11.24 կետով ւ ահմանված լիազորությունները Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցեր են և չեն կարող փո խանցվել գործադիր մարմնի լուծմանը, բացառությամբ 11.24-րդ կետի «ժթ» ենթակետով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանների հաստատման իրավասությանը, որը Բա նկի խորհրդի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի վարչությանը, ինչպես նաև 11.24-րդ կետի «իը» ենթակետով սահմանված աշխատատեղերի մասով իրավասությունը, որը սույն փաստաթղթով կամ Ընդ անուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի վարչության նախագահին (Վարչությանը): Վարչությ ան նախագահին տրամադրվում է համապատասխան աշխատակիցների աշխատավարձի չափի վերանա ման իրավասություն՝ Խորհրդի հաստատած Բանկի տարեկան աշխատավարձային ֆոնդը գերազանցելով ոչ ավել, քան 1%-ով:

11.26. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհու դը քննարկում է Ներքին աուդիտի ստորաբաժանման, Վարչության նախագահի, Գլխավոր հաշվապահի և Վ արչության անդամներից յուրաքանչյուրի ներկայացված հաշվետվությունները: Հաշվետվությունները ներկայ ացվում են Ժողովի կողմից հաստատված Խորհրդի կանոնակարգով սահմանված կարգին համապատաս խան, որտեղ նշվում են հաշվետվության տեսակները, Խորհրդի անդամներին նախապես ներկայացման կարգը, մինչև Խորհրդի նիստը անհրաժեշտության դեպքում Խորհրդի անդամների մոտ քննարկման կարգը և դրանք Խորհրդին ներկայացնելու կարգը: Հաշվետվություններում պետք է պարունակվեն հարց եր եռամսյակի ընթացքում կնքված գործարքների, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունն երի, Բանկի կատարած գործառնական և այլ ծախսերի, Բանկի վարկերի և դեբիտորական պարտքերի գծով կատարված պահուստների, անհուսալի դասակարգված ակտիվների, դատական վարույթների ընթացքի և այլ հարցերի վերաբերյալ:

11.27. Առնվազն տարին մեկ անգամ Խորհուրդը քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը, ինչպես նաև քննարկում և ա նհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավ արությունը:

Սույն կետի 1-ին պարբերությունում նշված հարց երի վերաբերյալ Խորհրդի նիստին կարող են ներկա գտնվել նաև Բանկի կառուցվածքային ստորաբա ժանումների ղեկավարները, Բանկում գործող բոլոր հանձնաժողովների ղեկավարները, որոնք իրենց առաջարկություններն են ներկայացնում Բանկի ռազմավարության, հաճախորդների սպասարկման բարելավման, Բանկի կառավարման ոլորտի այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

11.28. Խորհրդի նիստերի գումարման և ան ցկացման կարգը սահմանվում է Ժողովի կողմից հաստատված Խորհրդի կանոնակարգով և սույն կան ոնադրությամբ:

11.29. Բանկի խորհրդի նիստերը պետք է գումա րվեն առնվազն երկու ամիսը մեկ: Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի ան դամի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղե կավարի, Կենտրոնական բանկի խորհրդի, Բանկի Վարչության նախագահի կամ Վարչության, Բանկի չ վերակող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (բաժնետերերի) գրավոր պահանջով:

Խորհրդի նիստի գումարման պահանջ ստ անալու պահից 10-օրյա ժամկետում Խորհուրդը տեղեկացնում է դիմողներին Խորհրդի նիստի գումար ման ժամանակի կամ վայրի մասին:

11.30. Խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է նիստի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ պատվիրված նա մակներ ուղարկելու, կամ անձամբ դրանք հանձնելու, հեռախոսային կապի միջոցով, կամ էլեկտրոնային փո ստի հասցեով ծանուցելու միջոցով:

11.31. Խորհրդի նիստերը կարող են գումարվել և քվեարկությունն անցկացվել հեռակա քվեարկության կարգով: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել ա յնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի

այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

Սույն կանոնադրության 11.24 կետի «ը», «ժա», «ժբ» և «ժե» ենթակետերում նշված, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

11.32. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

11.33. Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում:

11.34. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

11.35. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի Վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Վարչության նախագահը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

11.36. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ. նիստին մասնակցած անձինք.

գ. նիստի օրակարգը.

դ. քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի.

ե. քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

զ. նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշումներն մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

11.37. Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա. նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ. նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

գ. մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից (իրական ժամանակի ռեժիմով և սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն.)

դ. օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

11.38. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն մասի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

12. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ: ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

12.1. Վարչությունը, որպես մշտապես գործող կոլեգիալ գործադիր մարմին, իրականացնում է Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը:

12.2. Վարչությունը հաշվետու է Խորհրդին և կազ մակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:

12.3. Վարչությունը ձևավորվում է Բանկի Խորհ րդի կողմից, Բանկի ղեկավար անձանցից՝ Խորհրդի կողմից սահմանվող ժամկետով:

12.4. Վարչության անդամների թեկնածություններ ին Խորհրդին է առաջադրում Վարչության նախագահը, որը կարող է նաև չընդունվել Խորհրդի կողմից:

12.5. Վարչության նախագահը և անդամները Վա րչության կազմում ընտրվում և ազատվում են Խորհրդի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Վարչությ ան անդամի պաշտոնից ազատվելը ինքնաբերաբար չի հանգեցնում Բանկում զբաղեցրած պաշտոնից ազատմ ան:

12.6. Վարչության կազմի մեջ պարտադիր ընդգր վում են Վարչության նախագահը, նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը:

12.7. Վարչության քանակային կազմը չի սահմանա փակվում:

12.8. Բանկի Վարչության յուրաքանչյուր անդամ, նախքան Բանկի Խորհրդի կողմից իրեն Վարչության կազմում նշանակելը, կարող է հայտնել ինքնաբացարկ

12.9. Վարչության յուրաքանչյուր անդամ կարող է դուրս գալ Վարչության կազմից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Բանկի խորհրդի և վարչության նախա ահներին:

12.10. Եթե Վարչության կազմից մի քանի անդամ ների դուրս գալու դեպքում մնացած անդամների թիվը չի ապահովում քվորում, ապա Բանկի Խորհուրդը որ ջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան Վարչության անդամների դուրս գալու ժամկետից մեկ ամիս հետո, ւ նցկացնում է Խորհրդի նիստ՝ Բանկի նոր Վարչության ձևավորման համար: Սույն կարգը գործում է նաև Վար չության բոլոր անդամների Վարչության կազմից դուրս գալու դեպքում:

12.11. Բանկի Վարչության մնացած անդամները, եթե նրանց թիվը քվորում չի ապահովում, իրավունք չունեն լուծել այնպիսի հարցեր, որոնք Բանկի կանոնադր րությամբ վերապահված են Բանկի վարչությանը:

12.12. Բանկի Խորհուրդն իրավունք ունի վաղաժ ամկետ դադարեցնել ինչպես Վարչության, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամի լիազորությունները:

12.13. Վարչության անդամների լիազորություններ ն վաղաժամկետ դադարեցման հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները՝

1) Վարչության անդամի գործողություննե րի կամ անգործության հետևանքով Բանկին պատճառված էական վնասներ պատճառելը,

2) Բանկի գործարար համբավը գցելը,

3) կանխամտածված քրեական հանցագործությ յուն կատարելը,

4) Բանկի մասնակցությամբ գործարքներ իրականացնելիս դրանցում իր շահագրգռվածությունը թաքցնելը,

5) Իր վրա դրված պարտականությունները ոչ բ արեխիղճ կատարելը,

6) մեկ տարվա ընթացքում ոչ հարգելի պատճ առով նիստերի կեսից ավելիին բացակայելը,

7) սույն կանոնադրության և ՀՀ բանկային օրեն սդրության նորմերն ու հիմնադրույթները խախտելը,

8) առանց Խորհրդի համաձայնության այլ պետական կամ ոչ պետական մարմինների մոտ ծառայության անցնելը,

9) Բանկի գույքը տնօրինելիս սեփական շահեր ով առաջնորդվելը, բացառությամբ եթե այն արգելված չէ օրենքով, Բանկի կանոնադրությամբ, այլ կանոնա կարգերով և որոշումներով,

10) Բանկային կամ ծառայողական գաղտնիք հ ամարվող տեղեկությունները հրապարակելը,

11) Բանկի Ժողովի, Խորհրդի և Վարչության որ ոշումները չկատարելը,

12) Վարչության անդամի պաշտոնավարմ ան ընթացքում Բանկի հետ մրցակցող այլ կազմակերպություններ հիմնադրելու փաստը,

13) Այլ գործողությունների (անգործության) կա տարումը, որոնք կարող են հանգեցնել Բանկի համար անբարենպաստ հետևանքների,

14) Վարչության անդամի պաշտոնավարումը կ արող է դադարեցվել նաև ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Վարչության կանոնակարգով ախատեսված այլ հիմքերով:

12.14. Վարչության իրավասության մեջ են մտնո ւմ Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և Բանկի կանոնադրությամբ վերապահված են Բանկի Ժողովի, Խորհրդի և Վարչության նախագահի բացառիկ իրավա ության:

12.15. Վարչությունը լիազորված և իրավասու է՝

1) իրականացնել Բանկի խորհրդի հաստատ ւմանը ներկայացվող բոլոր հարցերի նախնական քննարկումը, դրանց հետ առնչվող բոլոր փաստաթղ թերի պատրաստումը,

2) հաստատել հաճախորդների սպասարկ ման միասնական սակագները և կատարել փոփոխություններ և լրացումներ,

3) քննարկել Բանկի առևտրային գործունեությա ն արդյունքները,

4) պատրաստել փաստաթղթեր կապված Բան կի կողմից արժեթղթերի թողարկման հետ,

5) հաստատել օրենսդրությամբ, Բանկի ներք ին իրավական ակտերով իրեն վերապահված Բանկի ներքին իրավական ակտերը և դրանց առնչվող փա ստաթղթերը,

6) կազմակերպել Բանկի բաժնետերերի, Խոր հրդի որոշումների կատարումը և Բանկի տարեկան պլանների իրականացման աշխատանքները,

7) Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խ որհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, Բանկի տարածքային ստորաբա ժանումների կանոնադրությունները, ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնա արգերը,

8) կոորդինացնել Բանկի կառուցվածքային և տ արածքային ստորաբաժանումների աշխատանքները,

9) լուծել Բանկի, նրա մասնաճյուղերի և ներկ այացուցչությունների ընթացիկ, աշխատանքային և այլ խնդիրները,

10) Բանկի կանոնադրությանը համապա տասխան, որոշում ընդունել բանկային նոր ծառայությունների ներդրման մասին, ինչպես նաև Բանկի խորհրդի թույլտվության և որոշման հիման վրա սահմանել «Բանկերի և բանկային գործունեությ ան մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանները,

11) լուծել ներբանկային հսկողության, հա շվառման և հաշվետվությունների կազմակերպման հարցերը,

12) պարբերաբար տեղեկացնել Խորհրդին Բ անկի ֆինանսական դրության, նախընտրելի ծրագրերի իրականացման վերաբերյալ,

13) ներկայացնել Խորհրդին Բանկի կիսաե ամյակային և տարեկան աշխատանքային պլանները, տարեկան հաշվետվությունները և հաշվապահակա ն այլ փաստաթղթերը,

14) ապահովել անհրաժեշտ տեղեկատվությա ր ներքին աուդիտն իրականացնող անձին,

15) սահմանել պատասխանատվություն Խոր հրդի որոշումների չկատարման համար, Բանկի քաղաքականության և ռազմավարության իրական ացման համար ներքին հսկողության կազմակերպման և իրականացման բնագավառում,

16) իրականացնել Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների վերլուծություն և արդյունքների ընդհանրացում,

17) սահմանել Բանկի կառուցվածքային ստոր աբաժանումների և ծառայողների պարտականություն-ները ներքին հսկողության կոնկրետ ոլորտներում,

18) ստեղծել տեղեկատվության փոխանակմա ն արդյունավետ համակարգեր, որոնք ընդգրկում են Բանկի օպերացիոն քաղաքականությունն ու գոր ծունեության ընթացակարգերը որոշակիացնող բոլոր փաստաթղթերը,

19) որոշումներ ընդունել Բանկի ընթացիկ տնտ եսական գործունեության վերաբերյալ,

20) ստեղծել կոմիտեներ/հանձնաժողովներ Բ անկի գործունեության տարբեր ոլորտների հարցերի վերաբերյալ նյութերի մշակման և որոշումների պատ րաստման համար,

21) Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը, աշխատատեղերը,

22) իրականացնել սույն կանոնադրությամ ը և օրենքով Վարչությանը վերապահված այլ լիազորություններ:

12.16. Վարչության անդամներն իրավունք ունեն՝

1) Վարչության նախագահին ներկայացնել առաջարկներ Վարչության նիստերի օրակարգի վերաբերյալ,

2) իրենց իրավասությանը ենթակա բոլոր հ արցերի վերաբերյալ ձայնի իրավունքով մասնակցել Վարչության նիստերին,

3) Վարչության քննարկմանը ներկայացվա ծ հարցերի շուրջ ներկայացնել առաջարկներ և դիտողություններ,

4) իրենց իրավասությունների շրջանակներում Բանկի ստորաբաժանումներից և ծառայություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ Բանկի գոր ծունեության վերաբերյալ,

5) տալ առաջարկություններ Բանկի նոր կա ռուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ ստեղծելու վերաբերյալ և ներկայացնել Խորհրդի հա ստատմանը,

6) ծանոթանալ Բանկի Վարչության և Խորհրդի նիստերի, ինչպես նաև Ժողովի արձանագրություններին,Բանկի անունից կնք ել պայմանագրեր՝ իրենց լիազորությունների սահմաններում:

12.17. Վարչության անդամները պարտավոր են՝

1) բացի գիտական, մանկավարժական և ստե ղծագործական աշխատանքից չկատարել վճարովի այլ աշխատանք,

2) Խորհրդին, ներքին աուդիտի ստորաբա ահանմանը և Բանկի աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություն ներ Բանկի գործարքներում իրենց շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձան ի հետ իրենց փոխկապակցվածության մասին,

3) ներկայացնել հաշվետվություն Բանկի Խոր հրդին ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ,

4) կրել պատասխանատվություն իրենց մեղք վ Բանկին պատճառված նյութական վնասի համար,

5) կատարել Բանկի բաժնետերերի ժողովի Խորհրդի և Վարչության որոշումները, Վարչության նախագահի որոշումներն ու կարգադրությունները,

6) չհրապարակել իրենց հայտնի դար ձած կոնֆիդենցիալ տեղեկատվությունը Բանկի գործունեության վերաբերյալ, կամ բանկային գաղ նիք կազմող տեղեկատվությունը,

7) գործել ի շահ Բանկի, բարեխիղճ և խել միտ կերպով իրականացնել իրենց իրավունքներն ու կատարել պարտականությունները,

8) կրել այլ պարտականություններ, որոնք կս ահմանվեն սույն կարգով, Բանկի կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ:

Վարչության նիստերը.

12.18. Վարչության իրավասությանը ենթակա հարցերի քննարկման և դրանց շուրջ որոշումներ կայացնելու համար հրավիրվում են Վարչության նիստեր:

12.19. Վարչության նիստերը լինում են հերթական և արտահերթ:

12.20. Վարչության հերթական նիստերը գումա րվում են առնվազն երկու շաբաթը մեկ անգամ: Արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտ ության:

12.21. Վարչության նիստերը գումարվում են Վա չության նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, Խորհրդի նախագահի և անդամի պահանջով, Վարչության անդամի պահանջով, ներքին աուդիտի ստորաբաժանման պահանջով, կառուցվածքային ստ որաբաժանումների ղեկավարների պահանջով՝ միայն հիմնավորված հարցերի առկայության դեպքում:

12.22. Վարչության նիստերի գումարման և ա ցկացման կարգը սահմանվում է Խորհրդի կողմից հաստատված Վարչության կանոնակարգով:

12.23. Վարչության նիստը նախագահում է Վարչ ության նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում նրա ժամանակավոր պաշտոնակատարը:

12.24. Վարչության նիստն իրավազոր է, եթե նիստին անձնական մասնակցություն են ցուցաբերում Վարչության անդամների առնվազն կեսը:

12.25. Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի լիազորումը այլ անդամի արգելված է և իրավական ուժ չունի:

12.26. Վարչության նիստերի անցկացումը հեռակա կարգով չի թույլատրվում:

12.27. Վարչության արձանագրային որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում Վարչության նախա գահի ձայնը վճռորոշ է:

12.28. Վարչության արձանագրային որոշումնե րը պարտադիր են կատարման Բանկի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների համար:

Վարչության անդամների պատասխանատվությունը.

12.29. Վարչության նախագահը և անդամները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման համար, իրենց մեղավոր գործողությունների կամ անգործության հետևանքով Բանկին հասցված վնասների համար, եթե օրենքով սահմանված չեն պատասխանատվության այլ հիմքեր և չափեր:

12.30. Բանկին պատճառված վնասի համար Վար ության մի քանի անդամների պատասխանատվության դեպքում, նրանք Բանկի առջև կրում են համապարտ ատասխանատվություն:

12.31. Պատասխանատվություն չեն կրում այն անդամները, որոնք Վարչության նիստին ներկա չեն գտնվել, քվեարկությանը չեն մասնակցել և որոնք դեմ են քվեարկել այն որոշումներին, որոնց կայացումը հանգեցրել է Բանկին վնասներ հասցնելուն:

12.32. Վարչության անդամների հրաժարականը կամ պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց՝ Բանկին պատճառված վնասի համար պատասխանատ վությունից, եթե վնասն առաջացել է իրենց մեղքով:

13. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ: ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

13.1. Ժողովի և Խորհրդի որոշումների կատա ման, ինչպես նաև Բանկի առջև դրված ընթացիկ խնդիրների լուծման նպատակով Բանկում գործում է մի անձնյա գործադիր մարմին՝ Վարչության նախագահ:

13.2. Վարչության նախագահը նշանակվում է Խորհրդի կողմից պաշտոնավարման հինգ տարի

ժամկետով: Խորհրդի նախագահի և Վարչությա ն նախագահի միջև կնքվում է աշխատանքային պայմանագիր: Վարչության նախագահ չի կարող լինե այն անձը, որին ՀՀ օրենսդրությամբ արգելված է լինել բանկի ղեկավար:

13.3. Վարչության նախագահի բացառիկ իրավ ւսությանն են ենթակա Բանկը ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ներկայացնելը, ինչպես նաև Բանկի անունից գործարքներ կնքելը:

13.4. Վարչության նախագահը Բանկի անունից լի ազորված և իրավասու է՝

ա. իր իրավասության շրջանակներում ւնօրինել Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, կնքել բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ կատարելու համար անհրաժեշտ գործարքներ, կամ լիազորել դրանց կնքումը այլ անձի (գույքի օտարման և ձեռքբերման՝ Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ից մինչև 50% արժեքով գործարքները կնքելով միայն Խորհրդի կամ 50%-ից ավելի արժեքի դեպքում Ժողովի նախնական համաձայնության առկայության դեպքում),

բ. տալ լիազորագրեր, այդ թվում՝ Բանկի մա ւնաճյուղերի կառավարիչներին,

գ. նախագահել Վարչության նիստերը և ղեկա ւվարել Վարչության աշխատանքները,

դ. ստորագրել և իրավասու մարմիններին ւերկայացնել Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվությունները, հայցադիմումներ ը և անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

ե. աշխատանքի ընդունել և աշխատանքից ա զատել Բանկի աշխատակիցներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահ ական տույժի միջոցներ,

զ. սահմանել իր տեղակալների աշխատանքա յին ոլորտները,

է. իր իրավասության սահմաններում և Վարչ ության որոշումների հիման վրա արձակել հրամաններ, կարգադրություններ, կատարման համար պարտա դիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,

ը. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական տույժի միջոցներ,

թ. իր իրավասության սահմաններում հաստ ատել ֆինանսական գործառնությունների կատարման հրահանգներ և ներբանկային հսկողությունը կանո նակարգող այլ փաստաթղթեր,

ժ. իր իրավասության սահմաններում և Բանկ ի իրավասու կառավարման մարմինների որոշումների հիման վրա Բանկի պարտապանների պարտ ի նկատմամբ տույժերի հաշվարկի դադարեցման, հաշվարկված տույժերի ու տուգանքների զիջման ւ ասին առաջարկությունները ներկայացնել Վարչության հաստատմանը,

ժա. հսկել Բանկի ծախսերի հիմնավորվածությ յունը,

ժբ. իրականացնել սույն կանոնադրությա մբ կամ օրենքով Բանկի Ժողովի կամ Խորհրդի իրավասությունը չհամարվող այլ լիազորություններ ,

ժգ. Վարչության նախագահի լիազորությու ւնները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատված ի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված ւ աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

13.5. Վարչության նախագահի որոշումները ձևա կերպվում են հրամանների և կարգադրությունների ձևով:

14. ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒ ԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

14.1. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից:

14.2. Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Վարչու ության անդամների հետ փոխկապակցված անձինք:

14.3. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությ ւնը:

14.4. Բանկի ներքին աուդիտը Բանկի խորհրդի հա ստատած կանոնակարգի համաձայն՝

ա. անկախ գնահատական է տալիս Բանկի ւերքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համա կարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ.

բ. եզրակացություններ և առաջարկություննե ր է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

14.5. Ներքին աուդիտի իրավասություններին վե րաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

14.6. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին, Վարչության նախագահին և Վարչությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա. հերթական՝ տարեկան ծրագրով սահման ված ստուգումների արդյունքների մասին.

բ. արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հ տևանք են Վարչության նախագահի, Վարչության կամ Խորհրդի գործողությունների կամ անգործությա , ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

14.7. Խախտումներ, որոնք նախատեսված են 14.6 կետի «բ» մասով, հայտնաբերելու դեպքում, ներքին աուդիտը հաշվետվությունները ներկայացնում է նախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

14.8. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավա կան ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդ ն՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռն արկվելիք միջոցառումներ:

14.9. Ներքին աուդիտի պահանջով նրան կարող են տրամադրվել Խորհրդի նիստերի արձանագրությունների պատճենները:

14.10. Ներքին աուդիտի անդամները կարող են մ ասնակցել Խորհրդի նիստերին՝ նախապես Խորհրդին նիստին մասնակցելու համար գրավոր առաջարկ ներկ այացնելու դեպքում:

15. ԲԱՆԿԻ ԳԼԽԱ ՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

15.1. Բանկի գլխավոր հաշվապահը կամ նման պ արտականություններ իրականացնող անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապա հական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքներն ու պա րտականությունները:

15.2. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվու մ է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի վարչության ներկայացմամբ:

15.3. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքնե ը և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ժողովին, Խորհրդին, Վարչությանը, ներքին աուդիտին կամ այլ անձի:

15.4. Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռա մսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին և վարչությանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհր դի հաստատած ձևով և բովանդակությամբ:

15.5. Բանկի գլխավոր հաշվապահը պատասխ անատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիությ ան, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայ ացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվու թյան մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության հ ամար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

15.6. Խորհրդին ներկայացված հաշվետվությունն երի և տեղեկատվության մեջ անարժանահավատ տվյալների հայտնաբերման դեպքերում՝ գլխավոր հ աշվապահը ներկայացնում է դրանց առաջացման նախադրյալները, վկայակոչում է Բանկի աշխատակիցն երին, որոնք անմիջականորեն մասնակցել են տվյալ հաշվետվությունների կամ տեղեկատվության կազմմ ան աշխատանքներին, և առաջարկում է լուծման միջոցներ դրանք ապագայում չկրկնելու կամ առկա թերա ությունները վերացնելու ուղղությամբ:

Եթե նման դեպքերը կրում են պարբերական բնույթ , ապա Խորհուրդը հարց է բարձրացնում գլխավոր հաշվապահի մասնագիտական համապատասխանությա ն հարցը քննարկելու մասին:

15.7. Գլխավոր հաշվապահը «Բանկերի և բանկ ային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իր կողմից կնքված «Լրիվ նյութ ական պատասխանատվության» պայմանագրին համապատասխան պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների կամ անգործության հետևանքով Բանկին պատճառված վնասների համար:

16. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

16.1. Ռիսկերի կառավարման գործառույթ իրակա նացնող ստորաբաժանման ղեկավարը պաշտոնի նշանակվում և ազատվում է Վարչության նախագահի կո ղմից՝ Խորհրդի համաձայնությամբ:

16.2. Ռիսկերի կառավարման գործառույթ իրականա գնող ստորաբաժանումը՝

ա. բացահայտում, գնահատում է Բանկի գործ ունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է Բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը.

բ. հսկողություն և մոնիտորինգ է իրականացնո ւմ բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.

գ. իրականացնում է Կենտրոնական բանկի նո րմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

16.3. Ռիսկերի կառավարման գործառույթ իրա ականացնող ստորաբաժանման ղեկավարը Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառ ավարման քաղաքականությունները (ներքին իրավական ակտերը),

16.4. Ռիսկերի կառավարման գործառույթ իրակա նացնող ստորաբաժանման ղեկավարն եռամսյակը մեկ անգամ Բանկի Վարչության և Խորհրդին ներկայաց նում է հաշվետվություն Բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերա բերյալ՝ Բանկի կողմից սահմանված ձևով և բովանդակությամբ:

17. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀ ՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍՏՈՐԱԲԱ ԺԱՆՈՒՄԸ

17.1. Համապատասխանության ապահովման գոր ծառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը պաշտոնի նշանակվում և ազատվում է Վարչության նա խագահի կողմից՝ Խորհրդի համաձայնությամբ:

17.2. Համապատասխանության ապահովման գոր նառույթ իրականացնող ստորաբաժանումը՝

ա. ապահովում է Բանկի և Բանկի աշխատա ակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Բ անկի ներքին իրավական ակտերի պահանջներին.

բ. ապահովում է Բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը.

գ. գնահատում է Բանկի գործունեության վ րա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրանց հետ ա ապված հնարավոր ռիսկերը.

դ. իրականացնում է Կենտրոնական բանկի ն որմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հա մապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

17.3. Համապատասխանության ապահովման գոր ծառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն եռամսյակը մեկ անգամ Բանկի Վարչության և Խո րհրդին ներկայացնում է հաշվետվություն Բանկում համապատասխանության ապահովման գործընթացնե րի վերաբերյալ՝ Բանկի կողմից սահմանված ձևով և բովանդակությամբ:

18. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ե Վ ԴՐԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

18.1. Բանկը պարտավոր է պաշտոնական կայքում մշտապես հրապարակել՝

ա. Բանկի ֆինանսական հաշվետվությու ները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը: Ընդ որում, Բանկը պարտավոր է տարեկա ն ֆինանսական հաշվետվությունը, աուդիտային եզրակացությունը ֆինանսական տարվա ավարտից հետո 4-ամսյա ժամկետում հրապարակել մամուլում, իսկ եռամսյակային ֆինանսական հաշվետվությ ունը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

Բանկը պարտավոր է հրապարակել դրանք առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում).

բ. օրենքով սահմանված ժամկետում՝ տա րեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը:.

գ. շահութաբաժիններ վճարելու մասին ո րոշումների պատճենները, ինչպես նաև Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանու ղ ակտերի պատճենները՝ առկայության դեպքում.

դ. Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Բանկում նրանց ու նեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցո ղ անձանց, որոնք չունեն բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բա ժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձա նց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերա բերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

ե. Բանկի Խորհրդի, գործադիր մարմնի ան դամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, Բան կի Խորհրդի անդամների, Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթաց քում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որ ոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտնե րի) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված)

վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը:

Սույն մասի «ա-ե» կետերում նշված տեղեկություններից բացի, Կենտրոնական բանկը կարող է պահանջել Բանկից ինտերնետում՝ Բանկի տնային էջում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների:

Բանկը պարտավոր է հրապարակել սույն մասի «ա-ե» կետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկը պարտավոր է ինտերնետում՝ Բանկի տնային էջում, և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Բանկի գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իրենց կողմից ավանդների ընդունման, վարկերի տրամադրման, ինչպես նաև մատուցվող բոլոր այլ ծառայությունների և հաճախորդների համար իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, այդ թվում՝ տոկոսադրույքներ, ծառայության միջնորդավճարներ, ժամկետայնություն և էական այլ պայմաններ:

18.2. Բանկը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝

ա. Բանկի պետական գրանցման վկայական և Բանկի կանոնադրության պատճենները.

բ. բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ Բանկի բաժնետոմսերի թողարկման ազդագրի պատճենը.

գ. Բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում, տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.

դ. սույն կանոնադրության 18.1 կետում նշված տեղեկությունները կամ փաստաթղթերի պատճենները:

Սույն կետում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

Բանկը պարտավոր է իր գլխամասային գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ տեսանելի վայրում, փակցնել հայտարարություն՝ սույն կետում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին:

18.3. Բանկի յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)՝

ա. Բանկի խորհրդի, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն կանոնադրության 18.4 կետում նշված տեղեկությունները.

բ. Բանկի խորհրդի անդամների, վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու համար միմիայն վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, բանկում նշանակալի մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

գ. Բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի առաջին մասի «ա-գ», «թ», «ժ» և «ժա» կետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ.

դ. Բանկի կողմից Բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե. Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները).

զ. Բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, Ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած Բանկի ներքին ակտերի, Բանկի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, Ժողովի, Խորհրդի, Տնօրինության նիստերի արձանագրությունների, Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, Կենտրոնական բանկի կողմից Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից Խորհրդին և Վարչության նախագահին (Վարչությանը) ներկայացված հաշվետվությունների պատճենները.

է. այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական հիմնադրամում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա:

Բանկի բոլոր մասնակիցներին պետք է տրամադրվեն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:

Սույն հոդվածի համաձայն՝ Բանկի մասնակցի ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի մասնակիցների կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

18.4. Բանկի խորհրդի անդամների, վարչության նախագահի, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Բանկի մասնակիցներին բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի նաև՝

ա. նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ. մասնագիտությունը և կրթությունը.

գ. վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

դ. տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

ե. տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.

զ. Բանկի մասնակից հանդիսացող Խորհրդի անդամին, Վարչության նախագահին, գլխավոր հաշվապահին կամ Խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Բանկի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քանակը.

է. տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

ը. փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ.

թ. Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ տվյալներ:

18.5. Բանկն իրավունք չունի իրենց գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իրենց անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու այնպիսի տեղեկություններ կամ այլ հանգամանքներ, որոնք կարող են ազդել հաճախողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ Բանկի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուրիմացության տեղիք տալ տվյալ Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

18.6. Բանկի կողմից, սույն կանոնադրությամբ և օրենքների համաձայն, հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

19. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

19.1. Բանկի գործունեությունն առանց իրավահաջորդության դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ինքնալուծարման, Կենտրոնական բանկի կողմից լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու կամ Կենտրոնական բանկի հայցով դատարանի կողմից անվավեր ճանաչվելու, անվճարունակության հետևանքով և օրենքով նախատեսված այլ հիմքերով դատական կարգով Բանկը լուծարելու դեպքերում:

19.2. Բանկը կարող է ինքնալուծարվել միայն Կենտրոնական բանկի նախնական թույլտվությամբ:

19.3. Բանկի գործունեությունը իրավահաջորդությամբ դադարում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերակազմակերպման միջոցով:

19.4. Բանկի լուծարումն իրականացվում է Ժողովում ընդունված լուծարային ծրագրին համապատասխան, օրենսդրությամբ սահմանված կարգով: Լուծարային հանձնաժողովը կազմվում է առնվազն 3 անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք:

19.5. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող բանկի կառավարման լիազորությունները:

19.6. Լուծարային հանձնաժողովը Կենտրոնական բանկ է ներկայացնում ամենամսյա հաշվեկշիռ և նրա կողմից սահմանված այլ տեղեկություններ:

19.7. Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է ՀՀ կենտրոնական բանկին Բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:

19.8. Բանկի լուծարման դեպքում նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ Բանկի գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է Բանկի պարտատերերի պահանջների բավարարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

19.9. Եթե լուծարվող Բանկի դրամական միջոցները բավարար չեն պարտատերերի պահանջների բավարարման համար, ապա լուծարման հանձնաժողովը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է Բանկի գույքի վաճառքը, իսկ գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ:

19.10. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Բանկը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Բանկի գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

19.11. Բանկի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից: